


ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Մանկագրերի քառուկա

Մայիս 1910



Հրատարակիչ ՕՆՆԻԿ ԶԱԹԱԼԵԱՆ

6137

ԱՐԹԻՒՐ ՊԵՐՆԷՏ

ԱՐԻՆԱՐԻՈՒ ԿԻՆԸ

ԽԻՍՏ ԶԳՍՅԱՅՈՒՆՑ ԵՑ ԶԵՏԱՔՐԻՐԱՍՈՒՆ ԳԼԳ

Ի Ր Ա Կ Ա Ն Կ Ե Ս Ն Ք Է

ՊԱՏՆԵՐԱԶԱՐԳ

6137

6137



Գ. ՊՈԼԻՆ

Պատկարական Տպարաններ Մ. ՅՈՂԱԿԻՄԵԱՆ
Դարաթիա, Պիլուր փողոց թիւ 10

ԱՐԻԻՆԱՐՐՈՒ ԿԻՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՍԵՐ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՍ

Գ Լ Է Ր

Բարից, 1792:

Գասէթ և Վօծիրար փողոցներուն յօրինած ան-
կիւնը գրավաճառատուն մը կար, որուն ցուցափեղկին
մէջ երկու փոքրիկ կիսանդրիներ կը նշմարուէին.
Ժան ժաք Ռուսօյի և Վօլթէրի կիսանդրիները:

Այս խանութին ճակատին վրայ տասներութերորդ
դարու գոյներով ներկուած խոշոր ցուցատախտակ մը
կար, որուն ճիշդ մէջտեղը խոշոր մանուշակ մը գըծ-
ուած էր: Այս մանուշակին շուրջը նոր ներկուելու
սկսած դաշտ մըն ալ գծուած էր:

Ցուցատախտակին վերի մասին վրայ նեանեայ
վերատառութիւնը կը տեսնուէր.

«ԱԶԱՏ ՄԻՏՔ» ԳՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ՏԵՐ ԵՒ ՏԳՐԵՔՆ Մախիմ Արսուէն

Այն օրը, նեանէն, Սէն գեարն կողմէն, Բօն-Նէօ-
Ֆէն, աճեղ մոնչիւններ կը լսուէին: Էնվայիաի հրա-



պարակէն, Շանդելիդէն և Պատիկլէն մերթ ընդ մերթ գոսացող թնդանօթի հարուածներուն տակ, այդ մտնչիւնները կը խեղդուէին ու անխելի կը գամնային: Վօժիրար և Գասէթ փողոցներուն մէջ մարդ մարդասանք չէր տեսնուեր: Թէպէտ այդ երկու փողոցները սովորաբար բանուկ փողոցներ էին, բայց այն օրը ամայացած էին:

Մաքսիմ Արտուէնի գրատունէն ներս ոչ ոք կը մտնէր, անցորդ ու յաճախորդ չէր մնացած:

Քսան տարեկան անուշ և մեղամաղձոտ նայուածքով մանկամարդ աղջիկ մը, ձեռքը ծնօտին, յեղափոխական թուցիկներով և լրագիրներով լեցուն սեղանի մը հօին նստած, խորունկ կերպով կը մտածէր:

Մէկէն ի մէկ գլուխը վեր բարձրացուց և ախոր ու երկչոտ նայուածքով մը սկսաւ դիակ մեծազիր գիրքերով լեցուն այն դարակները որոնց մէջ իրարուքով շարուած էին Տիտերօյի, Ալամպէրի, Գօնաօրսէի, Հէլլէթիուսի, Պօմարչէի և Ժան Ժաք Ռուսօյի հեղինակութիւնները:

Ասոր վրայ, հառաչանք արձակելով, կուրծքէն պղտիկ գիրք մը դուրս քաշեց և առաջին էջը բացաւ. Վարժ Յիսուսի անունով գիրքն էր ան: Յաճ ձայնով սկսաւ կարգալ. կարծես թէ կ'աղօթէր, այնքան կամաց կը կարդար:

Մէկէն ի մէկ սարսուռ մը զգաց:

Հնչեղ ձայն մը, հնչեղ այլ քիչ մը բիրտ ձայն մը որուն մէջ անկեղծութեան տաքուկ շեշտ մը կար, զայն բարեւելով ըսաւ.

— Բարի լոյս, քաղքուհի Գլէր:

Մանկամարդ աղջիկը յանկարծակիի եկած, գլուխը վեր բարձրացուց: Մարայի հրատարակած «Փողովուրդին Բարեկամը» անունով լրագիրը և Գամիյ Տէմուլէնի հրատարակած վերջին պարսաւագիրը իր առջին

էին. Գլէր, անմիջապէս գաղտնի կերպով ձեռքի գիրքը լրագրին մէջ խօթելով պահեց և ներգաշնակ ձայնով մը ըսաւ.

— Բարի լոյս, քաղքուհի Լըֆրան:

Նորեկը, գլուխը կարմիր գլակ մը անուցած, հաստարագուկ, թիկնեղ և երկայնահասակ մարդ մըն էր: Մէջքին կօշկակարի գոգնոց մը անցուցած էր, և հակառակ մագրտ կուրծքն ու թիւերը բացած և վրան գլուխը պտտատած ըլլալուն, անկեղծ, խիզախ և կըրքիճ մարդու մը կը նմանէր:

Քաղաքացի Լըֆրան խանութէն ներս մտնելով և Գլէրի մօտենալով հարցուց.

— Քաղքուհի Մաքսիմ Արտուէնը չեկա՞ւ տակաւին:

Գլէր սօքի ելլալով պտտախանեց.

— Ասանէ մը ի վեր հայրս տունը մնացած չունի որ:

— Գիտեմ, գիտեմ, ուրիշ աւելի կարեւոր գործեր ունի, կ'մկմաց Լըֆրան ժպտելով: Շիտակը, լաւ ընտարութիւն մը ըրին զինքը պտտամաւոր ընտրողները, զես երէկ, օրէնսգիր ժողովին առջեւ անանկ բանախօսութիւն մը ըրաւ հայրդ որ, բոլոր ժողովականներն ալ վերջին աստիճան խանդավառուեցան: Քաղաքացի Մարան իր թերթին մէջ ամբողջութեամբ հրատարակած է այդ բանախօսութիւնը: Չի կարդացի՞ք: Աղէկ, մօտիկ ըրէք:

Այս ըսելով, ասքղուխ կօշկակարը գրպանին ձը մտնելուամ լրագիր մը հանեց և բարձրաձայն սկսաւ հետեւեալ յօդուածը կարդալ.

«Արքունիքին և տարագրեալներուն դատարանութիւնները եւրոպան Ֆրանսայի դէմը հանած են: Մեր հիւսիսային բանակը, որ Աւստրիացիներուն կողմէ հաճախեցաւ, Լիլ և Վալանսիէն քաջուելու վրայ է...: Բրուսիացիները կը սպառնան Վերտէօնի դէմ, Վէրսալէօն մօտ օրէն պիտի պաշարուի և պիտի ամբակոծ-

ուի: Դաւաճանօրէն կը սպասուան մեր հողը մեր թշնամիներուն յանձնել: Պէտք է վերջ դնել այդ դաւաճանութեան: Օտարականներ կան որոնք թագաւորին անունին տակ ծածկուած և անոր ապաւինած՝ Նոր Փրանսան ջախջախել կ'ուզեն և թագաւորը համամիտ է անոնց: Կը սրահանջեմ ուրեմն խորհրդարանէն որ, առանց թագաւորին հաւանութիւնը առնելու, հոչակէ անմիջապէս թէ հայրենիքը վտանգի մէջ է:»

Եւ քաղաքացի Լըֆրան հայրենասիրական եռանդով մը ձեռքի թերթը շարժելով շարունակեց.

— Ա՛հ, տեսնելո՛ւ բան էր, Չիարձակարանին սըրահին մէջ անանկ սրտագրաւ ծափահարութիւն մը ըրին որ, կարծես թէ փոթորիկ էր...: Բայց կարճ կապեցին: Պատգամաւորական ժողովը անմիջապէս քաղաքացի Մաքսիմի առաջարկը քուէարկեց և այս առտու իր որոշումը հրովարտակով մը Բարիզի չորս կողմը հալորդուեցաւ: Այս հրովարտակին վրայ անմիջապէս բոլոր զինուորութենէ զերծ մնացած հայրենասէրները վազելով զինուոր արձանագրուիլ սկսան: Բօն-նէօֆէն կուգամ հիմա, ամպրոն մը անկեր են հոն և զինուորականները հայրենիքին սիրուն իրենց արիւնը թափել ուզողները զինուոր կ'արձանագրեն: Ամէն տարիքէ մարդիկ կային անոնց մէջ, ծերը, երիտասարդը խեղանդամը, առողջը, կազը, կուզը. ամէն զիրքէ և ամէն դասակարգէ մարդ տեսայ անոնց մէջ, հարուստը ազքատը, գործաւորը, պաշտօնեան, բոլորն ալ վազեր եկեր էին: Կ'երգէին, կը պարէին և առանց իրար ճանչնալու, իրարու կը փաթթուէին, մինչդեռ անդին թնդանօթները կը գոռային և եկեղեցիներու զանգակները կը հնչէին...: Քիչ մը առաջ, Տանթօն, ամպրոնին մէկ անկիւնը ցատկեց և որոտագին ձայնով մը գոչեց՝ «Շեփորը հնչեց, հայրենակիցներ, բայց այդ չեփորը վտանգի նշանը չէ որ կուտայ, այլ՝ հայրենիքին թշնամիներուն դէմ յարձակումը սկսելու նշանը: Յանդգնութիւն, հայրենակիցներ, յանդգնութիւն և դա՛րձեալ յանդգնութիւն...:» Այս խօսքին վրայ, հայրենիք ուրից ելլելով իր եռագոյն գօտին սկսաւ շարժել և գոչեց. «Հայրենիքին դէմ դաւաճանողները ամէ՛նքն ալ բնաջինջ ընելու համար երդո՛ւմ ընենք, հայրենակիցներ:» Ես անմիջապէս անոր մօտեցայ և իրեն փաթթուեցայ...: Բայց ահա այդ միջոցին Մարտիլիայէն ուխտալիներու խումբեր կը հասնէին և սանորելուկ հայրենասիրական երգը կ'երգէին.

Հայրենակիցներ,
Չէնքի՛ դիմեցէք,
Խումբեր կազմեցէ...:

«Ե՛ս ալ անոնց խառնուեցայ... և բազմութենէն քշուեցայ տարուեցայ... , հայրենիք կորսնցուցի: Ահա ատոր համար, մինչև հոս եկայ որ զինքը շնորհաւորեմ և սրտէս ու միտքէս անցածը իրեն ըսեմ:»

Եւ հայրենասէր կոչկակարը ձեռքը ուժով մը սեղանին զարնելով գոչեց.

— Այո՛, իրաւունք ունի հայրենիք, իրաւունք ունի, այդ գաւաճաններուն, այդ մենծ ազաներուն ամէ՛նքն ալ կախելու է...:

Գլէր, որ քանի իր խօսակիցը մտիկ կ'ընէր՝ գէմքին վրայի տխրութիւնը այնքան կ'աւելնար, կոչկակարին այս վերջին խօսքին վրայ երկիւղի ճիչ մը փախցուց բերնէն:

Լըֆրան անմիջապէս գէմքը շտկեց և հասկնալով որ այդ խօսքերով ցաւ պատճառած էր մանկամարդ ազգական, անուշ ձայնով մը ըսաւ.

—Ներողութիւն կը խնդրեմ, քաղքուհի: Մոռցայ, իրաւունք ունիք, դուք իմ գաղափարէս չէք: Է՛հ,

Ի՞նչ կ'ըլլաք եղէք, Ֆրանսան ամենուս համար աք
Ֆրանսա է և Ֆրանսա պիտի մնայ: Հայրենիքը ազա-
տելու ենք:

Եւ միամտաբար շարունակեց.

— Ինձի դէմ չի նեղանաս, հէ՞, աղջիկս, քէն չի
պահես հա՛: Եւ երբ որ իրիկունը հայրիկի պայ, ըսէ
իրեն որ մնաս բարով քսելու եկած էի. . . :

— Ի՞նչ, մնաս բարով, գոչեց գրավճառի աղջիկը
գարմանահար: Ո՛ւր պիտի երթաք որ. . .

— Զինուոր արձանագրուելու, աղջիկս, յայտա-
բարեց կոչկահարը հպարտութեամբ ու պարծանքով
կուրծքը գուրս ցցելով:

— Ի՞նչ ըսիր ի՞նչ, զինուո՞ր արձանագրուելու
մի՛. . . , գոչեց թիկնեց և հաստամարմին կին մը, ձեռքը
տասր տարեկան մանչուկ մը բռնած գրավճառին
խանութէն ներս մտնելով:

— Վիքթուա՛րն է, կի՛նս է եղեր, մտառաց Լըֆրան-
քիչ մը դժգոհ մնալով կնոջը վրայ հասնելուն համար:


Եւ ուժով կինը ամուսնոյն թեւէն բռնելով և ուն-
նեցած ուժովը զայն ցնցելով գոչեց.

— Ի՞նչ ըսիր, մէյ մըն ալ ըսէ նայիմ, ինձի
ատաջուքնէ իմաց չի տուած ո՞ւր կ'երթաս կոր եղեր
նայիմ. . . սա ի՞նչ համարձակութիւն է. . . :

— Հայրենիքը վտանգի մէջ է և անոր սիրուն
կուսելու պիտի երթամ, պատասխանեց կիչեամ Լըֆրան
հերոսաբար:

— Ի՞նչ, ինձի հո՞ս պիտի ձգես: մա՛րդ, գոչեց
Վիքթուար: Հայրենիքը վտանգի մէջ է, աղէ՛կ, հ'ս ալ
հեռի կուգամ, ես ալ ջո՛ւր կը կրեմ, վէրք կը կա-
պեմ. . . հ'ս ալ զինուոր պիտի արձանագրուիմ:

— Ո՞վ հոս կը կենայ որ, գոչեց տառը տարեկան
մանչուկը խանդավառութեամբ: Է՛ս ալ պիտի գամ,
հ'ս ալ զինուոր կը սեպուիմ. . . ասունը կտարած թմբուկ



Ֆրանս, Յեղափոխութեան երեք գլխաւոր ղեկավարները

Ժորժ Տանթոն ամպիոնիկ վրայ ելած կը բանախօսէ
Մաքսիմիլիեն Բուպէսիէ և Մաքսիմ Արսուէն

մը ունիմ, ես ալ զինուորներուն առջևէն թմբուկ կը
զարնեմ և գեանին վրայ սողալով թշնամիին մեռած
զինուորներուն վրայէն չաթ-փաթ (փամփուշտ) կը
ժողովեմ...:

— Ապրիս, կնիկ... զո՛ւն ալ ապրիս, Նիքօլաւ
քա՛ջ մանչա՛...: Իրաւ որ ձեզի պէս կին մը ու զաւակ
ունենալն պարծանք մըն է ինծի համար...: Կեցցէ՛
ուրեմն հայրենիքը, կեցցէ՛ ազգը, կեցցէ՛ Ֆրանսան...:

Վիքթուար և Նիքօլա կօշկակարին գիրկը նետուե-
լով երեքը մէկէն իրարու փաթթուեցան:

Բայց Վիքթուար իր ամուսինը ձգելով և Գլէրի
դռնով ըսաւ.

— Սիրելի Գլէրս, պէտք չէ՞ որ զո՛ւն ալ մեր հետը
գայիր...: Հա՛, իրա՛ւ, մոռցա՛յ...: Դուն մենէ չե՛ս...: Սիրաս
թունդ ելած է, անանկ գո՛հ եմ, անանկ գո՛հ
եմ, այս միջոցիս որ բերնիս եկածը դուրս կը փախցը-
նեմ կոր...: Իրա՛ւ, զո՛ւն մենէ չէիր... բայց ին-
չո՛ւս է պէտք, կ'ուզեմ ին՛ լելի, 'ուզես մ'ըլար,
նորէ՛ն իմ անուշիկ Գլէրս ես, նորէ՛ն քեզի ազջկանս
պէս կը սիրեմ...:

Այս բնիով, քաղքուհի Լըֆրան մանկամարդ ազ-
ջըկան վիզը պլլուեցաւ և անոր երկու այտերը համ-
բուրեց: Յետոյ, էրիկ կնիկ իրարու թև
մանկելով, փոքրիկ Նիքօլան հետենին ձգած, զուրս
կլան խանութէն:

Նիքօլա արդէն ինքն իր գլխուն զինուոր արձա-
նագրուած էր և երկու ձեռքերովը զիստերը ձեծելով
թմբուկ կը զարնէր...:

Գլէր մաքուր սիրտով մը և միլամտոգծոտ ժպիտով
մը անոնց հետեւն նայեցաւ:

— Քա՛ջ մարդիկ փսփոսաց իւրովի, այո՛, պատ-
ուական և կարիճ մարդիկ:

Յետոյ իր սեղանին հարին անջնելով՝ աղօթագիր-

քը ձեռքը առաւ և շարունակել ուզեց իր հոգեւոր ըն-
թերցանութիւնը:

Բայց շատ չանցած մէկէն ի մէկ գիրքը ձեռքէն
ձգեց: Դէմքը անանկ վշտաւ արտայայտութիւն մը
ստացաւ որ, մինչև անգամ հոգեւոր ընթերցանու-
թիւնը չի պիտի կրնար փարատել այդ վիշտը: Քիչ
մը ետքը արցունքի կաթիլներ գլտորեցան այտերուն
վրայ...:

Գլէրի մայրը ջերմեռանդ և աստուածավախ կին մը
եղած և իր ազջիկը ըսաւ այնմ էր: Գլէր թէպէտ կա-
նուխն կորսնցուցած էր իր մայրը, բայց իր մանկու-
թեան հաւատքը միշտ անխախտ պահած էր...: Եւ
անա ատոր համար, մանկամարդ ազջիկը տեսնելով հօ-
րը հոգեով մարմնով նոր գաղափարներու նուիրուիլը,
ակումբներ յաճախելը, Ռօպէսքէի, Մարայի և
Տանթօնի հետ բարեկամութիւն հաստատելը և յեղա-
փոխական կուսակցութեան ամենէն եռանդուն ու ա-
մենէն գործունեայ պետերէն մէկը ըլլալը, մեծ ցաւ
կը զգար...:

Սակայն այս ցաւէն զատ ուրիշ ցաւ մըն ալ կը
շարշարէր խեղճ ազջկան սիրտը...:

Այդ թուականէն երեք տարի առաջ, 1871ին, այն
օրերուն երբ Բարիզի մէջ մեծ սով մը կը տիրէր և
սովալլուկ ժողովուրդը պատառ մը հաց ձարելու համար
փուռերուն վրայ կը յարձակէր, մանկամարդ ազջիկը
հաց գնելու համար ի՛նքն ալ փուռի մը առջև իր
կարգին սպասած միջոցին, յանկարծ հաց առնելու եկող
արքայականներուն և միապետութեան հակառակորդ-
ներուն միջև սարսափելի կոխ մը պատահած էր:

Մօտերը գոնուող վիշտապաշօրքէն զունդ մը վրայ
հասնելով խոովարարները ցրուել ուզած էր:

Գլէր, հրմշակուելով, գետին ինկած էր և այն մի-
ջոցին երբ վիշտապաշօրքին ձիերը իր վրայէն անցնե-

լով զինքը պիտի կոխէին. մէկը զայն գրկելով զեռնէն վերցուցած և առնէ մը ներս առած էր:

Ճիշդ ժամանակին հասած էր խորհրդաւոր օգնութիւնը...:

Ահա վիշապաղօրքը աստ՛ջ կ'անցնէր, գէմը ելածը ասնակոխ կ'ընէր, սուրէ կ'անցընէր, կիներ, անգարներ, մարդիկներ ձիերուն տակը կը մնային, զիմազը ըզներ սրախողխոզ զեռին կը ապաւելին և վերջապէս պո՛ճ մը ետքը հրազարակը կը մաքրուէր... բայց զեռինը զիակներով և վիրաւորներով կը լեցուէր...:

Գլէր, վախէն գոգգլալով, զինքը ստոյգ մտէ մը ազատողին երեսը նայելով տեսած էր որ քանի որ հինգ տարեկան առոյգ ու զեզեցիկ երխտասարդ մըն է: Ան որտէնկօթ մը հագած և զլուխը սեւ գլխարկ մը գրած էր ան: Այս երխտասարդը քաղաքավարութեամբ ըսած էր իրեն որ պատրաստ է մինչեւ առնը ասաջնորդել զինքը...: Գլէր ընդունած էր և երբ երկուքը մէկէն առն եկած էին, մանկամարդ ազջիկը իր ազատարարը հօրը ներկայացուցած էր: Այս երխտասարդին անունը ժաք Քօթըրօ էր: Մայէնի զիւղացիներէն մէկուն որ զին ըլլալով, իբրև ուսանող Բարիզ եկած և իրաւաբանական վարժարանը աւարտելէ յետոյ, իբրև սկսնակ փաստաբան, ժօրթ Տանթօն անունով փաստաբանին գրասենեակը մտած էր:

Մաքսիմ Արտուէն իր ազջկան ազատարարը ճանչնալէ յետոյ, սիրալիբ կերպով մը անոր ձեռքը սեղմելով գոչած էր.

— Տանթօն իմ ամենէն մտերիմ ըտրեկամս է: Մեր տանը դուրը ձեր առջեւ միշտ բաց պիտի ըլլայ, ասկէ ետքը ուղած ասեննից կրնաք հրամանել:

Ահա այսպէս, ժաք և Գլէր, յաճախ իրարու հանդիպելու և իրարու հետ սեւ կցելու սովոր ունեցած

էին... և վերջապէս օր մըն ալ սէրը իր թեւերը տարածելով անոնց մաքրամաքուր ու անապակ հոգիները իրարու մօտեցուցած և իրարու խամսած էր...: Բայց ժազ՝ յարգանքի մէջ չի թերանալու միտքով, իսկ Գլէր՝ ամչնալուն համար, իրենց աչքերուն մէջ կարգացուող ուխտը բարձր ձայնով իրարու ըսելու համարձակութիւնը չէին ունեցած տակաւին...:

Իրաւ, թէպէտ ժազ Քօթըրօ, Մաքսիմ Արտուէնի պէս իր քաղաքական գաւառանքն ու հայեացքը ամենուն առջեւ բացէ ի բաց յայտնող մը չէր եղած, բայց շատ լուրջ, աշխատասէր, խելացի և պարկեշտ երխտասարդ մըն էր, և ահա ատոր համար Գլէրի հայրը արգելք չէր եղած անոնց սիրաբանելուն: Տանթօն լաւ տեղեկութիւններ առած էր անոր մասին և ըսած էր թէ ժազ Քօթըրօ մեծ ապագայ խոստացող երխտասարդ մըն էր:

Եւ վերջապէս, ապրիլու յեղափոխականը որ չափէն աւելի կը սիրէր իր ազջիկը, իրիկուն մը, ընտանեկան հացիկերոյթի մը միջոցին, իր ձեռքով իրարու նշանած էր երկու սիրահարները: Եւ ահա այդ օրէն սկսեալ ժազ և Գլէր նշանածութեան երջանկութիւնը վայելել պիտի սկսէին...:

Բայց անշուշտ անբացատրելի և խորհրդաւոր գազանիք մը կար գործին մէջը որ այն օրէն սկսեալ ժազ ալ մէյ մըն ալ ո՛չ Վօթիրար փողոցը գնաց, ո՛չ իր Հարթ փողոցի բնակարանը և ո՛չ ալ Տանթօնի գրասենեակը:

Յանկարծ աներևոյթ կղած էր:

Ոչ ոք տեսած էր զայն և ոչ ոք կը խօսէր անոր մասին:

Անկէ անդին շաքաթներ անցած էին:

Մանկամարդ ազջիկը չի կարենալով ո և է բացատրութիւն մը տալ այս յանկարծական աներեւութացու-

մին, հիմա, արցունքը աչքերուն, արևուր մտածումնե-
րու մէջ թաղուած՝ ինքնիրենը կը փսփսար:

— Ալ կասկած չի մնաց, ալ չպիտի գայ:

Բայց յանկարծ դէմքին վրայ զուարթութեան ար-
տայայտութիւն մը նշմարուեցաւ: Ուրախութեան ա-
բաղակ մը փրթաւ սրտէն:

— Ա՛ն է, ա՛ն է:

Ժաք Քօթըրօ, գլուխը բաց, դեմքի դեղին կարած,
վրան գլուխը փոշիներու մէջ, հեւալով խանութէն
ներս մտաւ:

Գլէր, թեւերը բացած՝ անոր վրայ վազեց: Խեղճ
աղջիկը այնքան յուզուած էր որ՝ քիչ մնաց պիտի
իյնար... բայց ժապ դայն իր թեւերուն մէջ առաւ:

Մանկամարդ աղջիկը գլուխը իր նշանածին ուսին
դրաւ, և այսպէս, պահ մը, երկու սիրահարները իրա-
րու երես նայած մնացին: Իրենց սէրը միշտ միեւ-
նոյնը մնացած էր և երկար ատենէ ի վեր իրար տե-
սած չըլլալով, հիմա կարծես թէ առաջուանէն աւելի
կարօտացած էին զիրար:

Գլէր տեսնելով որ նշանածին զգեստները տակն
ու վրայ եղած էին և գլուխն ալ գլխարկ չիկար, մտա-
հոգութեամբ հարցուց:

— Ի՞նչ եղար, գլխուդ ի՞նչ եկաւ:

Երիտասարդը պատասխան տալու ժամանակ չունե-
ցաւ...: Մաքսիմ Արտուէն մէկէն ի մէկ խանութէն
ներս մտած և անոր դէմը ցցուած էր:

Երկու նշանածները զայն տեսնելուն պէս իրարմէ
զատուեցան:

Արտուէն զարմացական նայուածքով մը ժապի ե-
րեսն ի վեր նայելով՝ լուրջ և ծանր շեշտով մը հար-
ցուց:

— Ինչո՞ւ ատանկ մէկէն ի մէկ մեկնեցար: Ինչո՞ւ
ձեր մասին լուր չի գրկեցիք մեզ:

— Կը խնդրեմ, այդ մասին զիս մի՛ հարցափոր-
ձէք, առ այժմ բան մը չեմ կրնար ըսել ձեզ, պատաս-
խանեց ժաք Քօթըրօ արևուր եղանակով մը:

Ժողովուրդին նեկայացուցիչը թշնամական ու
կասկածոտ նայուածքով մը անոր նայեցաւ, իսկ Գլէր,
զգալով որ բուն վիճաբանութիւն մը պիտի պայթէր
հօրը և նշանածին միջեւ, աչքերը կիսովին դոցեց:

— Միայն սաչափը կրնամ ըսել ձեզ որ, չափէն
աւելի կը սիրեմ ձեր աղջիկը և անոր ձեռքը կը խըն-
դրեմ ձեռնէ, չարունակեց ժաք Քօթըրօ:

Արտուէն պատասխան չի տուաւ: Դէմքը խիստ և
անողոք արտայայտութիւն մը ստացաւ. հայր ըլլալէ
զապրած էր՝ ան այլեւս, դատաւոր մը եղած էր, դա-
տաւոր մը որ, առանց աջ ու ձախ նայելու, իր անու-
ղօք վճիռը պիտի արձակէր:

Գլէր անգամ մը հօրը երեսը նայեցաւ, և յետոյ
իր հոգիին բոլոր թափովը գոչեց:

— Հա՛յր, հա՛յր, ես ալ զի՛նքը կը սիրեմ:

Այս խօսքին վրայ ժաք գլուխ ամբոխավարին
դէմքը անուշցաւ: Աղջիկը ուղղակի իր սրտին թիւե-
րուն դպած էր:

Եւ ժաք Քօթըրօյի մօտենալով, միշտ միեւնոյն
հեղինակաւոր շեշտովը ըստւ.

— Երգումը բամ եմ որ աղջիկս հայրենասէրի մը
պիտի տամ: Հայրենիքը վտանգի մէջ է: Գնա՛՛ զին-
ւոր արձանագրուէ, իբրեւ կտրիճ կուռէ՛, պատերազ-
մէ՛, յաղթական վերադարձիր և աղջիկս քու կը գէ:

Ժաք Քօթըրօ լուեց: Ի՛նչեր կ'անցնէին իր սրտին
մէջէն...: Որքա՛ն յուզուած էր տարաբաղդ երիտա-
սարգը:

Գլէր անոր քով վազեց և անոր ձեռքը բռնելով՝
հարցական նայուածքով մը ուղղակի անոր աչքերուն
մէջ նայեցաւ:

ժաղի ճակատը խորշումեցաւ, խորհրդաւոր ամպ մը
եկաւ աչքերը պատեց և կարծես թէ ներքին կոխ մը
սեղի կ'ունենար իր մէջը, պատասխան չի կրցաւ
տալ...: Ինչո՞ւ կը լռէր արդեօք... Ի՞նչ զաղանիք
կրնար ունենալ այդ տարիքը՝ ունեցող պարկեշտ ու
մաքրասիրտ երիտասարդ մը:

— Ինչո՞ւ պատասխանելու կը վարանիս, հարցուց
Արաուէն յօնքերը պատելով:

ժաղ Բօթըրօ մէկէն ի մէկ ինքզինքնին գալով՝
զլուխը վեր բարձրացուց և գոչեց.

— Շա՛տ լաւ, ա՛նա կ'երթամ:

Եւ իր նշանածին զոգոջուն ձեռքը չըթունքնե-
լուն տանելով համբուրեց:

Յեռոյց, առանց ժամանակ կորսնցնելու, յարգալիբ
բարեւ մը տալով Արաուէնի, ինքզինքը զուսնէն ներս
նետեց:

— Ո՛հ, հա՛յր, ի՞նչ պիտի ըլլայ վիճակս եթէ
մէյ մըն ալ չի վերագտնայ, փոփսոց Գլէր սիսելով
հեծկլտալ:

Արաուէն, հայրական խանդազատանքով մը կուրծ-
քին սեղմեց իր ազջիկը, և իր հաւատքին սիրոյն միշտ
մեռնելու կազմ ու պատրաստ անաքեալի մը անուշ այլ
միանգամայն լուրջ կզանակովը ըսաւ.

— Աղջիկս, հայրենիքը ամ ն բանէ վեր և ամէն
բանէ առաջ:

— Աստուած իմ, Աստուած իմ, պահապան եղիբ
անոր, հառաչեց մանկամարդ ազջիկը ցաւազինօրէն
զլուխը խոնարհեցնելով:

0134 45
6134 45

ՀԱՅՐԸ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՆ

ժաղ Բօթըրօ ունեցած ուժովը գէպի Բօն Նէօֆ
վաղեց: Ժողովուրդին ամէն գասակարգէն մարդիկ մըր-
ջիւններու պէս հոն խոնուած՝ զինուոր կ'արձանա-
գրուէին: Երբ ժաղ հասաւ այն ամպրոնին քովը որուն
վրայ արձանագրութեան տետրակները մէկ կողմէն
ստորազրու թիւներով կը լինային, ներկաները բուսն
կերպով կէչեօմ Լըֆրանը, Վիքթուարը և փոքրիկ Նի-
քօլան ծափահարելու վրայ էին: Այդ ծափահարու-
թիւններուն պատասխանելով «Կեցցէ ազատութիւնը,
կեցցէ ազգը, կեցցէ Ֆրանսան» կը պոտային Լըֆրան
ընտանիքին երեք անդամները:

Անոնց ետին զինուոր արձանագրուողներու խումբ
մը ազգային յայկերգէն տուն մը կ'երգէր:

ժաղ մեծ գծաւարութեամբ ճամբայ բանալով իրեն՝
ամպրոնին մօտեցաւ:

Բայց մէկէն ի մէկ կանգ առաւ: Սրան մէջ խոր-
հրդաւոր կոխ մը սկսած էր... կը վարանէր...: Ինչ-
ո՞ւ արդեօք: Ի՞նչ էր արդեօք զինուոր արձանագրուիլ
չուզելուն պատճառը... Ինչո՞ւ այսպէս կը վարա-
նէր...: Արդեօք կը վախնա՞ր...: Ո՛հ...: Դէմքէն ա-
նանկ յայտնի կ'ըլլար որ անշատ յաջ երիտասարդ
մըն էր...: Արդեօք քաղաքական գաւանական ասարեք
մըն էր...: Մինչև այն օրը Գլէրի սիրով
զբաւուած, իր սէրէն ուրիշ բանի վրայ չէր մտածած
և ըստ երևոյթին անանկ ցոյց տուած էր որ Ֆրան-
սան տակն ու վրայ ընող և մինչև անգամ ամբողջ
Եւրոպան ցնցող այդ քաղաքական գէպերը զինքը
գնաւ չէին հետաքրքրեր:

Արիւնաբու կի՛նր



Ասանց ամէնքն ալ աղէկ, ուրեմն ի՞նչ էր և ի՞նչ կրնար ըլլալ իր ներքին կոխը... Ինչո՞ւ համար իր պարտականութիւնը կատարելէ կը խուսափէր... միթէ այդ միջոցով չէ՞ր որ պիտի տիրանար իր սիրածին: Ուրիշ ի՞նչ պարտականութիւն կը ծանրանար իր ուսերուն վրայ որ թոյլ չէր տար իրեն Արտուէնի կամքը կատարել:

Բաներ մը կար, այո՛, խորհրդաւոր բաներ մը կար, բայց Գլէրի սէրը յաղթական պիտի ըլլար:

Անա այսպէս, ժապ Քօթըրօ, իր սրահին ձայնը մտիկ ընելով, սաքը ամպիոնին առաջին աստիճանին վրայ դրաւ և երբ երկրորդ աստիճանը պիտի կոխէր... յանկարծ... գօրաւոր ձեռք մը ուսէն բռնեց և եղած տեղը կեցուց զինքը...:

Ժապ մէկէն ի մէկ ցնցուելով ետին դարձաւ:

Երկայն մագերով, կատուի պէս լուսավառ աչքերով, խորչամած այտերով և ձգնաւորի գէմքով բարձրահասակ գիւղացի մը, իշխանական ճեղքնակութեամբ մը անոր գէմը ցցուեցաւ և յանդիմանական սարսափելի նայուածքով մը ուղղակի անոր աչքերուն մէջ նայիլ սկսաւ:

— Հայրս է, մոլտաց ժապ յանկարծակիի գալով և ա՛ն ու զօղի մասնուելով:

Ն. ըրածին վրայ ամչնալով գլուխը ծակց:

— Առջի՛ս ինկիր նայիմ, հրամայեց ժապի հայրը՝ ժան Քօթըրօ՝ բացարձակ տիրոջ մը եղանակովը:

Երիտասարդը, զսպուած գառնուկի մը ճեղքութեամբը անոր հետեւեցաւ:

Ասանց մէկէ մը նշմարուելու, հայր ու աղայ բազմութիւնը ճեղքեցին և Բօն Նէօֆի կամուրջէն անցնելով Ա՛ն գետի աջ կողմը անցան և հոնկէ Տօֆին փողոցը մտան: «Անազէ Աման» անունով կապերային



առջև կանգ առին: Այս կապերային պատուհանները կարմիր և ճերմակ վարագոյրներով ծածկուած էին:

Ժան Քօթըրօ կապերային դուռը հրելով ազուն հրամայեց.

— Նե՛րս մտիր սրկէ:

Երկուքը մէկէն մտան սիկատի մախով լեցուն ցած ձեղունով օրահ մը: Այս սրահին մէջ փայտէ խոշոր ու կոշտ սեղաններ կային սրտեց առջև, նստարաններու կամ փայտէ հոտանի աթոռներու վրայ, քանի մը հողի նստած կը խմէին:

Քաղաքացի գինեպանը. մերկ թևերով մազոտ հսկայ մը որուն անունը կէկան էր, գլուխը եռագոյն գրօշակիկով զարգարուած զգակ մը դրած և չրջապատուած նոր արձանագրուող գինուորներու բազմաթիւ խումբէ մը, հայրենիքին կենացը դաւաթ կը պարպէր:

Գինեպանին կինը, խեղճ ու կրակ ախեղճ արաբած մը, որուն մասին ամէնքը այն կարծիքը ունէին թէ վախկոտ ու կամագուրկ կնկանը մէկն էր, երկչոտ նայուածքով մը մէկ կողմէն ներս մանող երկու հողիին կը նայէր, միւս կողմէն լաթի կտորով մը սեղան մը սրբէր:

Ժան Քօթըրօ ազուն հետ անկիւն մը սեղանի մը առջև նստաւ: Գինեպանուհին երկչոտութեամբ և կասկածոտ նայուածքով մը անոնց մօտենալով՝ հարցուց թէ ի՞նչ պիտի անէին... բայց այս միջոցին խլապուցիչ ազմուկ մը լսուեցաւ փողոցէն:

Ժողովուրդը, թափօր մը կազմած, յաղթական խանդախտութեամբ մը գինովցած, ծափ զարնելով, պոսչաւով, ուրախութեան և հայրենասիրական ազդակներ արձակելով, կօշկակար Լըֆրանը և իր կինը ուսընդանութ կը տանէր:

Փոքրիկ Նիքօլան, իրմէն մեծ թմբուկ մը անցուցած զիզը, թափօրին առջևէն կը քայլէր, թմբուկը

ըստ կամս կը դարնէր և ունեցած ձայնովը կոկորդը պատահելու աստիճան կը պրտար.

Հայրենիքի սրգիք, յատու՛ջ,

Փռոքի օրը ահա հասաւ.

Բռնակալներ կան մեր ասաջ.

Գրօջն արիւնտա պարզուեցաւ . . . :

Թափօրին անցած ասենը՝ կիները պատուհաններէն ծագիկներ կը նետէին, անուններն զանուողները փողոց կը նետէին ինքզինքնին և թափօրին կը հետեւէին, այնպէս որ զինուոր արձանագրուող հայրենասէրներուն թիւը հեռո՛հեռէ կը շատնար:

«Անագէ Աման» կապեղային մէջ մէկէն ի մէկ մարդ չի մնաց, ամէնքը դուրս նետուեցան և ժողովուրդին հողին խորհրդանշող այգ թափօրին միացան:

Թափօրը թեւ ատամ կը թռչէ՛ր, կը թռչէ՛ր դէպի ազատութիւն, կը ջախջախէր, ոտնակոխ կ'ընէր ամէն խոչընդոտ և կը քալէր դէպի իր ազատութիւնը:

Գինետան գուռը գոցուելուն պէս, գինեպան քաղաքացի կէկան, վայրագ շարժումով մը խից հանեց գլխէն կարմիր գլակը և նողկանքով մը դայն իր գոցնոցին գրպանը դրաւ:

Ասոր վրայ, գինեպանուհին գողգողով գինեպանին սեղանին մօտենալով, քիչ մը ատաջ ներս մանող երկու ցածախորդները ցոյց տուաւ անոր աչքի նայուածքով մը . . . : Գինեպանը անոնց ներս մանելը անսամ չըլլալով՝ ուղղակի կնո՛ջ ցոյց տուած կողմը նայեցաւ և անմիջապէս ձեռքը գրպանը խոթելով կարմիր գլակը նորէն դուրս քաշեց և երբ նորէն գլուխը պիտի անցընէր . . . Ժան Բօթրքօ սօքի ելաւ, հաստատ քայլերով գինեպանին մօտեցաւ, աջ ձեռքը չըթուռնեց և արագ շարժումով մը խաչի նշան մը ըրաւ:

Գինեպանը ձեռքի կարմիր գլակը նորէն գրպանը

գնելէ յետոյ, ինքն ալ չըթուռնեցաւ վրայ խաչի նշան մը ըրաւ:

Ասոր վրայ, Ժան Բօթրքօ անոր մօտենալով՝ ցած ձայնով անոր ախանջն ի վար ըսաւ.

— Հո՛ս են:

— Ո՛չ գեռ չեկան, բայց հիմա ուր որ են կուգան, պատասխանեց գինեպանը:

Գինեպանուհին ետ ետ քաշուելով, գրան կողմը աչք մը նետեց: Ժագ, գինետան մէկ անկիւնը քաշուած, անշարժ սօքի կեցած էր:

Ժան Բօթրքօ ցած ձայնով սկսաւ խօսիլ քաղաքացի կէկանի հետ: Բաւական մը խօսելէ յետոյ, գինեպանը գլխու հաստատական շարժում մը ընելէ յետոյ, գինեպանը սրահին խորը գնաց, վարագոյրի մը անջին կեցաւ և վարագոյրը վեր վերցնելով՝ կաղնեփայտէ շինուած հաստատուն գուռ մը երեւան հանեց, բանալին գարձուց և գուռը բացուեցաւ:

Ժագի հայրը գլխու նշան մը ըրաւ իր տղուն, և երկուքը մէկ գինեպանին հետեւէն ներս մտան այգ գուռնէն:

Միշտ գինեպանը անջեւեղին, հայր ու աղայ քարէ նեղ սանդուխէ մը վար իջնելով շտեմարան մը մասն որուն մէջ խարխլած սեղան մը քանի մը հատ ալ որդնտած փայտէ աթոռներ կային:

Այս շտեմարանը իր լոյսը կը ստանար կամարածեւ ձեղունին վրայ բացուած լուսամուտէ մը, որ ըստ երևոյթի ին ներքին բակի մը վրայ կը նայէր:

— Գալերնուն պէս հոս կը բերեմ, ըսաւ գինեպանը:

Ժան Բօթրքօ գլխովը հաւանութեան նշան մը ըրաւ, իսկ քաղաքացի կէկան հայրն ու որդին ատանձին ձգելով դուրս ելաւ:

Ասոր վրայ, ձերուսի գիւղացին խիստ ու բարկա-

ցոտ նաշուածքով մը ուղղակի իր զաւկին երեսն ի վեր նաշկելով ըստ .

— Եւ հիմա, սղաս, հաշխնիս մաքրենք:

— Անտանկ թող բլլայ, հայր իմ, պատրաստ եմ, պատասխանեց ժազ ցաւազին եղանակով մը, այլ արժանաւայել կեցուած մը տալով ինքզինքին:

Ժան Գօթըրօ վերջին աստիճան բարկացած, խիստ չեչուով մը խօսք ասաւ .

— Հօրդ օճախը ձգելով տունէն փախար, ասիկա չէր բաւեր, մէյ մըն ալ ելար՝ քեզի բռնի կերպով հօրդ տունը վերագարձնելու համար գրկած մարդոցս ձեռքէն ալ փախար . . . ինքզինքիդ արժանի կը տեսնե՞ս կոր այս ընթացքդ, ըսէ՛ նաշխմ . . . :

— Այո՛, հայր իմ, պատասխանեց ժազ վճառական եղանակով մը: Իրաւ, թէպէտ ձեզի հանդէպ մեծ յարգանք ունիմ ե կը խոնարհիմ ձեր հայրական իշխանութեան առջեւ, բայց թոյլ տուէք որ ազատօրէն ձեզի ամէն բան ըսեմ: Այ չափը անցուցիր, ալ համբերութիւնս հատաւ, այլեւս չի կրցայ հանդուրժել . . . : Ի՞նչ կարծեցիր, հայր, միթէ ես գո՞ղ մըն էի, չարագործ մըն էի որ զիս բռնել տալով ձեռքերս ու սաքերս կապել սուիք, բերանս լաթ մը թխմեցիր ե կառք մը նետելով ծննդավայրս գարձուցիր ե հոն ալ բանտի պէս տեղ մը նետեցիր: Ի հարկ է որ բանտէն պիտի փախչէի, ե կարծեմ թէ իրաւունքիս մէջն եմ, ինքզինքն ազատեցի:

— Թշուառական, որուն գէմը ասանկ զիմադարձութիւն կ'ընես կոր, գէմինդ ո՞վ է, գոչեց ժան Գօթըրօ մոլեռանդաբար:

— Ա՛յ, հայր, բրածս զիմադարձութիւն չէ, ինքնապաշտպանութիւն է:

— Ինքպաշտպանութիւն է, ինձի՞ գէմ, դուն ո՞վ ես որ ինքզինքդ պիտի պաշտպանես, դուն տակաւին

իմ պաշտպանութեանս կը կարօտիս: Ասկէ երեք տարի առաջ, տուներնիս ձգած հեռացած օրէզ ի վեր ամէն օր Աստուծոյ կ'աղօթեմ որ քեզի խելք միտք տալով նորէն տուն վերագարձնէ: Բայց երկնաւոր թագաւորը աղօթքս չի լսեր, կ'երեւայ թէ անոր ալ սկանջը քու կինիդ պէս խուլցեր է . . . : Դուն իմ խրատներս մտիկ ըրի՞ր, իմ կամքիս հպատակեցա՞ր որ Աստուած ալ աղօթքներս մտիկ ընէր: Ահա ես ալ ատոր վրայ, տեսնելով Բարիդի մէջ պատահած սա սարսափելի զէպքերը, մեր Աստուծուն ե մեր թագաւորին գէմ ցցուալ սա յեղափոխութիւնը, կորուստի մատնուած, ամբարիշտ, ամբարտաւան, ատելութեամբ ե քինախնդրութեամբ թունաւորուած, դժոխքէն վնասուած սա նենգամիտ ու ապականած մարդիկը, քեզի այս զժբաղչութեանց բոյնէն, սա անիծեալ մայրաքաղաքէն միանգամ ընդ միշտ հեռացնել ուզեցի: Չի կարենալով քեզի համոզել, հոգիդ սա դժոխքէն ազատելու համար պարտաւորեցայ բռնի ուժի զիմել: Բայց սատանան օգնեց քեզի ե նորէն ձեռքէս փախչելով ինքզինքդ սա հրաբուխին խոսնարանին մէջը նետեցիր: Հայրենիքս ձգեցի, քեզի գտնելու համար վազեցի Բարիդ եկայ ե այն միջոցին որ քեզ ազատելով նորէն տուն վերագարձնելուն վրայ կը մտածէի, ո՞վ զժբաղչութիւն, գէմս ելար, ե ի՞նչ գէմս ելլալ, Աստուած իմ, իր հաւատքը ուրացող մէկո՞ւ մը երեսով, նոր զազափարնելու յարած միջոցիդ:

— Հայր, հայր, մեր պապերուն ու մեր նախնիքներուն հաւատքը կործարիս տակը միշտ անխախտ մնացած է, գոչեց ժազ:

— Ինչո՞ւ ուրեմն գահին ու խորանին թշնամիներուն զինուոր կ'արձանագրուէիր, գոչեց զիւզացին: Ժազ տակն ու վրայ եղած, պատասխան չի տուաւ: Հայրը կատաղութեամբ մոնչեց:

— Թշուառակա՛ն, կը սանս կոր, սո՛ւա կը խօսիս կոր, գուն հաւատաւքաց մըն ես, դաւաճան մըն ես գուն... :

— Հա՛յր, կ'երգնո՛ւմ, կ'երգնո՛ւմ որ... :

Քօթըրօ, ինքզինքէն դուրս ելած, դաւկին ձեռքերը բռնեց ուղղակի անոր աչքերուն մէջ նայեցաւ : Ժազ այս անգամ վճռակոնորէն գոչեց .

— Գեղեցիկ և բարի աղջիկ մը կը սիրեմ որ մեղի պէս հաւատացեալ է... :

— Ո՞վ է, գոչեց գիւղացին, անասնաբար անոր խօսքը կտրելով :

Ժազ չի պատասխանեց :

— Ինչո՞ւ չես պատասխաներ, ինչո՞ւ ով ըլլալը չես ըսեր... ամբոխավարի մը կամ յեղափոխականի մը աղջիկն է, անանկ չէ՞, անոր համա՞ր չես համարձակիր անունը տալ :

Եւ բրտօրէն ես հրելով գաւակը կակաղեց .

— Գիտէ՛ր արդէն, գիտէ՛ր քու դաւաճան մը ըլլալի :

Ժազ յուսահատութեան մատնուած, գոչեց .

— Հա՛յր, մարդս կրնա՞յ իր սիրտին սիրածը ինքը չսիրել... :

Եւ ինքզինքը աթոռի մը վրայ նետելով, գլուխը ձեռքերուն մէջ առաւ, և կուրծքը պատուելով ինքզինքը դուրս նետել ուղող հեծկրտուքը խեղդել ուղեց :

Ժան Քօթըրօ կամաց կամաց անոր մօտեցաւ : Իր գաւկին վիշտը այնքան մեծ էր, այնքան անսահման էր որ, երբ անոր վիճակը տեսաւ, բարկութիւնը քիչ մը իջաւ : Բայց միշտ անորդուելի մնաց :

— Զաւա՛կս, պէտք է որ հրաժարիս այդ կնոջ մէն, ըսաւ խիստ ձայնով մը և հանդիսաւոր շեշտով մը .

— Հայր իմ, հա՛յր, մեռնի՛լ հրամայեցէք ինձի և ինքզինքս պիտի սպաննեմ, բայց ստանկ բան մի՛

պահանջէք ինձմէ, գոչեց երիտասարդը գէմքին վրայէն մէկէն ի մէկ ձեռքերը քաշելով :

Ասոր վրայ, անանկ վաւեր չեղաւով մը որուն մէջ աղնուական գերդաստանի մը վայել վեհագոյն չեզրիտեր ինչ մը կար է որ միանգամայն գիւղացիին գէմքին հայրական վսեմութիւն մը կուտար, Ժան Քօթըրօ ըսաւ .

— Ժազ, գաւակս, մի՛ մտնար մեր պղտիկ հայրենիքը, մի՛ մտնար մեր գիւղը, մեր ագարակը, մեր դաշտերը, մեր անտառները, մեր մարդագետիւնները, մեր եկեղեցիին ուր ամէն կիրակի պատարագէն վերջը նստանեօք կ'երթայինք աղօթել մեր պապերուն զեղեզմանին վրայ :

— Զե՛մ մտցած, հա՛յր, չե՛մ մտցած, փախաց ժազ ջախջախուած ձայնով մը :

— Մի՛ մտնար և յիշէ, գաւակս, մեր երիտասարդ ջոջերուն՝ մարքիկ և մարքիզուհի Թօրինէի դղեակը : Գիտե՛ս, երբ մեր գիւղին մարդիկը ածական օրերուն կը հաւաքուէին անոնց պղեակին մեծ բակին մէջ ու ձեռք ձեռքի տուած կը պարէին, մարքիզն ու մարքիզուհին ալ ձեռք ձեռքի տուած, առանց իրենց համար պղտիկութիւն սեղելու ըրածնին, իրենք ալ կուգային կը մասնակցէին պարերուն... : Մի՛ մտնար ասոնք, դաւա՛կս, մանուաւնց մա՛յրդ, մա՛յրդ, այդ սուրբ և պաշտելի արարածը բնաւ մոռնալու չես... :

Ժազ, երբ այս վերջին բառերը լսեց, ամբողջ նօգիովը սարստաց :

— Յիշէ՛ անոր վերջին վայրկեանները, չարունակեց հայր Քօթըրօ յուզումէն գողզացող ձայնով մը : Մայրդ անկողնին վրայ սարածուած էր... մահը երեսէն կը կարգացուէր և մահուան սարուսը հողիէն ներս մտած էր : Աչքիկ առջիւր բեր մէկ մը, մեր սառներէցը վերջին սուրբ ձաշակը սալէ ետքը մեկնած էր :

Ես մահուան սնարին քովը սաքի կեցած էի, զուն ծունկի եկած էիր անոր օտջեւ: Բարի կիւնը ձեռքը քու գլխուդ վրայ գնելով ի՞նչ փոփոց. «Փայ, դաւակա, երչում ըրէ ինձի որ միշտ բարի դաւակ մը պիտի ըլլաս և քու լոյս հաւատքիդ մէջ անխախտ պիտի մնաս» ջրաս: Գուն ալ ձեռքդ անոր երկարելով երզում չըրի՞ր: Է՛հ, մայրդ ասոր վրայ վերջին ժպիտ մը ունեցաւ և թեւերուս մէջ իյնալով հոգին աւանդեց: Անոր անկենդան ձեռքը համբուրողը զուն չէի՞ր, Փա՛ղ, դաւակա:

— Այո՛, հայր, ե՛ս էի, ատոնց ամէնքն ալ կը յիշեմ, բաւ Փայ հեռացող ձայնով մը:

— Այո՛, զո՛ւն էիր, բայց նորէ՛ն զիս ձգեցիր, նորէ՛ն իմ քովէս հեռացար, գոչեց զի գացին յուսահատութեամբ և բարկութեամբ խառն ազգակիով մը:

Փայ կարծես թէ աներևոյթ գազանակէ մը մզում ըլլար, մէկէն ի մէկ հօրը գէմը ցցուեցաւ և գոչեց.

— Ներողութի՛ւն, հայր, ներէ՛ ինձի...:

Փան Քօթըրօյի գէմքին վրայ ու բախտութեան վսեմ փայլակ մը նշմարուեցաւ: Բայց իր համոզումէն սարսուած, իր հաւատքին վրայ հաստատ, իշխողական տիրապետող շարժումով մը բաւ.

— Այդ կիսկը պիտի մոռնաս, ալ անոր վրայ չի պիտի մտածես:

— Բայց հայր իմ...:

— Այո՛, այլևս դայն պիտի մոռնաս: Ես հոս, աշխարհքին մէջ կը պահանջեմ աս բանը քեռէ, իսկ մայրդ, հոնկէ, վերէ՛ն կը պահանջէ:

— Մայր իմ, ին՛՞զմ մայր...: գոչեց Փայ բնագրական ազգակիով մը:

Չափահաս մարդիկը երբ ատուապանքի մէջ ըլլան, ազոց կը նմանին: Անոնց պէս ազգակիներ կ'արձակեն և անոնց պէս իրենց մայրը կ'ողակոչեն:

Եւ Փայ այս անգամ այլևս հօրը իշխանութեան տակ ինկած, ապրելով այն վայրկեանները ուր մայրը հօգեվարքի անկողնին մէջ ձեռքը իրեն կ'երկարէր և երզում ընել կուտար իրեն, ազգակ մը արձակեց, և այդ ազգակին մէջ ամբողջում էր հոգիին ամբողջական թախիճն ու զոհարկութիւնը:

— Ո՛հ, անկարելի՛ է, սարսափելի՛ բան է, սարսափելի՛, բայց պիտի մոռնամ, պիտի մոռնամ...:

Փան Քօթըրօ, նահատակուելու պատրաստ հաւատացեալի մը խանդովը, իր հաւատքը ու իշխանութեան հազորակ ու զոյ խոստովանահօր մը պէս այլակերպուած, ըսաւ.

— Մեր երկին մէջ պատերազմի պատրաստուելու վրայ են: Ազնուականները, կղերականները և գիւղացիները բոլորն ալ իրարու հետ միացած են և սատանային զինուորներուն գէմ պիտի կուտին: Հիմա կու հաւ քիչ ենք, ափ մը մարդիկ, բայց շատ չանցած լէզէններ պիտի ըլլանք: Գաւաղիներն ու թագաւորին գէմ մեքենայութիւններ լարողները վերջնակէ և մեր վար անուամ խաչերը նորէն իրենց տեղը գնելէ յետոյ, Լուի ատանըվեցերորդը իր գահը պիտի բարձրացնենք: Այո՛, իր գահը պիտի բարձրացնենք սուրբ Լուիի թողը, Լուի ատանըվեցերորդը. Աստուծմէն ետքը ա՛ն է մեր ակըրը. մեր թագաւորը և մեր հայրը: Հրաչքներ կրնանք գործել մենք. ի վիճակի ենք և պիտի գործենք: Մեր երկի՛րը վերագործիր, դաւակա, եկո՛ւր, մեզի հե՛տ եկուր և մեր գաւաւոր ու տոհմային սովորութիւններուն համար կրու՛ւ մեզի հետ: Մեզի հե՛տ եկուր և ինչպէս որ ես ներկցի, Աստուած ալ անանկ պիտի ներէ քեզի:

Եւ ինչպէս որ երկու հազար տարի ստա՛ջ Քրիստոս իր թեւերը պարզած էր խաչին վրայ, նոյնպէս նաև Փան Քօթըրօ բացաւ գաւակին ասջեւ:

Ո՛հ, ի՛նչ դմայելի և յուզիչ տեսարան: Մայկնցի

գիւղացիին որքա՞ն վե՛ն ու վսեմ էր իր այս գիրքին մէջ. աչքերէն ու անձէն հաստաքի աղբււր մը կը բզկէր և գինքը կ'այլափոփէր, այլակերպութիւն մը տեղի կ'ունենար իր դէմքին վրայ, և որքա՞ն զրաւիչ ու յուզիչ էր այդ այլակերպութիւնը: Միտունի գիւղացիին իր այս գիրքին մէջ որքան կը նմանէր Մաքսիմ Արտուէնի: Միթէ Գլէրի հայրը Օրէնսդիր ժողովին մէջ իր թեւերը անոր պէս խաչաձև չէ՞ր պարզած, և Արտուէն, Ապագային Մարզը, իր բոցեղէն Բանին զօրութեամբը իր ունին լիրերուն հողիին մէջէն չէ՞ր անցուցած աղատութեան սրբազնացուրը սարսուտին հոգեցունց հոտանքները...: Սրբազնասու՛րը աղատութեան, այո՛, Ապագա՞ն էր ան, բայց ժան Քօթըրօ, Անցեալին Մարզը, չէր կրնար ձանձնալ, չէր կրնար ընմբռնել այդ աղատութիւնը: Անցեալն ու Ապագան էր ուրեմն որ իրարու կը զարնուէին...: Ի՞նչ բազխում...:

Ի՞նչ էր այդ երկու մարդոց տարբերութիւնը: Մէկն ալ իր թեւերը կը ցանար, մի՛ւսն ալ. մէ՛կն ալ քիրատոսի քրածը կ'ընէր, մի՛ւսն ալ. մէ՛կն ալ քաջ էր, մի՛ւսն ալ. մէ՛կն ալ մեծ էր, մի՛ւսն ալ...: Բայց մէկուն մէջ նորակերտ քաղաք մը կար, միւսին մէջ՝ հաւուսըց գիւղ մը: Ահա՛...: Հին և Նոր: Բայ և գոց...:

Ժաղ այսպէս մտածեց, և չի կարենալով զիմանալ իր աչքերուն ասջև պարզուող այս ահաարանին, ուրուն վրայ կը սաւառնէր իր զրախտաբնակ սուրբ մօրը պատկերը, հօրը վզին փաթթուեցաւ և գոչեց.

— Այո՛, այո՛, հայր, ձեզի պիտի հետեւիմ՝ և այլևս ձենէ չի պիտի դատուիմ:

— Է՛հ, փա՛ռք քեզ, Աստուած, փա՛ռք քեզ, կորսուած գաւակս գտայ, գոչեց Քօթըրօ զայն իր կուրծքին սեզմելով:

Այս միջոցին սանդուխին վրայէն ոտքի ձայներ հկան:

Հայր ու տղայ իրարմէ լսածուեցան:

Իրարու հտուէ, առնական զէմքով չորս հողի մըսան ներս:

Չորսն ալ պարզ զգեստներ հագած էին, բայց անոնց քալուածքէն անանկ յայտնի կ'ըլլար որ՝ չ'որսն ալ աղնուական էին:

Ժան Քօթըրօ անոնց մօտեցաւ և մեծ յարգանքով բարեւեց զանոնք: Յետոյ, ժաղը ցոյց տալով անոնց՝ ըսաւ.

— Տղաս է:

Եւ ազուն զաննալով և նորեկները ցոյց տալով՝ աւելցուց

— Պարոն Լէսքիւրը, պարոն Տէլպէն, պարոն Շաբէթը և պարոն Ռօշժաղէն մարքիղը:

Ժաղ անոնց ասջև խոնարհութիւն մը ըրաւ: Քօթըրօյի տղան թէպէտ զանոնք անձամբ չէր ձանչնար և ոչ ալ անոնց անունը լսած էր, բայց անոնց սասկառական կեցուածքէն հասկցաւ որ աղնուական անձնաւորութիւններ էին անոնք:

— Շնորհակալ եմ, պարոններ, որ ինձի պէս համեստ գիւղացիի մը կոչին պատասխանեցիք և վաղեւզեցիք եկաք, խօսք տաւ ժան Քօթըրօ ասանց ժամանակ կորսնցնելու: Ինչպէս գրկած մարդոցս միջոցաւ իմաց տուած էի ձեզի արդէն, որոչւմ եմ տիկին Թօքրինէ մարքիղուհին բանտէն ազատել: Ամէնքդ ալ գիտէք արդէն որ մարքիղուհին բանտարկուած է Ապէլի բանալը. որոնց կողմէ բանտարկուած ըլլալն ալ գիտէք, զահը և խաչը հալածող յեղափոխականներուն կողմէ: Ուշ մնացած ենք արդէն: Խու՛մք խու՛մք ապստամբներ Բարիգի փողոցներէն վազելով «Անկյի՛ն մենձ ազանեւրը, մահ՛ ջոջերուն» կը պոսան: Քիչ մը ասաջ, Բօն

Նէօֆէ կամուրջին գլուխը բանախօս մը ամպիոնի մը վրայ ելած՝ կը հրաւիրէր ժողովուրդը որ ջարդէ արքայականները և կ'ըսէր թէ ջարդը բանտարկեալներէն սկսելու է: Կանխելու ենք զանոնք, պարոններ, անոնցմէ ատաջ գործի սկսելու ենք և ազատելու ենք մարքիզուհին: Անմեզ զո՞ մըն է ան, բնաւ յանցանք չունի: Մի՛ մոռնաք, պարոններ որ զայն ամէրդ ալ «մեր նախախնամութիւնը» կը զօշէինք մեր երկրին մէջ:

— Քա՛ջ Քօթըրօս, յոյսդ մեր վրայ գնելով և մեզի ազատիներով շատ ազեկ բան մը ըրեր ես, ամէ՛նքս ալ քեզի համակարծիք ենք և քու հետո պիտի ըլլանք, պատասխանեց երիտասարդ մարքիզ Ռօշժագլէն աշխուժիւ:

— Չայն փախցնելու համար յատակագիծ մը կամ ծրագիր մը պըտրատա՞ծ ես, հարցուց պարոն Լէսքուբ որուն զէմքէն յայտնի կ'ըլար պագարիւնութեամբ գործոց գործուեալ մէկը ըլլալը:

— Այո՛, պարոն մարքիզ, պատասխանեց Քօթըրօ:

— Բացտորէ՛ տեսնենք, ըսաւ պարոն Տէլպէ՛ որուն նրբակազմ ուրուագիծերը ազնուապետական ջնջուած օրերու շրջանները յիշեցնել կուտային:

— Ականջնիս քեզի է, մէջ բերաւ պարոն Շարէթ՝ որուն յուզուած զիմագիծերէն և հողիներու խորը թափանցող նայուածքէն յայտնի կ'ըլլար թէ յամառ պատերազմատէր մը և անզուսպ կամքի աէր մէկն էր:

— Ութը օրէ ի վեր Բարիզ եկած եմ, խօսք ատու ժան Քօթըրօ: Մերիներէն բաւական մարդ գտայ հոս և անոն հետ տեսնուեցայ, . . . մայրաքաղաքին ամէն կողմը ցիրուեցան բաւական մարդ ունինք, . . . Ամէնքն ալ խոտապան որ ինձի պիտի օգնեն և այս իրիկուն ամէնքն ալ բանտին չուրջը պիտի հաւաքուին, Մէնթ-Մարկրիթ փողոցին գրան ասջեւը: Նշան տարիներու

պէս բանտապահներէն մին տիկին մարքիզուհիին գտնուած բանտին գուռը պիտի բանայ: Մեր նշանը գիտէք արդէն, բութ պէս «ո՛ւլ» «ո՛ւլ» ընէն է:

— Այո՛, այո՛, շարունակէ ըսաւ, Ռօշ ժագլէն մարքիզը:

— Բանտապահը մարքիզուհին իր բանտէն գուռահանելէ ետքը՝ բանտին բակը պիտի ատաջնորդէ: Այս բակին պատը Մէնթ-Մարկրիթ փողոցին վրայ կը նայի: Տղաս և ես պատէն վեր պիտի չուլուինք, պարանէ սանդուխ մը պիտի կախեն պատէն վար, բանտին բակին մէջ, և մարքիզուհին փախցնելով մեր մարդոց քով պիտի գտնանք: Անոնք վարը ձիեր բերած մեզի պիտի սպասեն և եթէ վրայ համառ մը ըլլայ, մեզի օգնութեան պիտի հասնին: Մենք ալ ձիերը նստելով քոտամբակ պիտի արշաւենք:

— Ատիկա ընելու և յաջողցնելու համար բաւական քաջութիւն պէտք է, բարեկամս, ըսաւ պարոն Լէսքիւբ:

— Եթէ այս գործին մէջ քաջութիւն և յանդգնութիւն չըլլայ, բնաւ չի յաջողիր, յայտարարեց Ռօշժագլէն:

— Ես ալ ատ միտքէն եմ, աւելցուց Տէլպէ:

— Ժամադրութիւն տուա՞ծ ես մերիներուն, հարցուց Լէսքիւբ:

— Այո՛:

— Ո՞ր օրուան համար:

— Այս գիշերուան համար:

— Ժամը քանի՞ն:

— Ժամը վեցին:

— Չարհրեմ'ս ալ հոն պիտի ըլլանք, ըսին չորս ազնուականները միաբերան:

— Բայց ս'իվ է բանտին գուռը բանալ խոտապող



Հարիւնաւոր յեղափոխական Մախիմ Արսուէն
 Եւ իր միակ աղջիկը Գլեք

«առ բանտապահը որ իր վրայ այդքան վստահութիւն կ'ընես, հարցուց պարոն Շարէթ:

— Իմ հին բարեկամներէս մէկուն տղան է պատասխանեց Քոթըրը: Երէկ գաղտուկէն հետը տեսնուեցայ, հօրը, մօրը գլխուն վրայ երզում ըրաւ որ իր պարտականութիւնը լի ու լի պիտի կատարէ: Եթէ մեզի գէժ գաւաճանեկ ուզէր, մինչեւ հիմա շատոնց մատնած պիտի ըլլար զիս և բնուած պիտի ըլլայի: Ահա ատոր համար, զաւակիս չափ հաւատք ունիմ անոր վրայ և կը յուսամ որ, ստաջ Աստուած, մեր թշնամիներուն գէժ առաջին յաղթանակը պիտի տանինք:

— Ժան Քոթըրօ՛, իրա՞ւ է որ քու երկրիդ մէջ քեզի «Ժան Շա-իւան» կը կանչեն, հարցուց մարքիզ Ռօշտաղլէն:

— Այո՛, պարոն մարքիզ:

— Ինչո՞ւ այդ մակդիրը տուած են քեզի, հարցուց Լէսքիր:

— Անոր համար որ, «չա-իւան»ներուն (կատուաբու, տեսակ մը վայրենի բու) պէս զիշերուան մութին մէջ ամէն բան կը տեսնեմ, աչքերս բուր աչքերու պէս սուր են և մութին մէջ կը տեսնեն, պատասխանեց զիւզացին խորհրդաւոր ժպիտով մը:

— Քեզի պէս քաջ մարդու մը համար առ անունը չառ աղեղ անուն մըն է, գոչեց Ռօշտաղլէն:

Եւ թագաւորի մը վեհ կնքուած քովը անոր գէժը անցնելով ու ձեռքը խորհրդաւոր կերպով վեր բարձրացնելով աւելցուց.

— Ասկէ ետքը քու անունդ «Ժան Շուան» պիտի ըլլայ, ո՛չ թէ «Ժան Շա-իւան», «Մմբապե՛ա» և ո՛չ թէ «Գիշակեր»:

Ժան Քոթըրօ այս խօսքերուն վրայ այլանդակ

մուկեանցութեամբ մը լեցուած, ուրախութեամբ գոչեց-

— Կ'երգնս՛ւմ. պարոններ, որ այդ անուշին ար-
ժանի պիտի ըլլամ և զայն բարձր պահել պիտի
գիտնամ:

Չորս աղնուականները իրենց ձեռքերը անոր եր-
կարեցին:

Այդ չարս աղնուականները, որոնց ամէն մէկը իր
կարգին մէջ մէկ նրամանատար էին և որոնք նպատա-
կելէ աւելի նրամայելու համար ծնած ու պատրաս-
տուած էին, կարծես թէ բոլորեան զատապարակով
իրենց մենաշնորհակ նպարտութիւնը՝ պատիւ ու յար-
գանք ցոյց կուտային ճորտերու և գերիներու սերուն-
դէն եզոզ այդ գիւղացիին, այդ հողի համեստ զաւկին,
որ իր արժանավայել ընթացքովն ու բարձր կեցուած-
քովը կ'իշխէր իրենց վրայ և յիշեցնել կուտար այն
հասուրց բարձր զանգակատունները ուրկէ վտանգի-
ւածագանգը կը լսուի:

Այո՛, իրենց տունը կրակի մէջ էր, և գիւղապետը
վազելով հաւաքած էր հողագործներն ու մշակները:
Կրակը մարել պէտք էր:

Չորս աղնուականները, ծանր ու վեհերոտ քայլե-
րով դուրս ելան շահմարանէն:

Վիճակը քաջուած էր:

Այն իրիկունը, Բարիզի մէջ, այսինքն նրաբու-
խին խառնարանին մէջ, Փան Շուան և իր որդին յե-
զափոխութեան զէմ իրենց առաջին պատերազմը պիտի
սկսէին:

Երբ հայր ու աղայ առանձին մնային, Փան Քո-
թըրօ ըսաւ.

— Եւ հիմա աղօթե՛նք, զաւակս:

Եւ կարծես թէ իր թաղին եկեղեցիին մէջն ըլլար,
շահմարանին քարերուն վրայ ծունկի գալով՝ գրպա-

նէն աղօթքի համրիչ մը հանեց և սկսաւ երկիւղածօ-
րէն աղօթել:

Փաղ, թեւերը կուրծքին վրայ խաչաձեւած, ոտքի
վրայ մնաց:

Աղօթե՛լ...:

Ի՛նչպէս կրնար աղօթել զժբաղզ աղան:

Իր միտքը, իր բոյր մտածողութիւնը, հողի մը
ըլլալէ զողորած, մարմին առած, եղի՛րնքէն երկիր ի-
ջած էր: Այդ միտքը՝ որ այլևս նիւթայնացած էր,
այդ մտածողութիւնը՝ որ այլևս մարմին ստացած էր,
միթէ կրնա՞ր գէպի երկինք սաւառնիլ: Այդ միտքը
միթէ կրնա՞ր բաժնուիլ իր պաշտած աղջկան սիրտէն
և կրնա՞ր ազատօրէն, անկախօրէն, աւանց կաշկան-
գուած ըլլալու աղօթքի կենալ: Ո՛չ: Եւ Փաղի միտ-
քին աչքերը Գլէրի պատկերին առջև բացուած էին
այս միջոցին, այն պաշակի էակին պատկերին առջև
գոր իր սիրտէն աքտրելու երգում բրած էր, բայց
չէր կրնար հեռանալ իր սիրտը... այնքան մեծ էր այդ
սէրը...: Միթէ իր սիրտն ալ բանտարկեալ մը չէ՞ր...
Գլէրի պէս շնորհալի ու պաշտելի էակ մը չէ՞ր եղած
իր սրտին ալ բանտապահը... ուրիմ ինչպէս բանտար-
կեալ սիրտ մը կրնայ իրմէ աքտրել սէրը...: Միթէ
բանտարկեալ մը կրնայ ուրիշ մը աքտրել:

Ահա այսպէս մտածելով, ի՛նքն ալ սկսաւ շըր-
թունքները շարժել...:

Գազալ մը կար մէջտեղը... կա՛մ աղօթել և կամ
գամբանական մը խօսիլ պէտք էր...:

Փաղ, անլսելի ձայնով մը խօսեցաւ այդ գամբա-
նականը.

— Ներէ՛, Գլէ՛ր, ներէ՛ որ չի կրցայ զէմ գնել իմ
մարդոցս: Երիտասարդ էի, մոռցած էի մօրս ըրած
երգումս և այդ երգումը բռնելու համար, ո՛հ, պար-
տաւոր եմ հիմա խօսքս ետ առնել, զաւսձանել քեզի՛

զէմ, քեզի՛ր զէմ, ո՛վ կիներուն ամենէն քաղցրը, ամենէն պարկեշտը և ամենէն ազնուասիրտը: Ներէ՛, ո՛վ անմեղ հրեշտակս, ներէ՛:

Ժագի աչքերը լեցուեցան, կոկորդին մէջ հեղձամըղձուկ ազազակ մը խեղդեց և անլսելի ձայնով մը շարունակեց.

— Իսկ դուն, ո՛վ Աստուած, զո՛ւն՝ որ մարդկային սիրտերը կը կարգաս, զո՛ւն՝ որ սիրոյ բոլոր գինովութիւններն ու քաղցրութիւնները ինծի ձաշակել տալէ վերջ կամեցար որ զոհողութեանց լեզին ալ խմեմ, հրամայէ՛ որ այս իրիկուն եթէ մեր մէջէն մէկու մը մեռնելը պէտք ըլլայ, այդ մեռնողը կ'ս ըլլամ: Իմ աբիւնս իմ պատիւիս ու սիրոյս փրկա՛նքը թող ըլլայ...: Թող մեռնի՛մ, ո՛վ Տէր, բայց թող պատիւս զերծ մնայ ազարտուելէ և սէրս ինծի հետ երկիրք թող բարձրանայ:

Եւ ժայգ ֆօթըրօ, ուժասպառ, հօրը քով ծունկի եկաւ...:

Իսկ ժան Շուան գետ կ'աղօթէր...:

Փ Ա Խ Ո Ի Ս Տ Ը

Ապէջը Սէն-ժէրմէն-Տէ-Բրէ եկեղեցիին մօտերը հին վանք մըն էր, որ յետոյ, տասնըօթերորդ դարուն սկիզբները պետական բանախ վերածուեցաւ:

Իրենց արտասահման փախչող ծնողքներուն հետ գազանի յարաբերութեան մէջ գտնուելու կասկածանքով, գաղթականներու և փախստականներու ընտանիքներն ու պարագաները երկար տանեէ ի վեր հոն բանտարկուած էին:

Իրարու հետ հազորդակցելու և մինչև անգամ մեծ գահլիճին մէջ իրարու քով գալու իրաւունք տրուած էր բանտարկեալներուն:

Այն իրիկունը, ազնուական պար ններե սիկիններ, պզտիկ խումբեր կազմած, իրենց տոհմիկ պերճանքովն ու պարծենկոտ քարուածքովը, իրարու հետ կը խօսակցէին:

Թէպէտ բանտարկուած, բայց տասնըօթերորդ դարու բարձր դասուն արժանազայել անհոգ զուարթութեամբը արհամարհելով իրենց բանտարկութիւնը, կարծես թէ իրենց տանը մէջ ըլլային, խնդալով խօսելով իրարու որպիսութիւնը կը հարցնէին: Եթէ բանտին ախուր ու սարսափազգու պատերն ու ներքին սպաւոր լուծիւնը ներս մտնողին վրայ սարսափ ազգած չըլլար, անոնց այս արհամարհոտ կեցումքը տեսնող մը անանկ պիտի կարծէր որ Բարիզի բարձր գասուն պատկանող ամենէն ձուռողուն գահլիճներէն մէկուն մէջ կը գտնուէր:

Մութ գոյնով վերարկուի մը մէջ փաթթուած զեզանի կին մը, որուն վերակուին տակէն ձերմակ սընդուսէ հօլանակուրծք չըջազգեստ մը կը տեսնուէր, ատանձին միւս խումբերէն գատուած, պատի մը և զերքին նստած՝ իր շուրջը պարտկող խումբերը կը դիակեր:

Այս կինը, իր սեւ աչքերը ասդին անդին պարտցընելէ ետքը, բարկութեամբ և առելութեամբ լեցուն նայուածքով մը հոն գտնուող զեզին և զանգուր մազերով, նրբակերտ մարմնով, սիրուն, չնորհալի և գեղեցիկ մանկամարդ կնոջ մը նայեցաւ:

Այս սիրուն կինը մարքիվուհի Թօրինէն էր որ բանախ ընկերներուն իր ձերբակալման պարագաները կը պատմէր:

— Աչքերնուդ առջևը բերէք, ատտուան ժամը եօթին ոստիկանութիւնը Վարէնի բնակարանս, ներս խումբեց, կ'ըսէր ան: Հազիւ զգեստներս հագնելու ժա-

մանակ առին ինծի: Երեւոյածին նայելով, ե՛ս ալ գաւաղիր մըն եմ եղեր...:

Ներկաները, որոնք մարքիզուհիին պէս իրենք ալ երեք չարթթէ ի վեր բանտը կը գտնուէին, մեծ ազմուկով սկսան խնդալ այս խօսքերուն վրայ, իսկ տիկին Թօրինեէ շարունակեց.

— Ես ի՞նչ յանցանք ունիմ երբ ամուսինս՝ մարքիզը՝ թաղաւորին հրամանին վրայ ելաւ արտասահման գաղթող իշխաններուն քով գնաց: Գծբաղդութիւն: Բայց կը յուսամ որ ամէնքս ալ քիչ առեռնէն հոսկէ դուրս պիտի ելլենք: Այս առտու երբ նախաձաշս բերին, հացին փորին մ ջէն նամակ մը ելաւ...:

— Աւելի ցած ձայնով խօսեցէք և զգուշացէ՛ք, մարքիզուհի, կմկմաց կոմս Քէրիզուէ աչքին պոչովը գորշ վերարկու հագնող կինը ցոյց տալով տիկին Թօրինեէին:

Այս միջոցին, ճերմակ չըջազգեստ և գորշ վերարկու հագնող սեւ աչքերով կինը պատին վրայէն վար իջնելով անոնց մօտենալու վրայ էր:

Իսկոր բանտարկեալները արհամարհական նայուեաձքով մը անոր կը նայէին:

Մարքիզուհին մէկէն ի մէկ լսեց:

Գորշ վերարկու յով կինը անոր մօտենալով և զլուխը հպարտօրէն վեր բարձրացնելով, կատաղութենէն զողզուցող ձայնով մը գոչեց.

— Ինե՛՛ է որ կը խուսափիք և հետու կը կենաք, այնպէս չ՞:

Տիկին Թօրինեէ և իր բարեկամները առանց պատասխանելու՝ կոնակնին դալ ձնելով ետ քաշուեցան, բայց արհամարհուած կինը խիստ կերպով մը գոչեց.

— Ըսել է բանտին մէջն անգամ ձեր առելութիւնը զիս կը հալածէ, այնպէ՞ս է:

Այս խօսքին վրայ մարքիզուհին անոր դառնալով՝

կատարեալ քաղաքովարութեամբ ըսաւ.

— Ո՛չ, տիկին, մենք ձեզ չենք տտեր, այլ կ'անգիտանանք:

— Ի՞նչ կը քաշուիք, սըւոր ըտէք թէ՛ ինծի պէս բարձր գասու պատկանող կնոջ մը բարձր գասէն մէկու մը հետ ամուսնացած ըլլալուն համար քէն պահած էք անոր դէմ:

Տրտունջ մը լսուեցաւ ներկաներուն մէջ:

— Ո՛չ, տիկին, պատասխանեց Մարքիզուհին աշխուժիւ, աւելի ճիշտ պիտի ըլլար ըսել թէ՛ նախկին պերճաղիճ Մարիզ Յլէրիւսը ըլլալուդ և եղբօրս անպատուութեանն ու մահուանը պատճառ դառնալուդ համար՝ ձեզ մեր մէջը չենք ուզեր ընդունիլ:

Մարիզ Յլէրիւս այս պատասխանէն չափէն աւելի կատղած, աչքերը խոշոր խոշոր բանալով գոչեց.

— Զգուշացէ՛ք, տիկին: Լսեցի որ քիչ մը առաջ հոսկէ ելլալու մասին կը խօսէիք: Գիտցած եղէք որ ես ձենէ առաջ դուրս պիտի ելլամ հոսկէ և ձեր այս աշխարհական խօսքերն ու արհամարհական ընթացքը սուղի պիտի նստեցնեմ ձեզի:

Հազիւ թէ այս սպառնական խօսքերը արտասանուեաձ, դուռ մը բացուեցաւ և թաղապետական սպայ մը՝ քովը բանտապահ մը և ետին քանի մը զինուորաներ ձգած՝ ներս մտաւ բանտէն:

Տիկին Թօրինեէ և իր բարեկամները, առանց կարեւորութիւն տալու գորշ վերարկուով կնոջ սպանուած լիքներուն, մէկ կողմ քաշուեցան, իսկ թաղապետութեան սպան, ձեռքը թուղթ մը բռնած, բանտարկեալներուն մօտենալով բրտօրէն գոչեց.

— Քաղքուհի Քարքի՞ո՛ւ...:

Գեղանի Մարզ այս անունը լսելուն պէս՝ սպային մօտեցաւ:

Սպան պահ մը անոր երեսն ի վեր նայեցաւ, ա-

պա, մտերմական գոեհիկ եղանակով մը որմէ բնաւ չխորժեցաւ բազդախնդիր կիւնը, ըսաւ .

— Հը՛ . . . , Բարքֆուռն դո՛ւն ես եղեր . . . :

— Այո՛ , ես եմ, պատասխանեց Մարիզ Ֆլէրիւս :

— Քեզի սխալմամբ ձերբակալեր են և ազատ պիտի արձակուիս, ըսաւ սպան մտերմական կտրուկ ոճով մը :

Քաղքուհի Բարքֆուռի գէմքին վրայ վայրագ ուրախութիւն մը նշմարուեցաւ . . : Աչքին պոչովը միւս բանաարկեալներուն վրայ նայուածք մը նետելէ յետոյ, բանապահին հետ մինչև զուտը յտաջացաւ և զրան սեմին վրայ կենալով՝ երեսը անոնց դարձուց և թշնամական եղերաչուք ձայնով մը խօսքը բանաարկեալներուն ուղղելով ըսաւ .

— Չեզի արգէն ըսած էի որ ձենէ առաջ զուրս պիտի կլլամ հոսկէ :

Եւ ուրախութեան վայրագ սարսուտով մը գողգղալով աներեւոյթ եղաւ :

Թմբուկի թփրաուք մը լսուեցաւ : Բանաարկեալները իրարմէ դատուեցան : Ամէն ոք իր սենեակը պիտի քաշուէր :

Իրար բարեւելէ յետոյ, բոլոր բանաակեալները, բանապահին և քանի մը զինուորներու հակողութեան տակ, առաջին յարկը գանուող իրենց սենեակները քաշուեցան :

Մարքիզուհի Թօրինէ իր սենեակը մտած միջոցին, ձերբակալուելէն ի վեր առաջին անգամն ըլլալով գող մը զգաց, անորոշութեան գող մը :

Մարքիզուհիին յատկացուած բանախուցը շատ նեղ էր, երկաթէ ձողերով ամրացուած պզտիկ պատուհան մը ունէր, կան կարասին կը բաղկանար բանաթմաճակալէ մը որուն վրայ հինցած անկողին մը նետած էին, սենեակին մէջակող սեղան մը կար որուն

վրայ մոմ մը կը վառէր : Մոմին տակը թիթեղէ աշտանակի մը վրայ մոմին հարած ճարդը խորհրդաւոր պատկերներ յորինած և ճարպին հասն ալ ամբողջ սենեակը բռնած էր :

Երբ բանապահը իր անասնական ձեռքովը անխորհրդէն գոցեց բանաին զուտը մարքիզուհիին վրայ յէն, խեղճ կիւնը խեղզուկ աղաղակ մը արձակելով՝ ինքզինքը անկողնին վրայ նետեց :

Քիչ մը առաջ կոմսուհի Բարքֆուռի հետ ունեցաւ բաղխուած վրայ կը մտածէր ան հիմա և այդ մտածումը կը մղէր զինքը հին յիշատակներ քրքրել, իր կացութեան վրայ աչքերը բռնալ :

Իր երիտասարդութիւնը աչքերուն առջևը կը բերէր, իր նախնիքներուն զգեակը որ Պրըթանիոյ հարաւային կողմը, Վանաէի անտառներուն եղերքը կը գանուէր, հիմա իր աչքերուն առջևը կուգար իր բոլոր շքեղութեամբ, կը յիշէր այն ասքուկ, պարկեշտ պատուաւոր բարերար և խանդապատալից միջնորդը որուն մէջ ծնած էր ինքը :

Իր ծնողքը, Բարքֆուռ կոմսն ու կոմսուհին, հակառակ անոր որ իրենց հարստութեան և ազնուակախութեան շնորհիւ Վէրսայի պալատին մէջ իրենց արժանի տեղը ունէին, նախապատիւ համարած էին իրենց գաւառէն զուրս չկլլալ և միշտ պալատէն ու արքունիքէն խուսափած ու իրենց ծննդավայրին մէջ հանգիստ ու անխտով կեանք մը վարած էին :

Իրենց ծառաներուն և իրենց ազարակներուն մէջ աշխատողներուն հետ այնքան բարիութեամբ վարուած և անոնց հանգէպ այնքան առատաձեւն ու վեհանձն եղած էին որ, իրենց երկրին ո՛չ թէ թագաւորը, այլ նախախնամութիւնը դարձած էին :

Իրենց երկու գաւառներուն ալ նոյն կրթութիւնը առած էին :

Աղջիկ մը և մանչ մը ունէին: Մանչուն անուներ Ռօպէր էր, որ զինուորական վարժարանը աւարտելով ծովային սպայ եղած էր, իսկ աղջիկը որուն անուներ Փանն էր, տասներեք տարեկանին թօրինեէ մարքիզին հետ ամուսնանալով՝ թօրինեէ մարքիզուհի եղած էր:

Թօրինեէ մարքիզը, կուի ասանը վեցերորդի եղբոր՝ Բրովանսի կոմսին պատուոյ ասպետն էր:

Շատ յարմար ամուսնութիւն մը եղած էր իրենցինը, էրիկ կնիկ իրար շատ կը սիրէին և երջանիկ էին: Շատ չանցած, Թօրինեէ մարքիզը արքունիքին մէջ ունեցած պաշտօնէն հրաժարելով՝ կնոջը քով եկած և բոլորովին անոր նուիրուած էր: Այր ու կին շատ քիչ անգամ Բարիզ կ'երթային և Բարիզի վարէն փոփոցին մէջ գանուոյ իրենց չքեղ սպարանքը գրեթէ հազիւ տարին քանի մը անգամ ոտք կը կոխէին: Իրենց կեանքին մեծ մասը Մայէն գիւղի թօրինեէի հողերուն մէջ գանուոյ զգեակին մէջ կ'անցընէին: Հոն խաղաղ ու երջանիկ կեանք մը կը վարէին:

Սակայն շատ չանցած, խելքէ միտքէ չանցնելիք զէպը մը պատահելով մեծ մտահոգութիւն պատճառեց անոնց:

Մարքիզուհիին եղբայրը, Ռօպէր Քարքֆու, Մարիզ Ֆլէրիւս անուենով պերճագիծի մը սիրահարուելով՝ քիչ ատենուան մէջ անոր ձեռքը խաղալիք մը զարձած էր:

Երիտասարդ սպան՝ անսնելով որ այս կապը գայթակղութիւններ ատաջ բերած էր, պարտաւորուած էր հեռանալ զինուորութենէ, իսկ Մարիզ Ֆլէրիւս, միտքը դրած ըլլալով ամէն զինով անոր հետ ամուսնանալ, այն աստիճանին հասցուցած էր իր հոմանին որ, երիտասարդին խելքը գլխէն գացած և բարոյական ամէն հասկացողութիւն միանգամ ընդ միշտ կորսնցուցած էր:

Բնոյց Ռօպէր, հակառակ իր սիրած կնոջ հազար ու մէկ մեքենայութիւններուն, քանի հայրն ու մայրը ուղջ էին, զէմ դրած էր անոր և չէր ամուսնացած, չէր ուզած ազարակ իր անունը...: Բայց կոմսն ու կոմսուհին մեռնելուէն պէս, Ռօպէր սեղի տալով զեղանի Մարիզի պնդումներուն, ամուսնացած էր անոր հետ և վերջապէս իր անունը ցեխի մէջ թաթխած:

Երեք տարուան մէջ լիրբ կինը զայն մոխրի վրայ նստեցուցած էր, և անկէ ետքն ալ զայն երեսի վրայ ձգելով, բաղրախնդրական ցոփակեաց կեանք մը վարել սկսած էր:

Ռօպէր ուզած էր անձնասպան ըլլալ, բայց իր քոյրն ու քեռայրը արգելք եղած էին, դժբաղդ ազան Լաֆայէթի բանակին մէջ զինուոր արձանագրուելով՝ Ամերիկայի ազատագրութեան գործին օժանդակելու վաղած էր և հոն փառքի ու յաղթանակի մէջ մեռած էր:

Ահա այսպէս, Թօրինեէ մարքիզուհին, թագաւորին հրամանին վրայ իր ամուսինէն բաժնուելէն յետոյ, հիմա ալ, ի լրումն չարեաց, բանա նետուած էր: Անչուշտ վրէժ առնելու համար բանա նետուած էին զինքը...: Իրենք թէպէտ ու եւ զաւագրութեան չէին միջամտած, ազգին չահրուսն փնտ բերող ուէ արարքի մէջ չէին գանուած, բայց թագաւորին հրամանին հրպատակելը արդէն մեծ յանցանք մը կը նկատուէր այն ատենները, և քանի որ մարքիզ թօրինեէ հայրենիքէն փախչելով արտասահման ապաստանած էր, կը նշանակէր թէ հայրենիքին զէմ գաւազրող մը եղած էր, և անա ատոր համար էր որ իր կինը բռնած և բանտ նետուած էին:

Այս չէր բաւեր խեղճ կնոջը, մէյ մըն ալ զիպուսածաւ հարսը մէջտեղ կ'ելէր, այն բաղրախնդիր կինը որ իր եղբոր պատիւը ազարակէ և զայն բարոյապէս անպաննելէ յետոյ, իր զէմը կը ցցուէր և սպասանիք-

ներ ու հայհուհներ կը տեղացներ իր զլխուն, և իրեն գէմ ասկուլթեամբ լեցուած, արհամարհուած ըլլալուն համար իր վրէժը առնելու պատրաստ ըլլալը բաց ի բաց կը յայտնէր:

Գործերը շատ գէշ սկսած էին ուրեմն:

Բայց Թօրինէէ մարքիզուհին, իրմէ վանելու համար գէշ մտածումները, ձեռքը շրջադպեատին սարաւ և առտուան հացին փորէն ելլող թուղթի կտորը դուրս քաշեց և սկսաւ կարգալ:

«Ձեզ ազատելու համար երգում բրած եմ և պիտի ազատեմ: Այս իրիկուն հոգ պիտի ըլլամ:

ԺԱՆ ՔՕԹԸՐՐՕ»

Մարքիզուհին ժան Քօթըրօն շատ աղէկ կը ձանձնար. գիտէր թէ ան քաջ և ուղղամիտ մարդ էր. Թօրինէէ զվեհակին մէջ յաճախ տեսած էր զայն և անոր հետ խօսած էր, և ահա ատոր համար այդ թուղթը իրեն յոյս ներշնչեց:

Այսպէս, այլեւս սպասուիլուած, երբ անկողնին վըրայ երկնցաւ քնանալու համար, մէկէն ի մէկ գրան մը կղպանքին բացուելուն ձայնը լսուեցաւ:

Մարքիզուհին սարսամաց: Արդեօք զինքը ազատելու կուզային:

Եւ այն միջոցին երբ ժան Քօթըրօյի երկտողը ափին մէջ ճմովկելով կը պահէր, բանտապահի մը ներս մտնելը տեսնելով՝ յուսախաբու թեան ճիշ մը արձակեց:

— Ի՞նչ կ'ուզէք, հարցուց մարքիզուհին զարմացած:

Բանտապահը ի նշան լուսեան ցուցամասը բերնին մօտեցուց և բանտին դուռը կամաց մը գոցեց. յետոյ, անոր մօտենալով և ետագոյն գգակը զլխէն վերջնելով, յարգալիբ եղանակով մը հարցուց:

— Տիկին մարքիզուհի, դիւ չի ձանչցա՞ք:

Մարքիզուհին վարանտա նայուածքով մը անոր նայեցաւ, իսկ բանտապահը շարունակեց.

— Ես ձեր անատուտակին աղան Բիէր Փլօրանն եմ...: Հիմա պիտի հարցնէք թէ ի՞նչպէս կ'ըլլայ որ հոս կը գտնուիմ, այնպէս չէ՞: Պատմելը երկայն պիտի ըլլայ, տիկին մարքիզուհի, իսկ մենք բնաւ կոր-



Գլխի նշանած եւ ժան Շուանի որդին
ԺԱՔ ՔՕԹԸՐՐՕ

աընցնելիք ժամանակ չունինք: Միայն սա չափը ըսնմ ձեզի որ՝ ձեզի փախցնելու համար ժան Քօթըրօյին հետ խօսք-մէկ ըրած ենք:

Եւ թեւին տակէն ծրար մը առնելով աւելցուց.

— Այս ծրարին մէջ ծպտուելիք լաթեր կան, առէ՛ք... բայց աճապարեցէք... երկու խուճք զինուորներու մէջէն պիտի անցնինք, ճի՛շգ ժամանակն է:

Տիկին Թօրինեէ՛ ծրարը բացաւ, լալն եզերքով այբ մարդու գլխարկ մը առաւ ու գլուխը անցուց, սեւ վերարկու մը առաւ՝ մէջը փաթթուեցաւ, և առանց սաքին ձայնը հանելու՝ Բիէր Ֆլօրանի հետեւեցաւ։ Երկուքը մէկէն, իրարու հետեւէ նրբանցքէ մը անցնելով՝ սանդուխի մը գլուխը հասան, և հոնկէ ալ բանտին ներքին բակը իջան։ Բակին մէջ մարդ մարդաւանք չէր երեւնար։

Հոն, երկու խոշոր կահկենիներու հաին պահուր տամ, պահ մը սպասեցին։

Շատ չանցած, մտաւկայ եկեղեցիին զանգակը ժամը տասը զարկաւ։ Քանի մը վայրկեան յետոյ, գիշերուան լուսեկան մէջ բուր վայրեն մը լսուեցաւ...

— Մէյ, ս'էյ...

Ասոր վրայ, բակը չըջապատող պատին գողաթին վրայ մարդկային երեք շուքեր տեսուեցան։

Անոնցմէ մին ժան Շուանն էր որ կայծակի արաւ գոթեամբ պարանէ սանդուխ մը կ'իջնցնէր պատին վրայէն պէպի բակին մէջը։

Մարքիզուհին և Բիէր Ֆլօրան իրենց պահուրտամ տեղէն դուրս ելլալով սանդուխին վրայ խոյանալու համար առաջ վաղեցին... բայց ձայն մը լսուեցաւ որ կը պոռար։

— Նշա՛ն առէք, առ՛աջ անցէք։

Մարքիզուհին և բանտապահը, շուարած, պահ մը եղած տեղերնին մնացին... ս'էրկէ կուգար այս ձայնը...

Երկու փախտակահանները զեռ ինքզինքնին չի գտած, պահակ զինուորներու խումբ մը, որուն գլուխն անցած էր ձեռքը ջահ մը բռնած սպայ մը, չըջապատեցին զիրենք։ Զինուորներէն երկուքը մարքիզուհիին վրայ նետուեցան, երկուքն ալ Ֆլօրանի վրայ։

Այս վերջինը սկսաւ անոց հետ կռուիլ և անոնց ձեռքէն փախչիլ փորձել։

Ժան Շուան քսան տարեկան երիտասարդի մը պէս պատին վրայէն բանտին բակը ցատկեց և պոռաց։

— Օգնութեա՛ն հասէք, բարեկամներս։

Եւ ապա, ձեռքի աորձանակը մարքիզուհին բռնող զինուորներուն ուղղելով՝ կրակ ըրաւ։

Երկու զինուորները իրենց զո՛նը թող տալով գետին տապալեցան։

Պահակ զինուորները այս յանկարծական յարձակումէն շուարած, պահ մը եղած տեղերնին անշարժ մնացին...

Ժան Շուան տեսնելով որ ձեռքի երկհարուած աւարձանակը պարպուած էր, մէկդի ն'տեց զայն և մէջքի գօտիէն կախուած գլուխը գամերով գաւազանը խլելով՝ սկսաւ գլխուն վերելը զարձնելով յառաջանալ...։ Զինուորները քանի կը յառաջանային, գաւազանին հարուածները ուտելով արիւնլուայ գետին կը փռուէն։

Ֆլօրան որ զինքը բռնողներուն ձեռքէն յաջողած էր փախչիլ, վազրի մը պէս սպային վրայ նետուելով՝ զայն կոկորդէն բռնած և գետին զարկած էր...։ Անզին, պատին վրայէն, ցամաքային թախտառի մը պէս ժան Շուանի մարդիկը բակ կը խուժէին, իսկ խըմբապետը, ժան Քօթըրօ, անոնց գլուխն անցած, զինուորները ահուսարսափի մէջ կը թողուր ու չփոթուեթեան կը մատնէր զանոնք։ Ակնթարթի մը մէջ, բոլոր զինուորները, ո՛ր մէկը կուրծքէն գնչոյնով մը զարնուած, ուրիշ մը գլուխը ջախջախուած, և բոլոր մը սաքէն վիրաւորուած, չորբորգ մը ձեռքը կտորած, արիւնլուայ վիճակի մէջ գետին տապալած էին...։

Ռօշտաղլէն և Տիլպէ, օգտուելով այս արագ յաղթանակէն, բանտին մուտքի դրան կողմը վաղեցին և

զէնքերնին բանտին զոնապանին ձակտին զպցնեով,
զուոր բանալ հարկադրեցին:

Բանտին զոնապանը յանկարծակիի եկած, զուոր
բացաւ և ժազ Քօթըրօ տիկին թօրինէն զրկելով՝
մարած վիճակի մէջ փողոց նետուեցաւ:

Փողոցին ծայրը տասնի չափ ձիեր, չըջապատուած
վաթսուն մարդոցմէ, իրենց կը սպասէին:

Ժազ ձիւն մը վրայ ցատկեց, իրենց մարդիկը մար-
քիդուհին զրկելով ժազի կռնակը զրին:

Ժան Շուան, Բիէր Ֆլօրան և չորս ազնուական-
ները վրայ հասան, ձիերը ցատկեցին և մութին մէջ
ամէնքը մէկէն աներևոյթ եղան: Անոնց ետեւէն միւս
զաւագիրներն ալ մէյ մէկ կոզմ փախչելով՝ մէջտեղէն
հարսուեցան...:

.

Ճիշդ այդ ժամուն, Մաքսիմ Սրտուէն, իր սենեա-
կին մէջ սեղանի մը առջև նստած, յաջորդ օրը Օ-
բէնսզիր ժողովին մէջ արտասանելիք բանախօսութիւ-
նը կը խմբագրէր. . . երբ սենեակին զուոր կամաց մը
բացուեցաւ:

Ժողովուրդին ներկայացաց ցիշը զժողովեան շար-
ժուամով մը զլուխը վեր բարձրացուց, բայց բարկանա-
լու տեղ ժպտեցաւ...:

Ազջիկն էր եկողը որ իրեն կը մօտենար:

Կարծես թէ ամբօխամարին կարծր հողին մէկէն ի
մէկ բարութեան նշոյլով մը կը լուսաւորուէր: — Այդ
մարդը, այդ մեծ յեղափոխականը, որ մեծ հայրենա-
սէր մը ու անսզիրա զազափարապաշտ մը ըլլալով
հանդերձ չէր զազրած մոլեռանց կուսակցամով մը ըլ-
լալէ, միայն իր պաշտելի ազջկան առջևն էր որ հայր
մը ըլլալը կը զգար և հայրական ազնիւ զգացումով
կը լեցուէր:

— Գիշեր բարի ըսելու եկայ, հայրիկ, ըսաւ Գլէր
ձակաւոր հօրը ներկայացնելով:

Արտուէն չըթունքները ազջկանը ձակտին դպցուց
և զայն կուրծքին սեղմելով խանդաղատական եղանա-
կով մը ըսաւ.

— Ազջիկս, կարծեմ այլեւս տրամելու ուէ պատ-
ճառ չունիս և ալ ասկէ ետքը երջանիկ և խնդումներես
պիտի ըլլաս, այնպէս չէ՞:

— Այո՛, հայր... բայց...:

— Ըսէ՛, նայիմ, ի՞նչ կայ... ի՞նչ ունիս նորէն...:

— Կը վախնամ որ...:

— Ինչէ՞ն կը վախնաս...:

— Կը վախնամ որ ժազի գլխուն փորձանք մը
գայ...:

— Պատերազմի երթալ և վերադառնալ ալ կայ,
ազջիկս...:

— Բայց, հայր իմ, չի վերադառնալ ալ կայ:

— Յուսալու ես, ազջիկս, յուսալով ապրելու ես:

— Ո՛հ, հայր իմ, արդեօք ե՞րբ մարդիկ իրար տ-
տելէ պիտի դադրին և ե՞րբ իրար սիրել պիտի սկսին...:

— Այն ատեն երբ երկրագունդիս ամէն կողմը Ա-
զատութիւն, Հաւասարութիւն և Եղբայրութիւն տիրէ,
պատասխանեց Մաքսիմ Սրտուէն՝ մէկէն ի մէկ փոխ-
ուելով և իր զազափարներուն առաքեալը դառնալով:

— Հայր իմ, ձեռնէ առաջ Գրիստոս անգամ մը ը-
սած է այդ խօսքը. բայց խաչին վրայ աւանդած է իր
հողին:

— Այն ատենը, ազջիկս, մարդկութիւնը տակա-
ւին այդ ճշմարտութիւնը հասկնալու պատրաստուած
էին այդ ճշմարտանեց Սրտուէն: Եւ անկէ առջին,
չէր, պատասխանեց գլուխ ծռելու և ազանց բողբօքի զոհա-
բերուելու վրայ հիմնելով իրենց կրօնքը, ուժ և առիթ
առելին կիզեքողներուն և փրկութեան գործին ուշա-
նալուն պատճառ զարձան: Եւ հիմա զուն որ քրիս-
նեայ ես, անանկ ջերմեռանդ քրիստոնեայ մը որ յանձն
պիտի առնէիր նահատակուիլը քան թէ հաւատք ու-
Արիւնարբու կիմր

բանալը, ինչո՞ւ զէմ կը դնես երբ ուրիշները իրենց գաղափարներուն յաղթանակին համար մեռնելու պատրաստակամութիւն ցոյց կուտան :

— Հա՛յր, ես կի՛ն մըն եմ, կի՛ն մը որ իր սիրտին ձայնէն ուրիշ ոչինչ կը լսէ . . . :

Արտուէն այս խօսքերուն վրայ տեղէն վեր ցատկեց :

Իր աչքերը բացուած էին այս անգամ, և առաջին անգամն ըլլալով նշմարած էր աղջիկը իրմէն զատող բարոյական անդունդը. կեանքին մէջ առաջին անգամն ըլլալով, հայրական զգացումներէն տարուած ցաւի ու վիշտի մարմնացումն եղող այդ էակը իր կուրծքին սեղմած, մարդկային տառապանքին ու կսկիծին այդ ցնցող ու այրող հոսանքը իր թեւերուն մէջ, որմէ ի՛նքն ալ կ'ազդուէր, ի՛նքն ալ կը հազորդուէր, Արտուէն՝ իր կամքին տկարանալը զգաց և սկսաւ իր վրայ կասկածիլ : Հայրական զգացումը արդեօք ճամբա՞յ պիտի բանար հայրենասիրական զգացումին . . . Արդեօք այդ մեծ յեղափոխականը, այդ անսպիւտ հայրենասէրը, հայրական սէրէն ընկճուած, տեղի՞ պիտի տարիր աղջկան տաջիւ . . . :

Իայց անա այս միջոցին փողոցէն վազող ձիերու ոտքին ձայները լսուեցան . . . :

Կարծելով որ կամաւոր զինուորներէն էին անցնողները, երկուքը մէկէն պատուհանին քով վազեցին :

Ամէն հայրենասէր իր տանը պատուհաններուն մէջ լոյս կը վառէր այն ատենները որպէս զի անցնող զինուորները մութ փողոցներէն զիւրաւ անցնէին :

Խու՛մը մը ձիաւորներ սրարչաւ կը վազցնէին իբեկնց ձիերը, ուրիշներ անոնց ետեւէն ինկած կը հալածէին զանոնք և մերթ ընդ մերթ զէնքի ձայներ կը լսուէին :

Գլուխը բաց, մազերը ցիր ու ցան եղած երիտասարդ մը, անկենդան կի՛ն մը գրկած, առջեւէն վազող ձիաւորներուն առջեւ անցած՝ իր ձին այժ ակի արագութեամբ կը վազցնէր :

— Ա՛ն է, գոչեց Գլէր, ժագը ճանչնալով :

Մաքսիմ Արտուէն այ ճանչցած էր ժագը : Բայց ձիաւորները արդէն շուքերու նման աներևոյթ եղած էին :

Այս անգամ ուրիշ արտգակներ կը լսուէին փողոցէն, քաղաքացիներ և զինուորներ պոռչտալ սկսած էին և իրար հրմշակելով ժան Շուանի և իր մարդոցը ետեւէն կը վազէին . . . :

— Ի՞նչ պատահեցաւ, ի՞նչ կայ, պոռաց ժողովուրդին ներկայացուցիչը պատուհանը բանալով և խօսքը զինուորի մը ուղղելով :

Իսկ Գլէր, աչքերը խոչոր խոչոր բացած, վարագոյրի մը կառչած, խեղդուկ ձայնով մը կմկմաց .

— Ա՛ն է, ա՛ն է . . . :

— Արքայականները Ապէյի բանտին բանտարկեալներէն կի՛ն մը փախցուցին, պատասխանեց զինուորը և ձեռքի զէնքը պարպելով, դաւադիրներուն ետեւէն սկսաւ վազել :

— Աստուած իմ, Աստուած իմ, հառաչեց Գլէր սկսելով հեծկլտալ :

Եթէ Արտուէն ասդին դառնալով աղջիկը գրկած չըլլար, խեղճ Գլէր գետին պիտի իյնար :

Հայրը զայն գրկեց և իր սենեակը տանելով՝ բարկութենէն և վիշտէն սիրտը պատառ պատառ եղած՝ գոչեց .

— Մոռցի՛ր զայն, աղջիկս, մոռցի՛ր զայն . . . զաւաճա՛ն մըն է ան, հայրենիքին զէմ գաւաճանող մը . . . :

ԵՐԵՔ ԳՈՅՆՈՎ ԿԻՆՇ

Այս զէքերէն տարի մը ետքը, այսինքն 1793ին, սամիկ դասակարգէն մարդիկ մեծկակ ամբոխ մը կողմած, ամէնքն ալ նոյն ձևով և նոյն ձաշակով միօրինակ կարմիր գզակներ անցուցած գլուխներն և զմաւոր կերպասէ լայն լայն տափառներ հագած, ինչպէս նաև կիներ, ամէնքն ալ գլուխներն անցուած միօրինակ գզակներ որոնց վրայ երեք գոյնով ժապուէններ կարած էին, Նանթի մէջ, Լուի տասնըվեցերորդի հրապարակին վրայ ապարանքի մը առջև կեցած, հետաքրքրութեամբ, առանց ունէ թշնամութեան, այլ մինչև իսկ որոշ բարեկամեցողութեամբ մը այդ աչնուապետական շքեղ ապարանքին պատահանները կը կը զիտէին:

Այսօր այլևս այդ ապարանքը իր նախկին տէրերուն՝ պատն և պատնուհի կուտէյի շէր պատկաներ: Անոնք, երկուքն ալ, քանի մը շաբաթէ ի վեր կարափնատին վրայ փշած էին իրենց վերջին շունչն արդէն: Եւ թաղապետութեան հրամանովը, այդ ապարանքը քաղքուհի Մարիզ Յլէրիւսի փոխանցուած էր իբրև բնակարան: Առաջուան Գաբբիու կոմսուհին՝ պաշտօնապէս և բացայայտ կերպով Հանրային փրկութեան Ժողովին գաղտնի ոստիկանուհին հռչակուած էր, գաղտնի ոստիկանուհին, այսինքն գաղբիլի մասնիչ մը, կառափնատի վայրագ գործակալուհի մը:

Վեց ամիս եղած էր Նանթ գալը, և կարճ միջոյթի մը մէջ կրցած էր բոլոր յեղափոխականներուն բարեկամութիւնը շահիլ, անանկ որ, ամենէն զօրաւոր կամքըի աէր եզոզ մարդն անգամ անոր գեղեցկութենէն հմայուելով իր ազդեցութեանը տակ ինկած էր:

Իր ճիւղաշարին ուղեղին պատրաստած տեղեկագիրներուն և իր անիծապարս հոգիէն դուրս թափած թունաւոր սրտքներուն շնորհիւ գաղտնի ոստիկան Պրիթիւս Ակրիգօլա յաջողած էր վերջապէս լեյնել Նանթի բոլոր բանտերը և մինչև իսկ անոր գոհերէն մէկ քայնին ալ գահիճին յանձնած էր:

Գաղտնի ոստիկան Պրիթիւս Ակրիգօլա, այդ թուականներուն լրտեսներու և մասնիչներու բանակ մը ունէր իր սրամագրութեան տակ և զանոնք բացարձակ զիտակցութեամբ ու ճարպիկութեամբ կը կառավարէր...:

Մարիզ Յլէրիւս, հիմա ամէն օր իր ապարանքին պատշգամներէն մէկը կ'ելլար և հոնկէ, Ժպտելով, Ազատութեան հրապարակին վրայ կառափնատին առջև իյնող գլուխները կը զիտէր իր գիշատիչ թռչունի նայուածքովը... և հանդիսատես կ'ըլլար յաճախ անիրաւտեղը շարժարուող իր անմեղ գոհերուն մահուան:

Մարիզ ի'նքը կը մասնէր զանոնք... եթէ մէկը առէր, եթէ անձնական խնդրով մը թշնամի մը ունենար և եթէ անկէ ոխ աննել ուզէր, իբրև արքայական, իբրև գաւազիբ և իբրև հակայեղափոխական կը զրպարտէր գաշն և յեղափոխական տոնանիչ կը յանձնէր:

Ամէն բան իրօր խտանելու, ամէն բան տակն ու վրայ ընելու, խօսքերուն արժէքը հասկնալու և զանոնք խեղաթիւրելու անանկ ինքնայատուկ եղանակ մը, կարողութիւն մը ունէր որ, մինչև իսկ ամենէն ամբասիք, ամենէն անշահախնդիր և ամենէն մաքուր հանրապետականն անգամ կը զոզար անոր զէմը:

Իր գոհերուն մէջ խորութիւն չէր գնել ան, կը բուէր որ մէկը իբրև զէմ ըլլար և կամ իրեն ակամայ շարիք մը հասցնէր:

Բտու և բանասրկու խտանակիչ մըն էր ան, ազ-

գեցիկ խառնակիչ մը սակայն, որուն մեծ արժէք կուտային իր շուրջինները:

Ահա այսպէս, բաղդախնդիր կիներ բանախ մէջ մարքիզուհի Թօրինէի ըրած սպանալիքները իրագործած էր: Վրէժ առած էր զինքը արհամարհող բարձր գասակարգէն, ձեռք անցուցած աղնուականը բանա նեանկ և կամ գլխատել տուած էր... և զիս կը շարունակէր իր այս ապերասան գործը:

Այն իրիկունը, բազմաթիւ հիւրեր, յեղափոխական կուսակցութեան անդամներ, ակումբներու նախագահներ, լրագրողներ, յօդուածագիրներ կառավարական պաշտօնեաներ, յեղափոխական կնոջ տունը հաւաքուած էին պարզապէս անոր հետ բարեկամանալով անոր զրպարտութեանց և կամ քսութեանց զո՛հ չերթալու համար:

Յեղափոխականներու կիներ ալ եկած էին:

Գեղանին Մարիզ իր հիւրերը պատուասիրելով և ամենուն երեսին խնդարով կը ջանար զանոնք իրեն կապել և բարեկամներու մթնոլորտ մը ստեղծել իր շուրջը:

Բայց հակառակ իր թափած ջանքերուն, թուր ներկաներուն ալ երեսը կախուած էր: Կարծես թէ ամէնքն ալ տեղի ունենալիք զէպքերը նախատեսելով մատանջութեան մատնուած էին:

Իրաւ ալ, տարիէ մը ի վեր հարաւային գաւառներու ժողովուրդները Հանրապետութեան զէմ՝ ծառայած էին:

Ժան Շուանը եղած էր ապաստանութեան առաջին նշանը ատողը:

Արքայականներէ կազմուած հրոսախումբի մը զըլուխն անցած, օդնական ունենալով իր տղան, Ժան Շուան, իր վրայ զրկուած թուր զինուորական կանոնաւոր ուժերը պարտութեան մատնած էր:

Բայց շատ չանցած, վերջապէս հասկնալով որ իր տկար ուժերովն ու ափ մը մարդոցմովը չի պիտի կըրնար երկար առեն զէմ դնել Յեղափոխականաց Պատգամաւորական Ժողովին իրարու յետէ զրկած զինուորական ուժերուն, որոնք անշուշտ ապաստանները ջախջախելու համար զրկուած էին, եկած միացած էր պարոն Լէսփիւրի բանակին և անոր հրամանատարութեան տակ սկսած էր պատերազմիլ: Եւ անա այսպէսով, Պրէսուրի, Թուարի, Յօնթընէյի, Սամլուրի և Թօրֆուի մէջ տեղի ունեցող պատերազմներու միջոցին հերոսաբար կոռուած էր հանրապետութեան զինուորներուն զէմ:

Բայց ի վերջոյ, Թրամպլէյի մէջ տեղի ունեցող պատերազմի միջոցին պարոն Լէսփիւր մահացու կերպով վերաւորուած ըլլալով, Թօշմազլէն մարքիզը փոխանորդած էր անոր:

Թօշմազլէն մարքիզը, այդ քսան տարեկան քաջարի հերոսը, ի ներկայութեան իր զինուորներուն հետեւեալ խօսքը ըսած էր, որ յետոյ պատմական դարձաւ.

«Եթէ եա քաշուիմ, զինուորներ, հրացանի՛ ըլլանեցէք զիս. եթէ առաջ քալեմ, ինձի՛ հետեւեցէք. իսկ եթէ մեռնիմ, վրէժս առէք:»

Այս երիտասարդ զինուորական պեաը, որ հազիւ քսան քսանըրկու տարեկան կար, Անթրէնի մօտերը հանրապետութեան զինուորները պարտութեան մատնելով, իրարու ետեւէ գրաւեց Լավալը, Լաֆլէշը և Լըմանսը, բայց ի վերջոյ Լըմանսէն զուրս քշուելով պարտաւորուեցաւ Լուսո գեաը անցնիլ և Վէզէնի անտառը ապաստանիլ:

Ահա պատերազմական մեծ կարեւորութիւն ունեցող այս զէպքին վրայ էր որ արքայական բանակին թուր պետերուն միջեւ տեսակէաներու և գործելա-

կերպի սարքերու թիւն մը երեւան գալով վիճարանութեանց անդի տուաւ :

Զինուորական պետերէն ամէն մէկը ինքնազուխ և իր հաշտոյն գործելու մասին կը խօսէր, բայց անոնց մէջէն մէկը ձայն բարձրացնելով դէմ խօսեցաւ այդ սուաջարկին: Այդ մարդը գիւղացի ժան Շուանն էր, որ պատերազմներու միջոցին կուեղու և զինուորական ուժերը զնկափարելու մեծ կարողութիւն ցոյց տուած ըլլալով, իր հեղինակաւոր ձայնը կը բարձրացնէր և իրենց գափին և յաղթանակին սիրուն միութիւն կը քարոզէր և հերձուածներ ստեղծելուն, բաժին բաժին ըլլալուն դէմ կ'արտայայտուէր:

Անոր հեղինակաւոր և ազգու ձայնը լսող իրարու հակառակորդ պետերը, մոռնալով իրենց հակառակութիւնն ու անհամաձայնութիւնը, ամէնքը միաբանած կը խոնարհէին անոր առջեւ և Ռօջթապէն մարքիդին պահանջքին վրայ ժան Շուան արքայական հարաւային բանակին ընդհանուր հրամանատարը կը հռչակուէր:

Ժան Շուան իր վրայ խորհրդաւոր բան մը ունէր, աստուպելական խորհրդաւոր ուժ մը, ասոր համար զինքը չըջապատողները թէ՛ իրմէն կը վախնային, թէ՛ զինքը կը սիրէին:

Անա այսպէս, բոլոր ցիրուցան եղած հաս ու կուտոր ուժերն ու հրոսախումբերը իր շուրջը հաւաքելով, վերջապէս յաջողեցաւ խիստ կարգապահութիւն մը մտցնել բանակին մէջ և բարձրացնել զինուորին բարոյական ուժը:

Ապտամը գիւղացիները իրենց պետին օրինակին հետեւելով մոլեռանդացած, ամիջապէս իրենց նախկին բարոյականը վերստացած էին, և ետեւէ ետեւ յաղթանակներ տանելով յաջողութեամբ պսակուած էր իր քցեկտարնն:

Ներկայիս ժան Շուան անշուշտ հերոսական պատերազմներէ և մարտամենքէ յետոյ, վերջապէս Ռօջթի րեօնէն մինչև Եանթ կրկարող դօտիին տիրացած էր և իր ընդհանուր բանակատեղին ըրած էր Մաշգուլի ծովեզերեայ լոռնոս բարձունքները, ուրիշ միշտ յարաբերութեան մէջ էր գաղթական իշխաններուն և արքայականներուն հետ: Կանթէն տասը մղոն հեռու կեցած, դրնթէ պաշարման մէջ ասած էր Եանթը և մէկ օրէն միւսը կը սպաննար գրաւել դայն:

Անա այս պատճառներով, այն իրիկուն, քաղքուհի Մարիզ Գլէրիւսի տան մէջ հաւաքուող հանրապետականները ան ու գողի մատուած էին թէպէտ, բայց այդ մասին բնաւ բերանին չէին բանար:

Ամէնքն ալ դիտէին թէ ժան Շուան չափէն աւելի անողոք և անխնայ պիտի ըլլար իրենց հանդէպ: Յաճ ձայնով իրարու կ'ըսէին թէ՛ այդ մոլեռանդ գիւղացին երգում էր բնաջինջ ընկ բոլոր հայրենասէրները:

Եւ ժան Շուան անանկ մէկն էր որ իր խօսքը պիտի բռնէր:

Բոլոր հայրենասէրները, անոնք որոնք այդ իրիկունը հոն հաւաքուած էին, հիմա աչքերնուն առջեւը կը բնթէին ժան Շուանի մարդոց, այդ արիւնարբու հորդաներուն Կանթէն ներս խուժելու անտարանը և կատարելիք ջարդը: Ամէնքն ալ չատ ախուր էին:

Քաղաքացի Լըպաթէօյի կէնը որ Եանթի յեղափոխական կուսակցութեան ամենէն աղքեցիկ անդամուհիներէն մին էր, երեք գումար տուած ըլլալուն համար ալ հանրապետութեան զինուոր տուած ըլլալուն համար ամենէն աւելի վրդովուած էր այս դէպքերէն, անա ասոր համար խօսքը գեղանի Մարիզի ուղղելով հարցուց:

— Իրա՞ն է որ աւազակները մեր քաղաքին վրայ պիտի յարձակին :

Բազդախնդիր կիներ արհամարհական նայուածքով մը անոր նայելով՝ ցած ձայնով ըսաւ .

— Կրնայ իբրաւ ըլլալ, բայց դասերնին պիտի առնեն :

Եւ բարձրածայն աւելցուց .

— Յեղափոխական Պատգամաւորական ժողովը եւ քիտասարգ եւ կարող զօրավարներու հրամանատարութեան տակ օգնական ուժեր զրկած է մեզի : Այդ զօրավարները Ռէնի պատերազմին մէջ քանիցս յաղթական եղած են : Իսկ Հանրային Փրկութեան ժողովը իր մէջէն պատգամաւոր մը զրկած է, ամէն բան ընկելու լիազօրութիւնը ունեցող պատգամաւոր մը :

Եւ մասնորոշութիւն տուող ժպիտով մը շարունակեց .

— Այս իրիկուն հոս պիտի ըլլայ մեր քաղաքացի պատգամաւորը : Լսածիս նայելով՝ ճշմարիտ հայրենասէր մըն է եզեր ան, թունդ յեղափոխական մը եւ մոլի կուսակցական մը : Ահա եկաւ :

Հրաւիրեալներուն մէջ հետաքրքրութեան շարժում մը նշմարուեցաւ . ամէնքը մէկէն աչքերնին դուռին ուզղեցին :

Բողալատ աչքերով, լուրջ եւ թիտ զէմքով մարդ մը, սեւ բրտէնկօթ հագած, փետուրով զարդարուած գլխարկ մը անցուցած գլուխը, կուրծքին անցուցած եռագոյն ժապաւէն մը, սենեակէն ներս մտաւ :

Մաքսիմ Արտուէնն էր ան :

Գլէր հօրը քովէ էր :

Գլուխը ծոած, ճերմակ շրջազգեստ մը հագած, Գլէր, իր անկեղծութիւն արտայայտող զէմքովը ճիշդ Ատուածամօր պատկերին պէս քաղցր եւ երկնային հրեշտակի մը պէս ամբասիր երեւոյթ մը սնէր :

Անոնց ետին երկոտ երիտասարդ գինուորականներ

կը սեմուէին, որոնք հանրապետական զօրավարներու յատուկ համազգեստ հագած էին :

Մարիդ Ֆլէրիւս Արտուէնի մօտեցաւ եւ դիւթական ժպիտով մը ուզղակի անոր աչքերուն մէջ նայելով յայտարարեց .

— Բարի եկաք, քաղաքացի պատգամաւոր :

Արտուէն գլխարկը վար առաւ, յետոյ իր պաշտօնին կարեւորութիւնը գիացող մէկու մը համոզումով, լուրջ կերպով պատասխանեց :

— Գազբուհի Ֆլէրիւս, ինքզինքս շատ երջանիկ կը զգամ որ ձեզի պէս հայրենասէր կնոջ մը տունը կը գտնուիմ : Յեղափոխութեան հրեշտակապետը կոչած են ձեզ, ախպոս մը որուն այնքան արժանի էք :

Մարիդ ձեռքը անոր երկարեց . Արտուէն, սքանչւայցումով եւ հիացմամբ սեղմեց անոր ձեռքը :

Ապա, Գլէրը ցոյց տալով անոր, ըսաւ .

— Չուզելով աղջիկէս բաժնուիլ, հետս բերի գայն :

Գլէր երկչոտութեամբ խոնարհութիւն մը ըրաւ քաղքուհի Ֆլէրիւսի առջեւ, իսկ այս վերջինը բարեւորութեամբ անոր նայեցաւ :

— Զօրավար ժան-Պաթիսթ Բլէպէրը, խօսք ասալեղափոխական պատգամաւորը՝ երկայնահասակ գեղեցիկ գինուորական մը ցոյց տալով բազդախնդիր կնոջ :

— Ձեր քաջագործութիւնները իմացած եմ, զօրավար, խօսք առաւ Մարիդ Ֆլէրիւս : Ռէնի պատերազմի միջոցին քանիցս յաղթական հանդիսացաք :

Բլէպէր համեստութեամբ գլուխը խոնարհեցուց եւ իր զէնքնկերին առջեւէն անդին քաշուեցաւ :

Իսկ Արտուէն միւս զօրավարն ալ ներկայացուելով ըսաւ .

— Զօրվաս Ֆրանսուա Մարսօն :

Բոլոր ներկաներուն նայուածքը մէկէն ի մէկ այս գեղատի գինուորականին վրայ կեղբոնացաւ :

— Իմացած եմ որ դուք ալ Հիւսիսային բանակ-
ներուն գէմ կուուելով յաղթական բանգրիսացած էք, ը-
սաւ Մարիզ:

Մարսօ քաղաքաւարութեամբ այլ ցուրտ կերպով
խոնարհութիւն մը ըրաւ անոր առջև:

— Այ վստահ եմ որ ժան Շուանը չուտով պիտի
կրնանք պարտութեան մատնել, խօսք սուաւ Մարիզ:

Բոլոր ներկաները լսեցին և սկսան ուշադրութեամբ
մտիկ ընել յեղափոխութեան հրեշտակապետը:

Իսկ Մարիզ, չամբանեայով լեցուն երկար գաւաթ
մը առնելով քովը գանուող սպասաւորին ափսէին մէ-
ջէն, հրախրեալներուն զարծաւ և գոչեց.

— Գաւաթ կ'առաջարկեմ, ամէնքդ ալ խմեցէք
Լուստի հրօսախումբերուն ջախջախուելուն կենացը:

Ներկաները ամէնքը մէկէն միւս սպասաւորներուն
քով վաղեցին և մէյ մէկ գաւաթ չամբանիա առնելով
պատգամաւորին և երկու զօրավարին կողմը երկարեցին
և ապա խմեցին:

Բայց այս միջոցին դուրսէն ձայներ լսուեցան:

— Կեցցէ՛ ազգը, կեցցէ՛ հանրապետութիւնը,
կեցցէ՛ պատգամաւորը:

— Նանթի հայրենասէր ժողովուրդը ձեր երեսը
տեսնել կ'ուզէ, ըսաւ քաղքուհի Յլէրիւս խօսքը Ար-
սուէնի ուղղելով:

Եւ անոր ձեռքէն բռնելով հրապարակին վրայ նա-
յոզ պատշգամը տարաւ գոյն:

Ժողովուրդը, որ խռաներամ գուրքը կը սպասէր,
երբ իր պատգամաւորը տեսաւ, սկսաւ գոյն ծափա-
հարել: Ատոր վրայ բոլոր հրախրեալները պատշգամ
եկան:

Քլէպէր և Մարսօ խորհրդակցական նայուածքով
մը իրարու երես նայելէ յետոյ, տեղերնուն չերերացին:

Գլէր անկիւն մը քաշուած, թիկնաթոսի մը վրայ
նստած էր:

— Մա՛հ Շուաններուն, մա՛հ աւաղակներուն, մա՛հ
ջոջերուն, անկցի՛ն արքայականները, լապտերներէն
կախելու է մեծն ազաները, կը պոռային դուրսէն.

Արտուէն ձեռքով լուծեան հրաման տուաւ խո-
ժանին. . . ամէնքը մէկ հնազանդեցան. ասոր վրայ
հնչեղ ձայնով մը ըսաւ.

— Քաղաքացիներ, հրաման տրուած է ինծի ընա-
ջինջ ընել բոլոր ապստամբները և ազգազաւնները: Գիտ-
ցած եղէք որ չի պիտի մեղքնամ անոնց վրայ, անխը-
նայ և անկարեկիր պիտի ըլլամ: Իմ նշանաբանս է
«Չի գթալ և շանթի պէս հարուածել»

— Կեցցէ՛ ուրեմն շանթի պէս հարուածող պատ-
գամաւորը, գոտացին հազարաւոր կուրծքեր:

Եւ անոնցմէ մին քովինին ուսերուն վրայ բարձ-
րանալով գոչեց.

— Ուրեմն «չա՛նթ» թող ըլլայ մեր պատգամաւո-
րին ափազսը:

— Կեցցէ՛ պատգամաւոր «Շանթ», գոտացին հա-
զարաւոր բերաններ:

Եւ յետոյ ամէնքը մէկ սկսան երգել անվարախնե-
րու երգը.

Անվարսիները իրաւ միացան,
Կեցցէ՛ քնդանօք, ապրի՛ հրացան,
Յեղափոխութիւնն որոսման նման,
Եկաւ սիրացաւ հանրապետեան:

Գլէր չի կարենալով զիմանալ իր յուզումին, սկսաւ
հեծկլալ:

Մարսօ որ տեսնէ մը ի վեր անոր կը նայէր, ա-
նոր մօտեցաւ, իսկ Քլէպէր թեթև ծափտ մը ունեցաւ:
Մարսօն, պահ մը, սրտազրաւ նայուածքով մը

պատգամաւորին աղջիկը գիտեց, յետոյ, խորունկ այր միանգամայն քաղցր շեշտով մը ըսաւ .

— Քաղքուհի, ինչո՞ւ կուտար :

Գլէր գլուխը վեր բարձրացուց և զօրավարը նշմարելով՝ թաշկինակով մը անմիջապէս արցունքները սրբեց :

— Սիրտերնիգ բացէ՛ք ինձի, օրիորդ, շարուակից երիտասարդ զօրավարը :

Գլէր նախ աստամեկտաւ, բայց յետոյ, բնագրական վստահութեամբ մը լեցուած, մօտենալով այն համակրելի և բիտասարդին, որուն եզրայրական ձայնին մէջ քաղցր շեշտ մը կար, ոտքի ելաւ և ըսաւ .

— Թափուող և թափուելիք արիւնին վրայ կուլամ: Կուլամ զո՞ներուն վրայ, որբեւայրիներուն վրայ, որբերուն վրայ, կ'ողբամ զործուած աւերներուն վրայ, աս առեխութեան և թշուաններուն վրայ :

Մարսօ ձեռքը անոր երկարեց. Գլէր անոր ձեռքը իր ձեռքերուն մէջ առաւ :

Գլէպէր անոնց մօտենալով, բարեկամօրէն սկսաւ զանոնք գիտել, իսկ Գլէր գոչեց .

— Ե՞րբ սա եզրայրասպան կռիւը պիտի վերջանայ, ե՞րբ սա մարդասեղութիւնը պիտի վերնայ :

Մարսօ իտանգալաուութեամբ պատասխանեց .

— Այն ատեն երբ բոլոր Փրանսացիները հասկնան թէ միայն հանրապետութիւնն է որ կրնայ իրենց Ազատութիւն պարգեւել :

Գլէր այս խօսքերը լսելով գողաց :

Միթէ հայրն ալ մօտաւորապէս միեւնոյն խօսքը ըսած չէ՞ր իրեն ասկէ առաջ :

Գլէր այն ատենը չափէն աւելի ազդուած էր հօրը խօսքերէն, իրեն վախ տուած էր անոր խօսելու եղանակը, բայց ճիմա սուգի և երկիւղի միեւնոյն ազատութիւնը չէին թողուր իր վրայ զօրավարին խօսքերը: Անոր համար որ այդ խօսքը մոլեռանդ կու-

կուսակցամոլի մը բերնէն չէր որ կ'ելլեր, անոր համար որ այս անգամ մարդասիրական զգացումներէ զուրկ կրքոտ ու կոյր կուսակցական մը չէր այդ խօսքը ընողը, այլ զինուոր մը, իր հօրը պէս համոզուած այդ պարսաձանաչ ու վեհանձն զինուոր մը, որ զործուած



Արիւնաբբու Կիւր

անօգուտ և մեասակար չափազանցութիւններուն և բոլոր բարբարոսական վրիժաուութիւններուն ծուռ աչքով կը նայեր :

Մարսօ և Գլէր անմիջապէս հասկցան թէ գաղափարով և հաւատարմով թէպէտ իրարմէ շատ հեռու էին, բայց իրար սիրելու և իրար յարգելու համար ստեղ-

ծուած էին, և մտերմաբար իրարու ձեռք սեղմեցին:

— Դժոխքին գրան առջև հրեշտակի մըն է որ կը հանդիպիմ, մտածեց Մարսո իւրովի:

— Սա տագնապալի օրերուն առանձին չեմ, բարեկամ մը և եզրայր մը գտայ, կը մտածէր Գլէր:

Հրապարակէն անվարախներու քայլերգին վերջին վանկերը կը լսուէին... Մարիգ երեք գոյնով ժապաւէն մը շարժելով, խուժանը կը ծափահարէր:

Մաքսիմ Արտա էն, որ աչքը բազդախնայիբ կնոջ վրայէն չէր հեռացուցած, անոր գեղեցկութենէն հըմայուած, արտասովոր զգացումէ մը տարուած, սրտին մէջ տարօրինակ և նոր բաներ մը զգալով ինքնիրեն փսփոսց.

— Ի՞նչ գեղեցկութիւն, որքա՛ն գեղեցիկ է սա կինը:

ՄԱՅԳՈՒԼԻ ՊԱՏԵՐԱԶՍԸ

Այս գէպերէն քանի մը օր ետքը, Մաչգուլի գիւղաքաղաքին մէջ մեծ կենդանութիւն մը կը ախրէր...

Եկեղեցիին առջև ի մեծ հրապարակին մէջ գեղջուկներ և գեղջկուհիներ պոյնիկներու ձայնովը կը պարէին:

Փողոցներուն մէջ, երիտասարդներ և ծերունիներ, խնձորօղիով լեցուն տակառներու առջև խումբեր կազմած, կը խմէին և կ'երգէին:

Ուրիշներ, վրաններու տակ նստած, ընտանեօք կ'ուտէին ու կը խմէին... Երչիկին ու ապուխտին հօտը ամէն կողմ բռնած էր:

Բոլոր գէմքերն ալ ուրախ էին... Որո՛ւն միտքէն կ'անցնէր որ մշակի ու հողագործի զգեստներ հագած այդ բիրտ մարդիկը՝ որոնք կը խնդային և իրաջու հետ կատակ կ'ընէին, քաղաքային պատերազմ մղելու պատրաստ զինուորներ էին:

Ամէնքն ալ ջեմետանգօրէն առջի առտուն մատուցուած պատարագին ներկայ գտնուելէ յետոյ, յաջորդօրը, այսպէս, առանց ուրիշ մտահոգութեան, անփութօրէն, հաւարաբար կը խաղային ու կը զբօսնէին... անշուշտ գիտնալով որ իրենցմէ շատեր քանի մը օրէն թերեւս յաւիտենական քունը պիտի քնանային:

Ժան Շուան, որ իր գիւղացիի զգեստները չէր փոխած, մէջքին արքայականներու յատուկ ձերմակ լայն ժապաւէն մը կապած, կուրծքին վրայ ալ լաթէ սիրտ մը ու խաչանիչ մը գրած, իր սպաններէն չըջապատուած՝ զինուորները աչքէ կ'անցընէր:

Թօրինեէ մարքիզուհին, ձիաւորի զգեստներ հագած, անոր քովէն կը քայլէր:

Մարքիզուհին բանտէն ազատելէն ի վեր ամուսինէն ուրիշ լուր ստած չըլլալով՝ չէր ուզած իր ազատարարներէն բանուիլ:

Խեղացի և բարեսիրտ կիներ հաւաքելով զլիւսն, տեսակ մը կարմիր խաչ կազմած էր ան և պատեքազմներու միջոցին զինուորներուն խառնուելով վիշաւորները կը խնամէր:

Այսպէսով, ինքն ալ ժան Շուանի չափ ժողովըրդականութիւն չահած ըլլալով, երբ բանակին հրամանատարին քով զինուորներուն մէջէն կ'անցնէր, ամէնքն ալ կը ծափահարէին զինքը:

Ժան Շուան, իրեն ներկայացուած մանուկները օրհնելէ, իրեն երկարած կոշտ ձեռքերը սեղմել, հա-

Լատարմութիւն արտայայտող խօսքերուն կարճ այլ ազդու բառերով պատասխաններ տալ յետոյ, իր վրանը մտաւ ուր իր սպաները մասնաւոր հացկերոյթ մը պատրաստած էին իրեն:

Իր պնակին առջեւը, ծաղկամանի մը մէջ ձերմակ չուշան մը դրուած էր: Ձերմակ չուշանը արքայականներու խորհրդանիշն էր և բոլոր Շուանները կրգումըրած էին կա՛մ յազթել և կամ մեռնիլ այդ չուշանին խորհրդանշած գաղափարին սիրուն:

Բոլոր ներկաները իրենց աթոռները գրաւեցին և այն միջոցին երբ Մաշգուլի աւագերէցը «Հայր Մեր»ը սկսելու կը պատրաստուէր, Թօրինեէ մարքիզուհին՝ որ Ժան Շուանի աջ կողմը նստած էր. անոր ախանջն ի վար փսփսաց:

— Ո՛ւր է, աղանիդ մէջտեղը չիկայ:

Այս խօսքին վրայ ծերունի գիւղացիին զէմքը տխրեցաւ:

— Ինձի անանկ կուգայ որ նորէն իր երազներուն մէջ թաղուած է, փսփսաց գլուխը երեքցնելով: Ինքը մեզի հետ եկաւ, բայց կը վախնամ որ սիրաը անդին մնաց:

— Տարօրինակ բան, ինչպէ՞ս կ'ըլլայ, պատեւրազմներու միջոցին առի ծի պէս կուուեցաւ քաջ աղան, զիտել տուաւ մարքիզուհին:

— Այո՛, քաջ զինուոր մըն է, պատասխանեց Ժան Շուան հպարտութեամբ:

— Եւ բարի զաւակ մը, մէջ բերաւ մարքիզուհին:

— Այո՛, բայց այսօր անուանս աարեղարձն է և չնորհաւորելու մոտցաւ, ըսաւ հայրը մեղամաղձոտութեամբ:

— Ես հիմա կ'երթամ զինքը կը գտնեմ, գոչեց մարքիզուհին:

Այս ըսելով, տիկին Թօրինեէ դուրս ելաւ վրա-

նէն, հրապարակէն անցաւ, եկեղեցիին շրջանը բրաւ և նեղ ճամբայ մը մտնելով դասիվերէ մը վեր ելլալ սկսաւ: Այս դասիվերէն ժիլ տը Ռէյի գղեակին աւելրակները կ'երթուէր:

Մարքիզուհին զիտէր թէ ժազ Բօթըրօ զինուորական մարզանքներէն յետոյ, այդ տեղը կը քաշուէր և կ'առանձնանար:

Մարքիզուհին հետուէն տեսաւ զայն: Ժազ փլած պատի մը վրայ նստած՝ հորիզոնը կը զիտէր:

Մարքիզուհին անոր մօտեցաւ:

Ժազ որ զայն չէր տեսած, ախուր ու խոհուն զէմքով մը շարունակեց զիտել հորիզոնը:

Տիկին Թօրինեէ պահ մը զայն զիտելէ յետոյ իր զէմքին վրայ ալ տխրութիւն մը նշմարուեցաւ:

Կարճ միջոցի մը մէջ ազնուական կինը մտերմական կապով մը կապուած էր ապստամբին որդիին, և ժազ, առանց բնաւ իր սիրած կնոջը անունը տալու, իր սրտին գաղանիքը մասամբ բացած էր անոր, ըսած էր թէ հօրը պնուամներուն վրայ երգումըրած էր մոռնալ զայն, և բարեսիրտ ու վեհանձն կինը քիչ թէ շատ անոր սրտին մէջ անցած դարձածները իմանալով, սկսած էր կարեկցիլ անոր վրայ:

— Բարեկամս, նորէն անոր վրայ կը մտածես, խօսք տուաւ մարքիզուհին ներդաշնակ և անուշ ձայնով մը:

Ժազ ցնցուեցաւ, և ապա ձանձնալով տիկին Թօրինեէն, ատրի ելաւ և յարգանքով բարեւեց զայն ու ըսաւ:

— Այո՛, տիկին, անոր վրայ կը մտածեմ և չա՛տ կը ցաւեմ որ պատերազմի միջոցին գնդակ մը գալով գլուխս չի ջակջտիտեց, միայն մահէս վերջն է որ չի պիտի կրնամ մտածել անոր վրայ:

— Բայց զեռ շա՛տ կանուխ է, բարեկամս, զեռ երիտասարդ ես:

— Ո՛հ, տիկի՛ն, երիտասարդ եմ, զիտե՛մ, և ահա առոր համար է որ մեռնիլ կ'ուզեմ: Ի՞նչ կ'արժէ երիտասարդութիւնը երբ սիրար կը մեռնի:

— Բարեկամս, ե՛ս ալ քեզի պէս բա՛նուած եմ ամուսինէս, ե՛ս ալ քեզի պէս անոր վրայ կը մտածեմ և գիտեմ թէ ալ մէյ մըն ալ չի պիտի տեսնեմ զայն:

— Ուրեմն զուք ուրիշներէն աւելի աղէկ կը հասկընաք իմ վիճակս, և կընաք չափել իմ տառապանքս:

— Այո՛, բայց զատ մը կայ մեր առջև և մենք ամէն բանէ առաջ մեր դատին կը պարտինք ինքզինքնիս, գոչեց ժարքիղուհին մէկէն ի մէկ այլակերպուած: Քաջութիւն, ժապ: Իրա՛ւ է, պիտի մեռնինք, ամէնքս ալ պիտի մեռնինք, բայց մեր մահուան ժամը որոչեւ լու իրաւունքը ունեցող էութիւն մը կայ, պէտք է անո՛ր ապաւինինք և Անո՛ր թողունք ամէն բան:

Յանկարծ... իրենց գլխուն վրայէն աղաղակ մը լսուեցաւ...:

Իիէր Ֆլօրան, որ աւերակին պարտէզին մէջ կազնիի մը վրայ բարձրացած թշնամի ուժեր կը լրտեսէր, պոռայ:

— Վտա՛նգ կայ, վտա՛նգ, կապոյտներ (հանրապետական գինուորներ) կուգան կոր...:

Եւ ծառէն վար ցատկելով, ուղղակի գիւղին ճամբան ըննեց և սխաւ ունեցած ուժովը վազել:

Ժապ և տիկին Թօրինէ անոր հետեւեցան:

— Հոսկէ մզոն մը անդին, խու՛մբ մը կապոյտ հայրենասէրներ Ռէզէ գիւղէն զուրս ելլալով «Քաթրը-Վան» անունով պանդոկին առջև կեցան, խօսք առաւ Իիէր Ֆլօրան: Հետեւակները, ձիււորները, և թնդանօթները մէջը հաշուելով երկու հազարի չափ կա-

յին...: Երեւցածին նայելով, մեզի հոսկէ զուրս նետակ է նպատակնին:

Ժան Շուան այս խօսքերը լսելուն պէս պազարիւն կեցուածք մը առաւ և իր սպաները քովը կանչելով սխաւ հրամաններ տալ:

— Սուր-Շարժող, բոլոր գինուորներդ եկեղեցիին հետը ժողվէ: Իսկ զուն Արծաթ-Թեւ, ազաքն ու կիւնները գղեակին աւերակներուն մէջ պահել տուր: Դո՛ւն, կողնե՛ճիւղ, մեր քար նետող երկու թնդանօթները մինչեւ բերանը լեցնել տուր և մէկը մայր Քէնօթի բակը գետեղէ, միւսն ալ Թրէպապիւջի տունին կըռնակը:

Եւ Ռօջժաղէնի, Տէլպէյի ու Շարէթի գտնալով աւելցուց:

— Իսկ զուք, պարսններ, ձեր գինուորներուն զըլտինն անցէք: Դուք ալ, տէր հայր, օրհնեցէք մեր գէնքերը:

Ամէնքը մէկէն գլխարկնին հանեցին:

Այն միջոցին երբ քահանան ձեռքը վեր բարձրացընելով խաչի նշանը կը դնէր օդին մէջ, տիկին Թօրինէ և ժապ վրանէն ներս մտան...:

Ժապ, որ պատերազմին մօտ ըլլալը տեսնելով իր առաջուան խանդավառութիւնը և երիտասարդական կորովը դատ էր, ձեռքը վայրի ծաղիկներու փունջ մը լսնած հօրը քով վազելով գոչեց:

— Հայր, ձեր անուան տարեգարձը կը նորհանուրեմ և կը մաղթեմ որ յաղթական ըլլաք պատերազմին մէջ:

— Շնորհակալ եմ, զաւակս, ըսաւ ժան Շուան և ծաղիկները իր գլխարկին անցուց:

Ապա, գոռացող ձայնով մը պոռայ:

— Զէնքի՛ գիմենք, և կեցցէ՛ թագաւորը:

Բիէր Ֆլորան սխալած չէր: Եկողը փոքրիկ բանակ մըն էր որ Մաշգուլի վրայ յարձակելու կը պատրաստուէր:

Իբաւ ալ, Մասքիմ Արտուէն նանթ հասնելուն պէս փան Շուան և իր մարդոցը գործը վերջնականապէս լմնցել զրամ էր միաքը:

Արտուէն համաձայնած էր զօրավար Մարսօի և Բլէպէրի հետ: Մաշգուլը պիտի պաշարէին և արքայական ուժերը բնաջինջ պիտի ընէին:

Բայց երկու զօրավարները զլուած էին այլևս քաղաքային ներքին կոիւններէ, և ժամ առաջ կ'ուզէին վերջ տալ այդ եզրայրասպան կոիւններուն: Անոնց նպատակը ո՛չ թէ ապստամբները բնաջինջ ընել էր, այլ ապստամբութիւնը զսպել: Միշտ պարապ տեղը արխն թափելէ խուսափած էին և պիտի խուսափէին անշուշտ:

Մասքիմ Արտուէն ծայրայեղական մըն էր, կուզէր հիմէն կործանել հակայեղափոխական շարժումը և բնաջինջ ընել ապստամբները, բայց երկու զօրավարները այդ միտքէն չէին. անոնք պարզապէս կ'ուզէին զսպել ապստամբութիւնը:

Արտուէն կասկածելով իր արամագրութեան տակ գտնուող զօրավարներուն վրայ, ուղած էր որ անձամբ ներկայ գտնուի զինուորական գործողութեանց, իսկ քաղաքուհի Մարիզ Ֆլէրիւս, փափաքելով Շուաններու կործանումը, ջախջախու իլը աչքով — տեսնել, հրամանատար էր Արտուէնէն որ ինքն ալ ներկայ գտնուի այդ գործողութիւններուն: Արտուէն գէմ չէր զրամ, և բողոքախնդիր կիներ աչքին առջեւը բերելով իր առջեւ պարզուելիք սրտաձմիկ տեսարանները, առաջւրնէ իսկ հրճու իլ սկսած էր:

Յաջորդ օրը ճամբայ պիտի ելլային:

Գլէր հօրը մօտենալով ըսաւ.

— Հայրիկ, ե՛ս ալ Մաշգուլ պիտի գամ:

— Ի՞նչ, զո՞ւն ալ պիտի գաս, գոչեց Արտուէն զարմացումով: Ի՞նչ պիտի ընես որ, զուն ի՞նչ կրնաս ընել կոիւին մէջ:

— Ես ալ իմ պարտականութիւնս ունիմ, պատասխանեց Գլէր ասպետօրէն:

— Ի՞նչ, քու պարտականութիւնդ ունիս:

— Այո՛, միթէ վերաւորները խնամքի չե՞ն կարօտիր:

— Մենք տտոր վրայ մտածած ենք և պէտք և դամին չափ հիւանդապահ ունինք:

— Հայրիկ, կ'աղաչեմ, մի՛ մերժէք խնդրանքս:

— Ո՛չ, ո՛չ, ատանկ բան չըլլար: Այդ զինուորներուն մէջը, այդ կոիւին մէջը ինքնիր գլխուդ ի՞նչ պիտի ընես զուն, հապա եթէ ելլայ գլխուդ փորձանք մը գա՛յ... Ո՛չ չըլլար...:

— Մինակս չի պիտի ըլլամ, յայտարարեց Գլէր: Երէկ վիքթուար Լըֆրանը եկաւ հոս:

— Վիքթուարը, մեր զրացի կօշկակարին կի՞նը:

— Այո՛, այս առտու Բարիդէն եկող կամաւոր զինուորներուն հետ հոս եկեր է. ջուր, օդի, ուտելիք և վէրքերը փաթթելիք լաթերով լեցուն կառք մը տուեր են իրեն որպէս զի զինուորներուն քովէն երթալով անոնց պէտք եղածը հայթայթէ: Առաջարկեց ինձի որ ե՛ս ալ իր հետը երթամ, կառքին մէջ պարապ տեղ ունի եղեր:

— Ապրի՛ս, Վիքթուար, բնաւ քենէ չէ՛ յուսար, փափաց Արտուէն իւրովի:

Ապա խօսքը աղջկան ուղղելով հարցուց.

— Հապա ի՞ր ամուսինը ո՞ւր է:

— Երկրորդ զօրարամին մէջ տասնապետ է:

— Պղտիկնի՛ն որսւ ձգեցին:

— Ան ալ հօրը զօրաբաժինին մէջ թմբուկ զարնող եղած է:

— Տեսա՞ր, աղջիկս, տեսա՞ր ճշմարիտ հարեհաւերները:

— Վիքթորարը ինձի պատմեց որ պատերազմի մը միջոցին անձրեւի պէս տեղացող գնդակներուն մէջէն անցեր են և սկսած մը անգամ չեն ունեցեր: Եւ ըստ որ ես ալ իր հետը երթամ: «Ինձի հետ կեդոնութուն գնդակ չի գպիր, ես բազումը եմ, ամէն տեղ կեանք և բազզ կը բաժնեմ, Վիքթորար «Յաղթանակ» ըսել է և ես ամէն տեղ յաղթութիւն կը աանիմ հետս» ըսաւ:

— Շատ աղէկ, գնա՛, բայց այդ քաջ կնոջ կառքէն վար չի պիտի իջնես: Նրամայեց Արաուէն:

Յաջորդ առաւօտուն, Գլէր և նպարավաճառ կիներ Վիքթորար, վառվառն աչքերով հուժկու էջու մը լրձւած նպարեղինաց կառքին նստարանին վրայ նստելով՝ զինուորներուն հտեւէն ճամբաք ելան:

Գլէր, տեսնելով որ վերջապէս իր վիճակէն հասկըցող կին մը գտած էր որ միանգամայն զինքը մօր մը պէս կը սիրէր, ճամբան սիրտը բացաւ անոր:

— Վայ սատանի ձագ, ա՛տ էր պակաս, սիրած աղաղ Շուան մըն է եղեր, հէ՛... գոչեց Վիքթորար: Հիմա հասկցա՛յ, հիմա հասկցա՛յ, գրաւ կը դնեմ որ դուն մեր վիրաւորները խնամելու համար չէ որ հետս կուգաս, սիրած աղուդ մօտենալ է միտքդ և ատոր համար էր որ ամէն բան ըրիր և վերջապէս հայրդ համոզել յաջողեցար:

— Մայր Վիքթորար, սրտիս ձայնին հպատակեցայ, պատասխանեց Գլէր կարմրելով: Սիրտս ինձի նրամայեց որ պէտք է օգնութեան հասնիմ բոլոր այնքաջներուն սրտնք օգնութեան կը կարօտին:

— Երթանք, աղջիկս, երթանք, տեսնալիք չատքործ կայ, գոչեց նպարավաճառ կինը:

Եւ ձեռքի մտրակը երկրցնելով գոչեց.

— Շի՛, չի՛, քալէ՛, քալէ՛, և կեցցէ՛ հանրապետութիւնը:

Ճամբան երկու անգամ կանգ առնելէ յետոյ, Քլէպէրի և Մարսօյի ջոկատները վերջապէս Մաչգուլ գիւղաքաղաքին առջև հասած էին:

Երկու զօրավարները պատերազմի սկսելէ առաջ, ապաստմանը ընդհանրապէս չտեսնելով տեղեկութիւն ստանալու նպատակաւ՝ յառաջապահ զոնդէնքանի մը զինուոր զրկած էին քաղաքէն ներս:

Այն միջոցին երբ զինուորները առտուան նախաճաշը կ'ընէին, Արաուէն և Մարիզ, մէյ մէկ սեւ ձի հեծած, նպարավաճառ կնոջ սայլին կը մօտենային:

Գլէր, սայլին առջևը կեցած, մայր Վիքթորարի կ'օգնէր. զինուորներուն ջրամանները կը լեցնէր, մէյ մէկ գաւաթ օգի կուտար անոնց, հաց կը բաժէր և պանիր կը ջարդէր:

Զինուորները իրենց պատգամաւորը տեսնելով, զինուորական բարեւի կենարով ճամբայ բացին անոր:

— Քաղաքացի պատգամաւորը ազգին կենացը գաւաթ մը օգի կը խմէ՞, հարցուց Վիքթորար անուշախոսեալով:

— Ամենայն սիրով, պատասխանեց Արաուէն:

Տասնապետ Լըֆրան, որ երբեմն կնոջը քով գալու համար առիթ կը փնտռէր, կառքին մօտեցած էր և օղիով լեցուն գաւաթները պատգամաւորին և Մարիզի կ'երկարէր:

— Քաղաքացի պատգամաւոր, կը յուսամ որ այս գիշեր մեր քաջ զինուորները պիտի յաջողին սա օձերուն բոյնը քանդել, գոչեց Մարիզ գաւաթ մը օղի երկարելով Արաուէնի:

— Բնաւ չեմ կասկածիր, ըսաւ Արտուէն բոցա-
վառ նայուածքով մը անոր նայելով:

Մինչդեռ Պէյր զօրավար Մարսօյի գաւաթը կը
լեցնէր և երիտասարդ զօրավարը մտերմական հիացու-
մով մը զմայլած անոր երեսն ի վեր կը նայէր, Մա-
րիզ աչքին պոչովը զօրավարը կը դիտէր, և կոանկով
որ Մարսօ սիրահարուած էր Պէյրի, կամաց մը շըր-
թունքները անոր ականջին մօտեցնելով ամբարասու-
նօրէն կ'ըսէր.

— Զօրավար, կարծեմ թէ սա մանկամարդ քաղ-
քունին ախորժակդ գրգռեց:

— Այո՛, աիկին, շատ սիրուն աղջիկ մըն է, պա-
տասխանեց Մարսօ չոր ու ցամաք կերպով:

Եւ թշնամական արհամարհոտ նայուածքով մը ուղ-
ղակի անոր աչքերուն մէջ նայելով՝ աւելցուց.

— Բայց միանգամայն շատ բարի և աղնիւ է, և
զիմացինս ո՛վ որ ալ ըլլայ, երբ բարեսիրտ ու ազնիւ
ըլլայ, կը գնահատեմ ու կը յարգեմ զինքը, աիկին:

Մարիզ այս խօսքին վրայ գեփ գեղին կտրեցաւ,
և ձին անդին դարձնելով Արտուէնի քովը գնաց:

Այս միջոցին Քլէպէր, Մաշգուլի քարտէսը բացած
Արտուէնի ցոյց կուտար:

Մայր Վիքթուար. որ Մարսօյի և Մարիզի միջեւ
եղած խօսակցութիւնը ամբողջութեամբ լսած էր, Պը-
յէրի կողմը ձռնելով Մարիզը ցոյց առաւ և կամաց մը
ականջն ի վար մտնաց.

— Ինձի՛ նայէ, աղջիկս, սա կնիկէն հետու կե-
ցիր, ես առ կնկանը չեմ հաւիր կոր:

Մաշգուլ գրկուած գինուորները փորձերուն վրայ
գեանէն սողալով ետ վերադարձան, և անոնցմէ մին
Քլէպէրի մօտենալով ըսաւ.

— Քաղաքէն ներս մտանք: Մարդ մարդասանք

չէր մնացած քաղաքին մէջ: Կ'երևի թէ աւազակները
քաղաքը ձգել դացեր են:

— Ուրեմն կրնանք անմիջապէս քաղաքին վրայ
քալել, գոչեց Արտուէն:

Մարսօ և Քլէպէր խորհրդակցական նայուածքով
մը իրարու նայեցան:

Բայց Արտուէն, Մարիզէն զրգուած, ժամ առաջ
իր թշնամիներուն արեան թափուիլը տեսնելու անհամ-
բեր թեամբ ըսաւ.

— Բնաւ ժամանակ կորսնցնելու չենք: Պէտք և
զածին չափ ուժ ունինք: Առաջ քալենք:

Պատգամաւորը լիազօրութիւն ունէր և երկու գօ-
րավարները անոր տուած հրամաններուն հպատակիչ
ուրիշ միջոց չունէին:

Լիազօր պատգամաւորի մը հրամանը անաստող
մը անմիջապէս յեղափոխական ատեանին կը յանձնուէր
և յեղափոխական ատեանը, առանց աջ ու ձախ նայե-
լու, հարեւանցի քննութենէ մը վերջ, պատգամաւո-
րին խօսքը չի բռնողը անմիջապէս գահիճին յանձնե-
լով գլխաակ կուտար: Կառավարաւոր օրական քանի մը
տասնեակ գլուխներ կը գատէր մարմինէն:

Ահա ատոր համար, երկու զօրավարները կամայ
ակամայ իրենց գունդերը երկուքի բաժնեցին: Գուն-
դերէն մին Քլէպէրի հրամանատարութեան տակ ուղ-
ղակի դիւղէն ներս պիտի մտնէր, իսկ միւսը՝ Մար-
սօյի հրամանատարութեան տակ՝ Մաշգուլի անտառը
պաշարման մէջ պիտի առնէր:

Անանկ կ'ենթադրուէր թէ մտանները Մաշգուլի
անտառը ապաստանած էին և հոնկէ, կուչափ կողմէն,
իրենց հակառակորդներուն վրայ պիտի յարձակէին:

Երկու գունդերն ալ ձամբայ ելան:
Քլէպէրի գունդը, որուն կը հետեւէին Արտուէն,

Մարիզ և նպարափաճառ կնոջ սայլը, առանց սեէ միջադէպի Մաշգուլէն ներս մտան:

Գրեզին մէջ ըստ երեւոյթին մարզ մարդասանք չի կար:

Բոլոր տուներուն պատահանները խնամքով գոցուած էին: Միայն քանի մը հաւեր կ'արածէին ազրիւսներուն մէջ:

Մերթ ընդ մերթ ախոռներէն ու գոմերէն բարաչանքներ կը լսուէին և գոց դուռներով եկեղեցիներուն զանգակատուներուն զազաթը արքայականներու չուչանած աղիկ կրող ճերմակ զրօշակները կը ծածանէին:

Քլէպէր, այլևս վտանջ ըլլալով որ գիւղին մէջ մարզ չիկար, երբ հրաման պիտի տար կանդ առնել և տուները խուզարկել, յանկարծ, եկեղեցիի մը զանգակատան լուսամուտներուն մէջէն ձեռք մը դուրս ելաւ: Այս ձեռքը ճերմակ թաշկինակ մը բռնած էր և զայն կ'երերցնէր:

Նշանը արուած էր ուրեմն և քար նետող երկու թնդանօթները սկսան գոռալով քար տեղացնել: Տուներուն մէջէն, պատերուն զազաթներէն, ծառերուն բարձունքներէն, մացառներուն մէջէն, թուփերուն տակէն, ամէն կողմէ հրացանած գութիւն մըն է սկսու և գնդակներու անանկ սարսափելի ու յանկարծական տեղատարափ մը սկսաւ տեղայ հանրապետականներուն գլխուն որ, Քլէպէրի գունդին կէսէն աւելին ղետին փուռեցան:

Շփոթութիւնը սկսած էր արդէն: Հանրապետականներ յանկարծակիի եկած էին:

Վիքթուար այս միջոցին իր կատարով գիւղէն ներս մտնելու վրայ էր: Գլէր երբ հրացանած գութեան ձայնը առաւ, սարսափահար Վիքթուարի թեւին փարեցաւ:

— Ի՞նչ կը վախնաս կոր, աղջիկս, ասիկա գեա

կնունքն է, զուն հարսնիքը տեսնելու ես, ըսաւ Վիքթուար հերոսարար կտորը առաջ քշելով:

Իսկ Արտուէն, Մարիզի ձիուն գլուխէն բռնելով և կայծակի արագութեամբ ձին անդին գարձնելով պատերազմի զաշտէն հեռացուց զայն:

Հրացանած գութեան ձայն մը եւս լսուեցաւ և ողջ մնացած հանրապետական զինուորներուն միւս կէսն ալ գետին փուռեցաւ:

Ասոր վրայ, Քլէպէր, իր ձիուն վրայ ոտքի կենալով գոռաց.

— Խմբուեցէ՛ք աղաքներ, և արի՛ւն փոխել սուէք սա սրիկաներուն:

Հանրապետական զինուորները իրենց պետին այս հրամանին վրայ առիւժ կտրած, կայծակի արագութեամբ սուիներն հրացաններնուն անցուցին և տուներուն վրայ խուժեցին և սկսան սուիների ու հրացանի կոթի հարուածներով դուռները կտրաւել: Առջևնին ելլողը առանց աջ ու ձախ նայելու սուրէ անցուցին:

Բայց յանկարծ, եկեղեցիին մէջէն արքայականներու խումբ մը դուրս խուժելով ժան Շուանի և իր զաւկին հրամանատարութեան տակ՝ կոնակէն անանկ սարսափելի յարձակում մը գործեց Քլէպէրի զինուորներուն վրայ որ, այս վերջինները յանկարծակիի եկան:

Հանրապետական զինուորները մէկէն ի մէկ երեսներն զարձուցին և զիրկընդխառն կտիւ մըն է սկսաւ:

Քլէպէր ձիուն վրայէն սուրի հարուածներ տեղացընելով իր չորս կողմը՝ կը գոչէր.

— Խե՛րը անիծածս, իրա՛ւ աղէկ կը կուրին կոր եղեր այս աւազակները:

Եւ իրաւ ալ, ժան Շուանի հրոսախումբը անանկ քաջութեամբ կը կտուէր հանրապետական զինուորներուն դէմ որ, Ռէնի հերոսները, հակառակ իրենց ա-

բիութեան, չի կարենալով դէմ դնել այս յանկարծա-
կան բաղխումին, անձնատուր պիտի ըլլային:

Բայց յանկարծ հրապարակին միւս ծայրէն թմբու-
կի մը ձայնը լսուեցաւ:

Զօրավար Մարսօ իր մարդոցմովը օգնութեան հա-
սած էր: Քաջասիրտ Նիքօլան զինուորներուն առջևէն
գացող թմբուկ զարնողներուն առջևն անցած, իր թըմ-
բուկը թփռապանելով կրակելու նշանը կուտար:

Մաքսիմ Արտուէն, Մարիզ Ծլէրբուր վառնդէն
հետապնելէ և զայն ապահով տեղ մը տանել ձգելէ յե-
տաոյ, ռազմադաշտ վերադարձած էր և պարզ ձիւտորի
մը պէս ինքն ալ կռիւին խառնուելու պատրաստուէր
և սուրը պատեանէն քաշելով կը գոչէր:

— Առաջ անցէք, բարեկամներս, ալ այս անգամ
ամէնքն ալ բռնեցինք:

Եւ քաջ յեղափոխականը՝ ժան Շուանը իր ձեր-
մակ գօտիէն ձանչցած ըլլալով, զայն իր ձեռքովը
սպաննելու համար կայծակի արագութեամբ առաջ
նետուեցաւ:

Բայց այս միջոցին բոլոր Շուանները մէկէն իրենց
կռնակէն խուժող զինուորներուն վրայ կրակ բացին և
Արտուէն պարտաւորուեցաւ ետ քաշուիլ: Քիչպէր վրայ
հասնելով պատգամաւորը դուրս հաննց պատերազմա-
կան գիծէն:

Այս անգամ շուաններն էին երկու կարակի մէջ
մնացողները:

Մարսօ իր առիւծներուն շղթաները քակած էր:
Գիրկընդիտան կսիւր ժամէ մը աւելի տեսեց: Ա-
մէնուն ալ աչքերը դարձած էին. Շուանները քայլ առ
քայլ իրենց գիւղը կը պաշտպանէին: Բոլոր տունները
զատ զատ պաշարման մէջ կ'առնուէին...: Ամէն կողմէ
կրակ կը տեղար. երկու կողմին մարդիկը կատաղած
զագաններու պէս իրար կը պատառէին, իրար կը

բզակէին. դէնք չունեցողը իր ձիրաններովն ու ակ-
աններովը կը կտուէր...: Արիւնը առուակ մը կազմե-
լով կը հոսէր և խորս ու փորս փոսերը կը լեցնէր...: Մեծեղներու և վիրաւորներու աղերասրջ խաղաւքն
ու հեծիւնները կը լսուէին...:

Բայց մինչև ուր թնգանթը գործի սկսելով գիւ-
ղին պաշտպանութեան վերջին խրամատներն ու պատ-
նէշները աւերակ չի դարձուց, ժան Շուանի մարդիկը
չի քաշուեցան:

Եւ ետ քաշուելէ ետքն ալ, բոլոր ողջ մնացողները՝
որոնց մէջն էին նաև ժան Շուան, ժագ, Ռօշժագ-
լէն և Շարէթ, բոլորն ալ առուակ կամ նուազ վիրա-
ւորուած, կանոնաւոր նահանջ մը պատրաստեցին
իրենց համար և զմայլելի ճարպիկութեամբ մը յաջո-
ղեցան զիրենք պաշարող կրակին մէջէն ազատիլ ու ժիւ-
տը Ռէյ գլխակին աւերակները ապաստանիլ, ուրկէ
վերջին պաշտպանողականին պիտի սկսէին:

Յանկարծ ժան Շուան կատաղութեան ձիջ մը ար-
ձակեց:

Գիւղը հրդեհի սկսած էին: Տունները բոցերու մէջ
էին: Փոքրիկ զինուոր մը, տասը տարեկան փոքրիկ
տղայ մը, Նիքօլան, բոցերու մէջէն անցնելով, եկե-
ղեցիին զանգակատունը ելած և հոնկէ արքայական
ձերմակ զրօշակը խլելով բոցերուն մէջը նետած և ա-
նոր տեղը հանրապետական եռագոյն զրօշակը պար-
զած էր: Հիմա եռագոյնը կը ծածանէր եկեղեցիին դան-
գակատան վրայ: ժան Շուան տեսնելով այս սրբապղ-
ծութիւնը, կատաղութեամբ առաջ նետուիլ ուզեց,
բայց ժագ անոր թեւէն բռնեց և թող չի տուաւ:

— Հայր, քիչ մը ետքը հոս պիտի գան և պիտի
պաշարեն մեզ, ըսաւ ժագ՝ հօրը ցոյց տալով մանուկ-
ներն ու կիները որոնք տիկին Թօրինէի շուրջը հա-
ւաքուած, ծուկի եկած: արցունքը աչքերնուն մէջ,

«աէր ողորմիա»ն կը մրմնջէին մահամերձ հիւանդներու հեւացող ձայնովը: Եթէ մեր թշնամիին ձեռքը անցնինք, ամենքս ալ պիտի ջարդուինք, ատոր համար անմիջապէս քովի անտատը փախչելու և պահուըտելու ենք:

Ժան Շուան երեսները կախելով մտածել սկսաւ:

— Դուք մեր պետն էք և պէտք է որ սպրիք, այո՛, մեր վրէժը ատնելու համար սպրիլու էք, մէջքերաւ աիկին Թօրինէէ:

— Իրաւունք ունիք, ըսաւ Ժան Շուան: Բայց նահանջած ատեննիս ո՞վ պիտի պաշտպանէ մեզ, ո՞վ թշնամիին զէմ գնելով ժամանակ շահեցնել պիտի սոյ մեզի:

— Ե՛ս, գոչեց ժազ: Քանի մը կամաւոր ատնելով ե՛ս պիտի պաշտպանեմ ձեր նահանջը:

— Ի՞նչ, գո՞ւն, գոչեց հայրը իր աղուն երեսն ի նայելով:

— Այո՛, հայր, միտնիլը փառք մըն է ինծի համար, և կը խնդրեմ որ այդ փառքը չի զլանաք ինծի:

— Շա՛ւ լաւ, անանկ թող ըլլայ, ըսաւ Ժան Շուան:

Եւ ատանց բերանը բանալու զաւակը կուրծքին սեղմիլէ յետոյ, շուրջը հաւաքեց իր զինուորներն ու սպաները և ետ քաշուելու հրաման տուաւ:

Առաջ, կիներն ու աղաքը զիւզին ծակն ու ծուկը զիտցող հովիւի մը առաջնորդութեանը յանձնելով հեռացուցին զանոնք, յետոյ, Ժան Շուան և իր մարդիկը զգեակին փլատականերուն շուրջը գանուող մացառներուն մէջ մտնելով աներեւոյթ եզան:

Թօրինէէ մարքիզուհին որ ամենէն ետքը մնացած էր, ըսաւ.

— Մնաս բարով, Ժա՛զ:

— Երթաք բարով, աիկին, գացէ՛ք և Ասատուծոյ

աղօթեցէք մեզի համար, պատասխանեց ժազ զլիարկը հանելով:

Տիկին Թօրինէէ, արցունքը աչքերուն մէջ, փախըստականներուն հետեւեցաւ:

Ճիշդ ժամանակին մեկնած էր... ահա հանրապետական զինուորներն երբ յարձակումի մը սկսէին և ժազ ու իր քանի մը քաջերը անոնց վրայ կրակ կը տեղեկացնէին...:

Հանրապետական զինուորներէն քանի մը հատը վերաւորուելով զատիվայրէն վար զլտորիլ սկսան... բայց վար իյնողներուն ետեւը գանուող զինուորները զատիվայրէն վեր խոյանալով զգեակին փլատակներէն ներս մտան...:

Ատոր վրայ, ժազ, փոխանակ իր մարդիկը ատնելով փախչելու, ինքնագլուխ, սուրը ձեռքը, իր թշնամիներուն վրայ խոյացաւ, և մէկ հարուածով զէմը ելլողը գետին զլտորեց:

Իր ընկերները ետին մնացած էին, իսկ ինքը, սուրը ձեռքը, ատանձին. քսան հոգիի զէմ կը գնէր: Ունեցած ուժովը սուրը կը շարժէր և զէմքը ելլողը թեթեւօրէն և կամ ծանր կերպով վերաւորուելով գետին կը զլտորէր:

Հանրապետականները վրայ հասած և իր ընկերներ անշարժութեան մատնած էին հիմա, բայց ժազ, անըման քաջութեամբ մը կը զիմադրէր, վերջին ճիգ մըն ալ կը թափէր... սակայն մէկէն ի մէկ ճիշ մը արձակեց և գետին տապալեցաւ...:

— Ասիկա լինցաւ, մէկալին նայինք, գոչեց հանրապետական ծերունի յիսնապետ մը իր սուրը ժազի կուրծքին միտիլէ և զուրս քաշիլէ յետոյ՝ համազգեստին ձայնովը սուրին վրայի արիւնը սրբելով:

Արիւնարբու Կիճը

Յեառոյ, աւելցուց .

— Տա միւսները տարէք . Անոնց հաշիւն ալ քիչ մը ետքը կը տեսնենք :

Հանրապետական զինուորները գերիւնները առնելով տարին, իսկ ժառ Բօթըրօ, աչքերը բանալով, մահա մերձի մը ակար ձայնովը մուտաց .

— Մնաս բարով, Գլէ՛ր, մնաս բարով : ներէ՛ ինձի . . . :

Յեառոյ, անշունչ գիակի մը պէս անշարժացաւ մընաց . . . :

Գիշերը վրայ հասած էր արդէն . . . : Մութին մէջ մարդկային այդ սպանդանոցը գերեզմանոցի մը սարսափելի երեւոյթը առած էր . . . : Պատերազմին գաշտը կոտորածի սոսկատեսիլ թատերաւայր մը դարձած էր . :

Հրոյ ճարակ եղած առնետներն վերջի բոցերը կը լուսաւորէին այս սոսկալի տեսարանը : Ասաւօտուն կենդանութիւն կար հոն, իսկ հիմա, իրիկունը՝ մահու աւեր կը տիրէր ամէն կողմ . . . :

Երկու կիներ, ձեռքերնին մէյ մէկ ջահ բռնած, մութին մէջ, գետին ծոած կը պարտէին : Կ'երևել թէ անոնք վիրաւորներ կը փնտռէին օգնութեան հասնելու համար :

Յանկարծ անոնցմէ մէկը դղեակին աւերակները ցոյց տալով ըսաւ .

— Արգեօք սա աւերակներուն մէջ վիրաւորներ կա՞ն :

— Երթանք անգամ մը նայինք, պատասխանեց միւսը :

Երբ երկու կիները գառիվերէն վեր կ'ելլային, անոնցմէ մին գետինը փռուած մարմինի մը զարնուեցաւ :

Այն որ երիասարդ էր, ջահին լոյսը գետնին բրունց և ինքն ալ գետին ծոեցաւ, իսկ տարիքոտ կիները դղեակին ուղղութիւնը բռնելով հեռացաւ :

Կռնակի վրայ փռուած դիակ մը նշմարեց մանկամարդ աղջիկը ջահին լոյսովը :

— Ժա՛գն է, ժա՛գն է, կմկմաց Գլէր իւրովի :

Ժան Շուանի որդին այս ձայնը առնելուն պէս աչքերը բացաւ և կարծես թէ տեսիլք մըն էր տեսածը, մահամերձի մը աչքին երեւցող դամբանային տեսիլք մը, գերեզմանային ձայնով մը փափսաց .

— Ո՛հ, Գլէ՛ր, դո՛ւն ես, ներեցի՛ր ինձի, ներեցի՛ր անշուշտ որ ասանկ մեռած վայրկեանիս աչքիս կ'երևելիս . . . :

Այս ըսելով, ժառ, օտքի ելլալու համար մեծ ճիգ թափեց . . . իսկ մանկամարդ աղջիկը գայն իր կուրծքին սեղմեց . . . բայց յանկարծ մօտէն ձայն մը լսուեցաւ . . . :

Երկու հոգի ցած ձայնով խօսակցելով իրենց կը մօտենային . . . :

Արտուէնն էր որ Մարիզ Ֆլէրիւսը առնելով պատերազմի գաշտը աչքէ անցընելու եկած էր :

— Հա՛յրս է, թոթովեց մանկամարդ աղջիկը անու զոզի մատնուելով :

Եւ բնագրական չարժումով մը ժառը ձգեց ու երեսը հողին դարձնել տալով պառկեցուց :

Արտուէն ձանչցած ըլլալով իր աղջիկը, անոր մօտեցաւ և հարցուց .

— Ո՞վ է այդ մարդը, չուան մըն է, այնպէս չէ՞ . . . :

Այս ըսելով Արտուէն երիասարդին վրայ ծոեցաւ և գայն ձանչնալով՝ աչքերը քարկուլիեան փայլակով մը լեցուած՝ գոչեց .

— Ժառ Բօթըրօ՞ն է . . . դաւածա՞նը . . . , երգմնազա՞նցը . . . :

Վ Ի Ր Ա Ի Ո Ր Ե Ա Լ Ը

Այս բաները այն աստիճան ատելութեամբ և սարսափելի շեշտով մը արտասանուած էին որ, երբ Գլէր դանձնք լսեց, այնուհետև համոզուեցաւ որ հայրը բնաւ չի պիտի խնայէր: Իր սիրածին մահուան վճիռը արուած էր:

Արաուէն ոտքի ելլալով Մարիզի մօտեցաւ և բաներ մը մտաւայ: Մարիզ, գիշակեր բորենիի մը պէս աչքերը բացած զայն մտիկ ըրաւ: Իսկ Գլէր, այս առիթէն օգտուելով՝ ժազի վրայ ձուեցաւ և անոր ականջն ի վար փսփսայ:

— Ինքզինքդ մեռած ձեւացուր, ապա թէ ոչ կորսուած ես...:

Այս խօսքին վրայ, վիրաւորեալը մէկէն ի մէկ գիտակի մը պէս անշարժացաւ և երեսին վրայ գետնին վրայ փոռեցաւ մնաց:

— Քեզի ճանչցա՞ւ, հետզ խօսեցա՞ւ, հարցուց Արաուէն խիստ շեշտով մը:

— Մեռա՞՞ծ է, հայր, ի՞նչպէս պիտի խօսի, քիչ մը առաջ երբ որ զինքը դատայ, կեանքի ունէ նշան ցոյց չէր տար, հոգեվարք էր, կամիմաց խեղճ աղջիկը գողգոջուեն ձայնով մը:

Արաուէն նորէն իր թշնամիին վրայ ձուեցաւ և ջահին լոյսովը աղէկ մը աչքէ անցուց անոր երեսը: Ժազ իր շունչը բռնեց...: Արաուէն անոր թեւը բռնեց և վեր վերցուց: Ժազի թեւը զիտակի թեւի մը պէս վար ինկաւ:

Գլէր քիչ մնաց որ պիտի պրտթկար, բայց հեծկըլտուքը կոկորդին մէջ խեղդեց...:

— Ի՞նչ է ան, անուշա, սա աւագակին վրայ կը խղճաս կոր, կամիմաց քաղքուհի Մարիզ Ֆլէրիւս:

Մանկամարդ աղջիկը, կարծես թէ իժէ մը խայթըւած ըլլար, ոտուածով մը անոր դէմը ցցուեցաւ, բայց հասկնալով որ սխալ քայլ մը գէշ հետեւանքներ պիտի ունենար, անմիջապէս ծածկեց իր յուզումը և խօսքը հօրը ուղղելով՝ պաղատական ձայնով մը ըսաւ.

— Հայր, թող կուտա՞ք որ ժազ Քոթըրօյի մարմինը գերեզմանատան մէջ թաղենք:

Արաուէն աղջկանը երեսն ի վեր նայեցաւ և հայրական խանդաղատանքով մը ըսաւ.

— Թաղեցէ՛ք, բայց մէջ մըն ալ անոր վրայ չի խօսիս ինձի, հասկցա՞ր:

Այս Մարիզը ատնելով հեռացաւ հոնկէ, մինչդեռ բողբոջախնդիր կիներ թշնամական ու սպաննական նայուածքով մը Գլէրի կը նայէր:

Երբ երկու հանրապետականները աներևոյթ կզան, մանկամարդ աղջիկը ժազին քովը ծունկի եկաւ և հօգիտին բոլոր թափովը, իր սիրոյն բոլոր ուժովը ըսաւ.

— Պիտի ազատե՞մ քեզի, պիտի ազատե՞մ...:

Ժազ հառաչանք մը արձակեց...: Աչքերը բացուեցան: Տենդային այրող փայլակ մը և անբացատրելի տաղանակ մը կար աչքերուն մէջ: Շրթունքները դողզըլալով կ'երերակային...: Պիտի խօսեր...: Բաներ մը պիտի ըսէր: Բայց Գլէր լսելու նշան բրաւ անոր...:

Գիշերուան մութին մէջ շուք մը կը մօտենար իրենց...: Չայն մը կը բարձրանար...: Կնիան հնչեղ ու վճառական ձայն մը...: Գլէր գողաց...:

— Դո՞ւն ես, Գլէր...:

— Այո՛, մայր վիթթուար, գո՞ւր էք եղբեր, գոչեց մանկամարդ աղջիկը հանգստանալով:

— Քառորդ ժամէ քեզ կը փնտռեմ կոր, աղջիկս, ո՞ւր էիր, մտաւայ նպարալաճաս կիներ ձեռքը լապտեր

մը անոնց մտանալով: Վախցայ որ գլխուդ փորձանք
մը կու գայ: Սա անիծեալ աւաղակները ամէն բան ը-
նող մարդիկներ են:

Յետոյ, նշմարելով ժազը որ հիմա այլևս իր ու-
ժը բոլորովին կորսնցուցած ըլլալով, անշարժ գետին
փռուած էր, հարցուց.

— Ա՛ս ի՞նչ է, ազջիկ, ա՛ս ո՞վ է:

— Գլէր լսեց: Վիքթուար երիտասարդին վրայ
ձուեցաւ և անսնելով որ կեանքի ու է նշան ցոյց չէր
տար ան, թշնամական շեշտով մը մոլտաց.

— Շուա՛ն մըն է եղեր, Շուա՛ն մը:

Գլէր բերանը չի բացաւ:

— Մեռա՞ծ է, հարցուց նպարտաւաճառ կիներ:

— Ո՛չ, վիրաւորուած է, յայտարարեց պատգա-
մաւորին ազջիկը յուզեալ շեշտով մը:

Յետոյ, ձեռքերը իրար միացնելով, պազատական
շեշտով մը աւելցուց.

— Ի՞մ բարի մայր Վիքթուարս, ինձի օգնէ որ
զայն մահէն ազատենք:

— Ի՞նչ, քեզի օգնե՞մ մի՛, ի՞նչ կ'ըսես կոր, ազ-
ջիկ, խելքդ թոցուցի՞ր, քեզի օգնեմ որ Շուա՛ն մը
ազատես, գոչեց հայրենասէր կիներ տեղէն վեր ցառ-
կելով:

— Գլթացէ՛ք անոր վրայ, մայր Վիքթուար, մե՛ղք
է...:

— Ի՞նչ, գթա՞մ, մեղք է՞, որո՞ւն վրայ գթամ,
հանրապետութեան թշնամիի՞ն վրայ, աւաղակի՞ մը
վրայ... Երբէ՛ք...:

— Կ'աղաչե՛մ, մայր Վիքթուար...:

— Ազջի՛կ, քու խելքի՞դ է եկեր... միտքդ մեղի
հրացանի՞ բռնել տալ է...:

— Ո՛հ, ի՞նչ կ'ուզէ թող ըլլայ, ամէն գինով
զայն պիտի ազատե՛մ...:

— Ինչո՞ւ, ազջի՛կ, ո՞վ է որ...:

— Ա՛ն է, ա՛ն...:

— Ո՞վ, ժազ Գօթըրօ՞ն, գոչեց նպարտաւաճառ կի-

նը տեղէն վեր ցատկելով:

— Այո՛...:

— Ի՞նչ, քեզի երեսի վրայ ձգելէն ետքը զայն

հորէ՞ն պիտի ազատե՛ս...:

— Այո՛, այո՛... պիտի ազատե՛մ...:

— Ողորմա՛ծ Աստուած... ինչո՞ւ...:

— Անոր համար որ զայն կը սիրե՛մ...:

Գլէրի աչքերէն արցունքը աղօթքի համբիշի հա-
տիկներու պէս կաթիլ կաթիլ վար կը գլտորէր, և քա-
ջարի կիներ, այն ազնուասիրտ ու մարդասէր կիներ ու-
րուն հոգիին մէջ անգիտակից վեհութիւն մը պահուը-
տած էր, յուզուած ու խոռովութեան վճառուած պահ
մը զայն դիտեց:

Ժազ, քիչ մը ինքզինքին եկած ըլլալով ծունկե-
րուն կայնեցաւ և իր նշանածին ձեռքերը փնտռեց...
այն ձեռքերը զորս ինքը այնքան խանդաղատանքով,
այնքան սիրով սեղմած էր ժամանակին:

Գլէր թեւերը անոր առջեւ բացաւ: Ի՞նչ զմայլելի
տեսարան, որքա՛ն վսեմ անյիշաչարութիւն...: Գլէր
ներա՞ծ էր ուրեմն...: Գլէր ամէն բան մոռցա՞ծ էր...:

Վեհանձն ու պարտաճանաչ աղուն զէմքին վրայ
հիմա այնպիսի զխեմութիւն մը կը նշմարուէր, անոր
զէմքը գոհոգութեան այնպիսի յաւիտենական սէր մը
կը ցոլացնէին իրենց մէջ, որ Վիքթուար, խելքը
պլուխը հատաքելով հասկցաւ որ ժազ ոչ թէ յանցա-
ւոր մըն էր այս գործին մէջ, այլ գոհ մը որ կամայ
ակամայ հպատակած էր իր հօրը կամքին և իր որդիա-
կան պարտականութիւնը կատարելու համար, իր պատ-
ւոյ ուխտը քոնեթու համար պատտած մէկդի նետած էր
իր սիրտը և ողջակէզ ըրած էր ինքզինքը:

Այո՛, Վիքթորուար մէկ նայուածքով հասկցաւ այդ աղուն սրտին մէջ անցած դարձածը և վիզէն կաշիէ փոկով մը կախուած օղիով լեցուն ամանը բիրա շարժումով մը վիրաւոր՛նային բերնին մտեցուց և ըսաւ .

— Հիմակուհիմա սըկէ քիչ մը խմէ՛ նայիմ, անձարա՛կ զինուոր, ևտքը կը խօսինք . . . :

Ժագ օղիին ամանը բերանը տարաւ և քանի մը ումպ խմեց :

— Է՛, ինտո՞ր ևս, քիչ մը ինքզինդ գտա՞ր, մըսըլաաց նպարավաճառ կիներ :

Գլէր, ահանելով որ իր նշանածը կրցած էր քանի մը գաւաթ օղի խմել, հանգստացաւ և աչքերը զէպի երկինք ուղղելով երախտագիտական քանի մը բառ փափսաց . . . :

Մայր Վիքթորուար ժագի վրայ ձուեցաւ և վէրքը աչքէ անցնելէ յետոյ ըսաւ .

— Կուրձքին սուրի հարուած մը կերեր է . . . : Բան մը չէ, բան մը չէ : Իմ մարդս Ռէնի մէջ կուտած աւանը միսը չորս կողմէն ծակ ծակ եղած էր նորէն բան մը չեղաւ . . . : Երեւա՛ քիչ մը կնիկ Կ՛ս, ոտքի՛ ելիր նայիմ :

Ժագ առանց ճիգ թափելու կրցաւ իր ոտքերուն վրայ կենալ :

— Որքան՛ բարի էք եղեր, մայր Վիքթորուար, գուչեց Գլէր :

— Ինձի՛ նայէ, աղջիկ, հիմա աստեղը չնորհակալութիւն յայանելիք տեղ չէ, ուրիշ ատեն այդ մասին կը խօսինք, մտտաց զմայելի էակը : Հիմակուհիմա ատենն առաջ մէյ մը սա ստահակին հանգստանալիք տեղ մը գտնելու ենք . . . և ատիկա ալ շատ գիւրբին չի պիտի ըլլայ կարծեմ . . . :

Մայր Վիքթորուար պահ մը մտածելէ յետոյ ըսաւ .
— Ատիկա կրակին հետ խաղալու պէս բան մը և՛

գաւ, աղջիկս : Ինտո՞ր պիտի ելլանք այս գործին մէջէն չեմ գիտեր : Մեր զինուորներուն հանդիպելու փորձանքն ալ կայ, հօրդ ճանկը իյնալու փորձանքն ալ : Գիւղին քովէն դառնալ և գուրս ելլալէն ուրիշ ճար չի մնաց : Երբոր գիւղէն գուրս ելլանք, անշուշտ մօտերը տեղ մը կը գտնանք և կը պահենք դայն :

Եւ յետոյ, ուսը վիրաւորեալին ներկայացնելով, հրամայական չեշտու մը ըսաւ .

— Սա՛նկ կոթնէ նայիմ, մի՛ վախնար, նորելուկ ճղզածներուն պէս փետուրէ չինուած չեմ, կը զիմանամ : Հա՛ սանկ : Հիմա քալէ՛ նայիմ :

Ժագ թեւովը քաջ կնոջ ուսին կոթնեցաւ և երեքը մէկէն աւերակներէն գուրս ելլալով Մաչգուլի կողմը բռնեցին :

Լուսթիւն տիրեց . . . : Թուխ ամպերը եկան երկինքը ծածկեցին : Վարագոյր մը քաշուեցաւ, և երկինք, կտորածը չի ահանելու համար, նողկանքով աչքերը փակեց սազմադաշտին վրայ . . . : Այրոզ տուներուն վերջին բողախառն ծուխերը, պատերազմին դաշտին վրայ մնացած մեռելներուն զէպի երկինք սլացող հողիներուն ձամբայ ցոյց տալու համար կարծես, դանդաղ դանդաղ զէպի վեր կը բարձրանային :

Աննիւթացած ամէ՛ն բան զէպի վեր . . . : Ի՛նչ անթափանցիկի, անհաս ու անսկիզբ խորհուրդ . . . :

Մայր Վիքթորուար, որ խոհեմաթեան համար մարած էր ջանք, ժագի և Գլէրի հետ եղերքը մացառներով չըջապատուած քարուտ ու նեղ ձամբայ մը մտաւ :

Մութին մէջ երբեմն ոտքերնին քարերուն և երբեմն ալ հանրապետականներու և արքայականներու զիակներուն զարնելով գիւղէն ներս մտնելու և առաջին տունին քովը հասնելու վրայ էին . . . երբ հեռուէն լոյսեր, զինուորներ և ոտքի ու խօսակցութեան ձայներ լսուեցան :

Յանկարծ... մութին մէջ սուիններ փայլիլ սկսան:
 Փողոցէ մը խումբ մը զինուորներ ելաւ գէմերնին:
 Ժազ և Գլէրի եղած անգերնին գամուած մնացին:
 — Գործերնիս լմնցաւ, մնւտաց մայր Վիքթուար:
 Եւ արագ շարժումով մը հազիւ ժամանակ գտաւ
 Գլէրն ու ժազը փլած պատի մը կտին հրելու...:

Երեքը մէկէն պատին կտին պահուրած չի պահ-
 ււրած, զինուորներուն խումբը պատին առջև հասաւ:

— Օ՛ֆ, վրաս քրտինք կոխեց, աժան ազատե-
 ցանք, մնւտաց Վիքթուար զինուորներուն հեռանալէն
 յետոյ:

Եւ Գլէրի ականջը քաշելով աւելցուց.

— Չարածճի՛, մազ մնաց գլուխս դանակին տակը
 դնել պիտի տայիր...: Առա՛ջ անցէք նայիմ, ի՞նչ փայ-
 տի պէս գամուեր կեցեր էք սրտեղը...:

Երեքը մէկէն մութին մէջ նորէն ճամբայ ելան
 և խարխափելով, շօշափելով նոր հերկուած փոքրիկ
 պարտէզէ մը անցան: Այս պարտէզին խորը կարմիր
 կրմիրներով ծածկուած փլած փլփլած խրճիթ մը կար:

— Կեցէք նայինք սըւիկա ի՞նչ է, ըսաւ մայր
 Վիքթուար:

Այս ըսելով, քաջարի կրնը խրճիթին որդնտած
 կազնեփայտէ գուռը հրեց և խրճիթէն ներս մտնելով
 լուցի մը վառեց և ջահը բռնկցուց:

Խրճիթը պարապ տակարներով, տակառի երկաթէ
 շրջանակներով, բահերով, բրիչներով, արօրի խովե-
 րով և երկժանիներով լեցուն էր: Խրճիթին խորը խըն-
 ձորոցի ճնշան մը կար որուն վրայ խտտի գէզեր գըր-
 ւած էին: Լուսամուտ մը ունէր զոր յարգով գոցած
 էին:

— Հիմակուհիմա գէշ չէ, հոս կրնանք պահել...
 մըլտաց նպարավաճառ կինը իւրովի:

Ապա գրանը քով գալով ըսաւ.

— Եկէ՛ք, տղաքներ, նե՛րս մտէք:

— Ժազ, որ Գլէրի ուսին կոթնած գուրսը կը սպա-
 աէր, ներս մտաւ խրճիթէն...:

Բայց գրան առջև մէկէն ի մէկ կանգ առաւ...
 ոտքերը կը գոչային... ոտքի վրայ կենալու ուժ չէր
 մնացեր վրան... պիտի մարէր... պիտի իջնար...:


Ինքզինքի՛ց եկուր, տղայու թիւն պէտքը չէ՛,
 սանկ մէյ մը անկուէ՛ նայիմ, ըսաւ նպարավաճառ կի-
 նը ուժ տալով: Հիմա երբ հիւանդանոցը գտանք, օ-
 բէնք մի՛ հաներ գլխուս:

Ժազ Քոթըրօ, ուժասպառ, գետին տապալեցաւ:
 Գլէր, խելայեղօրէն անոր քով վազեց... բայց մայր
 Վիքթուար անոր թեւէն բռնելով ըսաւ.

— Չգէ՛, ձգէ՛, ես ընելիքս գիտեմ:

Յետոյ, բրտօրէն վերաբերուած ըլլալուն վրայ
 զըջալով, անուշութեամբ աւելցուց.

— Հիմա, ազջիկս. սա քու ողորմած Աստուած
 պապայիթ ալօթէ որ քիչ մը մեզի օգնէ... ապա թէ
 ոչ, այս գործին մէջէն երեսի ջուրով դուրս չի պիտի
 կրնանք ելլալ...:



Պ Ա Ր Տ ՈՒ Ա Ծ Ը

Աստու Է : Մաշգուլի անտառին մէջ արշալոյս . . . :
Բարձրարերձ ծառերու լուսապսակ դագաթները երերաւ
լով իրար կը բարեւեն . . . :

Թռչունները, մարդոց եզրայրասպան կռիւէն ան-
տեղեակ, զեղզեղելով իրար կը համբուրէին : Բնու-
թեան ծոցին մէջ ամէն բան երջանկով թիւն էր և երգ,
խոկ մարդոց մէջ՝ ամէն բան սուգ ու աւեր, ողբ ու
կոծ :

Անտառին ծառապուրկ մէկ բացաստանին մէջտեղը,
մաշած մաշձած մարմարիոնէ պատուանդանի մը վրայ
հաստատուած փայտէ խաչի մը դագաթը՝ արշալոյսին
պատուածքին մէջէն հեազհեաէ լուսաճաճանչ չօղիւ-
նով մը երեւան կ'ելլար : Բնութիւնը կը համբուրէր
սիրոյ և տառապանքի խորհրդանիշը . . . :

Շատ չանցած ոտքի ձայներ լուսեցան . . . տերեւ-
ները սկսան խշրաւ . . . : Թռչունները լսեցին և տերեւ-
ներուն մէջ մտնելով պահուէրեցան . . . : Քանի մը ձա-
գարներ ականջնին տնկելով պահ մը մտիկ ըրին . ապա
ցատկոտելով իրենց բոյնը մտան : Երբ մարդիկ իրար
ուտեն, բնութիւնը իր անմեղ ձագուկներուն աչուկ-
ները գոցել կուտայ . . . :

Նեղ ճամբայէ մը երկու շուքեր գտնուելան, որոնք
ուղղակի անտառին բացաստանը կուգային :

Մին Ժան Շուան էր միւսն ալ Թօրինէէ մարքի-
զուհին :

Ժան Շուան երեսները կախած էր . . . : Յուսահա-
տական բան մը կար իր խորշամած դէմքին վրայ . . . :
Ճամբուն վրայ ծառէ մը կարուած գաւազանածու ճիւ-

ղի մը կռթնելով կանգ առաւ . . . : Գլուխը գետին ծած-
էր . . . : Կարծես թէ կանակը ծանր բեռ մը առած ըլ-
լար, ուսերը կքած էին . . . :

— Պարտուեցանք, փոխաց խեղդուկ ձայնով մը :
Տիկին Թօրինէէ նուրբ ձեռքովը ազարակապանին
կոշա-ձեռքը բռնեց :

Պարտուածը գլուխը վեր բարձրացուց, յուսահա-
տական նայուածք մը ուղղեց փայտէ մեծ խաչին և
զայն պահ մը զիտելէ յետոյ գոչեց .

— Արգեօք Աստուած մեզ երեսէ ձգե՛ց :

— Ո՛չ, Ժան Շուան, Աստուած մեզ երեսէ չէ
ձգած և մեր վրէժը պէտք է որ առնես, ըսաւ մարքի-
զուհին :

Ծերունի արքայականը յողնած, պարտաւած, յու-
սահատած, ինքզինքը խաչին ոտքերէն մէկուն վրայ
նեակց և ըսաւ .

— Տղաս մեր թշնամիներուն ձեռքը անցած ըլլա-
լու է, և եթէ մինչեւ հիմա չէ մեռած, անչուշա զայն
հրացանի պիտի բռնեն :

Այս ըսելով գլուխը ձեռքերուն մէջ առաւ . . . : Չի
լացաւ . . . : Անոր աչքերը բնաւ արցունք չէին տե-
սած . . . : Տղայ կղած ստենն անգամ չէր լացած ան . . . :
Բայց չափէն աւելի կը տառապէր : Իր կողքն ի վեր
զաւկին հերոսաբար կոուիլը տեսած օրէն ի վեր չափէն
աւելի սիրել սկսած էր զայն . . . :

Տիկին Թօրինէէ ձեռքը կամաց մը անոր ուսին
զրաւ և իր ներդաշնակ ձայնովը՝ որուն մէջ ցաւերը
օրօրոց մեղեղի մը կար, ըսաւ .

— Քաջութիւն, բարեկամս, եկուր երկուքս ալ
աղօթինք նահատակին հոգին համար . . . :

Ժան Շուան սարսուց, ոտքի ելաւ, խաչին դար-
ձաւ և պահ մը խորհրդաւոր ջերմոտանդութեամբ մը

անոր նայեցաւ... յետոյ աստիճաններէն մէկուն վրայ ծունկի գալով ըսաւ .

— Տէր, ներէ՛, ներէ՛ որ պահ մը տկարացայ... :
Չաւակա առիւր ինէ... քու կամքդ թող ըլլայ... բայց օրհնէ՛ մեր զէնքերը և յաղթական հանէ մեզ այս պատերազմին մէջ... :

Ապա սկսաւ ցած ձայնով ազօթել : Տիկին Թօրինէ ևս ծունկի գալով անոր ձայնակցեցաւ :

Արքայական պարտուած զինուորներուն պիտան ու իր բարեկամուհին անտանկ ջերմիտանդօրէն կ'ազօթէին և այնպէս մը վերացած էին որ, չի տեսնուիր որ արահեանները չըջապատող մացասներուն ու փշոտ թուփերուն տակէն մարդիկ, կիներ ու աղաքներ գուրս կ'ելլալին և կրօնական բնազդով մը խաչին կը մօտենային : Ամէնքն ալ, տեսնելով իրենց պետին ու բարերարին խաչին առջեւ ծունկի եկած ազօթելը, իրենք ալ առանց աղմուկի, առանց շշուէ մը իսկ հանելու, բերանին գոց, կարծես թէ պատարագի միջոցին եկեղեցիէ մը ներս մտած ըլլալին, կամաց կամաց, խաչին մօտեցան... , ծունկի եկան և աչքերնին իրենց հաւատքը խորհրդանշող խաչափայտին ուղղեցին... :

Արեւուն առաջին ճառագայթները հիմա խաչին թեւերուն վրայ իջած էին և տառապանքի, սիրոյ ու հաւատքի խորհրդանիշը երկնային ճաճանչելով խորհրդաւոր կերպով պսակուած էր... :

Հաւատացեալներուն շրթունքները կ'երերակային, աղբրսի ու պաղատանքի փսփսունքներ զէպի երկինք կը բարձրանային... : Նախ մեկանուշ շշուէ մը լսուեցաւ որ կ'երթար կը կորսուէր տերեւներուն ստամբիւնին զիրկը... :

— Հաւատա՛մք ի մի Աստուած, հայրն ամենակալ, յարարի՛ չն երկնի և երկրի, երեւելեաց և անեւելելի :

Յետոյ, երբ հանգանակը կը լրանար, հեղձեալ, անզգալբար, շշուէ կը բարձրանար, ներգաշնակ ու աղեկաւոր ողբասացութեան մը կը վերածուէր, աղապատանքի մը որ սա բառերով կը վերջանար .

— Տէր ողորմեա՛, աէր ողորմեա՛, աէր ողորմեա՛, Յիսուս փրկիչ մեզ ողորմեա... :

Ժան Շուան և Թօրինէ մարքիզուհին այս հոգեթով ողբասացութիւնը լսելով ետեւին դարձան :

Եւ տեսնելով այս բազմութիւնը, որ ջարդէն ու կոտորածէն ազատելէ յետոյ առնէն վոնտուած ընտանիքի անդամի մը պէս պաշտպանութիւն խնդրելու համար եկեր իր շուրջը հաւաքուեր էր, Ժան Քօթըրօմտածեց որ տակաւին ընելիք շատ գործ ունէր և վրաստան եղաւ որ այդ մարդիկը մինչև վերջին վայերեկանը իրմէ չիպիտի զատուէին :

Ատոր վրայ, հպարտօրէն վեր ցցուելով, մոլեռանդական հաւատքով մը առյցուած, գոչեց :

— Բարեկամներս, պարտուած ենք, կոխը կորսընցուցինք, բայց պէտք է որ զէմ գնենք, կա՛մ յաղթենք և կամ մեանինք... :

— Այո՛, այո՛, կեցցէ՛ թագաւորը, կեցցէ՛ Ժան Շուան, գոռացին երկու հարիւր կարծեր որոնց մէջ յոյսի նշույլը բեկբեկիլ սկսած էր :

Ժան Շուան ձեռքի հեղինակաւեր շարժումով մը լսութիւն պատուիրեց և շարունակեց .

Յեղափոխականաց Պատգամաւորական Ժողովը մեզ բնաջինջ ընելու համար իր ամենէն լաւ կուռզ զինուորներն ու լաւագոյն զօրավարները մեզի զէմ զրկեց : Յեղափոխականաց Դաւաղրական Ժողովը հրամայած է անոնց բնաջինջ ընել մեզ, մեն մէկ հատ մը ողջ չի ձգել, մեր կիներն ու աղաքը սուրէ անցընել, տաներնիս այրել, գաշտերնիս ու արտերնիս քանդել, ամէն բան կրակի տալ : մեր բարերարներուն դղեակները

— Կեցցէ՛ թագաւորը, կրկնեցին բոլոր Շուանները կրօնական ջերմեռանդութեամբ մը:

Ապա, իրենց պետին սոււած հրամանի հնազանդելով, ամենայն կարգապահութեամբ, զանպազօրէն, կարծես թէ պատարագին ներկայ գտնուելէ յետոյ եփզղեցիէն դուրս կ'ելլային, զօրացած, յոյսով լեցուած, ամենքը մէկէն ծառերուն մէջ մտնելով ցրուեցան և աներեւոյթ եղան...:

Ժան Շուան զո՛հ էր: Պատերազմը նորէն սկսելու համար պէտք եղածին չափ զինուոր պիտի ունենարքիչ ատենէն:

Ասոր վրայ, առանձին, գլխարկը զլուխէն վար առնելով խաչին դարձաւ... և մարդկային ցեղին փրկուելիքն համար ցցուած այդ վսեմագոյն կախազանին ուղղելով նայուծքը, զողբօջուռն ձայնով մը գոչեց.

— Որ օրհնես զայնոսիկ՝ որք օրհնեն դքեզ աէ՛ր: Կնցո՛ գփողովուրդս քո, և օրհնես՝ զժառանգութիւնս քո: Դո՛ւ զմեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քով և մի՛ թողուր զյուսացեալս ի քեզ...:



ԺԱԳ ԵՒ ԳԼԷՐ

Ժան Շուան կը սխալէր...: Իր գաւակը մեռած չէր տակաւին...:

Մայր Վիքթուար Գլէրի հետ անոր ոտքը լուալէ և կապելէ յետոյ, խնձորօղիի հնձանին վրայ խոտերուն մէջը պատկեցուցած էր զայն և յարզի դէզերով պատնէշ մը շինած էր շուրջը որպէս զի ներս մտնողը զինքը չի տեսնէ...:

Վէրքը կապուելէն ետքը ժագ ինքզինքը գաւաքիչ մը, բայց դեռ խօսելու կարողութիւն չունենալով, խօսուն նայուածքով մը շնորհակալութիւն յայտնեց զինքը մահէն ազատողներուն:

Վիքթուար և Գլէր յաջորդ օրը նորէն գալ խոստանալէ յետոյ մեկնեցան:

Յաջորդ օրը մութն ու լուսուն երկուքը մէկէն այցելութիւն տուին իրենց վիրաւորին:

Ժագ գիշերը քանի մը ժամ քնացած ըլլալով աւելի հանդստացած էր...: Տարութիւնը չէր մնացած. վէրքը գոցուել սկսած էր:

Ժագ, Գլէրը՝ տեսնելուն պէս թեւերը անանկ խանդաղատական ոստումով մը բացաւ որ, նպարավաճառ կինը յարմար դատեց զանոնք առանձին ձգել:

— Ես կ'երթամ կոր, աղաքներս, ըսաւ Վիքթուար մայրական գորովալից նայուածք մը նետով անոնց վրայ: Հասկցայ, իրարու շատ ըսելիքներ ունիք:

Եւ խօսքը ժագի ուղղելով աւելցոոց.

— Քիչ մը ետքը ուտելիք պիտի բերեմ քեզի... և վաղը դիշեր երբ ինքզինքդ քիչ մը գտնես, նայինք

— Ո՛հ, Գլէր, կ'ս էի... պատասխանեց ժաղ
խաղճի կատարեալ հանդարտութեամբ:

— Ուրեմն ո՞վ էր այդ կիներ...:

— Թօրինեէ մարքիզուհին, հայրս անոնց քով ազա-
րակապեալ էր...:

— Գիշերուան այդ ժամուն ի՞նչ գործ ունէիք փո-
ղոցին մէջ...:

— Մարքիզուհին Ապէյի բանտին մէջ բանտար-
կուած էր և հօրս ու իր բարեկամներուն հետ գացինք
զայն բանտէն փախցուցինք...:

Գլէր պահ մը մտածեծ:

Ժաղ այնպիսի պաղատական ձայնով մը որուն մէջ
կատարեալ անկեղծութէն մը կար, ըսաւ.

— Կը հաւատաս ըսածներուս, այնպէս չէ՞, Գլէր:

— Այո՛, կը հաւատամ:

— Եւ կը ներե՞ս ինձի:

— Ո՛հ, ժաղ, կրնա՞մ քեզի չի ներել: Կը սիրե՞մ
քեզ...:

Գլէր այս ըսելով շրթունքները վերաւորեալ աղուն
ձակաին մօտեցուց:

Ժաղ այս արտփարար համբոյրէն կարծեա թէ հոգի
ստացած ըլլար, ըսաւ,

— Հիմա պատմե՛ տեսնենք, ինչպէս եղաւ որ զուն
հաս կը դռնուիս:

Գլէրի գէմքին վրայ յանկարծական արտութիւն
մը նշմարուեցաւ:

Ահա այսպէս, պահ մը մարդոց ձգճիմ հաշիւննե-
րէն վեր բարձրանալէ և երջանկութեան երկինքին
վրայ աստղի մը պէս փայլելէ յետոյ, մէկէն ի մէկ նո-
րէն վար կ'իյնար խեղճ աղջիկը, աշխարհի իրականու-
թեան վրայ կը մօտենար և անոր մէջ տապալակիլ կը սկսէր:

Քայց Գլէր ամէն բան պիտի ըսէր իր նշանածին,
գլխուն եկածները անկէ ծածկելու իրաւունք չունէր:

— Հանրային Փրկութեան Ժողովը հայրս նանթ
զրկեց իրրիւ լիազօր պատգամաւոր: Անոր պաշտօն

դանձնուած է ապտամբ արքայականները ընաջինջ ը-
նել: Ինձի իր հետը բերաւ: Փափաքեցաւ որ ես պա-
տերազմի դաշտէն հեռու՝ նանթի մէջ մնամ, բայց ես,
մտածելով որ վերաւորներուն կրնայի օգտակար ըլլալ,
էրեն հեռուեցայ...: Իրաւունք ունիմ եղեր, տեսա՞ր,
եթէ Աստուած կամենայ, թերեւս քեզի մահէն ազա-
տեմ...:

— Բայց աւա՛ղ, ի՛նչ որ ալ ընես՝ նորէ՛ն իրարմէ
պիտի բաժնուիներ, ըսաւ ժաղ Քօթըրօ յուսահատական
խորունկ շեշտով մը:

— Է՛հ, օր մը չէ օր մը այս եղբայրասպան կոիւր
շիրջ պիտի գանէ անշուշտ, դոչեց մանկամարդ աղ-
ջիկը:

— Այո՛, ա՛յն ատեն երբ երկու կողմերէն մէկը
վերջնականապէս լնաջինջ ըլլայ, յայտարարեց վերա-
ւորը:

— Արքայականները որ հաւատացեալներ են, ին-
չո՞ւ Քրիստոսի սա խօսքը չեն բռներ՝ «Սիրեցէք զմիմ-
եանս»):

— Հանրապետականները որ ազատութեան, հա-
ւատարութեան և եղբայրութեան անունով կը խօսին,
ինչո՞ւ ասանկ անխղճօրէն կը վարուին իրենց հաւատ
քին համար կոռուողներուն հետ:

— Որո՞ւն հողք սակայն, չէ՞ մի որ մենք իրար
կը սիրենք:

— Այո՛, բայց աւա՛ղ, ամէն բան մեզ իրարմէ կը
բաժնէ...:

— Իրաւունք ունիս, Մաքսիմ Արաուէնի աղջիկն
եմ ես, կակազեց Գլէր ցաւազին շեշտով մը:

— Իսկ ես՝ ժան Շուանի աղան, թոթովեց ժաղ
ցաւազին կակիծով մը:

— Ի՛նչ, ի՛նչ, Գան Շուանի աղան...:

— Այո՛, ա՛յն մարդուն աղան որուն զլուխը ծա-

խու հանած է հայրդ և երգում ըբած է պատերազմինս մէջ ոտքին տակը առնել և կամ Նանթի մէջ գլխատել տալ զայն :

Գլէր ձեռքերովը երեսը ծածկեց :

— Աւելի աղէկ չի՞ պիտի ըլլար որ ձգէիը որ մեռնէի, փափսաց ժագ :

— Ժագ, ինչո՞ւ ատանկ խօսքեր կ'ընես, գոչեց խեղճ աղջիկը մէկէն ի մէկ իր ճակատագրին դէմ ծառանարով : Այդ խօսքերով թէ՛ զիս կը չարչարես, թէ՛ նախախնամութեան դէմ կը խօսիս : Ես համոզուած եմ, համոզուած որ ես և մայր վիքթուար քեզի պիտի ազատենք : Առաջ Աստուած, եթէ յաջողիմ քեզ ազատել, կը նշանակէ թէ Աստուած ապրիլդ կ'ուզէ, և դուն որ քրիստոնեայ ես, իրաւունք չունիս անոր կամքին դէմ ելլալ :

Եւ ձայնին աւելի մելամաղձոտ քաղցրութիւն մը տարով շարունակեց .

— Իրար դեռ հիմա գտանք, ինչո՞ւ մահուան վերայ խօսինք իրարու, . . . իրաւ, թէպէտ իրարմէ նորէն պիտի բաժնուինք, բայց քանի որ իրար կը սիրենք և քանի որ մեր հոգիները յաւիտեանապէս իրարու հետ պիտի ապրին, ինչո՞ւ մեռնինք . . . : Ի՞նչ ոք ալ ըլլայ, եթէ մինչև և իսկ գիտնանք թէ այս աշխարհքին մէջ իրար չի պիտի միանանք այլ միւս աշխարհքին մէջ, նորէն մեր վրայ պարտականութիւն կ'իյնայ մինչև վերջը սպասել և Աստուծոյ գործերուն չի խառնուիլ : Քանի որ դուն զիս կը սիրես և ես ալ քեզի կը սիրեմ, պէտք է որ ապրիս, ժագ :

— Պիտի հնազանդիմ քեզի, Գլէր, գոչեց ժագ Քօթրօ և չրթունքները նշանածին ձեռքերուն զբաւ :

— Հիմա քեանէ պիտի բաժնուիմ որպէս զի հայրս բացակայիլս տեսնելով կասկածիլ չսկսի վրաս, բայց

այս իրիկուն մութը կոնիլուսն պէս՝ յատուութիւն ըսելու համար վիքթուարին հետ նորէն պիտի գամ :

— Ո՛հ, իմ քաղցր Գլէրս :

Երկուքն ալ առանց բերաննին բանալու պահ մը իրարու երես նայեցան. իրենց զոյգ հոգիները այրելիով իրարու միացնող սէրը իր բոցէ լեզուները անոնց աչքերուն մէջ դրած էր . . . :

Գլէր յարզի դէզերը նորէն իրենց տեղը զեանդելէ և վիրաւորը անոնց կտին պահելէ յետոյ՝ խրճիթին գրան մօտենալով զգուշութեամբ դուռը բացաւ :

Բայց հազիւ թէ դուռը կիսովին բացած, առանց դուրս ելլալու մէկէն ի մէկ նորէն գոցեց :

Մարիզ Ֆլէրիւս պարտեղին մէջտեղը կեցած էր . . . :

Յեղափոխական կիներ առտուն շատ կանուխ տունէն դուրս ելած էր :

Մաքսիմ Արտուէն զիւղին մէջ տուն մը ընտրած էր իրեն այն գիշերը հոն անցընելու համար և սենեակ մըն ալ Մարիզի յատկացուցած էր :

Գազան կիներ իր վրէժը ստնելու համար մութն ու լուսուն դուրս նետած էր ինքզինքը : Մեռելներուն և վիրաւորներուն մէջ պարտելով, ժամանակին զինքը արհամարհող ազնուականներուն զիակները կը փնտռէր որպէս զի աչքովը ամէն բան տեսնելով գոհացում ու յագուրդ տար իր արեան ծարաւին :

Ահա այսպէս, պատերազմի դաշտին մէջ, զիակներու վրայ կոխկոտելով մինչև ժագ Քօթրօյի պահուած խրճիթը եկած էր . . . : Եւ զիպուածը այնպէս ուզած էր որ Գլէրին դուրս ելած ատենը արիւնարբու կիներ հոն գանուի և տեսնէ զայն . . . :

Գլէր հազիւ թէ դուռը բացած, քաղքուհի Ֆլէրիւս ակնթարթի մը մէջ զայն տեսաւ և ճանչցաւ . . . , և անմիջապէս հասկնալով որ արտաքոյ կարգի բաներ մը

կը դառնար, խրճիթին վրայ քայել սկսաւ... բայց... մէկէն ի մէկ կանգ առաւ...:

Մարսօ և Քլէպէր, քանի մը զինուորականներ առած հետեւին, իր կողմը կուգային...:

Մէկէն ի մէկ սարսուռ մը զգաց: Բորենիի մը պէս քիթին թոթիչները թրթռալ սկսան: Մարսօսի առողջ փայլակ մը անցաւ աչքերուն մէջէն և չրթունքներուն վրայի չարաչուք ժպտը ուրախութեան ժպտի մը փոխուեցաւ...:

Եւ ուղղակի Մարսօյի մօտենալով, գլուխը վեր բարձրացուցած և մարտական նայուածքով մը անոր նայելով ըսաւ.

— Զօրավա՛ր, պատերազմը սկսելէն ի վեր ձեզի չի կրցայ հանդիպել, ինքզինքս երջանիկ կը զգամ որ վերջապէս առիթը կ'ունենամ շնորհաւորելու ձեր յալթանակը:

— Յաղթանակը իմ բարեկամիս Քլէպէրի և մեր քաջարի զինուորներուն կը պարտինք, քաղքուհի, պատասխանեց Մարսօ ցուրտ կերպով:

Բացէ ի բաց թշնամական չոր ու ցամաք այս պատասխանին վրայ Մարիզ Ֆլէրուս պահ կղած տեղը շջմած մնաց:

Մարսօ, Քլէպէր և միւս զինուորականները շարունակելով իրենց խուզարկութիւնը՝ քաղաքավարի բաբու մը տալով՝ հետացան հոնկէ:

Նախկին պերճազիճը բարկութեան խեղդուկ ձիջ մը արձակեց: Յետոյ, Քլէրի պահուրտած զրանը կողմը սպառնական նայուածք մը նետելէ յետոյ, Արտուէնի զգեակին ճամբան բռնեց:

Երբ զգեակին առջև հասաւ, Մաքսիմ Արտուէն զուռնէն զուրս կլկու վրայ էր: Գղեակին զրան առջև երկու պահակները կը սպասէին:

Երբ ամբոխավարը Մարիզը տեսաւ, գէմքին վրա-



Վագրին դեմ Առիւծ

Զօրավար Մարսօ և Մարիզ Ֆլէրուս դեմ գլխաց

յի լրջութիւնը մէկէն ի մէկ անհետացաւ, որուն յաջորդեց ուրախութեան ժպիտ մը:

Հիմա միայն իր աղջկան ներկայութեանը չէր որ իր գէմքին լուրջ ու խոժոռ արտայայտութիւնը հայրական խանդադատալից ու գորովալից արտայայտութեան մը կը փոխէր... Հիմա կարծես թէ այդ գէմքին ետին պահոււրտած մեծ սէր մը, անպուսպ կիրք մը, ստիպմը կար, որուն գէմ թերեւս այնքան կուտած էր և որմէ սակայն ի վերջոյ չարաչար կերպով յաղթուած էր և այդ ս'ըրը կ'այրէր հիմա զինքը կ'այրէր ու կը մրկէր...:

Արդեօք բազմախնդիր կիներն ալ գոյն կը սիրէ՞ր. ասիկա հաքը յայտնի պիտի ըլլար...:

Արտուէն Մարիզի մօտենալով ըստ...

— Այս ատու շատ կանուխ ելեր էք, քաղբուհի:

— Այո՛, քաղաքացի պատգամաւոր, պատասխանեց բազմախնդիր կիներ:

Եւ կախարդող ժպիտով մը անոր նայելով աւելցուց...

— Գերիներուն գլխատման գործողութեան ներկայ գտնուելու համար կանուխ ելայ: Սրիկաները, ամէնքն ալ ամբարտաւանօրէն «Կեցցէ թագաւորը» պոստալով մեռան:

Հակասակ իր մոլեռանդութեան, Մաքսիմ Արտուէն այս խօսքերուն վրայ սարսուռ մը զգաց:

Մինչև այն օր, բացի իրենց կրած թշուառութենէն մոլեղեամ և կամ ալքօրէ գերազդրդուած կարգ մը մեղերաներէ՛ որոնք Լուի տասներ վեցերորդի կասափնաախին չուրջը պարելով «Թագուհիին մօրթը մեր ձեռքը առէք որ ժապաւէն հիւսնք» կը պոստալին: Արտուէն ամէն տեղ տեսած էր որ կիները միշտ կուլային ջարդի կամ գլխատումի միջոցին, և անոնց ամենէն վայրագն անգամ գթութիւն ու ներում չնոր-

հելու խօսքեր կ'ընէր: Բայց անա այս կիներ որ այնքան գեղեցիկ էր, և ատկութեան ճիւղ մը ըլլալէ աւելի սիրոյ ու գորովի համար ստեղծուած էր ըստ երեւոյթին, չէր գոհանար զինքը արհամարհողներէն իր վրէժը անկելով, այլ անկուշտ բարենիի մը պէս կ'ուզէր պատռել, բզրիկ բզրիկ ընել իր գոհերուն գիակները:

Բայց Արտուէնի այս սարսափ աուող զարմացումը երկար չի տևեց...: Մարիզ անոր թեւէն բռնեց...: Հիմա իր գէմքը անոր գէմքին կը քսուէր...: Բախտախնդիր կնոջ շրթունքները յեղափոխական Շանթի շրթունքներուն մօտեցած էին... և կրակոտ հեւք մը կ'այրէր, կը մրկէր անոր գէմքին մօրթերը...: Եւ այդ վայրագ ու անյողոզդ առաքեալը, այդ անկարեկիր մարդը, որուն համար Ռօպէսրիէր ըսած էր թէ «երկրորդ Ռօպէսրիէր մըն է», այդ տկարանալ, անկուժ կրել չի զիացող կամքի տէր արարածը, մէկէն ի մէկ զգաց թէ իրմէ աւելի զօրաւոր ուժ մը զինքը իր գերին կը դարձնէր, իր վրայ կ'իշխէր և իր տէրը կը դառնար... և այլևս ինքնիրմէն ելած... իր այրուող, բոցալատող կուրծքին սեղմելով զայն, անոր շրթունքները իր շրթունքներուն տակ ջախջախել, բլբլակալ ուղեց...:

Բայց ըստ մը միայն... միայն անուն մը թուազատանցանքի մէջ եղող իր սիրտէն.

— Ա՛խ, Մարիզ...:

Սակայն քաղբուհի Ֆրէրիւս անոր վրայ ծուլով ականջն ի վար կծու չեչառով մը կակաղեց:

— Վատա՞հ էք, որ զիւզին մէջ մեր թշնամիներէն մարդ պահուրտած չէ:

Այս խօսքին վրայ, պատգամաւորը աւելէն վերցատկեց և մէկէն ի մէկ ըրածին վրայ աչքերը բռնա-

լով և իր պաշտօնին, գիտակցութեանը անդրադառնալով պատասխանեց .

— Հիմա անմիջապէս հրաման պիտի տամ Մարտոյի որ բոլոր տուները խուզարկէ :

— Մարտօն չըլլար, գոչեց թշուառական կիներ :

— Ինչո՞ւ :

— Անոր սիրտը շատ կակուղ է :

— Իրաւունք ունի՞ք, երթամ Քլէպէրը տեսնամ : Եւ կարծես թէ սակաւին նախկին պերճազրիճին գինովցնող, գիւթող ազգեցութեան սակ ըլլար, ուրքերը իրարու մէջ անցնելով հեռացաւ հոնկէ :

Մարիզ անոր հեռանալը գիտելէ յետոյ, խորհրդաւոր և սպառնական եղանակով մը մուտաց .

— Կարծեմ թէ ե՛ս ալ յազթեցի . . . :

ԱՐԻԻՆ ԽՄՈՂ ԿԻՆԸ

Բարի նպարավաճառուհին, Վիքթուար, իր կառքը Մաշգուլի հրապարակին վրայ կեցուած էր : Բոլոր զինւորները հոնկէ կ'անցնէին կը դառնային և երբ բանի մը պէտք ունենային ուղղակի անոր կը դիմէին : Փոքրիկն Նիկօլա, ամէն առաւ կառքին քովիկը կեցած իշուկին ջուր կամ յարդ կուտար : Իսկ տասնապետ Լըֆրան, գլուխը գլակ մը, կառքին փեղկերէն մէկուն վրայ նստած, մէկ կողմէն ծխափողը կը քաշէր և միւս կողմէն իր կինը կը զիտէր, որ ձեռքը կողով մը բռնած, շերտ մը հաց, քիչ մը ապուխտ և չիչ մըն՝ սլ գինի կը զետեղէր մէջը :

Վիքթուար երբ մեկնելու պատրաստուեցաւ, Լըֆրան հարցուց .

— Ո՞ւր կ'երթաս կոր, կնիկ :

— Վիրաւորեալներուն ուտելիք տանելու, պատասանեց Վիքթուար :

— Ո՞ր կողմը, ո՞ր վիրաւորեալին, հարցուց տասնապետը :

— Հանդիստ ձգէ զիս, Աստուածդ սիրես, ինչո՞ւղ պէտք, դուն քու գործերուդ խառնուէ և իմ գործերուս մէջը շատ քիթդ մի խոթեր . . . :

Այս ըսելով, արանջալով հեռացաւ :

Լըֆրան իր ծխափողին մոխիրը թոթուելով աղուն ըսաւ .

— Ինձի՛ նայէ, ազա՛յ, ինձի անանկ կուգայ որ մայրդ մեղի մատիկ և խաղալու վրայ :

Եւ իր կնոջը ետեւէն նայելէ յետոյ, վտարիկ թմբուկահարին ըսաւ .

— Հե՛տս եկուր նայիմ, Նիքօլա, կարծեմ թէ մօրդ տարած կերակուրը մեր վիրաւորներուն համար չէ :

Եւ երկուքը մէկէն Վիքթուարի ետեւէն գացին . . . :

Վիքթուար նրբ պարտէզին առջեւ հասնելով դէպի խրճիթը ուղղեց իր քայլերը : Գլէր դէմը ելաւ : Երկուքը մէկէն կանգ առին խրճիթին առջեւ և ցած ձայնով բաներ մը մուտացին :

— Ալ կասկած չի մնաց, ազայ, սա երկու կնիկները բաներ մը կը դարձնեն կոր, մուտաց Լըֆրան աղուն հեռու մտի մը ետին պահուըտելով :

Գլէր ձամբան չարունակեց, իսկ Վիքթուար չորս կողմը աչք մը պառտցնելէ և համոզուելէ վերջ որ զինքը լրտեսող չի կար, խրճիթէն ներս մտաւ :

Լըֆրան և Նիքօլա, որ զայն բնաւ աչքէ չէին հեռացուցած, անոր խրճիթէն ներս մտնել և դուռը իր վրայէն դոցելը տեսան :

— Քեզի չըսի՞ որ մայրդ մեր գլխուն խաղ մը կը խաղայ կոր, մուտաց տասնապետը : Երթամ նայիմ ի՞նչ

ապուր կը խառնէ կոր տա շուն պահելիք առնին մէջը:

Այս ըսելով խրճիթին մօտեցաւ և դուռը առանց ձայնի բանալ ուզեց... բայց դուռը չի բացուեցաւ... Դուռը կոտրելու գաղափարէն հրաժարեցաւ և խրճիթին շրջանը ընելով փոքրիկ լուսամուտը նշմարեց... և զառակը ուսերուն վրայ բարձրացնելով լուսամուտին առջեւը կեցուց և ըսաւ.

— Սըկէ ներս աչք մը պառցցուր նայիմ...:

Փոքրիկ թմբկահարը իր պղտիկ ձեռքերովը պատահանին առջեւի խոտերը կամացուկ մը մէկդի առնելով պղտիկ ծակ մը բացաւ և սկսաւ խրճիթին ներսի կողմը աչքէ անցընել: Անմիջապէս մայրը տեսաւ, որ փազի դէմը անցած ուրախութեամբ կը հարցնէր.

— Ըսէ՛ նայիմ, անձարակ զինուոր, քիչ մը ուժ առիր, ինտո՞ր ևս հիմա...:

Փազ գոհունակութեան նշանով մը գլուխը երերցուց:

Ասոր վրայ Նիքոլա վար ցատկելով՝ հօրը ականջն ի վար փափսաց.

— Հայրիկ, ներսը շուան մը կայ...:

— Վա՛յ դաւաճան կնիկ, վա՛յ աներես, մուրաց ասանապետ:

Եւ կատղած, դուռը կոտրելու համար զրան վրայ խոյացաւ...:

Նիքոլա, հօրը համազգեստին փէշին փաթթուեցաւ և թող տալ չուզեց... բայց հանրապետական բանակին ասանապետը բարկութեամբ զայն մէկ կողմ հրելով, կատղած սկսաւ դուռը հարուածել...:

Դուռը բացուեցաւ և Վիքթուար իր ամուսինը ձանձնալով, սեմին վրայ կեցած գոչեց.

— Ի՞նչ է ան, գո՞ւն ևս եղեր աղմուկ հանողը:

Եւ քաջարի կինը ասանց ժամանակ ձգելու որ

ամուսինը պատասխանէ, ոստուժով մը դուրս ցատկելով և դուռը իր վրայէն գոցելով, ձեռքերը կուշտին դըքած՝ անոր դէմ ցցուեցաւ և հեղինակուոր շեշտով մը յայտարարեց.

— Պարո՛ն, ներս մտեելը արգիւտած է:

— Շուա՛ն մը պահուրտած է ներսը, գոռաց ասանապետը բարկութեանէն կաս կարմիր կտրած:

— Աղէ՛կ, ի՞նչ կ'ըլլայ, ըսէ՛ նայիմ ի՞նչ պիտի ընես:

— Թշուառակա՛ն կնիկ, դուն մեզի հրացանի՞ բըռնել պիտի տաս:

— Ի՛նչ կ'ուզեն թող ընեն, Գլէրին նշանածն է, ի՛նչ ընենք, պատասխանեց Վիքթուար անկեղծութեամբ ամէն բան խոստովանելով:

— Շուա՛ն մը, աւազա՛կ մը, հանրապետութեան թշնամի մը, մորթելո՛ւ է, մորթելո՛ւ է... գոռաց ասանապետը:

— Աղէ՛կ, գնա՛ զայն իր գահիճներուն յանձընէ...:

Լըֆրան խրճիթէն ներս մտնելու շարժում մը ըրաւ:

— Ինքզինքիդ եկուր, մա՛րդ, ըրածիդ վրայ աչքէ՛կ մտածէ, անուշի՛կ ամուսինս... մուրաց քաջարի և բարեսիրտ կինը ամուսնոյն առջեւ անցնելով:

Եւ այս վեհ աղաղակին մէջ անանկ յուզիչ, անանկ մայրական շեշտ մը գրուած էր որ, ասանապետին ոտքերը թուլցան և մէկէն ի մէկ կանգ առաւ:

Նպարալիմառուներն, որուն աչքերը հիմա արջունքներով լեցուած էին, ըսաւ.

— Ա՛խ, անուշի՛կ երբիս, զիտեմ, դուն անանկ

մարդ չե՛ս, քու սիրտդ աղէկ կը ձանձնամ, վերաւորները մեռցնելու շափ քարացած չէ քու սիրտդ...: Ա-

տիկա մեր ընկերք գործը չէ... Աչքիք առջևը բեր
մէյ մը... Գլէրը ցաւէն պիտի մեռնի եաքը... Խնն
թի պէս կը սիրէ զայն... Իր ձեռքը չէ եղեր... հայ
րը կանչեր է, ինքն ալ գացեր է... Խղձմտանք ու
նեցիր քիչ մը... երկուքին ալ մահուանը պատճառ
պիտի ըլլաս և խղձիդ վրայ բոս պիտի ունենաս... :

— Զգէ՛, ձգէ՛ սա խօսքերը... :

— Կիչե՛մ, մտոցա՛ր... գերմանացիներուն հեաք
կոխ ըրած ասաննիս վիրաւոր թշնամի մը ինկած էր
գետինը և դուն քու ձեռքովդ վերցուցիր և կտրու
րովը բերիր որ վէրքը փաթթեմ... Անիկա մեր թըշ
նամին էր... իսկ հիմա որ գէմինդ Ֆրանսացի մըն է,
զահիճի՞ն պիտի յանձնես... :

— Ֆրանսացի՞, ի՛նչ կ'ուզէ թող ըլլայ, հայրենի
քին գաւաճանեց... :

— Ո՛չ, պարոն իր գրօշակը պաշտպանեց... Ա
մէն մարդ ազատ է և ամէն մարդ, գէշ կամ աղէկ, իր
զազափարը ունի... և քանի որ իր գազափարին կը
հաւատայ և անոր համար կը կռուի, մա՛րդ մըն է ան,
և ամէն մարդ կարեկցութեան գութի արժանի է... :

— Բայց եթէ ես Ծուաններուն ձեռքը ինկած ըլ
լայի, բնա՛ւ վրաս չի պիտի գթային, գիտիլ տուա
լըֆրան վարանիլ սկսելով :

— Կրնայ ըլլալ, բայց մենք պէտք է օրինակ
տանք անոնց և ցուցնենք թէ հանրապետական մը միշտ
մարդասէր և գթասիրտ կ'ըլլայ :

— Ապրի՛ս, կնիկ, զլուխիդ մէջ բաւական բան
կայ եղեր, մինչգիտ ես պարպ կը կարծէի կոր, ըսաւ
աաննապետը քիչ մը կակուղնալով : Ազէկ բայց չեմ
կրնար... անկարելի՛ է... զինուոր մը պէտք չէ որ
արուած հրամանին գէմ անհնազանդ գանուի... :

Նպարավաճառ կինը երբ այս խօսքերը լսեց, սկսաւ
հեծկրտալ :

Ասոր վրայ, փոքրիկն Նիքօլա հօրը վրայ վազե
լով ձեռքը անոր երկարեց և մայրը ցոյց տալով գոչեց .

— Մայրիկի՛ս փաթթուէ նայիմ, հայրիկ, անոր
սիրտը մեր երկուքի՛ն սիրտէն ալ բարի է եղեր... :

Լըֆրան պահ մը եւս վարանեցաւ... բայց այդ
վարանումը հաղիւ քանի մը երկվայրկեան տեւեց... :

Եւ պարտուած, իր կնոջը պարզ այլ կենդանի բա
րութիւնը տեսնելով զինաթափ եղած, զայն իր թեւ
բուն մէջ առնելով ըսաւ .

— Մի՛ լար, կնի՛կ, մի՛ լար, հոսկցա՛նք, մարդու
բան չենք ըսեր... :

— Ես ալ աչք կը դոցեմ, կը լմնայ կ'երթայ,
կմկմայ փոքրիկ թմբկահարը ու բախտթեմա :

Երբ ասզին այս գէպքերը տեղի կ'ունենային, ան
զին, Գլէր գլեակ հասնելով հօրը քով կ'ելլար :

Արտուէն, որ սեղանի մը առջև նստած, երես
ները կախ, Մարտոյի հետ կը խօսէր, երբ իր ազլիկը
տ'սաւ, անմիջապէս ժպտելով ոտքի ելաւ և ըսաւ .

— Մտահոգութեան մէջ էի, ազլիկս, ո՞ւր մնացիր :
— Հայր, կարեւոր պարտականութիւն մը ունէի,
կատարեցի, պատասխանեց Գլէր :

Պատգամաւորը անոր երեսն ի վեր նայեցաւ և զայն
զրկին սեղմելով՝ ախար չեչտով մը ըսաւ .

— Եւ քանի որ պարտականութիւնդ կատարեցիր,
ազլիկս, սիրտդ ալ խղձիդ պէս թող հանդարտ ըլլայ
ասկէ վերջ :

Գուրտէն ձիաւորի մը խթանին ձայնը լսուեցաւ... :
Առջևէն Քլէպէր և ետեւէն Մարիդ, սրահէն ներս
մտան :

Քլէպէր՝ Արտուէնի մօտեցաւ և զինուորական բա
րեւ մը տալով յայտարարեց .

— Քաղաքացի պատգամաւոր, քու հրամանիդ վը
րայ գիւղին բոլոր տուները խուզարկեցի :

Այս խօսքին վրայ, Գլէր, սրանէն զարնուած, սկը-
սաւ գողգողալ...:

Մարսօ, որ մինչև այն ատենը խանդաղական
նայուածքով մը Գլէրի կը նայէր, անոր մօտեցաւ:

Խեղճ աղջիկը վար չիչնայու համար Մարսօյի թե-
ւին կոթնեցաւ:

Մարիզ հեղինական նայուածքով մը Գլէրի կը նա-
յէր:

— Մարզ մարդասանք չի գտանք, չարունակեց
Քլէպէր:

Գլէր շունչ առաւ. բայց Մարիզ ատելավատ նայ-
ւածքով մը առաջ անցնելով՝ թշնամական կեցուածքով
մը յայտարարեց.

— Այո՛, մարզ չի գտաք, անոր համար որ չաւ չի
փնտանցիր...: Ես ձեզի խրճիթ մը պիտի ցուցնեմ ուր
աւագակ մը պահոււրտած է:

Այս անգամ պատգամաւորին աղջիկը չի կրնալով
ինքզինքը գսպել, աղեխարշ ձիջ մը արձակեց:

Եւ մինչդեռ Քլէպէր և Մարսօ արհամարհական
նողկալի նայուածքով մը արիւն խմող կնոջ կը նայէին,
Արաուէն կը գոչէր.

— Շատ լաւ, քաղքուհի, սա խրճիթը առաջնոր-
դեցէք մեզ:

Յետոյ, գառնալով իր աղջկանը, որուն դեի գեղին
կարելէն, գողգողալէն և յուզումէն ներքին վրդովմուն-
քը յայտնի կ'ըլլար, պահ մը զայն զիտեց, ապա, ա-
մէն բան հասկնալով, հրամայեց.

Գուն հո՛ս պիտի կենաս...: զգեակէն դուրս ել-
լալը կ'արգրիւմ քեզ...:

Պատգամաւորին աղջիկը ինքզինքը բոլորովին կոր-
սընցնելով, լալով բազմոցին վրայ փռուեցաւ մնաց:

Երբ սթափելով ինքզինքին եկաւ, տեսաւ որ սրա-
հին մէջ առանձին մնացած էր...: Իր բոլոր ուժերը ի

մի հաւաքելով, գողգողալով սուրի ելաւ և ամէն բան
ընել աչքը առնելով փողոց նետուեցաւ:

Այս միջոցին, Արաուէն, Մարիզ, Մարսօ և Քլէպէր,
գուժարտակ մը զինուոր ստած հեաներին, խրճիթին
քովը հասած էին: Զինուորները խրճիթը պաշարեցին:

Տասնապետ Լըֆրան որ Նիքօլային հետ կնոջը
կտաքին քով վերադարձած և զինուորներուն մեկնելը
տեսած էր, խօսքը կնոջը ուղղելով ըսաւ.

— Այս մարդիկը ասանկ ո՛ւր կ'երթան կոր:

— Գրաւ կը գնեմ որ տա վաթկած Յլէրիւսը, վի-
րաւորը բերան տուած է, գոչեց մայր վիքթուար մաա-
հողութեան մասնուելով:

— Մայրիկ, ի՞նչ կ'ըսես, երթանք մէյ մը տես-
նե՛նք, կմկմաց փոքրիկ Նիքօլան:

— Քաղեցէ՛ք երթանք, պատասխանեց նպարա-
վածաւ կինը:

— Առջեւնի՛ս ինկիր, հայրի՛կ, ըսաւ փոքրիկն
Նիքօլայ հրամայական զմայրելի շեշտով մը:

Երբ երեք Լըֆրանները խրճիթին առջևը հասան,
զինուորները իրենց հրացանի կոթովը գուռը ձեռնու-
սկսած էին...:

Ժազ որ ներսը խոր մտածմունքի մէջ թաղուած
էր, մէկէն ի մէկ ականջները սրեց, և տակառի մը վը-
րայ ելլալով՝ Արաուէնը, զօրավարները և Մարիզը նըշ-
մարեց...: Խրճիթը պաշարման մէջ առաջ էին...:

Ժազի չրթունքներուն վրայ ցաւագին ժպիտ մը
պտոյտ ըրաւ: Յետոյ, յուսահատական քաջարտու-
թեամբ մը մտաւայ.

— Չէ՞ մի որ իրարու հետ բնաւ չի պիտի կրնանք
ամուսնանալ... ի՞նչ կ'արժէ ուրեմն կեանքը ինձի
համար .. միթէ առանց անոր կրնամ ապրել... թող
մեռնիմ ուրեմն...:

Եւ գետին ցատկելով, յուսահատական վճռակա-

նութեամբ մը գրան կողմը վազեց և գուռը կանակի վրայ բանալով սեմին վրայ կանգ առաւ: Յետոյ, ուղղակի Արտուէնի քով քալելով և անոր առջեւը կենալով, խրոխտաբար ըսաւ .

— Զիս կը փնտռէիք, ահա՛ հոս եմ:

Յանկարծ ազադակ մը լսուեցաւ .

— Ուշ մնացի . . . :

Գլէր վազելով եկած էր:

Վիքթուար անոր թեւէն բռնել ուզեց:

— Հրաման արուած է ինձի հրացանի բռնել բոլոր այն ապստամբները որոնք գէնքը ձեռքերնին կը բռնուին, ըսաւ Արտուէն վճռական չեչաով մը:

— Ուրեմն հրացանի՛ բռնեցէք զիս, պատասխանեց ժազ արիաբար:

Արտուէն՝ Մարսօյի նշան մը ըրաւ:

Բայց Գլէր նպարավաճառ կնոջ ձեռքէն ազատելով ինքզինքը, եկաւ հօրը սուրբուհուն ինկաւ և պազատագին ձայնով մը գոչեց .

— Շնորհ, հա՛յր, շնորհ, ներում շնորհեցէք:

Արտուէն անզրգուելի մնաց:

Գլէրի արձակած ազադակին մէջ անանկ կսկծայի բան մը կար, մարդկային սիրտերը յուզող անանկ չեչա մը կար որ, բացի Մարիզէ, որ վատաբար կը ծիծաղէր, միւս բոլոր ներկաներուն սիրտը բզկի բզկի և դաւ:

— Շնորհ, հա՛յր, շնորհ, գոչեց մանկամարդ աղջիկը արատաւալից աչքերով:

— Գլէր թող տուր որ մենեմ, գոչեց ժազ:

Բայց գմբազդ աղջիկը հօրը ծունկերուն վաթթուելով, լալահատաչ կը հեւար:

— Ո՛չ, ո՛չ, անկարելի՛ է, եթէ ան մենեմ, ե՛ս ալ կը մենեմ:

Արտուէն այս անգամ սարստաց. . . : Այ այս անգամ

Ֆամոզուած էր որ ի՛նչ որ ալ ըլլար, աշխարհի մէջ ի՛նչ որ ալ պատահէր, Գլէր բնաւ չպիտի մոռնար իր նշանածը . . . որով, եթէ ժազ Քոթըրօն գնդակահար ընել տար, իր աղջկան գամբանականը կարգացած պիտի ըլլար . . . : Եւ այս մտածումը զինքը այնքան տակնու վրայ կ'ընէր, այնքան կը շուարեցնէր որ, արդարու թեւեան մանկազը իր ձեռքերուն մէջ գողալ կը սկսէր:

Հայրը իր աղջիկը սաքի հանելով, եղերաչուք լըտու թեւան մը մէջ յայտարարեց .

— Մէկ պայմանով կը հաւանիմ խնայել այս մարդուն կեանքին . պէտք է երգում ընէ որ հանրապետութեան գէմ մէջ մըն ալ գէնք չի պիտի բռնէ:

— Կեանքիս մէջ երբե՛ք այդ տեսակ երգում մը չի պիտի ընեմ, գոչեց ժազ կորովի չեչաով մը:

Գլէր պազատագին կեցումքով մը ձեռքերը անոր երկարեց:

— Ես ժան Ծուանի գաւակն եմ: Երգում ըրած եմ հօրս որ արիւնին մինչեւ վերջին կաթիլը Աստուծոս և թագաւորիս համար պիտի թափեմ, և պիտի բռնեմ երգումս . . . :

— Ուրեմն արդարութիւնը գործագրեցէք, հրամայեց Արտուէն խեղդուկ ձայնով մը:

Եւ Մարսօյի գառնալով աւելցուց .

— Զօրավար պարսկախուրիւնդ կասարե՛: Այս խօսին վրայ Գլէր մարելով մայր Վիքթուարի թեւերուն մէջ ինկաւ . . . : «Պարսկախուրիւնդ կասարե՛» ըսած էր հայրը, և Գլէր գիտէր թէ ամէն անգամ որ ապստամբ մը գնդակի կը բռնուէր, հայրը այս հրամանը կուտար:

Արտուէն, խոտով թեւան մատնուած, աղջկանը քով պիտի վազէր, բաց Մարիզ անոր թեւէն բռնելով սուզին քաշեց և ըսաւ .

— Իր վիճակին ձգէ զայն. արդէն այս տեսարանը, երկար տեւեց, վերջացողը երթայ: Աղջիկդ ասանկ- գործերու մէջ խառնուելով գլխուն փորձանք պիտի բանայ օր մը:

Արտուէն չափէն աւելի յուզուած, արիւն ի մոլդ կնոջ հետեւեցաւ: Փոքրիկն Նիքօյս և իր ծնողքը սպառնական նայուածքով մը անխիղճ կնոջ նայեցան: Մարսօ յիսնապետ մը կանչելով ժազը ցոյց տուաւ ա- նոր և ըսաւ.

— Այս երեկոյ զնդակահար ըլլալիք գերիներունք քով տար սա:

Ժազ և Գլէր սրահկեղէք նայուածքով մը իրարու նայելով՝ վերջին մնաս բարովը ըսին... և թափօրը Քլէպէրի առաջնորդութեամբ ճամբայ ելլալով՝ եկեղեցիին հրապարակը ուղղուեցաւ.

Մարսօ մեղամաղձոտ գէմքով մը պատրաստուեցաւ թափօրին հետեւիլ, բայց իր աչքերը բնազգարար պատ- դամաւորին աղջկան վրայ դարձան: Բարի Լըֆրան կը մխիթարէր զայն: Մանկամարդ աղջիկը տեսաւ Մար- սօյի իրեն նայելը, և այդ նայուածքին մէջ անանկ- արգահատանք մը ու սրտի բարութիւն մը նշմարեց- որ, ինքզինքը մայր վիթխուարի ձեռքէն ազատելով, զօրավարին քով վազեց և կսկծալի ձայնով մը գոչեց.

— Գթացէ՛ք, մեզքցէ՛ք. անոր վրայ...:

Այս չափ միայն կրցաւ ըսել...: Չեռքերը իրար միացուցած, Քրիստոսի պատկերին առջեւ պաղատող հաւատացեալի մը պէս, աչքերը արցունքով ողողուած, սիրտերը պատաս սրտաս ընող թախանձագին նայ- ւածքով մը անոր կրկն ի վեր նայած մնաց:

Մարսօ անգամ մը անոր նայեցաւ...: Հառաչանք մը ուղղակի սրտէն բղխելով մինչև կոկորդը ելաւ և հոն խեղդուեցաւ: Դէմքին արտայայտութենէն կը հասկցուէր թէ ներքին աստիկ կսիւ մը սկսած էր իր

մէջը...: Այլևս չէր կարող ծածկել... , այ ամէն բան յայտնի կերպով կ'երեւէր իրեն... , Գլէր, անտեղեակ, առանց գիտնալու թէ Մարսօ զինքը կը սիրէ, կը պա- հանջէր անկէ որ իր նշանածը ազատէ: Ազատել... : Զո՞վ... : Շուան մը. խտովարար մը, սպասամբ մը, աւագակ մը, հանրապետութեան թշնամի... : Ի՞նչ աղայամտութիւն... միթէ կարելի՞ էր... :

Այո՛, անկարելի էր, բայց Մարսօ կը վարանէր... չէր ուզեր խեղճ աղջկան խնդրանքը մերժելով՝ անոր կսկիծին վրայ կսկիծ մը ևս աւելցնել... :

Մտածելով որ հանրապետութեան թշնամին և իր հակառակորդը իր ձեռքը ինկած էր և իբրև զինուոր- իր վրայ պարտականութիւն կ'իշխար իրմէ մեծին աը- ւած հրամանը գործադրելով կորստեան մասնել իր հա- կառակորդը, փոխանակ հրձուելու, անբազդատելի վե- հանձութեամբ մը կ'ընդվզէր ինքզինքին դէմ, և կը հարցնէր ինքզինքին թէ ո՞ր պարտականութեան ա- ռաջնութիւն պէտք էր տալ, մարդասիրական պարսա- կանութեան քէ զինուորական պարսականութեան:

Գլէր, գողտջուն, կը սպասէր որ Մարսօյի բեր- նէն փրկարար խօսք մը ելլէ... :

Իսկ Մարսօ, տեսնելով որ իր սիրած աղջիկը ու- ըրիչ մէկը կը սիրէր, միաքը զրաւ իր սէրը բնաւ չի բանալ անոր, բայց իր խիղճը իրեն հրամայեց որ ինքն ալ պէտք էր իր սիրոյն չափ մեծ ու վսեմ ըլլալ, և այդ մեծ սիրաը, ասպետութեն, վեհանձնօրէն վեր բար- ձրանալով մարդկային ճգճիմ հաշիւներէն, կատարեալ հանդարտութեամբ և առանց ո և է վախի ըսաւ.

— Պիտի ազատեմ զայն... :



ՎԱԳՐԻՆ ՂԵՄ ԱՌԻԻԾ

Մութը կոխած էր արդէն:

Մարսօ իր տանը դրան առջև, ձեռքերը թուշին դրած, մտազրազ, կ'երթար կուգար: Կը մտածէր թէ ինչպէս պիտի կրնար բռնել Գլէրի տուած խոստումը:

Յանկարծ Մարիզ Ֆլէրիւս իր դէմը դրուեցաւ:

— Քեզի կը փնտոէի կոր, զօրավար, ըսաւ անուշ ձայնով մը և ժպտելով:

Մարսօ ցնցուեցաւ...:

— Այս երեկոյ յաղթական գինուորականներուն և գինուորներուն ի պատիւ հացկերոյթ մը պիտի սարքեմ, ձեզ հրաւիրելու եկայ, շարունակեց Մարիզ:

— Երբ անգին չի թաղուած առանց գերեզմանի այնքան մեռելներ կան, մարդս որքա՞ն անհոգ ըլլալու է հացկերոյթի մը մասնակցելու համար, պատասխանեց Մարսօ լուրջ կերպով:

Եւ ձեռքը եկեղեցիին կողմը ուղղելով ուր գնդակահար ըլլալիք գերիները բանտարկուած էին, աւելցուց:

— Մանաւանդ երբ հոս տակաւին մեռնելիքներ ալ կան:

— Կը դարմանամ որ այդ աւազակներուն վրայ կը մեղքնաս, ըսաւ Մարիզ ձիւաղային ժպիտով մը:

— Այո՛, քաղքուհի, կը մեղքնամ ըստ անոնց վրայ որոնք քաղաքային պատերազմներով ու եզրայրասպան կռիւներով իրարու դէմ ելած են, բայց ուրոնք իրար սիրելու համար ստեղծուած էին...:

— Ինձի անունի կը թուի թէ հանրապետական գօրավարի մը արժանի քաղաքացիական սկզբունքներուն

գիտակցութիւնը չունիս, ըսաւ Ֆլէրիւս ուսերը թոթվելով:

— Քաղքուհի, իմ քաղաքացիական սկզբունքս ամէն բանէ առաջ կըրայրութեան վրայ հիմնուած է, պատասխանեց Մարսօ իրեն արժանավայել շեշտով մը:

Եւ առաիճանաբար յառաջացող սրազ վերարեւոյնքով մը Մարիզը բարեւելէ յետոյ, առնէն ներս մտաւ:

Արիւն խմող կիներ, կատղած, մ'իկնելու պատրաստուեցաւ, բայց մէկէն ի մէկ միտքը բան մը ինկած ըլլալով կանց առաւ և թշնամական նայուածքով մը Մարսօյի տունն ի վեր նայելէ յետոյ՝ պատի մը կախն մանկելով պահուրտեցաւ:

Այդ պատին կանէն՝ առանց մէկէ մը նշմարուելու կրնար ամէն բան գիւրութեամբ տեսնել:

Մարսօ իր սենեակը մտաւ, այս սենեակը տակաւին երկու առաջ խաղաղ շինականներու օժախ մըն էր որ հիմա գինուորական սենեակի մը վերածուած էր: Հոս ու հոն խոտն ի խոտն իրարու վրայ զիլուած գէնքեր, համազգեստներ, մախաղներ և ուտեստեղէններ կը տեսնուէին: Սենեակին մէջտեղը շաղանակներէ հինցած սեղան մը կար որուն վրայ քարտէսներ և թուղթեր դրուած էին...:

Երիտասարդ զօրավարը այս սեղանին առջև փայտէ կտասանի աթոռի մը վրայ նստաւ և զլուխը ձեռքերուն մէջ առած, կարծես թէ պատերազմական ծրագրի մը վրայ կը մտածէր, սկսաւ մտածել:

Քիչ մը հտքը, սպասարկող գինուոր մը իւզոված կանթիկ մը բերելով սեղանին վրայ դրաւ...:

Մարսօ զլուխը վեր վերցուց...: Գէմքին վրայ այնպիսի վճռական արտայայտութիւն մը կար որ, յայտնի կ'ըլլար թէ անդառնալի որոշում մը տուած էր:

Յետոյ, կարճ կերպով, գինուորին հեռուեալ հրամանը տուաւ:

— Գնա՛ ըսէ եկեղեցիին մէջ գերիններուն վրայ
հսկող սպային որ ժազ Բօթըրօ անուետով Շուանին հետ
տեսակցել կ'ուզեմ, և ըսէ որ անմիջապէս թող հոս
բերէ զայն . . . :

Սպասաւ որ զինուորը զինուորական բարեւ մը տա-
լէ յետոյ կանակը դարձնելով դուրս ելաւ :

Մարսօ սկսաւ սենեակին մէջ երթալ զայլ :

Յանկարծ կանգ առաւ . . . : Դէմքը որ քիչ մը ստաջ
խիստ, լուրջ և մասնօգ արտայայտութիւն մը ունէր .
յանկարծ ասպետական պայծառութիւն մը ստացաւ :
Պահ մը, զազրելով զինուոր ըլլալէ, իր հաւատքին
լոյսովը լուսաւորուող առաքեալի մը պէս վիհանձն ու
վեհօգի կեցուած մը առաւ և փոխաց :

— Ո՛հ, այ՛ո՛, եթէ սա մարդը կարենամ համոզե-
լով մեր կողմը դարձնել, մինչև չիմա տարած բոլոր
յազթանակներէս աւելի մեծ յազթանակ մը տարած
պիտի ըլլամ, մանաւանդ անոր համար որ այս յազթա-
նակը արիւնով ներկուած չի պիտի ըլլայ :

Գուցէ բացուեցաւ . հանրապետական սպայ մը,
ժազ Բօթըրօն քովը ներս մտաւ : Ժազ յո՛ւ զումէն զեւի
գեղին կարած էր :

Դրան մէջէն, դուրսը, բակին մէջ, պահակ զին-
ւորներու ստուերներ կը տեսնուէին :

— Տեղակա՛լ, կրնաս քու մարդիկդ առնելով քաչ-
ւիլ, հրամայեց Մարսօ : Գերին ևս կը բերեմ :

Գուցէ զոցուեցաւ և սպան ու իր զինուորները
մեկնեցան :

Մարսօ և ժազ Բօթըրօ առանձին մնացին :

— Քիչ մը առաջ տեսայ որ քաջ զինուորի ար-
ժանավայել ընթացք մը ցոյց տուիր, խօսք առաւ
Մարսօ :

— Պարտականութիւնս կատարեցի, սպասախանեց
ժազ հերոսաբար :

— Մեռնիլը աչքդ առա՞ծ ևս ուրեմն :

Ժազ այս խօսքին վրայ սարսուռ մը զգաց . . . :
Ի՛նչպէս մեռնիլը աչքը կրնար առնել երբ իր անձէն
աւելի կը սիրէր Գլէրը և այդ սէրը իրեն ապրել կը
հրամայէր :

— Այ՛ո՛, կը նախընտրեմ մեռնիլ՝ քան թէ հաւա-
տուրաց մը, գրուժան մը ըլլալ . . . :

— Բայց պէտք չէ մոռնաս որ ֆրանսան այս մի-
ջոցին իր բոլոր զաւակներուն ալ պէտք ունի, բացա-
զանչեց Մարսօ :

— Իսկ իմ Աստուածս իր բոլոր որդոց պէտք ու-
նի, և թագաւորս՝ իր բոլոր ծառաներուն :

— Բայց ևս իմացայ որ դուն Բարիդի մէջ քանի
մը տարի ապրեր ևս, Տանթօնի գրասենեակին մէջ
պաշտօն վարեր ևս և Գլէր Արատէնի նշանածն ևս ե-
ղեր : Ի՛նչպէ՛ս կ'ըլլայ որ նշանածիդ և իր հօրը խօսք
կ'ուտաս երթալ հանրապետական բանակին մէջ զինուոր
արձանագրուել և յետոյ Շուաններուն կողմը կը բըռ-
նես :

— Բօն-նէօֆի ամպիոնին վրայ, ազգին խորանին
առջև իմ ստորագրութիւնս գրած միջոցիս հայրս վրայ
հասաւ, և առ քաշեց զիս և լուսահօգի մօրս ըրած եր-
դումս յիշեցնել տուաւ, և ևս ալ երդմնազանց մը չըլ-
լալու համար ոտքերուս տակը առնելով իմ սէրս, սիրտս
բզկի բզկի եղած՝ հօրս հետեւեցայ :

Մարսօ համակրական նայուածքով մը ժազի նա-
յելով իւրովի գոչեց .

— Ո՛հ, մոլեռանդութիւն, ի՛նչ սխալ զազափար-
ներ կը ներչնչես ըսող անոնց որոնք արամբանու-
թեան խորանին առջեւ ծունկ չօքելու համար ստեղծուած
են, ի՛նչ սխալ ճամբաներու կ'առաջնորդես բոլոր ա-
նոնք որոնք ուղիղ ճամբուն հետեւելու համար աշխարհ
եկած են . . . , ի՛նչ անորակելի ատելութիւններով կը

լեցնես այն սիրտերը որոնք արգարութիւնը և սէրը իրենց պահելու համար կը բաբախեն, ի՞նչ ոճիրներ գործել կուտաս քաջ ու ազնիւ մարդիկը իրարու դէմ հանելով... :

Ապա խօսքը ժապի ուզգելով շարունակեց.

— Իսկ դուն, զո՛ւն որ իմ թշնամիս ևս, բայց որ հողիով ու սրտով ինէ բնա՛ւ տարբերութիւն չունիս, ինչո՞ւ անտեսես, ինչո՞ւ չի տեսնես որ բոլոր միւս կրօնքներէն վեր կրօնք մը կայ, անանկ կրօնք մը որ պէտք է մեր հայրենիքին վրայ ծածանի, և այդ կրօնքը հայրենասիրութիւնն է, ինչո՞ւ չընդունիս, չըմբռնես թէ փրանսա մեր մայրն է. մայր մը որուն շուրջը հաւաքուելու ենք ամէնքս՝ նախ՝ ինքզինքնիս գերութենէ ազատելու և սպա՛ դայն պաշտպանելու համար բոլոր անոնց դէմ որոնք անոր ոտքերուն նորէ՛ն չլլթայ անցընել կ'աշխատին: Այո՛, իմ թշնամի՛ եղբայրս, ինչո՞ւ փոխանակ անօգուտ, ամուլ ու ոճրագարա ապստամբութեան մը մասնակցելու՝ հայրենիքը բռնի կերպով զբաւել ուզող թշնամիին դէմ կոտուելու չերթայիր... : Այսօր, եթէ մեր հայրենիքին թշնամիին դէմ պատեւազմած ըլլայիր, փոխանակ ապստամբ մը, խոտվարար մը կոչուելու՝ հերոս մը, զիւցազն մը պիտի կոչուէիր, և ես պարծանքով մը քեզ իմ գէնքի ընկերս պիտի կոչէի, այո՛, գէնքի ընկերս, սրտակից բարեկամս, եղբայրս պիտի կոչէի... :

— Երգում ըրած էի և չէի կրնար, պատասխանեց ժապ գորավարին այս խօսքերէն չափէն աւելի յուզուած:

— Ի՞նչ երգում ըրած էիր, ի՞նչ բանի համար, հարցուց Մարսօ:

— Երգում ըրած էի որ հնագոնց զաւակ մը և հաւատացեալ քրիստոնեայ մը պիտի մնամ... :

— Բայց զէպքերը եկան ապացուցին թէ այդ եր-

գումը բռնելով գէշ ֆրանսացի մը եղած ևս, և միթէ այսչափը չի՞ բաւեր երգումը քակուած համարելու համար:

— Երգում մը մի՛շտ նուիրական է և անքակտելի՛, — Երգում մը պէտք է քակուել՝ երբ ան մարդս զէպի ոճիր մը կ'առաջնորդէ:

— Բայց միթէ իր գաղափարին համար կոտուել ու ճի՞ր գործել է:

— Ո՛չ, բայց գաղափարի կտիւն ալ իր ատենը ունի. երբ հայրենիքը վտանգի մէջ ըլլայ և երբ իր զաւակները փոխանակ իրար միանալու զիրար ուտեն, ոճիրներուն ամենէն սարսափելին գործած կ'ըլլան. որ զաւակը իր մօրը հիւանդ եղած միջոցին անոր կուշտին գաշոյն մը կը միսէ. ահա քու մարդիկդ ա՛տ է որ կ'ընեն:

Այս խօսքերուն վրայ ժապ Շուանի գէմքը պատի գոյն առաւ: Երեսէն անանկ յայտնի կ'ըլլար թէ չափէն աւելի ազգուած էր այդ երիտասարդ այլ մեծ զինուորականին խօսքերէն, և այժմ այդ վեհանձն զինուորը ի՛նքն ալ ցաւ կը զգար:

— Նշանուած ըլլալի և Արտուէնի տուած խոստումը մի՛ մոռնար, խօսք առաւ Մարսօ:

— Ո՛չ, համոզումս ու գաղափարներս չե՛մ կրնար ուրանալ, կմկմաց ժապ խնդրուկ ձայնով մը: Աակէ զատ, այլեւս կեանքը ի՞նչ արժէք ունի ինձի համար:

— Բայց չէ՞ մի որ դուն զայն կը սիրես և ան ալ քեզ կը սիրէ... երկո՛ւկդ ալ ապրելու էք... :

Գերիին այտերէն երկու կաթիլ արցունք վար թափեցան: Մարսօ անոր մօտենալով՝ արգահատական չեչտով մը ըսաւ.

— Գլէր Արտուէնի խոստացած էի որ քեզի պիտի ազատեմ:

Եւ զինուորական համազգեստ մը առնելով քովէն
ժապի երկարեց և ըսաւ .

— Ա՛ն սըւ իկա . . .

ժազ վարանեցաւ . . . :

— Ա՛ն սա, և զիացիր որ քեզի պէս թշնամիի մը
օգնութեան հասած ըլլալուս համար բարեբազզ կը զգամ
ինքզինքս, ըսաւ Մարսօ համեստ վեհանձութեամբ մը:

Փան Շուանի ազան՝ երախտագիտութեան և զմայ-
լանքի փղձկումով մը համազգեստը առաւ և հագաւ:

Մարսօ իր ձեռքովը անոր գլուխը զինուորական
զգակ մը անցընելէ յետոյ՝ նշան ըրաւ որ իրեն հե-
տեւի: Երկուքը մէկէն, առանց բնաւ միաքերնուն ան-
ցընելու թէ Մարիզ Ֆլէրիւս մութին մէջ իրենց կը
հեռուէր, զիւզին մուտքը պաշտպանող պահակախում-
բին մօտեցան:

Պահակախումբին զինուորները իրենց զօրովարը
ձանչցան և յարգանքով բարեւի կեցան: ժազ և
Մարսօ զիւզէն դուրս ելլալով մեծ ձամբան մտան:

Բաւական յառաջանալէ յետոյ, երբ անտառի մը
եզերքը հասան, Մարսօ անտառին թանձրախիտ ու
մութ մէկ մասը ցոյց տալով ժազի՝ ըսաւ .

— Ազատ ես, և հիմա դե՛ս՝ ըսէ քու բարեկամնե-
րուդ որ, իրա՛ւ, զօրավար Մարսօն թէպէտ իրենց
անյողողող թշնամին է, բայց երբեք իրենց զահիճը
չի պիտի ըլլայ . . . :

ժազ, մեծապէս սպաւորուած, երախտագիտական
սարսուռով մը անոր ձեռքերը փնտռեց, գտաւ և երբ
չբթունքներուն պիտի տանէր երախտագիտական համ-
բոյրով մը օծելու համար այդ մարդասէր ձեռքը, Մար-
սօ ձեռքը ետ քաշեց և գոհացաւ ձեռքի տարուկ ու
նշանակալից սեղմումով մը . . . :

ժազ ծառերուն մէջ մտնելով աներեւոյթ եղաւ:

Մարսօ, առանց զայն տեսնելու Մարիզ Ֆլէրիւսի

քովէն անցնելով գիւղ մտաւ: Արիւն խմող կինը մա-
ցառներուն ետին պահուրտած՝ ամէն բան տեսած էր:

Գաւաճան կինը պահ մը մտածեց թէ՛ եթէ Մար-
սօն մատնելու ըլլար, առանց այլեւայլի մահուան պիտի
գրատապարանէին զ՛այն, բայց ինքը զայն կորսնցնել չէր
ուզեր, ընդհակառակը, իր միակ փափաքը զայն ձեռք
անցընելն էր, այո՛, Մարիզ Մարսօն կը սիրէր:

Այդ վազըը Մարսօն չի պիտի մատնէր, բայց ժազ
Շուանն ալ ձեռքէն չի պիտի հաներ անշուշտ . . . :

Այսպէս, երբ ընելիքին վրայ կը մտածէր, յան-
կարծ ոտքի ձայներ շուռեցան . . . : Հանրապետական
զինուորներու գումարտակ մը իր կողմը կուգար . . . :
Մարիզ անմիջապէս անոնց առջեւը նետուելով գոչեց .

— Սըտեղը Շուան մը տեսայ որ անտառին կողմը
փախաւ:

Ենթասպան անմիջապէս իր զինուորները առնելով՝
Մարիզ Ֆլէրիւսի ցոյց տուած կողմը սլացաւ:

Իսկ արիւն խմող կինը ուրախութեան վայրագ
չեչաով մը գոչեց .

— Հիմա, ա՛լ օծիքդ ձեռքս անցաւ, իմ / աղուոր
զօրավարս:

Պահ մը յետոյ զիչերուան լուծեան մէջ գէնքի
ձայներ շուռեցաւ:

Գլէր որ տուն երթալէ առաջ նպարավաճառուհիին
կողքին քով մտանողութեամբ կեցած՝ ժազէն բարի
լուրի մը կը սպասէր, հրացանաձգութեան ձայները
առնելով զողողալ սկսաւ .

Երկրորդ հրացանաձգութեան ձայն մը ևս լսուե-
ցաւ: Այս անգամ Գլէր յուսահատութեամբ գոչեց .

— Գնդակի բռնեցին զայն, գնդակի բռնեցին:
Մայր վիքթուար, տասնապետ Լըֆրան և թմր-

կահար Նիքորան պարապ տեղը դայն հանդարտեցներ կը ջանային:

Յուզումէն և վիշտէն կիսովին խելագարած, խեղճ աղջիկը կը հեծկլտար ու կը գալարուէր:

Երբ իր նշանածին ետեւէն վազելու համար բնագ- դարար առջ նետուեցաւ, Մարսօ իր զէմը ելաւ:

Լըֆրանները երբ դորավարը տեսան, յարգանօք մէկ կողմ քաշուեցան:

Մարսօ Գլէրը տեսնելով անոր մօտեցաւ:

Մանկամարդ աղջիկը եղերական հարցական նայ- ւածքով մը անոր նայեցաւ:

Մարսօ մեծ ճիգով մը իր յուզումը ծածկելով կա- մայ մը փախաց:

— Հոգ մի՛ ընէք, աղատեցաւ...:

Գլէր երբ այս խօսքերը լսեց, իր երախտագիտու- թիւնը յայանող լուս լքումով, ինչպէս որ քոյրը իր եղբօր կապաւինի, քրուխը երիտասարդ դորավարին ուսին գրաւ, և Մարսօ ասպետական մաքուր խանդա- դատանքի սարսուռով մը իր շրթունքները անոր ճակ- ախն դպցուց:

Երախտագիտութիւնն ալ ի՛ր համբոյրը ունի:

.

Երբ իրիկունը վրայ հասաւ, ցերեկին Մաչգուլիք անտառին մէջ պահուրտող բոլոր Շուանները իրենց պե- տին տուած ժամադրաւայրը գացին. հոնկէ կրանլիէօ պիտի երթային:

Ժան Շուան իր պաղարիւնութիւնը գտած էր և Թօրինէ մարքիզուհիին հետ իր մարդոցը պուխն ան- ցած ճամբայ ինկան: Բաւական ճամբայ ունէին եր- թալիք:

Մայրեր իրենց զաւակները գրկած էին...:

Ծերերը կազն ի կազ ետեւէն կուգային...: Ոչ

ոք բերանը կը բանար, բայց ամէնքն ալ, ամենէն մե- ծէն ամենէն պղտիկը, որոշած էին շարունակել կոիւր:

Հովը, կառղած թուի մը պէս սուրկով կ'անցնէր ծառերուն մէջէն և տերեւներուն սոսափիւնը գիշերնա- յին սարսուղբեցիկ դամբանական մը կ'երգէր: Երբեմն երբեմն, խոչոր ու լուսաւոր աչքերով բուեր թափ տա- լով իրենց թուերուն, ճշարով ու վայելով ծառէ ծառ կը թռչէին: Այժմամները իրենց քունէն արթնալով, երկիւղի մատուած, հոսկէ հոն ցատկոտելով թուփե- լու հախն կը պահուրտէին: Խոչոր կիւնճ մը մացատնե- ներուն մէջէն դուրս ելլալով ապին անդին կը նայէր: Փոքրիկ ջրվէժ մը խխչելով վար կը թափէր աննշան բարձրութենէ մը և ջուրի սաւան մը զլլալով կ'ան- հետանար ծառերուն արմատերը լլուրտակելով:

Կարծես թէ եփրայեցիները Մովսէսի առաջնորդու- թեամբ եգիպտոսէն դուրս կ'ելլային: Անոնցմէ մէկ քա- նին կը մտածէին, ուրիշներ կ'աղօթէին, բայց ամէնքն ալ յոյսով լեցուած էին: Անոնցմէ և ոչ մէկը վճատած էր. իրենց լոյս հաւատքին փռած, վրէժ առնելէ աւե- լի իրենց կամքին ուժովը իրենց նուիրական պար- տակունթիւնը պիտի կատարէին: Անոնց մէջէն շատերը նահատակուիլը իրենց համար փառք մը կը սեպէին քան թէ յազթուիլը:

Այն միջոցին երբ Շուանները զէպի Սէն Ֆիլիպէր գացող ճամբուն մէջ կը մանէին, յանկարծ հեռուէն զէնքի ձայներ լսուեցան: Ժան Շուան ձեռքովը նշան մը ըրաւ: Բոլորը մէկէն կեցան և աւանջ գրին...: Այս անգամ աւելի մօտէն նորէն զէնքի ձայներ լըս- ւեցան:

— Արդեօք գիշերանց անտառին վրայ յարձակելու անմտութիւնը պիտի գործեն, մուտաց ժան Շուան այլանդակ ժպիտով մը:

Եւ բարձրաձայն հրամայեց. — Յրուեցէք և ծառերուն տակ պահուրտեցէք, և

մինչև որ բուռի պէս երեք անգամ ձայն չիտամ, երեւան մի՛ ելլաք:

Բոլոր Շուանները ոգիներու պէս ծառերուն մէջ մանկելով աներեւոյթ եղան:

Քանի մը զինուած շուաններ շրջապատեցին իրենց պեան ու Թօրիւնէ մարքիզուհին:

Ժան Շուան նշան տուաւ անոնց որ իրեն հետեւին, և ամէնքը մէկ, ծառերուն մէջէն, ո՛ր մէկը փորին վրայ սողալով, ո՛ր մէկը յաջորդաբար ծառերուն կոճղերուն հաին պահուակելով առաջ անցան:

Այս անգամ աւելի մօտէն ղէնքի ձայներ լսուեցան: Շուանները, ձեռքերնին բլթակին, մութին մէջ պահուեալ, թշնամիին երեւան ելլալուն սպասեցին, և ահա յանկարծ... մարդ մը երեւան ելաւ որ իրենց կողմը կը վազէր:

Գլուխը բաց, մաղկըր ցիրուցան, հանրապետական զինուորի համազգեստ հագած, հեւալով առաջ կը խոյանար: Կը կազար, կ'երերար, ծանր կերպով վիրաւորուած կ'երեւար: Քանի մը քայլ եւս առաւ և զինքը հալածողներուն ձեռքէն փախչելու համար թաւուս թուփերու տակ մտաւ... յետոյ դուրս ելաւ և ճամբուն միւս կողմը նեանց ինքզինքը...:

Բայց հազիւ թէասդին անցած, անշունչ գետին փոռեցաւ...:

Ժան Շուան որ հարիւրամեայ կաղնիի մը հաին պահուեալ էր, անոր վրայ խոյացաւ...:

Վիրաւորեալը ծունկերուն վրայ քաշկոտուելով սուքի ելլալու ճիգ մը թափեց...: Բայց ձեռունի զիւղացին անոր քովը հասած էր արգէն...:

Երկու աղաղակներ լսուեցան.

— Չաւա՛կս...

— Ո՛հ, հայրի՛կ...

Եւ ժան Շուան ժազի վրայ ծնելով գրկել և համբուրել ուզեց զայն, բայց փախստական գերին ծանրա-

պէս վիրաւորուած՝ գլուխը չի կարենալով վերցնել՝ հողին վրայ փռուած մնաց:

Ասոր վրայ, ժան Շուան զայն իր բազուկներուն մէջն առաւ և անտառ վերադարձաւ, իր մարդիկը իրեն հետեւեցան:

Պահ մը յետոյ մութին մէջ բուռի վայիւն մը լսուեցաւ, որուն յաջորդեցին իրարու հետեւ երկու վայիւններ... բոլոր Շուանները ծառերուն տակէն երեւան ելլալով իրարու քով եկան և ելքը ժան Շուանի առաջնորդութեամբ շարունակուեցաւ:

Ժան Շուան, իր որդին թեւերուն մէջ գրկած էր և ժազի ստացած վէրքէն արիւնը կաթիլ կաթիլ վազելով հօրը տափառը կարմիր կը ներկէր...:

Աէրը սուգի մէջ էր...: Ատելութիւնը իր որսը գտած էր...:

ԲԻՐՄԻԼԻ ԿԱՄՈՒՐՁՈՆ ՎՐԱՅ

Այս ղէպերէն քանի մը օր ետքը, Նանթի մէջ, Պուֆայ հրապարակին վրայ, պատգամաւոր Մաքսիմ Արտուէնի ապարանքին առջեւ, խոսնեհրամ բազմութիւն մը յուզուած կը սպասէր:

Արտուէն Մաշգուլի մէջ քաղաքապահ զինուորնեւորու գունդ մը ձգելէ յետոյ, իր բանակատեղին վերադարձած էր:

Պատշգամին մէջ եռագոյն դրօշակ մը կը ծածանէր: Ձինուորնեքը մեծ զօնարութիւն կը քաշէին կարգապահութիւնը անխախտ պահելու համար: Կարմիր գզակով և կաշիէ գոգնոցով հսկայ պայտազորը մը, երկու մէթը բարձրութեամբ պատին վրայ փակցուած

պաշտօնական զեկույցս մը կարգալով կը գրգռէր խուժանը:

Երեսուն տարեկան մարդ մը, որուն ղէմքը իր հագած խեղճ ու կրակ զեղջկական պատատառուն զգեստներուն բնաւ չէր համապատասխաներ, և ուրիշ աւելի տարիքոտ մէկը՝ որ բարեկեցիկ գիւղացիի մը զգեստները հագած էր, խուժանին խառնուելով՝ իրե՛նք ալ կարգալ կ'ուղէին պատին վրայի պաշտօնական զեկուցազիրը:

Այն միջոցին երբ հսկայ պայտագործը քովի երիտասարդ աշակերտը ուսերուն վրայ բարձրացնելով պաշտօնական զեկուցու՛մը ցոյց կուտար անոր և կ'ըսէր՝ «Սըւիկա պոսալով կարգա նայիմ ծօ Թիէնօ, որ աւմէնքն ալ լսեն», գիւղացիի զգեստներ հագնող մարդը և իր ընկերը նշանակալից նայուածքով մը իրար նայելէ յետոյ խուժանին խառնուեցան:

Ընդհանուր լռութեան մէջ, լակոտը ու ըրախ զուարթ սուր ձայնով մը հեռեւեալ առջերը կարգաց:

«Քաղաքացիներ՛ր,

«Մաշգուլի մէջ աւագակներուն ղէմ փայլուն յաղթանակ մը տարինք:

Բացի գիւղացիի զգեստներ հագնող մարդէն և իր բարեկամէն, միւս բոլոր հոն հաւաքուողները սկսան խանդավառ ծափահարութիւն մը ընել:

Սեւեր հագած երկայնահասակ մարդ մը, նիհար, ոսկրուտ, չոր ու ցամաք մէկը, որ կասկածանքով զանոնք կը լրտեսէր, տեսաւ որ այդ երկու գիւղացիները իրարու տարօրինակ նշան մը կ'ընէին... Թէպէտ և րեաներնուն բան մը յայտնի չէր ըլլար, բայց այդ նշանակալից նշանին մէջ գաղտնիք մը պահուած էր:

Պայտագործին աշակերտը «կեցցէ»ները ընդմիջելով իր ընթերցանութիւնը շարունակեց:

«Ըմբոսաներուն բանակը պատերազմի գաշտին վը-

քայ մեծ թիւով վիրաւորեալներ ձգելէ յետոյ ցիր ու ցան եղաւ:

«Բազմաթիւ գերիներ առինք, որոնք յետոյ հրացանի բանուեցան:

«Փան Շուանի ձերբակալման գործը քանի մը օրւան խնդիր է միայն, և թերեւս քանի մը ժամուան:

«Պարտ անձին կը համարեմ մատնանիչ ընել ազգիս Մարսօ և Քլէպէր զօրավարները, որոնք անգամ մը ևս սպաջուցին իրենց հայրենասիրութիւնը:

«Կեցցէ՛ հանրապետութիւնը:

ՄԱՔՍԻՄ ԱՐՏՈՒԷՆ
Մակառուանեալն ՇԱՆԹ
Հանրային Փրկութեան Ժողովին
Նանքի պատգամաւոր

Խուժանը փոթորիկի մը պէս սկսաւ գոռալ:

— Կեցցէ՛ հանրապետութիւնը, մա՛հ ազնուականներուն:

Եւ յետոյ, աչատութեան գինիովը գինովցած, սկսան իրար գրկել, իրարու հետ պարել և պոչտալով մեկնել:

Պայտագործին աշակերտը իր վարպետին ուսերուն վրայ կեցած սկսաւ երգել անվարտիներուն երգը:

Անվարտիներ իրար միացան,

Կեցցէ՛ քնլանօք, ապրի հրացան:

Խուժանը միարեան սկսաւ երգել:

Ասոր վրայ ազնուականի ղէմք ունեցող գիւղացին երեսը ցաւալի կերպով թուեցուց, բունցքները բարկութեամբ սեղմեց: Կարծես թէ այդ խուժանին վրայ խոյանալ կ'ուղէր:

Բաց իր ընկերը անոր թեւէն քաշելով, սկանջնի վար փախաց:

— Խեղճերնիդ գլուխնիդ ժողովեցէք, ինքզինքնիդ պիտի մասնէք:

Մինչդեռ խուժանը թափօր մը կը կառմէր գիւղին չորս կողմը պտըտելով այս բարեբաստիկ լուրը ամէն կողմ տարածելու համար, երկու խորհրդաւոր մարդիկը, առանց անանելու և կասկածելու որ սեւեր հաղած երկայնահասակ նիհար մարդը հետուէն զիրենք լրան սելով հաեւնուն կ'երթար, իրենց ճամբան շարունակեցին:

Աջուէն գացող երկու մարդիկը առանց բերաննին բանալու Բիրմիլի կամուրջին առջև հասան: Այս կամուրջը Լուսա գետին վրայէն անցնելով ուղղակի ժան Ծուանի գրաւած երկիրը կ'առաջնորդէր:

Երկու մարդիկը երբ կամուրջին միւս ծայրը հասան, պահակախումբի մը դէմը գտան ինքզինքնին:

Այս պահակախումբին տասնապետը Լըֆրանն էր, որ զանոնք կեցնելով ըսաւ.

— Հէ՛յ, քաղաքացիներ, անցադիրնիդ ո՞ւր են նայինք:

Երկու խորհրդաւոր մարդիկը՝ առանց բնաւ վարանելու, թղթապանակին հանելով մէյ մէկ անցադիր քաշեցին և տասնապետին երկարեցին: Լըֆրանն զանոնք աչքէ անցուց, բայց ձեռագիրը այնքան ազատ էր որ չի կարենալով կարգալ հտին գարձաւ և խօսքը իր մարդոցը ուղղելով ըսաւ.

— Ձեր մէջէն աղտոտ ձեռագիր կարգալ գիտցող կա՞յ:

— Վա՛յ խերը անիծածս, ձայն տուող չիկայ մէջերնիդ, կ'երեւայ թէ դուք սպուած զի՛րն ալ չէք կրնար կարգալ, կ'միմայ Լըֆրանն:

Եւ ճարահատ, սկսաւ մէյ մը ձեռքի անցադրերուն նայիլ, մէյ մըն ալ դիմացի երկու մարդոցը:

Կ'երեւայ թէ երկու խորհրդաւոր մարդիկը իր վը-

րայ լաւ սպաւորութիւն թողած ին որ Լըֆրանն ձեռքովը «կրնաք անցնիլ» ի նշանը ըրաւ. և, բայց յանկարծ, այն սեւերով մարդը որ հիմա անոնց մօտեցած էր, տասնապետին քով գալով և հեղինակաւոր շեշտով մը խօսքը անոր ուղղելով ըսաւ.

— Ինձի՛ ցուցուցէք նայիմ տա անցադիրները:

Լըֆրանն թշնամական նայուածքով մը այդ անծանօթին նայելով ըսաւ.

— Գո՛ւր ս՞իվ էք որ, ես ձեզի չեմ ճանչնար:

— Ես Նանթի գաղանի ոստիկաններու պետը քաղաքացի Պրիւթիւս Ակրիքօլան եմ, պատասխանեց երկու մարդոց հետեւող խորհրդաւոր անծանօթը:

Տասնապետը թշնամական նայուածքով մը ձեռքի թուղթերը քաղաքացի Պրիւթիւսի երկարեց:

Հետաքրքիրները չորս կողմէն անմիջապէս իրենց չուրջը հաւաքուեցան:

Ծերունի մուրացկան մը, որ կամուրջին մէկ անկիւնը կկկսած՝ անցորդներուն առջև ձեռքը խզմալի կեցուածքով մը կը բանար, կաղալով անոնց մօտեցաւ և ուղղակի կամուրջին վրայէն անցնիլ ուզող երկու մարդոց երեսն ի վեր նայեցաւ:

Երկու խորհրդաւոր ուղեւորները մտահոգութեամբ գաղանի ոստիկանին տալիք որոշումին կը սպասէին:

Գաղանի ոստիկանը Լըպրաննի տուած անցադիրնեքը ուշադրութեամբ աչքէ անցընելէ յետոյ, հեղինակաւոր շեշտով մը ըսաւ.

— Այս անցադիրները կեղծ են:

Գիւղացիի զգեստներ հագնող աղնուականի դէմք ունեցող մարդը բողբելով ըսաւ.

— Ճշմարիտ կ'ըսեմ որ իմ անունս Իվ Բուվրօ է:

— Իմ անունս ալ Բիէր Քասթէլ, աւելցուց միւսը:

Գաղաի ոստիկան Պրիւթիւս Ակրիքօլա կասկածելի նայուածքով մը անոնց երեսն ի վեր նայեցաւ և այն

միջոցին երբ պիտի պատասխանէր, առերևութեամբ լե-
ցուն հնչեղ ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր.

— Առանց ամէնալու երկու՛րք ալ սուտ կը խօսիք
կոր, մարքիզ:

Այս ձայնը քաղքուհի Մարիզ Ֆլէրիւսի ձայնն
էր: Արիւն խմող կինը՝ ձիու մը վրայ նստած և յեղա-
փոխականներու յատուկ ձիաւորի մը զգեստներ հագած
վրայ կը հասնէր և իր մարակին ծայրով այդ երկու
ապագայ զոհերը ցոյց տալով, կծու ձայնով մը կը գո-
չէր:

— Ես այս մարդիկը կը ճանչնամ: Սա՛ նախկին
Թօրինեէ մարքիզն է, իսկ միւսը՝ իր գործակատարը:

Թօրինեէ մարքիզը տեղէն վեր ցատկեց... ինքն
ալ իր հարսը ճանչցած էր:

— Ա՛ն է, Մարիզ Ֆլէրիւսը, մոլտաց մարքիզը
իւրովի սարսուղով:

Եւ այլեւս մահը աչքը առնելով, իր շուրջը բար-
ձրացող թշնամական ճիչերը խեղդող ձայնով մը անոր
երեսն ի վեր գոչեց:

— Թշուառակա՛ն: Կնոջս ծնողքին պատիւը աղար-
տելզ չէր բաւեր, հիմա՝ ալ այսպէս կատախնատի՞ն կը
ծառայես:

Մարիզ Ֆլէրիւս, անյողգողզ, արիւնի պապակը
չրթունքներուն վրայ, գլուխը վեր վերցնելով յաղ-
թական շեշտով մը ըսաւ.

— Վրէժս կ'առնեմ:

Եւ խօսքը Պրիւթիւս Ակրիզօլայի ուղղուելով ըսաւ.

— Հիմա այլեւս ընկիւնքդ գիտես, այնպէս չէ՞
քաղաքացի:

Գաղանի ստիկանը որ արիւն խմող կնոջ հիացող-
ներէն էր, պատասխանեց.

— Այո՛, քաղքուհի:

Եւ Լըֆրանը կանչելով հրամայեց.

— Սա մեծ աղան անմիջապէս բանտ առաջնորդէ:
Լըֆրան իր մարդոցմէն չորս հոգի առնելով մար-
քիզն ու իր գործակատարը չըջապատել սուտ և ճամ-
բայ կլան:

Պրիւթիւս Ակրիզօլա անոնց հետեւեցաւ:

Մարիզ Ֆլէրիւս հեգնական նայուածքով մը պահ
մը անոնց հետէն նայեցաւ, յետոյ ձիովը բազմութիւնը
ձեղքելով անոնց առջևէն անցաւ և թշնամական նայ-
ւածք մը ուղղելով մարքիզին՝ զեպի գիւղ սուբայց:

Ասոր վրայ, այն ծերունի մուրացկանը որ քիչ մը
առաջ մարքիզին մօտենալով անոր երեսն ի վեր նա-
յած էր, առանց տեղէն երերալու ակոսներուն տակէն
մտաաց.

— Ա՛ն, վսթկած, արդեօք որ մը ես քեզի սար-
ճանակիս ծայրը չի՞ պիտի կրնամ բռնել:

Այս մուրացկանը ուրիշ մէկը չէր այլ Բիէր Յլօ-
րանը, զոր ժան Շուան զրկած էր թշնամի ուժերն ու
գիրքերը լրտեսելու համար:

Այս բնիկ յետոյ, Բիէր Յլօրան, փոխանակ նորէն
իր առջի տեղը կցկտելով մուրալու, պարսպ տոպրակը
կոնակը զարկաւ, գաւազանը ձեւք առաւ և կողմնակի
փողոց մը մտնելով նեղ ճամբայ մը ելաւ, ուրիկէ ուղ-
ղակի Սօրնիէր գիւղակը կ'ելլուէր: Հոն հասնելուն
պէս՝ ախտոէ մը ներս մտաւ, իշուկի մը կապը քակեց,
ախտոէն դուրս հանեց և վրան հեծնելուն պէս Մաշ-
գուլի ճամբան բռնեց:

Ճիշդ այդ միջոցին Պուֆէյի բանտին գուռները Թօ-
րինեէ մարքիզին և իր գործակատարին վրայէն կը
գոցուէին:

Արիւն խմող կինը յարակէզի մը պէս քիթը արիւ-
նին մէջ խօթած էր...:

ՓՈԹՈՐԻԿԻՆ ՄԷՋ ՇՐԵՇՏԱԿ ՄԸ

Իր ապարանքին ընդարձակ գահլիճ ին մէջ, պատգամաւոր Շանթ խորհրդակցական ժողով կը գումարէր զօրավար Քլէպէրի և Մարսօյի հետ:

Երևքը մէկ թղթածրարներով լեցուն սեղանի մը առջևը նստած՝ մանրօղզնին կերպով քարտէս մը աչքէ կ'անցընէին:

Արտուէն ցուցամառը քարտէսի մէկ կէտին վրայ գնելով յայտարարեց.

— Այս առաւ ստացած տեղեկութիւններուս համաձայն, ժան Շուան իր բանակը վերակազմելու վրայ է և իր բոլոր զինուորները կրանդիէօ լիճին երգերքը հաւաքած է. որով յարձակումը ա՛յդ կողմէն սկսելու և օգնական ուժեր հաւաքելէ առաջ բնաջինջ ընելու է իր բանակը:

— Քաղաքացի պատգամաւոր, ես որ ուրիշներէ աւելի փափաքող մըն եմ ներքին ապստամբութիւնը վերջացած տեսնելու, բնաւ յարմար չեմ տեսներ այդ յարձակումը, զիտեղ առաւ Մարսօ լուրջ և վճռական եղանակով մը: Այդ անատոտ, ճահճային, կանոնաւոր ճամբաներէ զուրկ և ցանկապատներով ու կիրճերով լեցուն երկիրը մեր ուժերուն համար շատ վտանգաւոր կրնայ դառնալ: Մեր հակառակորդները այդ բնական դիրքերէն օգտուելով դարանակալ պատերազմ մը պիտի բանան մեզի դէմ և չի պիտի կրնանք գլուխ կլլալ: Մաշգուլի առումը մեզի սուզի նստաւ արդէն, մեր գործօն բանակին կէսը գրեթէ փճացաւ, մէկ մասն ալ վերաւորուած է, և եթէ այս պայմաններուն մէջ զինուորական սխալ քայլ մը անենք, զիտցած ըլ-

լաք որ ձախողութեան պիտի մասնուինք և մեր զիրքը վտանգի մէջ պիտի իյնայ:

— Չէնքի ընկերս բացարձակապէս իրաւունք ունի, ըսաւ Քլէպէր կորովի շեշտով մը:

— Բացարձակապէս համոզուած եմ որ միայն մէկ միջոց կայ Շուանները յաղթելու, ան ալ անոնց դէմ կանոնաւոր կերպով պատերազմին է: Նախ մէյ մը նկատի պէտք է ունենանք թէ ի՞նչ է անոնց բո՛ւն նկատի պէտք է ունենանք թէ ի՞նչ է անոնց բո՛ւն նպատակը. նանթը գրաւել, այնպէս չէ: Զգե՛նք որքանն որ Լուառ գետին սաղիի եզերքը անցնին, և մենք ալ կազմ ու պատրաստ սաղիի եզերքին վրայ սպասենք: Եթէ այս տեսակէտը ընդունուի ձեր կողմէ, բոլոր պատասխանատուութիւնը ես վրաս կ'առնեմ:

— Ե՛ս ալ, աւելցուց Քլէպէր: Եթէ այդ միջոցին զիմնք, գործերնիս շատ կը դիւրանայ:

Արտուէն թէպէտ չուտ տեղի տուողներէն չէր, քայց նկատելով որ իր գործը հանրապետական բանակին ամենէն հեղինակաւոր զօրավարներուն հետ էր, բնաւ զիտողութիւն չըրաւ և իր լիազօրութենէն օգտուելով չուզեց անոնց զինուորական քայլերը խաչաձեւել:

— Իրաւունք ունիք, ե՛ս ալ կ'ընդունիմ ձեր տեսակէտը, ըսաւ ան, համամիտ գտնուելով անոնց առած խորհուրդին: Ուրեմն անմիջապէս Պրիւթիւս Ակրիգօլային հրահանգ ասմ որ իր լրտեսներուն մէջէն ամենէն ճարպիկները զատելով Մէն Ֆիլիպէր զրկէ, որպէս զի թշնամիին պատերազմական բոլոր շարժումները և յատակադիժները մանրազննին կերպով լրտեսները և յատակադիժները մանրազննին կերպով լրտեսները և մեզի տեղեկագրեն: Այսպէս, կը սպասենք, մինչև որ պատերազմին ժամը գուք որոշէք:

— Եւ ես ալ ձեզ կը խոստանամ Մարսօյին հետ փոշիի պէս օզը հանել զանոնք, եղբակացուց Քլէպէր: Զեռքը թուղթ մը քարտուղար մը գալով ըսաւ.

— Քաղաքացի պատգամաւոր, Յեղափոխական Ատա-
եանին կողմէ մահուան դատապարտուած հանրապետու-
թեան դէմ դաւադրող արքայականներու մէկ ցուցակը
կը բերեմ որ ստորագրէք:

Արտուէն ցուցակը առաւ և սեղանին վրայ գրաւ ու
իր քարտուղարը ճամբելէ յետոյ խօսքը Քլէպէրի և
Մարսօյի ուղղելով ըսաւ .

— Ձեր սուած բացատրութեան համաձայն տեղե-
կագիր մը պիտի խմբագրեմ և Հանրային Փրկութեան
ժողովին պիտի զրկեմ և վստահ եմ որ եթէ հայրենի-
քին և Հանրապետութեան շահերուն համապատասխան
զանէ, պիտի վաւերացնէ այդ տեղեկագիրը:

Յանկարձ պատգամաւորը սարսուռաց: Դէմքը մէկէն
ի մէկ գոյն առաւ...: Քաղքուհի Մարիզ Ֆլէյրիւս ներս
մտնելով զրան սեմին վրայ կայնած էր:

Արտուէն ներս հրաւիրեց զայն: Արիւն խմող կիներ
անոր մօտեցաւ և Մարսօն ու Քլէպէրը բարեւելէ յե-
տոյ՝ յայտարարեց .

— Քաղաքացի Շանթ, լաւ լուր մը կը բերեմ քեզ:
Փախստական իշխաններէն մէկուն լրագրերը ձերբա-
կալել տուի, Թօրինեէ մարքիզը:

— Կը շնորհաւորեմ, քաղքուհի, գոչեց Արտուէն
և իր հրավառ աչքերով զայն լսելի սկսաւ:

— Բայց զուք ժողով ունիք, զբաղուած էք, մեկ-
նիմ ուրեմն... մէջ բերաւ Մարիզ:

— Ամէն օր ազգին մեծ ծառայութիւններ մատու-
ցանող կնոջ մը համար մենք գաղտնիք չունինք, գո-
չեց Արտուէն ընդմիջելով անոր խօսքը: Դո՛ւք ալ կե-
ցէք, որպէս զի տեղեկագրիս բովանդակութեան համա-
ստ կերպով տեղեկակ ըլլաք. այս երեկոյ Բարիզ պիտի
զրկեմ զայն:

Երկու զօրավարները իրենց տեղերը գրաւեցին,
իսկ Մարիզ սեղանին մէկ անկիւնը գրաւեց:

Այն միջոցին երբ Արտուէն գրիչը ձեռքը տեղեկա-
գրին նախագիծերը գրի կ'առնէր և մէկ կողմէն բար-
ձրաձայն կը կարչար, նախկին Քարքֆու կոմսուհին
կամացուկ մը իր առջեւ կը քաշէր մահուան դատա-
պարտուած արքայականներու անուանացանկը և մէջի
անունները մէկիկ մէկիկ աչքէ կ'անցընէր:

Երբ արիւն խմող կիներ իր ընթերցանութիւնը ա-
ւարտեց, նայածքը ուղղեց այն պատուհանին ուրկէ
Պուֆէյի հրապարակին վրայ կը նայուէր:

Կառափնատին պոզպատէ շեղքը առտուան առաջին
ճառագայթներուն տակ կը փայլէր:

Արիւն խմող կիներ մէկ կողմէն մահաշուք ժպիտով
մը կառափնատը կը դիտէր, միւս կողմէն նոր զոհներուն
անունները կը շարէր իր մտքին մէջ:

Ապարանքին միւս սենեակներէն մէկուն մէջ, իր-
բեւ հակասութիւն այս մահասփիւռ տեսարանին, Գլէր,
կիսովին բազմոյն մը վրայ տարածուած, իր ցաւերուն
մէջ թաղուած կը հռոպէր:

Ահա այսպէս, մի'եւնոյն տան մէջ, մի'եւնոյն
տանիքին տակ երկու կիներ կային՝ որոնցմէ մին իր
արիւնոտ նայուածքը արիւնի գաշտին վրայ նետած՝
իր զոհերուն անունները կը համբէր, իսկ միւսը իր
արտասուալից նայուածքը գէպի երկինք ուղղած՝
մարդկային տառապանքին մեղմացումը կը հայցէր իր
Աստուծամէն:

Մին ձիւազ Մարիզն էր, իսկ միւսը հրեշտակ
Գլէրը:

Մայր Վիքթուար և փոքրիկն Նիքօլա անոր վրայ
ձռած՝ կը ջանային մխիթարել զայն:

— Մի՛ լար, աղջիկս, ըսաւ բարի նպարտաձա-
նուհին:

— Քանի որ աղատեցաւ, ինչո՞ւ սասնկ կուլաս
կոր, աւելցուց զեռատի թմրկահարը:

Քայց Գլէր վհատութեան մատնուած գոչեց .

— Մինչև ե՛րբ պիտի տեսէ այս ատելութիւնը :
Վիքթուար այս խօսքին պատասխանը տալու պատ-
րաստուեցաւ , բայց այս միջոցին հրապարակէն վայ-
րագ մոնչիւն մը լսուեցաւ որ օղբ կը թնդացնէր .

Չոզեր սկիեցիւք,
Չոզեր կախեցիւք .
Արիւնք սեսիւք,
Յեսոյ հեռագիւք :

Գլէր ոտտու՛մով մը պատուահանին քով վազեց :
Անվարար հայրենասէրներն էին , որոնք Մաշգուլի ա-
ռու՛մը կը տօնէին և ամբողջ զիւզը պարտելէ յետոյ
կուգային պատգամաւորին պատուահանին առջև կանգ
կ'առնէին և կը պահանջէին որ նոր գլուխներ ալ իյ-
նան կառափնատին առջև :

— Ո՛հ , սա ատելութեան և մահուան աղաղակնե-
րը : Վստահ եմ որ զայն պիտի մտոցնեն , ըսաւ Գլէր :

— Չէ՛ , աղջիկս , չէ՛ , ամէնքը անանկ զիտեն որ
ան արդէն մեռած է , կմկմաց մայր Վիքթուար :

— Վստահ ես :

— Տասն անգամ ըսի քեզի , աղջիկս , չարունակեց
բարի նպարտաճատուհին : Գերիները հրացանի բռնող
զինուորներուն յիսնապետը հրացանի բռնուած զերի-
ներուն ցուցակը հօրդ առջևը կարգացած ատենը . կ'ս
ալ հոն էի : Ականջովս լսեցի , ժազ Քօթըրօյի անունն
ալ կարգաց անոնց մէջը : Հայրդ ալ , երբ որ անոր ա-
նունը լսեց , քիթը բերանը քիչ մը թթուեցուց : Իբաւ
որ խելքս չի հասաւ աս գործին : Գիտնալս գօրավար
Մարսօն ամէն բան կարգի գրած է : Է՛ , ալ մի՛ լար . . . ,
քիչ մը համբերութիւն ունեցիր : Եկո՛ւր , հետերնիս
եկուր , մարդուս կերակուր պիտի տանիմ , մինչև
հիրմիլի կամուրջը գուն ալ օդ մը առած կ'ըլլաս :

Նիքօլա մօրը նշանին վրայ գնաց Գլէրի վերարկուն
և զլիարկը բերաւ , իսկ Վիքթուար զայն տեղէն ե-
րերցնելով ըսաւ .

— Ելի՛ր , աղջիկս , կ'ս ալ մայրդ կը սեպուիմ :

— Իբա՛ւ մայրս ես , պատասխանեց Գլէր մեղամաղ-
ձոտութեամբ ժպտելով :

Եւ պատուական կնոջ ձեռքը սեղմեց , մինչդեռ Նի-
քօլա վերարկուն անոր ուսերուն կը նետէր , իսկ Վիք-
թուար իր ձեռքովը զլիարկը անոր գլուխը կ'անցը-
նէր :

Երեքը մէկ սանդուխէն վար իջնելով ձամբայ ե-
լան , և երբ պահակ զինուորներուն մէջէն կը յառա-
ջանային , տեսան մանկամարդ աղջիկ , մը վերարկու մը
հագած , գլուխը կնգուզ մը անցուցած՝ որուն տակէն
հաղիւ թէ քիթը կը տեսնուէր , երկչոտ քայլերով դէ-
պի իրենց կողմը կուգար :

Այս աղջիկը յանկարծ կանգ առնելով չորս կողմը
աչք մը պտըացուց , յետոյ , մօտենալով երկու զին-
ուորներու , որոնք թմբուկի մը վրայ թուղթ կը խա-
ղային , դողդոջուն ձայնով մը ըսաւ .

— Օրիորդին հետ տեսնուիլ կ'ուզեմ . . .

Աղջիկը տեսնելով որ զինուորները կասկածոտ նայ-
ւածքով մը իրեն կը նայէին , իրար անցած՝ ըսաւ .

— Քաղքուհի Գլէր Արտուէնը տեսնել կ'ուզեմ :

Հանրապետական զինուորները ատանց պատասխան
տալու՝ թշնամական նայուածքով մը անոր երեսն ի
վեր նայեցան , բայց Գլէր իր անունին արտասանուիլը
լսած ըլլալով անոր մօտեցաւ և ըսաւ .

— Գլէր Արտուէնը կ'ս եմ :

Խնդրարկու աղջիկը երբ զայն տեսաւ , քիչ մը
հանդարտեցաւ և իր գլուխի կնգուզը ետին նետելով

Արիւնարբու Կիւր

իր ազնուապետական գեղեցիկ գէժքը երեւան հանեց
և աղետարչ ձայնով մը գոչեց .

— Ես կոմս Գարմօյի աղջիկն եմ, հայրս յեղափո-
խական Առեանին կողմէ մահուան դատապարտուած է :
Բայց հայրս անմեղ է . . . :

Հանրապետական զինուորներուն խումբին մէջէն
հեզնական ծիծաղներ լսուեցան :

— Կ'երզնո՛ւմ, կ'երզնո՛ւմ որ անմեղ է, գոչեց օ-
րիորդ Գարմօյ : Հայրս դաւադրութեանց բնաւ մաս-
նակցած չէ . . . : Ան միշտ մեղի հետ իր Մօլի դղեակին
մէջ կը մնար և ազքաաններուն ու չքաւորներուն միշտ
բարիք կ'ընէր :

Խեղճ աղջիկը ուժասպառ եղած՝ սկսաւ երերակալ :
Գլէր գլխով անոր վրայ՝ բռնեց զայն, մինչդեռ Վիք-
թուար, բարկաճայթ երեսները կախելով սարսափազ-
դու նայուածքով մը թուղթ խաղացող զինուորներուն
նայեցաւ :

— Գիտեմ որ շատ բարի և ազնիւ սիրտ մը ու-
նիք, շարունակեց օրիորդ Գարմօյ բնազգաբար պատ-
գամաւորին աղջկան թեւին կռթնելով : Եւ ատոր հա-
մար եկայ խնդրելու ձենէ որ հօրս մասին բարեխօսէք
ձեր հօրը :

— Ոտքի կեցէք, անգամ մը պիտի փորձեմ, ըսաւ
Գլէր :

Օրիորդ Գարմօյ շնորհակալութիւն յայտնել ուզեց,
բայց պատգամաւոր Շանթի աղջիկը զայն մայր Վիք-
թուարի յանձնելով՝ արագօրէն հօրը ապարանքէն ներս
մտաւ :

Զինուորները յարգական կեցուածքով մը անոր
հետանալը գիտելէ յետոյ՝ այս անգամ առանց բերան-
նին բանալու, զգածուած ու մերամաղձոտ, նորէն ի-
րենց խաղը շարունակեցին :

— Աստուած մաստուած չի կայ . . . բայց . . . եթէ
կայ ալ . . . սա Գլէրը իր հրեշտակն է, մոլտաց նպա-
րավաճառ կինը ակաճներուն տակէն յուզուած շեշտով
մը :

ԵՒ ՓՈԹՈՐԻԿԻՆ ՄԷՋ ՃԻՒԱՂ ՄԸ

Արաուէն, ի ներկայութեան Քլէպէրի և Մարսօյի,
իր խմբագրած տեղեկագիրը բարձրաճայն կարգացած
լմնցուցած էր, երբ Մարիզ մահուան դատապարտուած
ներուն ցուցակը անոր աչքին առջեւը դրաւ :

— Քաղաքացի պատգամաւոր, պէտք չէ որ զին-
ւորական զբաղումները մոռցնել տան քեզ հայրենասի-
րական պարտականութիւնդ, խօսք առաւ արիւն խոռ
կինը : Սա վաւերաթուղթը ստորագրէ : Արգարութիւն
պահանջող ժողովուրդը ասկէ աւելի չի կրնար համ-
բերել :

Եթէ պատգամաւոր Շանթի առջեւ, ի ներկայու-
թեան երկու զօրավարներուն, այս տեսակ ամբարտա-
ւան և հրամայական լեզու մը գործածողը Մարիզ Ֆը-
լէրիւսէ տարբեր մէկը ըլլար, անշուշտ անասնաբար
պարս վնասուած պիտի ըլլար, բայց Արաուէն այն աս-
տիճան անոր լուծին տակ ինկած էր որ, բնաւ չի նըշ-
մարեց անոր գործած ամբարտաւանութիւնը :

Անոր ձայնին մէջ անա՛նկ հմայիչ, անա՛նկ կաշ-
կանդող և անա՛նկ մազնիսացնող բան մը կար որ,
յուզման մէջ կը թաղէր այդ մոլեռանդ աղանդաւորը,
այդ անողօք պատգամաւորը, խուժանին այդ անխիղճ

Շանթը և դայն ձեռքին մէջ կամքէ ու անսկանու-
թեանէ գուրկ գործիք մը կը դարձնէր:

Արտուէն, գծոխային արարածին ներգործած մագ-
նիսական ազդեցութեան տակ ինկած, անմիջապէս
խլիլով անուանացանկը, սկսաւ մէկիկ մէկիկ ապագայ
զոհերուն անունները կարդալ:

Տեղւոյն ազնուականներուն անուններն էին, ու
բոնք արտորական իշխաններու և օտարահպատակներու
հետ դաշնակցած ըլլալու կամ հանրապետական սահ-
մանազրութեան հաւատարմութեան երգում ընել մեր-
ժող կղերականները իրենց տուններուն մէջ պահած ըլ-
լալու յանցանքով ամբաստանուած և օրինազանց նը-
կատուած էին:

Արտուէն լուրջ եղանակով մը դանդաղ դանդաղ
կարդաց անոնց անունները:

— Էրիգուէ, Լաթուշ, Տրէնէք, Գարմօյ, Ռօքֆէյ
(կին), Բիօմէ, Ռուքրատէք, Լահայրի (կին), Գարէյ,
Լահուսէ:

— Այս ջոջերուն ամէ՛նքն ալ ատենին դիւ արհա-
մարհած և նախատած են, կմկմաց Մարիզ:

Եւ չնական ժպիտով մը աւելցուց.

— Ո՛հ, արդեօք երբ անոնց գլուխը կողովին մէջ
ինկած պիտի տեսնեմ:

Մարսօ նոզկանքի նայուածք մը ուղղեց այդ դար-
չելի արարածին... բերանը բանալովը դասը պիտի
տար, բայց Բլէպէր մտերմական նայուածքով մը Մար-
սօյի նայելով հասկցուց թէ լոնդ պէտք էր:

Պատգամաւօր Շանթ անուանացանկը ստորագրելու
համար գրիչը մելանը թաթխեց, բայց յանկարծ Գլէր՝
զուրսէն լսած ըլլալով Մարիզին վերջին բառերը, ներս
խոյանալով գոչեց.

— Ո՛հ, հայր, կը խնդրե՛մ, մի ստորագրէք:
Լուսթիւն տիրեց:



Արիւն խնդ կին, պերճապիւն Մարիզ Ֆլերիւս, Գալսկի
կոմսուհին Բարձնու, այժմ վրիժառու մասնիչ

Արաուէն խիստ կերպով գոչեց .

— Պարտականութեանս մէջ թերանամ, բայց ի նպատակ որո՞ւն :

— Ի նպատակ անմեղի՛ մը, հա՛յր, գոչեց Գլէր քաջութեամբ :

— Անո՛ւնը տուր, հրամայեց պատգամաւորը :

— Կոմս Գարմօյ :

Արաուէն ցանկը աչքէ անցուց . . . : Թերեւս հայրական սիրոյ խանդախտատանքէն մզուած՝ դատապարտեալին թղթածրարը բերել պիտի տար և ինքը անձամբ պիտի քննէր այս խնդիրը, բայց Մարիզ ժամանակ չի ձգեց անոր ատելութեամբ լեցուն հեղինական նուածքով մը Գլէրի նայելով՝ գոչեց .

— Քաղաքացի՛, ամբասիր ու անբիծ եղիր : Քու վեհանձու թիւնդ չարաչար գործածել կ'ուզին, զգուշացի՛ր : Գարմօյ կոմսը ազգին ամենէն վատնաւոր թըշնամիներէն մէկն է :

Գլէր այս խօսքերուն դէմ բողոքել ուզելով գոչեց .

— Գարմօյ կոմսը իր գղեակէն բնաւ դուրս ելած չէ և չքաւորներուն հանդէպ ալ միշտ բարի և սոսառձեռն եղած է : Եթէ չեն հաւատար, թող քննութիւն մը բանան . . . :

— Ապտամբներուն և գաւաճաններուն դատը պաշտպանելը քեզի չէ՛ մնացեր, գոչեց քաղցուհի Մարիզ իշխանաբար անոր խօսքը կարելով :

Գլէր հօրը վրայ ծոնցաւ : Շանթ իր ստորագրութիւնը դրած էր արգէն և իր շեղ ենթադրիծը պիտի քաշէր :

— Հա՛յր, հա՛յր. դի՛ս մտիկ ըրէք, գոչեց աղնուասիրա աղջիկը վերջին փորձ մը ընելով :

Բայց ենթադրիծը քաշուած էր արգէն :

Յետոյ զանգակ մը հնչեցուց :

Ասոր վրայ, Գլէր Մարիզ Ֆլէրիւսի գտնալով գոչեց .

— Չափէն աւելի քարտիրա էք, և զիտցած եղէք ար օր մը գլխնուդ փորձանք պիտի բա՛նար :

Մարիզ կատաղութենէն սարսուց և երբ աչքը չորս կողմը պտըացուց, տեսաւ որ Մարսօ արհամարհական նայուածքով մը իրեն կը նայէր :

— Քաղաքացի պատգամաւոր, մինչեւ ե՞րբ աղջիկանդ անարգական խօսքերը մտիկ պիտի ընեմ, գոչեց Մարիզ :

Արաուէն յօնքերը պոստած ոտքի ելաւ և չոր, այլ ջղայնացած շեշտով մը ըսաւ .

— Դո՛ւրս ել, Գլէր, և մէյ մըն ալ սասնկ խնդրանքներու համար հոս գալդ չի տեսնեմ :

Մանկամարդ աղջիկը գլուխը խոնարհեցնելով դրան կողմը ուղղուեցաւ . . . բայց հաղիւ թէ քանի մը քայլ առած՝ վրան գէշութիւն գալով ոտքերը գողալ սկսան : Մարսօ իրեն մօտեցաւ և թեւը անոր տուաւ . . . իսկ Գլէր վար չիջնալու համար անոր թեւին կռթնեցաւ :

Մինչդեռ Մարսօ Գլէրի թեւը մտած երկուքը մէկ կը հեռանային, Մարիզ սարսափելի նայուածքով մը անոնց ետեւէն նայեցաւ, իսկ Քլէպէր նախկին կոմսուհիին քովէն անցնելով սկուային տակէն մուտաց :

— Վա՛ղր :

Թշուառական կինը չրթունքները խածաւ : Մարսօ՛ զինքը ատելը և Գլէրի նախապատուութիւն տալը բաց է ի բաց յայտնի ըրած էր, իսկ Քլէպէր համարձակօրէն կ'արհամարհէր զինքը :

Բայց իր կատաղութիւնը քիչ տեսեց. Գլէրը նախանձիլ և առել սկսաւ :

Աշխարհքի մէջ Գլէր իրեն համար ամենէն սոսկալի, ամենէն սարսափելի արարածը եղած էր հիմա, որ մէկէն ի մէկ մէջտեղը ելլալով իր ձեռքէն կը յափշտակէր այն երիտասարդ զօրավարը որուն աչք անկած էր ինքը :

Մարսօ գինուորական ասպարէզին մէջ փայլուն ապագայ մը կը խոստանար և Մարիզ իր փառասիրական ցանկութիւններուն գոհացում տալու համար կը փափաքէր զայն ձեռքը անցընել, բայց ահա մէկէն ի մէկ զայն կը յափշտակէին իր ձեռքէն. ո՞վ էր այդ աներեսը:

Թէպէտ Գլէր Մարսօն չէր սիրեր, իր խելքը միտքը ժաղի վրայ էր, բայց Մարիզի համար միեւնոյն բանն էր. չէ՞ մի որ ան էր պատճառը, չէ՞ մի որ Մարսօյի սիրտը Գլէրի պատկերով լեցուած էր և հոն պարագ սեղ չէր մնացած իր պատկերը տեղաւորելու համար:

Աւերինն Մարիզի ուրիշ բան չէր մնար ընելիք այլ օձիքը ազատել այդ հակառակորդուն հիին ձեռքէն:

Բայց ի՞նչպէս զայն մէջտեղէն պիտի վերցնէր: Ծակաւին բան մը որոշած չէր:

Արտուէն իր ազջիկը շատ կը սիրէր, որով վտանգաւոր պիտի ըլլար հօր մը զգացումներուն դպիլը, բայց ահա Գլէր իր անխոհեմ միջամտութիւններովն ու բանակցութիւններովը առիթը կը ստեղծէր:

Ահա այսպէս, քաղքունի Ֆլէրիւս Արտուէնի մօտեցաւ և ըսաւ.

— Քաղաքացի պատգամաւոր, կարծեմ թէ ազջիկդ եթէ Բարիզ զրկելու ըլլաս՝ գէշ չես ըներ:

— Ինչո՞ւ գոչեց Շանթ սարսուարով:

— Որովհետեւ բացէ ի բաց կը տեսնես որ Նանթ գալէն ի վեր քու գաղափարներուդ ու սկզբունքներուդ հակառակ ընթացք մը բռնած է: Քիչ մը առաջ չի տեսա՞ր ինչպէս պաշտպանեց Գարմօյը:

— Այո՛, տեսայ և յանգիմանեցի զինքը ըսելով որ մէյ մըն ալ ատանկ խօսքեր չի բանայ ինձի:

— Հը՛, հօգ մի՛ ըներ, անիկա իր միտքը գրածէն չի հրամարիր:

— Չեմ կարծեր որ...:

— Իսկ ես բաձարձակապէս համոզուած եմ: Քու ազջիկդ սրտով արքայական է:

— Ո՛չ, ո՛չ, անկարելի է, ես զայն աղէկ կը ձանջնամ. ազջիկս քաղաքական օեէ հոսանքի չի պատկանիր, քաղաքականութենէ բնաւ չի հասկնար, և եթէ մահուան դատապարտուած կոմսին անպարտ արձակելիք խնդրեց, պարզապէս անոր վրայ խղճացած ըլլալուն համար էր:

— Գու՛ն անոր հայրն ես, ի հարկ է զայն պիտի պաշտպանես, ատոր բան մը չեմ կրնար ըսեր, բայց զգուշացի՛ր:

— Ի՞նչ բանէ պիտի զգուշանամ:

— Վերջ ի վերջոյ Գլէր քու զլխուդ փորձանք մը պիտի բանայ: Արդէն քաղաքին մէջ տարաձայնութիւններ կը չըջին թէ քաղաքացի Շանթի ազջիկը կղերականներուն և ջոջերուն հետ յարաբերութեան մէջ է: Մինչև անգամ շատեր կը պատմեմ թէ ան իր դարակներէն մէկուն մէջ Յիսուսի պատկերը, խաչ մը և աղօթագիրք մը պահած է:

— Սո՛ւտ է:

— Ո՛չ, իբաւ է: Երէկ գիշեր իր սենեակին բանալիին ծակէն տեսայ որ չրթունքները այդ աւելորդապաշտական առարկաններուն կը դպցնէր. խաչը և պատկերը կը համբուէր և աղօթագիրքը կը կարգար: Մեր թշնամիներն ալ արդէն նոյն բանը կ'ընեն. ուրեմն ինչ տարբերութիւն Գլէրի և մեր թշնամի Շուաններուն միջև:

Այս անգամ Արտուէն դեմի դեղին կտրեցաւ: Ամբաստանութիւնը կողմնակի չէր այս անգամ, այլ ուղղակի: Անշուշտ քաղքունի Մարիզ Ֆլէրիւս չէր ստած:

Այս առիթէն օգտուելով, արիւն խնդ կիներ շարունակեց.

— Գիտեմ թէ դուն տկար մէկը չես և իրաւունք չունիմ քեզ դաւաճանի մը կարգը դասելու, բայց դուն հոս Հանրային Փրկութեան ժողովը կը ներկայացնես, այսինքն յեզափոխութեան հոգին... և պէտք է որ դուն ամէն կասկածէ վեր մնաս: Բրուտտը յի, Բրուտտը՝ որ իր սրգին զոհեց իր գաղափարին սիրուն:

Արտուէն բարկութեան ճիչ մը արձակեց:

Մարիզ այլանդակ ժպտով մը շարունակեց.

— Աղջիկդ գլխատել տուր ըսած չունիմ, բայց պէտք է որ ան ասանկ լուրջ գործերու մէջ մտնելով քու հեղինականութիւնդ պակսեցնէ. միայն վճռական և անյողողդ ըլլալով է որ պիտի կրնաս ի գլուխ հանել քու այս նուիրական առաքելութիւնը. և ի վերջ ակարութիւն մը ցոյց տաս, քեզի նանթ զրկողներուն յանդիմանութեան և մինչև անդամ պարսաւանքին արժանի կ'ըլլաս վերջը: Ահա այս պատճառաւ, նկատի առնելով քու շահերդ և աղջին շահերը, խորհուրդ կուտամ քեզ որ աղջիկդ քովէդ հեռացնես, և կարելի եղածին չափ շուտ: Բամբասել սկսած են արդէն, և գէշ հետեւանքներ տալէ առաջ՝ վերջ մը տալու ևս այդ բամբասանքներուն:

— Այդ մասին պիտի մտածեմ, յայտարարեց պատգամաւորը երեսները կախելով:

Այս միջոցին բազէն սրտամճլիկ աղաղակ մը լըսուեցաւ: Մարիզ և Արտուէն պատուհանին քով վազեցին:

Մանկամարդ աղջիկ մը դեռին տարածուած էր:

Օրիորդ Գարմօյն էր այս աղջիկը:

Գլէր, մայր Վիքթուար և թմրկահար Նիքօլա անոր օգնութեան հասած էին:

Խնդճ աղջիկը պագամաւորին, աղջկան Մարսօյի հետ դուրս ելլալը տեսնելուն պէս՝ անոր քովը վազած

ու սրտառուչ նայուածքով մը անոր նայած էր: Իբրև պատասխան, Գլէր միայն «աւա՛ղ, բան մը չի կրցայ ընել» ըսած էր, և կոմս Գարմօյի աղջիկը սրտին կսկիծէն մարած գեղին փռուած էր:

Ատոր վրայ, Մարսօ Բլէպէրի թեւը բռնելով և անոր ցոյց տալով քաղքուհի Ֆլէրիւսը որ պատուհանին մէջ Արտուէնի թեւին կոթնած էր, գողգողով ըսաւ.

— Սա լիբը կնոջը նայ', արդեօք ե՞րբ թափել տուած արիւնը զինքը պիտի խեղդէ:

— Մարսօ', բարեկա՛մս, եթէ գլուխդ վրայ տալ չես ուզեր, սրտէդ անցած դարձածը երեւան հանելէ զգուշացիր, ըսաւ Բլէպէր:

Բայց Մարսօ թշնամական նայուածքով մը նախկին կոմսուհի Գարքֆուի նայեցաւ, իսկ Գլէր, այս միջոցին օրիորդ Գարմօյը կը խնամէր:

Արիւն խմոզ կրնը չրթունքները պատգամաւոր Շանթի ահանջին մօտեցնելով շարամօթէն մուտաց.

— Տեսա՞ր, աղջիկդ տեսա՞ր, արքայականները կը խնամէ կոր: Այ այոչափը կարծեմ թէ կը բաւէ:

Այս խօսքին վրայ, պատգամաւոր Շանթ գողգողուն ձայնով մուտաց.

— Գլէ՛ր: Աղջի՛կս: Խն՛դճ աղջիկ...:



ԲԶԻԿ ԲԶԻԿ ԵՂԱԾ ՍԻՐՏԵՐ

Փան Շուան իր բանակատեղին հաստատած էր Կը-
բանլիէօ լիճին եզերքը, հանդուցեալ կոմս Քարքֆուի
այսինքն Մարիզի աներձօր և Թօրինէէ մարքիզուհիին
հօր Կրանա-Թուր զղեակին մէջ: Այս զղեակը կոմսին
և կոմսուհիին մահէն ի վեր արնակ մնացած էր:

Փան Շուան, զղեակին բարձր սանդուխներուն
վրայ ոտքի կեցած, շրջապատուած ազնուականներէ և
կորովի զէմքով քահանայէ մը որ միւսներուն պէս
ի՛նքն ալ իր կուրծքին վրայ լաթէ կարմիր սիրտ մը
և խաչ մը կարած էր, զղեակին վարի կողմէն գունդ
գունդ անցնող զինուորները աչքէ կ'անցրնէր:

Մաշգուլի պարտութիւնը արքայականներուն ո՛չ
եռանդը պակսեցուցած էր և ո՛չ ալ խանդավառու-
թիւնը:

Հարաւի բոլոր արքայականները պատասխանելով
իրենց պետին կոչին, վազեր եկեր էին:

Չինուորական ջոկատները տողանցք կատարելով
Փան Շուանի և իր սպայակոյտին առջեւէն կ'անցնէին
և կարգ ու կանոնով կ'երթային կանգ կ'առնէին իրենց
յատկացուած տեղերը:

Չոկատներէն մէկ քանին իշխանուհիներու և կոմ-
սուհիներու ձեռքով գաղտնի կերպով հիւսուած շուշա-
նակիր ձերմակ արքայական գրօշակներ պարզած էին,
իսկ ուրիշներ՝ եկեղեցական խաչաւոր եռանկիւն գը-
րօշակներ:

Բոլոր զինուորները դատակներուն մէջ մէկ ա-
ղօթքի համրիչ փաթթած էին: Հրացաններուն փողե-
րը, սուրիններուն և մանդազներուն շեղքերը, գլուխը

գամեր գամուած գաւազաններուն գամերը արեւուն ճա-
ռագայթներուն տակ կը փայլէին:

Ամէնուն զէմքէն ան յայտնի կ'ըլլար որ, բոլորն
ալ վայրենարար կոռելու պատրաստ էին:

Խորհրդաւոր բան մը կը թռչկոտէր անոնց զինուն
վրայ, իրենց հաւատքին սուրբ հողին թերեւ և կամ
յաղթելու կամ մեռնելու կամքի ուժը:

Երբ բոլոր զինուորական ջոկատները իրենց տե-
ղերը գրաւեցին, Փան Շուան իր կոչին պատասխա-
նող այդ հաւատացեալներուն վրայ գոհունակութեան
նայուածք մը նետեց, և յետոյ, թրթուռն ձայնով մը
ըսաւ.

— Տղաքներ, պատասխանելով իմ կոչիս՝ վազեցիք
եկաք. Լա՛ւ ըրիք: Անշուշտ ինչպէս որ ձենէ առաջ
մեր սուրբ գատին համար իշնող մեր եղբայրները ի-
րենց պարականութիւնը ճանչցան, զո՛ւք ալ ձեր պար-
տականութիւնը ճանչնալով՝ եկած էք բոլոր արքայա-
սականութիւնը նետելու մեր սուրբ հողե-
րէն: Աղատութեան անունով խօսելով ի՞նչ ըրին այդ
սրբապիղծները, ուրիշ ոչինչ այլ միայն խլեցին մեր
ձեռքէն իրար սիրելու և իրարու վրայ գուրգուրմու-
իրաւունքը և ոտքի տակ առին մեր պաշտամունքին
առարականները: Ուրեմն մեր սիրտերը իրարու փաթթուած
են և իրարու համար կ'ապրին...: Միացած ենք, չպիտի
ձգենք որ մեղ բնաջինջ բնեն: Այսօր վտանգի ահա-
զանգն է որ կը հնչեցնեն մեր զանգակատունները,
բայց քիչ ատենէն յաղթանակի և ձերբազատման ու-
րախալուր զօղանջիւններ պիտի արձակեն անոնք չորս
հովերուն...: Երգո՛ւմ բնենք ուրեմն բարեկամներս,
այո՛, ամէնքս ալ երգո՛ւմ բնենք կոռելու մեր թագա-
ւորին և մեր Աստուծոյն համար:

— Կ'երդնո՛ւնք, կ'եր ընո՛ւնք, պոռացին չորս հա-
զար կուրծքեր միաբերան :

Ծերունի աւագերէց հայր Ռընօն որ ժան Շուանի
քով ուռքի կեցած էր, ձեռքը զինուորներուն վրայ
երկարեց... : Ամէնքը մէկէն ծունկի եկան :

Եւ չորս հազար շրթունքներ սկսան ազօթք մը
մըմնջել այնպիսի ձայնով մը որ մօտաւոր փոթորիկը
գուժող ամենի ծովու մը մոնչխունին պէս հետզհետէ
սպառնալից կը դառնար :

Այս միջոցին, գղեակին գեանայարկին վրայ, ճոխ
էերպով կահաւորուած ընդարձակ սրահի մը մէջ, ժազ
Քօթըրօ, նիհարցած, գէմքը գեփ գեղին կտրած, ան-
կողմի մը մէջ հանգիստ կ'առնէր :

— Թօրինե՛է մարքիզուհին անոր բարձին, գլուխը
նստած, գլուխը բարձին, ի'նքն ալ կը հանգչէր :

Ժան Շուան զաւակը իր բանակատեղին բերելէն ի
վեր, մանկամարդ կինը գիշեր ցերեկ անոր անկողինին
գլուխէն բնաւ չէր բաժնուած :

Ժազ, ամբողջ չարաթ մը մահու և կենաց մէջ
խարխափելէ յետոյ, մարքիզուհին անխոնջ ջանքե-
րուն և խնամքներուն չնորհիւ վերջապէս վտանգէ ա-
զատած էր :

Երկուքին ալ գէմքին վրայ գեղեցիկ երազներու
պատկերը կը ցուար : Երկուքն ալ սիրային երազներ
կը անսնէին : Ժազ Գլէրը կ'երազէր, որ իր վրայ ծուռ
իրեն կ'ըսէր .

— Ես հոս եմ, մի՛ վախնար այլեւս բնաւ չպիտի
զատուիմ քու քովէդ :

Իսկ Թօրինե՛է մարքիզուհին իր ամուսինը կը տես-
նէր, որ զինքը գրկած կը մըմնջէր .

— Փոթորիկը անցաւ, նորէն իրարու պիտի միա-
նանք և ալ ասկէ վերջ ոչ ոք պիտի կրնայ խափանել
մեր երջանկութիւնը :

Բայց անա ճիշդ այս միջոցին ժան Շուան՝ քահա-
նային հետ ներս մտաւ սրահէն :

Մարքիզուհին անմիջապէս արթնցաւ, և երեքը
մէկէն ժազի ուղղեցին իրենց նայուածքը :

Ժազ, ժպիտը շրթունքներուն վրայ իր երազը կը
չարունակէր :

— Այսօր աւելի աղէկ է, խօսք առաւ արիկին Թօ-
րինե՛է : Բաւական ուժ առաւ, կարծեմ թէ այսօր կրնայ
քաղելու սխիլ :

Ժան Շուան զաւակին մօտեցաւ և պահ մը հպար-
տութեամբ գայն զիտեց, յետոյ, հայր Ռընօյի դառնա-
լով յուզումնալից ձայնով մը ըսաւ .

— Հերոս մըն է, աէր հայր :

— Սո՛ւրբ մը, կ'մկմաց քահանան :

— Նահատակ մը, ըսաւ միաքէն մարքիզուհին :

Ժազ աչքերը բանալով երբ հայրը տեսաւ, դան-
գազօրէն ելաւ նստաւ անկողինին մէջ :

— Քաջ զաւակս, հերոս մը ըլլալդ յայտնի ըրիր,
խօսք առաւ ժան Շուան : Նոր բանակ մը կազմեցի և
քիչ ատենէն Նանթի վրայ պիտի քալենք : Զանա՛ որ
չուտ մը աղէկնաս և մերիններուն մէջ քու տեղդ զը-
րաւեց :

Ժազ ձերունի հրամանատարին ձեռքը բռնելով ըսաւ .

— Հայր, խօսք տուէք ինձի որ երբ պօրավար
Մարսօն ձեր ձեռքը իյնայ՝ ազատ պիտի սրձակէք զայն :

— Ինչո՞ւ, հարցուց ժան Շուան յօնքերը պոստելով :

— Անոր համար որ ան ազատեց զիս մահէն :

— Կարծեմ թէ պատգամաւոր Շանթ հրաման տը-
ւած էր բոլոր գերիները հրացանի բռնել :

— Այո՛, ճիշդ է, բայց... :

Ժազ խօսքը կարեց : Գլէրի անունը չէր կրնար
յիշել : Եթէ անոր անունը տար և պատմէր թէ Մարսօ
Գլէրի խնդրանքին վրայ էր որ զինքը ազատ արձա-

կած էր, տակաւին անոր վրայ սէր ունենալը յայտնած պիտի ըլլար:

Եւ պահ մը մտածելէ յետոյ շարուակից.

— Բայց... զօրավար Մարսօ միջամտելով ազատեց զիս և մինչև սահմանադրուիսը բերաւ: Սա ալ ըսեմ որ, հայր, երբ ինքզինքս անտառէն ներս նեակելու վրայ էի, Մարսօ ըսաւ ինձի «հիմա գնա՛ ըսէ քու բարեկամներուդ որ, իրա՛ւ, զօրավար Մարսօն թէպէտ իրենց անյողող թշնամին է, բայց երբէ՛ք իրենց դահիճը չի պիտի ըլլայ»: Ահա ատոր համար, հայր, չե՛մ ուզեր որ ատանկ ազնիւ ու վեհ սիրա ունեցող մարդ մը մեր գնդակներուն տակ փչէ իր շունչը:

Ժան Շուան մտածել սկսելով մտտաց.

— Ըսել է հանրապետականներուն մէջն ալ ազնիւ և բարի սիրտով մարդիկներ կան եղեր:

— Այնպէ՛ս ինչպէս որ արքայականներուն մէջն ալ կան, պատասխանեց Ժազ:

Ժան Շուան լսեց: Կը մտածէ՛ր...:

— Խօսք կուտա՞ք, հայր, պնդեց Ժազ:

— Կը խոստանամ, զաւակս, պատասխանեց Պողոս պատէ մարդը:

— Շնորհակալ եմ, հայր:

Այն միջոցին երբ հայր ու ազայ իրարու ձեռք կը սեղմէին, զիւզացի մը, փոշիներու մէջ թաթխուած, արիւն քրտինքը մտած, հեւալով սենեակէն ներս խուժեց:

Այս զիւզացիին ետեւէն բազմաթիւ ազնուականներ գէն ի ձեռին ներս խուժեցին սենեակէն: Ամէնքն ալ չափէն աւելի յուզուած և վրդովուած կ'երեւէն:

Գիւղացին Բիէր Ֆլօրանն էր, Բիրմիլի կամուրջին վրայ անցորդներէն ողորմութիւն խնդրող մութացկաւոր, որ զողոճուն ու հատկաւր ձայնով մը ըսաւ.

— Հրամանատար, պարոն Թօրինեէ մարքիզը այս

առտու Նանթի մէջ Բիրմիլի կամուրջին վրայ ձերբակալեցին: Երեւցածին նայելով մարքիզին նպատակը հոս մեր քով գալ էր:

— Մ'հ, Աստուած իմ, գոչեց մարքիզուհին ինքզինքը Կորսնցնելով:

— Մարիզ Ֆլէրիւսը մասնեց զայն, ապա թէ ոչ առանց ձանջուելու պիտի անցնէր կամուրջէն և հիմա մեր մէջը պիտի ըլլար, շարունակեց Բիէր Ֆլօրան:

Յուսահատութեան և վիշտի ազաղակ մը թռաւ մանկամարդ կնո՛ղ շրթունքներէն և ոտքի վրայ կենալու ուժը կորսնցնելով՝ վար չիյնալու համար հայր Ռընօյի կոթնեցաւ և աղքու եղանակով մը մըմնջեց:

— Պարոններ, կ'առաջարկեմ որ այդ թշուառական կինը մահուան դատապարտէք:

Բոլոր ազնուականները հաւանութիւն յայտնեցին: Անոնցմէ մին գոչեց.

— Զայն մեղցնելու գործը ո՞վ վրան պիտի առնէ:

— Ե՛ս, պատասխանեց Ժան Շուան սարսափ տրտուող շեշտով մը:

— Բայց իմ ամուսի՛նս ո՞վ պիտի ազատէ, մըմնջեց տիկին Թօրինեէ պաղատական ձայնով մը և սկսաւ հեծկտալ:

— Աստուած, կմկմաց քահանան:

— Աստուած և մե՛նք, մոռցեց Ժան Շուան:

Բայց անոր ձայնին մէջ այն տեսակ ուժգին ու հաւատաւոր շեշտ մը զրուած էր որ, զժբաղղ կինը զգաց թէ յոյսի նշոյլ մը կը սողոսկէր իրմէ ներս:

— Եկէ՛ք, պարոններ, գոչեց Ժան Շուան ազնուականներուն:

Եւ ամէնքը մէկ առանձին ձգելով հիւանդն ու իր հիւանդապահուհին, հեռացան:

Ատոր վրայ ժող անկողնին մէջ ելաւ նստաւ և իր ցաւն ու վիշտը մոռնալով, սիրտը բզիկ բզիկ եղած տիկին Թօրիննէի նայեցաւ և ակռաներուն տակէն փսփսաց .

— Խեղճ կին... :

Երկու սիրտեր կային հոն, երկուքն ալ բզիկ բզիկ եղած... :

ԵՍ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆ ԵՄ...

Այն իրիկունը քաղքունի Մարիզ Ֆլէրիւս իր ապարանքին մէջ Մաշգուլի յաղթանակը կը տօնէր : Հացկերոյթ մը սարքած էր և Նանթի յեղափոխական բուրբ բարի ծաղիկները հոն հրաւիրած էր :

Այրերը պատասխանած էին իր հրաւերին, բայց կիները մեծ մասամբ անպատասխանի ձգած էին հրաւերը և բնազդաբար չէին ուղած չփման մէջ գանուել «կառափնատին սպասուհին» հետ :

Քաղքունիներէն շատերը այլեւայլ ստարկութիւններ ընկելով չէին գացած հրաւերին և քաղքունի առնուած էր իրենց այս ընթացքէն :

Քաղաքացիներէն շատերն ալ նախկին կոմսուհիին ազգեցութենէն օգտուելու և մէկ քանին ալ անոր ժպտին շնորհը վայելելու համար գացած էին միտջն :

Բայց խառնակիչ կինը ո՛չ անոնց թափած չղոքորութութիւններուն ականջ կախած ունէր և ո՛չ ալ անկապակից խօսքերուն, այլ՝ աչքերը ուղղած կոնակի վրայ բաց եզոզ դուռներուն, կարծես թէ անհամբուրութեամբ մէկու մը կը սպասէր :

Պատգամաւոր Մաքսիմ Արտուէն, սրահին անկիւններէն մին քաշուած, բանակին պարէնի հայթայթիչներէն քաղաքացի Բօթարմէն մտիկ կ'ընէր : Բօնթարմէ, իր արտաքին երեւոյթովը նախկին բարեկեցիկ միջակորեարի մը կը նմանէր :

— Քաղաքացի պատգամաւոր, իմ խիղճս հանդարտ է և ձեռքերս ալ անբիծ են, կ'ըսէր ան : Պատերազմի միջոցին չարաշահութիւններով հարստութիւն գիզողներէն չեղայ, այլ ընդհակառակը ունեցածս ազգիս տուի : Ահա ատոր համար, չատ գո՞ն եմ և սիրտս ալ հանդարտ է : Հանրային Փրկութեան Ժողովը և պատերազմական նախարարութիւնը Բարիսէն զիս կանչեր է անցեալիս մասին տեղեկութիւններ ստանալու համար, կ'երեւի թէ զրպարտութիւններ բրած են իմ մասիս. բայց ես սրտի կատարեալ հանդարտութեամբ կրնամ անոնց առջեւ ելլալ և ինքզինքս արդարացնել. վաղը պիտի երթամ :

— Տարօրինակ բան, բնաւ տեղեակ չեմ ատոնցմէ, յայտարարեց Արտուէն :

— Գիտեմ, քաղաքացի պատգամաւոր, գիտեմ որ դուն ինծի հանդէպ յարգանքի մէջ բնաւ չի թերացար, որուն համար շատ շնորհակալ եմ :

— Ես մարդիկը իրենց գործքերէն կը դատեմ, յայտարարեց Շանթ, և մինչև հիմա քու ընթացքիդ մէջ ուէ կասկածելի ու անվայել բան չի տեսայ :

— Ազատութեան և Արդարութեան դատին հաւատարիմ ծառան եղած եմ միշտ և այդ դատին համար ոչ միայն ունեցածս տալու պատրաստ եմ, այլ նաև արևանս վերջին կաթիլն ալ թափելու :

Եւ ջանալով ծածկել իր աչքերուն մէջի մասնօգութիւնը, բանակին պարէնի հայթայթիչը աւելցուց .

— Քաղաքացի պատգամաւոր, գրոյց կը չըջի թէ Լուսոս գետին միւս կողմի ճամբաները Շուանները զբրտած են, որով չի պիտի կրնամ մայրաքաղաք երթալ և ինքզինքս արդարացնել :

— Հոգ մի՛ ըներ, ես քեզի պէտք եղածին չափ զինուոր կ'ոնտամ, պատասխանեց Շանթ :

Բօնիթարմէ շնորհակալութիւն յայտնելու պատ-
րաստուեցաւ, բայց Մաքսիմ Արտուէն ժամանակ չի
թողուց և իր խօսակցին քովէն զատուելով գեղեցիկին
Մարիզի կողմը քալեց: Մարիզ, աչքերը միշտ զուռին
կողմը, նոր հիւրերու կը սպասէր... երբ զինուորա-
կան մը ներս մտնելով և ուղղակի տանախրուհիին մօ-
տենալով ըսաւ.

— Քաղքուհի, Գլէպէր և Մարսօ զօրավարները ներու-
զութիւն կը խնդրեն ձեռքէ որ զործ ունենալնուն հա-
մար չի պիտի կրնան ներկայ գտնուիլ այս երեկոյթին:

Մարիզ բարկութեան շարժում մը ըրաւ: Խառնա-
կիչ կիներ Արտուէնի մօտենալով և անոր թեւը բռնելով
ըսաւ.

— Քեզի հետ խօսիլ կ'ուզեմ:

Այս ըսելով քովի պզտիկ սենեակը առաջնորդեց
զայն և զրան վարագոյրը իրենց վրայէն գոցեց:

Հոն, այր մարդերը գլխէ հանող նայուածքով մը
ուղղակի անոր աչքերուն մէջ նայելով ըսաւ.

— Դարձեալ քեզի ձանձրոյթ պիտի տամ, բայց
քեզ այնքան կը սիրեմ և մեր բարեկամութիւնը այն-
քան անքակտելի է որ, պէտք է ամէն բան ըսեմ քեզի:

Եւ այս խօսքերուն պատգամաւոր Շանթի վրայ
զործած ազդեցութիւնը չի նշմարել ձեւացնելով շա-
րունակեց.

— Ազջկանդ մասին է ըսելիքս: Գիտեմ, զիտեմ
որ զայն շատ կը սիրես... զուն քանի քանի անգամ-
ներ քու բերնովդ ըսած ես որ մեր անձնական շահերն
ու զգացումները պէտք է զոհենք ազգային շահերուն
համար:

— Իմ ընթացքիս մէջ իմ սկզբունքներուս հակա-
ռակ ի՞նչ տեսար որ այդ խօսքը կ'ըսես ինձի:

— Ոչինչ, պատասխանեց Մարիզ Ֆլէրիւս: Բայց
զիտեցած եղիք որ քու հայրական սէրդ քեզ կուրցնե-

լու վրայ է: Գլէրի հանդէպ շատ ակար վերաբերմունք
մը ցոյց կուտաս, մինչդեռ քու արքանապատուութիւնդ
և անկաշատութիւնդ պահելու համար պէտք էր որ տար-
բեր կերպով վարուէիր:

— Բայց չի տեսար որ անցեալ օր ինչպէս իր
խնդրանքը մերժեցի:

— Այո՛, կ'ընդունիմ, բայց ամէն մարդ ի-
մացաւ եղածը և վաղը քանի մը վկաներ կ'ելլեն մէջ-
տեղը և ազջիկդ կ'ամբաստանեն՝ ըսելով որ հանրապե-
տութեան թշնամիներուն հետ դաշնակցած է, անոնց
կ'օժանդակէ և զուն ալ անոր կ'օգնես:

— Ես անոր օժանդակած չունիմ որ:

— Այո՛, օժանդակած չունիս, բայց մեր բարե-
կամները ճիշդ ատոր հակառակը կ'ըսեն կոր:

— Թո՛ղ երթան ուղածնին ըսեն, քանի որ ըսած-
նին սխալ է, ո՛չ մէկ արժէք պիտի ունենայ:

— Կրնայ ըլլալ, բայց ամէն պարագայի մէջ ազ-
ջրկանց բռնած ընթացքը գայթակղութիւններ
տառջ բերած է, ամէն մարդ անոր մասին կը խօսի
հոս ու հոն: Արդէն քեզի քանի մը անգամ ըսի,
«Բեր Տիւժեկ» անունով լրագիրը իր յարձակողականը
սկսած է քեզի դէմ ամէն օր գլխուդ սարսափելի ամ-
բաստանութիւններ տեղացնելու վրայ է:

— Ես ալ պէտք եղածին պէս պատասխանեցի այդ
զրոյարտութիւններով լեցուն թերթուկին:

— Պատասխանեցի՞ր, աղէ՛կ, բայց այսօրուան
զրածը կարգացի՞ր. ա՛յո, կարգա՛ւ:

Մարիզ այս ըսելով սեղանին վրայէն թերթը առաւ
և Արտուէնի երկարեց:

Պատգամաւորը առաւ զայն և կարգաց.

«Քաղքուհի Գլէր օրէ օր աւելի տաք վերաբեր-
մունք ցոյց կուտայ ազնուականներու հանդէպ: Ասկէ

քանի մը օր առաջ հանրապետութեան ամենէն սխերիմ թշնամիներէն կոմս Գարմօյի ազատ արձակումը խնդրեց իր հօրմէն և այդ գաւաճանին աղջիկը իր ձեռքովը հրապարակաւ խնամեց ու մխիթարեց:

«Քաղքուհի Գլէրի զոյց առած այս համարձակութիւնը մեծ զարմացում կը պատճառէ մեզ և պիտի հարկադրուինք պահանջել հօրմէն որ ամբաստանութեան տակ առնէ իր աղջիկը:

Մաքսիմ Արտուէն բարկութեամբ ձմռթկեց թերթը:

— Ինչպէս որ անգամ մը ըսի արդէն, եթէ Գլէրը Բարիզ գրկես, կարծեմ խոհեմութիւն ըրած կ'ըլլաս: Գիտեմ որ իմ այս խօսքերս լսելով սիրազ բղիկ բղիկ կ'ըլլայ, բայց քեզի հանդէպ ունեցած մեծ բարեկամութիւնս կը ստիպէ զիս որ անգամ մըն ալ տամ այս խորհուրդը: Գիտցած եղիր որ Հանրային Փրկութեան Ժողովը բնաւ չի պիտի ներէ որ իր անդամներէն մին ապիկար ու թոյլ գտնուի:

— Յանդիմանութեան արժանի ուէ գործ չեմ ըրած և մարդէ չեմ վախար, պատասխանեց Արտուէն զըլուխը վեր վերցնելով:

— Լա՛ւ մտածէ, Արտուէն, բարեկա՛մս:

Եւ Մարիզ իր իշխողական եղանակը մէկդի ձգելով՝ անմիջապէս իր կախարդական և գիւթական միջոցները ձեռք առաւ:

Արիւն խմող կիներ՝ երբ իր անասնական կիրքերէն մղուած ըլլար և կամ երբ իր անհատական շահերը պահանջէին, զիւրաւ կրնար կնոջական խարդաւանքով զիմացիներ իր ձանկերուն մէջ անցընել:

— Ինձի՛ մտիկ ըրէ, խօսք առաւ ան: Կեանքիս մէջ առաջին անգամն է որ միայն քեզի կը բանամ սիրաս: Չափէն աւելի հպարտ ըլլալուս համար սրտիս գազանիքը ոչ ոքի բացած եմ մինչև հիմա:

Եւ պատգամաւորին զողորջուն ձեռքերը իր ձեռքերուն մէջ առնելով շարունակեց.

— Քեզի տեսած առաջին վայրկեանէս անանկ արպաւորութիւն մը գործեցիր իմ վրաս որ, բնաւ չի պիտի մոռնամ այդ երջանիկ վայրկեանը: Իրարու աչքի մէջ նայեցանք, և այդ առաջին նայումքը մեզ այդ վայրկեանէն իրարու կապեց. իրար հասկցած էինք, իրարու համար ծնած էինք:

— Ո՛հ, իրա՛ւ է, իրա՛ւ է, մրմնջեց Շանթ տկարանալ սկսելով:

— Այդ օրէն սկսեալ զգացի որ հեղհեղէ քեզի կապուելու վրայ էի. գէ՛մ գնել ուղեցի այդ զգացումին, բայց կամքի ուժս խորտակուեցաւ անոր առջեւ և կարճ ժամանակի մէջ վերջապէս այդ համակրանքին գերին դարձաւ...:

— Ո՛հ, Մարի՛զ, Մարի՛զ...:

— Չգէ՛, ձգէ՛ որ խօսիմ, որովհետև այլեւս կրակը վառի սկսած է ներսս և չեմ չեմ կրնար ասկէ աւելի հանդուրժել: . . և մանաւա՛նդ...: չե՛մ ուղեր կորսնցնել քեզ... չե՛մ ուղեր որ գլխուդ փորձանք մը գայ...: Ո՛հ...: եթէ քեզի՞ զժբաղդութիւն մը պատահի՛...: Ինձի համար մա՛ն ըսել է...:

Արտուէն, ինքնիրմէն ելած, կրակը աչքերուն մէջ անոր չրթունքներուն մօտեցուց իր չրթունքները, բայց արիւն խմող կիներ գլուխը վար ծռելով ճակատը ներկայացուց, որուն վրայ հանգչեցան Շանթի հրատապ չրթունքները:

Ասոր վրայ, անողոք պատգամաւորը և աննման հայրը գերին դառնալով իր մէջ բորբոքող անյազուրդ կիրքին, կմկմաց.

— Իրաւունք ունիս: Աղջիկս հոսկէ երթալու է: Մարիզ Ֆլէրիս յաղթութեան ժպիտ մը ունեցաւ:

Զինքը Մարտոյէն զատող խոչընդոտը վերջապէս մէջ-
տեղէն պիտի վերնար...:

— Երբ սա պզտիկ աղջիկը հոսկէ մեկնի, Մարտո-
զայն քիչ ատենէն պիտի մոռնայ և ես ալ զինքը գըլ-
խէ հանելու առիթը պիտի ունենամ, մտածեց կախար-
չող կինը իւրովի:

Յետոյ բարձրաձայն աւելցուց.

— Հիւրերուս քովը երթամ, քիչ մը ետքը նորէն-
իրար կը տեսնենք:

— Քիչ մը վերջը, կմկմաց Արտուէն և եղած
տեղը մնաց:

Արտուէն թէպէտ զինքը հրապուրող կնոջ ընկե-
րակցիլ ուզեց, բայց չի կրցաւ: Ատանձին մնայու պէտ-
քը կը զգար:

Իր աղջիկը, իր խանդաղատանքին միակ առար-
կան, իր գոյութեան միակ պատճառը՝ որուն մէկ համ-
բոյրը ամէն բան մոռցնել կուտար իրեն և որ ամէն ա-
ռաւօտ իրեն փաթթուելով իր խաւարամած հոգիին
մէջ անմեղութեան ճառագայթները կը թափանցէր և
իրեն հայրական այնքան քաղցր և այնքան հրապու-
րիչ հրճուանքներ կը պարգևէր, իր մէկ հատիկ աղջի-
կը ահա այսպէս պիտի հեռացնէր իրմէն, անոր համար
որ իր ընկերային պարտականութիւնը անա՛նկ կը պա-
հանջէր:

Պրիւթիւս Ակրիբօլա, Նանթի գաղտնի ոստիկան-
ներու պետը առջի օր ըսած էր իրեն որ՝ եթէ ինքը և
կամ իրեններէն մէկը Շուաններուն ձեռքը իջնար, ա-
ռանց խնայելու պիտի սպաննէին:

Գաղանի ոստիկանին այս խօսքերը Արտուէնի միա-
քը ինկած ըլլալով, սկսած էր ախուր կէբալով մտածել:

Բարիկ երթալիք ձամբաները Շուաններու կողմէ
գրաւուած էին...: Անտառներու և ծառատաններու

մէջ յաճախ հանրապետութեան թշնամիներուն հանդի-
պած էին տեղւոյն քաղաքացիները:

Ուրեմն Գլէրը Բարիկ զրկելը այնքան զիւրին
գործ մը չէր: Եթէ կարելի ըլլար. ինքը պիտի ընկե-
րանար աղջկանը. բայց անկարելի էր: Չէ՞ մի ո՞ր իր
քաղաքացիական պարտականութեան գերին էր...:

Ասոր հետ մէկտեղ, քանի կր մտածէր, աւելի հա-
մողում կը գոյացնէր թէ Գլէրի Նանթի մէջ մնալը
անհնարին զարձամ էր: Քաղքուհի Մարիկ Ֆլէրիւս ի-
րաւունք ունէր. Գլէր իր անխոհեմութիւնովը կրնար
օր մը իր գլխուն փորձանք դառնալ:

Միայն մէկ միջոց կը մնար, ան ալ Հանբային
Փրկութեան Ժողովին իր հրաժարականը տալն էր:
Այո՛, իր հրաժարականը կրնար տալ և աղջկանը հեռ-
այդ երկրէն հեռանալով անկիւն մը քաշուիլ, հեռա-
նալ քաղաքային և ընկերային փոթորիկներէն և եր-
ջանիկ կեանք մը ապրիլ:

Բայց ստիկա ալ միթէ գաւաճանութիւն չի՞ պիտի
ըլլար: Ինքը Մաքսիմ Արտուէն, թունդ յեղափոխա-
կանը, Ազատութեան, Հաւասարութեան և Արդարութեան
գաղափարին ուղեցոյցն ու ախոյեանը, միթէ կրնա՞ր
գաւաճանել իր սկզբունքներուն դէմ:

Ո՛չ: Միթէ զինքը ընտրուներուն հաւատարմու-
թեան երգում ըրած չէ՞ր, մինչև վերջը իր պաշտօնը
իր նուիրական առաքելութիւնը կատարել խոստացած
չէ՞ր անոնց: Ո՛ւր կը մնար իր անունն ու իր փառքը
երբ այսպէս իր պարտականութեան առջեւէն դատալիք
ըլլար, փախչէր: Ո՛չ...: Արտուէն փառ մը չէր...:
Արտուէն ցած արարած մը չէր և չէր կրնար ըլլալ...:

Ինչպէս ուրիշներուն հանդէպ եղած էր, իրե՛ն
հանդէպ ալ անողոր Շանթը պիտի ըլլար, եթէ պէտք
ըլլար, բանակ մը զինուոր պիտի յատկացնէր իր աղ-
ջիկը Բարիկ զրկելու համար, այո՛, անոր կողքը զին-

ւորական ջոկատներով պաշտպանել պիտի տար, բայց
կրբէք դասալիք չի պիտի ըլլար իր պարտականու-
թիւններուն մէջ: Այո՛, ամէն բան աչքը առած էր.
պէտք էր որ անպայման, ամէն գինով Գլէր Բարիզ
երթար:

Այո որոշումը տալէ յետոյ, Արաուէն հիւրասրահ
մտաւ և ուղղակի քաղաքացի Բօնիթարմէի մտանալով
զայն անկիւն մը քաշեց և ըստ.

— Քաղաքացի՛, ինձի ծառայութիւն կ'ուզե՞ս մա-
տուցանել:

— Ամենայն սիրով, քաղաքացի պատգամաւոր:

— Քիչ մը առաջ ինձի ըսիր որ վաղը Բարիզ պի-
տի երթաս, այնպէս չէ՞:

— Այո՛, քաղաքացի պատգամաւոր:

— Ես ալ ազջիկս Բարիզ զրկել գ'ուզէի:

— Ինձի յանձնեցէք զայն, կը խոստանամ իմ ազ-
ջրկանս պէս հսկել անոր վրայ:

— Ծնորհակալ եմ: Վաղը առտու եկուր զիս գտիր,
Մեկնումի ժամը կ'որոշենք և ճամբորդութեան համար
պէտք եղածը կը կարգադրենք վաղը:

— Ծառ լաւ, քաղաքացի պատգամաւոր:

Երկու մարդիկը իրարու ձեռք սեղմելէ յետոյ ի-
շարմէ բաժնուեցան, և այն միջոցին կրբ Բօնիթարմէ
գուրս կ'ելլար հիւրասրահէն, քաղքուէի Ֆլէրիւս, որ
կրկու մարդոց միջև տեղի ունեցած խօսակցութիւնը
ամբողջութեամբ լսած էր, Արաուէնի մտանալով ըստ.

— Ծառ յարմար միջոց մը մտածեք ես, քաղաքա-
ցի պատգամաւոր: Գիտեմ որ շատ գծուար պիտի ըլլայ
ազջիկէդ բաժնուիլը, բայց թէ՛ քու շահերդ, թէ՛ իր
շահերը այդպէս կը պահանջեն:

Եւ յետոյ կախարդող ժպիտով մը անոր նայելով
աւելցուց.

— Պիտի ջանամ իր բացակայութիւնը մոռցնել տալ
քեզի...:

Պատգամաւոր Ծանթ նորէն կախարդող կնոջ ազդե-
ցութեան տակ իյնալով անոր ձեռքը իր շրթունքնե-
րուն տարաւ:

.

Ահա ճիշդ այս ժամուն, Բիրմիլի կամուրջին վրայ,
կրբ տասնապետ Լըֆրան և իր մարդիկը նպարավաճառ
կնոջ կառքին շուրջը հաւաքուած՝ մայր Վիքթուարի
եփած սուրճը խմելու վրայ էին, կաղամբով, շողգա-
մով մը գետնախնձորով լեցուն գիւղական սայլ մը՝
որուն բետան վրայ մոմլաթ մը ծածկուած էր, կամուր-
ջէն անցնելով գիւղին ճամբան բռնեց:

Գիւղացի մանկամարդ կին մը նստած էր սայլին
նստարանին վրայ: Այս կինը գլխուն կապած էր խո-
շոր լաջակ մը որուն տակ իր զէմքը գրեթէ անտեսա-
նելի դարձած էր, մէկ ձեռքը ձիուն սանձը բռնած էր,
իսկ միւսը ձեռքը սայլապանի մտրակ մը կար:

Բանջարեղէն փոխադրող կնոջ քովը կորաքամակ
ձերունի ցնդած գիւղացի մը նստած էր: Ծերուկը լայն
եզերքով գլխարկ մը անցուցած էր գլուխը և կտնակն
ալ գեղջկական ծածկոց մը զարկած էր:

Իրեն տրուած հրամանին համաձայն, այն պահակը
որ կամուրջին մէջտեղը կեցած էր, սուինը ձիուն
կուրծքին զպցնելով՝ սայլը կեցուց:

Անմիջապէս Լըֆրան անոնց մտանալով և ուղղակի
կրկու գիւղացիներուն զէմն անցնելով հարցուց.

— Ո՛ւրկէ կուգաք և ո՞ւր կ'երթաք:

Մանկամարդ կինը տեղական գաւառաբարբառով
պատասխանեց.

— Հայրիկս ու ես էկրիֆէօյէն կուգանք և մեր

բանջարեղէնները քաղաք կը տանինք :

— Անցագիր ունի՞ք :

— Հապա չունի՞նք... :

Գիւղացի կիներ այս ըսելով անցագիրը հանելու համար կողովի մը վրայ ծոցեցաւ... : Յնդամ ձերունին ապուշ ապուշ տասնապետին երեսն ի վեր նայելով գլուխը երերցնել սկսաւ :

— Աղէ՛կ, աշէ՛կ, անցէ՛ք, հրամայեց Լըֆրան խղճալով անոնց վրայ :

Ասոր վրայ, գիւղացի կիներ զոյգ մը հաւ առնելով օտարուն աակէն, իբր շնորհակալութիւն՝ զինուորնէրուն կողմը նեակեց և ըսաւ .

— Առէ՛ք, հայրենակիցներ, առէ՛ք և ազուոր կիւրակուր մը եփեցէք :

Նիքոլա և զինուորները հաւերը բռնելու համար անոնց ետեւէն վազել սկսան, իսկ գիւղացի կիներ ձին մարակելով սայլը առաջ քշեց :

Երբ Լուսա գետին միւս եզերքը հասան, ցնդամ ձերունին գիւղացի կնոջ ախանջին մօտեցնելով իր չրթունքները, կամաց մը մոլայաց :

— Դերդ աղէկ կատարեցիր :

— Տակաւին չատ գործ ունինք, փափսաց գիւղացի կիներ ձերունին ախանջն ի վար :

Սայլը քարափէ մը անցնելով կողմնակի փողոց մը մտաւ, պատի մը քովէն քիչ մը յառաջացաւ և նեղ փողոց մը մտնելով՝ ծառախտա պարտէղի մը ծածկունքին կանգ առաւ : Այս փողոցը մութ և ամայի էր :

Գիւղացի կիներ իր տեղէն վար չիջաւ, բայց ցնդամ ձերունին կառքէն վար իջնելով աչքը չորս կողմը պաւըացուց, և մարդ մարդասանք տեսած չըլլալով՝ գիւղացի կնոջ մօտեցաւ և անխելի ձայնով մը փրսփրսաց :

— Առաջ անոր գործը կարգի գնենք, ետքը միւսին կը սկսինք :

— Բնաւ կորսնցնելիք ժամանակ չունինք, բայց կասկած չունիմ որ... :

— Տեսնենք... :

Մէկէն ի մէկ երկուքը մէկ լուցին :

Մարդկային չուք մը պատերը քերելով իրենց մօտեցաւ... այս չուքին հետեւեցան ուրիշ կարգ մը չուքեր... :

Նոր եկող չուքը ցնդամ գիւղացիին մօտենալով ախանջին բաներ մը փափսաց :

Ցնդաց գիւղացին գլուխը երերցուց և միւս մարդոց նայեցաւ :

Ասոր վրայ ետեւի մարդոց առաջնորդը բերանը ցնդամ ձերունին ախանջին մօտեցնելով անխելի ձայնով մը փափսաց :

— Ամէն բան պատրաստ է :

Եւ մութին մէջ մատուլը տուն մը ցոյց տալով աւելցուց .

— Շունին մարդիկը մենէ են. ժամանակը գալուն պէս նշան պիտի տան... :

Ցնդամ ձերունին, ջղային ցնցումներով գլուխը միշտ երերցնելով սայլին մօտեցաւ և կառքին տակէն գաղտնի դարակ մը բանալով՝ ձեռքը դարակէն ներս խոթեց և իրարու ետեւ սուրեր, ատրճանակներ և հրացաններ քաշելով զինքը շրջապատող մարդոց բաժնեց :

Հազիւ թէ այս գործը լինցուցած, պարտէզին պատին վրայի փոքրիկ դուռը կամաց մը բացուեցաւ և դրան մէջէն սպասուհիի մը գլուխը կամաց մը գուրս ելաւ :

Այն առաջնորդը որ քիչ մը առաջ ցնդամ ձերունին մօտենալով «ամէն բան պատրաստ է» ըսած էր, կամաց մը սպասուհիին մօտենալով ախանջին բաներ մը փափսաց, յետոյ ցնդամ ձերունին և միւս մարդոց գառնալով ներս մտնելու նշան տուաւ :

Վերջէն եկողներէն մէկը և գիւղացի կիներ կառքին քով մնացին, իսկ միւսները ամէնքը մէկ ուրուակահաններու պէս պարաէզէն ներս մտան: Սպասուհին զանոնք տունին շանմարանը առաջնորդեց:

Մարիզ Գլէրիւս տեսնելով որ իր հակառակորդուհին Նանթէն պետի հետանար, չափէն աւելի ուրախ էր: Շրթունքն արուն վրայ ճիւղազային շարաշուք ժպիտ մը կը տեսնուէր:

Բոլոր հրաւիրեալները մեկնած էին և Մարիզ հիւրասրահէն դուրս ելլալով իր ննջասենեակը կը մտնէր:

Երբ ձեռքը գլուխին տարաւ, հայելիի մը առջև կը գտնուէր որ իրեն ցոյց կուտար իր գեղեցիկ գէմքը, իր յաղթականի ժպիտն ու արտայտութիւնը:

Մարիզ շատ գեղեցիկ էր, հայելիի առջև իր գեղեցկութեան վրայ կը դմայէր և հպարտութեամբ կուրծքը դուրս կը ցցէր:

Այսպէս, խոհուն ու մտածկոտ, պահ մը ինքն իր վրայ հիանալէ յետոյ, զողոջուն ձայնով մը մտաւայ.

— Ո՛հ, Մարսօ՛, Մարսօ, երբ ևս պատրաստ եմ քուկդ ըլլալու, ինչո՞ւ այսպէս կ'արհամար ևս զիս, ինչո՞ւ իմս ըլլալ չես ուզեր...: Բայց ո՛հ, չի պիտի էրնաս ասկէ աւելի զիմազրել ինձի գէմ... ո՛չ... չի պիտի կրնաս... որովհետեւ...:

Խօսքը չի կարենալով շարունակել, յանկարծ կանգ առաւ և ա՛ն ու սարսափի մատնուած՝ եղած տեղը մընաց...:

Իրան վարագոյրներէն մին վեր բարձրաձաւ, ուրուն կտուէն գիւղացիի զգեստներ հագած բարձրահասակ մարդ մը արձանի մը պէս իր գէմը ցցուեցաւ:

Քաղքուհի Գլէրիւս, յանկարծակիի եկած, շուա-

րած, պահ մը անշարժութան մատնուած, եղած տեղը քարացած մնաց:

Արձանի նմանող մարդը սպասնական սարսափելի նայուածքով մը ուղղակի անոր աչքերուն մէջ նայելով կարծես թէ զայն մագնիսացնել կ'ուզէր:

— Ո՞վ էք դուք, հարցուց արիւն խմող կիներ զողոջրդարով և ետ ետ քաշուելով:

Այս խօսքին վրայ, վարագոյրին տակէն մէկէն ի մէկ սենեակ մտնող բարձրահասակ մարդը՝ որուն կուրծքին վրայ լաթէ կարմիր խաչ մը կարուած էր, ատրճանակը մէկէն ի մէկ անոր կուրծքին կոթնցնելով գոչեց.

— Ես Փան Շուանն եմ, և եկած եմ քու գործած ոճիրներուդ հաշիւը պահանջելու:

Արձանէ մարդը Արգարութիւնն էր:



ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Մարիզ Գլէրիւս երբ այս անունը լսեց, սարսափելի ազդակ մը արձակեց:

Արգարութեան ախոյեանը միշտ իր ատրճանակին փողը անոր կուրծքին զպցուցած, սարսափ տուող ձայնով մը գոչեց.

— Պարտպ տեղը մի՛ պոսշտար... տունին մէջը մարդ չիկայ...:

— Գթութի՛ւն, գթութի՛ւն, կմկմաց նախկին կոմսուհին վատան ըլլալով որ այլեւս մահէն ազատելիք չունէր:

Փան Շուան հեղինական ծիծաղով մը պատասխանեց.

— Ի՞նչ գթութիւն, գուն քու զոհերուդ վրայ գըթացի՞ր որ ես ալ քու վրայ գթամ. երբ գուն ձեռքդ ինկած մարդիկը գլխատել կուտայիր, անոնց վրայ կը գթայի՞ր որ հիմա ինչ գութ կը հայցես:

Արգարութեան ախոյեանը այս ըսելով, արիւն խմող կնոջ թեւէն բռնեց և զայն ծունկ չոքել ստիպելով գոչեց.

— Մահուան գատապարսած ենք քեզի, Աստուծմէ ներողութիւն խնդրէ և վերջին աղօթքը ըրէ:

Եւ սպասելով որ ան իր աղօթքին սկսի, ատրճանակին փողը այս անգամ անոր ձակափն մօտեցուց:

Յանկարծ արիւն խմող կնոջ գէմքին վրայ ուրախութեան ժպիտ մը նշմարուեցաւ...: Կ'երևի թէ միաքը բան մը ինկած էր:

— Վայրկեան մը զիս մօտիկ ըրէք, վայրկեան մը միայն. կմկմաց պաղատական հատկուր ձայնով մը: Եթէ ձեր ձեռքը պատանդ մը ձգել տամ, անանկ պատանդ մը որուն միջոցաւ պիտի կրնաք ձեր բանտարկուած ընկերները ազատել, ինծի ողջ կը ձգէ՞ք:

Ժան Շուան չուզելով անոր խօսքին հաւատալ՝ գլուխը շարժեց և յայտարարեց.

— Ո՞վ կը հաւատայ քեզի պէս մատնիչ կնոջ մը խօսքերուն... մերիններէն քի՞չ մարդու գլուխ կերար... քու փորիդ մէջը դաւադրութենէ և դաւաճանութենէ ուրիշ բան չիկայ:

— Երեստ աղէկ նայեցէք անգամ մը, իմ երեսիս վրայ սուտ խօսող կնոջ մը երեւոյթը կա՞յ, գոչեց քաղքունի Ֆլէրիւս:

Ծերունի արքայականը պահ մը անոր երեսն ի վեր նայեցաւ և ինքն ալ ազդուած՝ խեղդուկ ձայնով մը հարցուց.

— Ո՞վ է այդ պատանդ յանձնելիք մարդդ:

— Պատգամաւոր Մաքսիմ Արտուէնի աղջիկը,

պատասխանեց արիւն խմող կինը միշտ քիթը արիւնի մէջ խոթելով:

— Ի՞նչ, պատգամաւոր Շանթի աղջիկը. կմկմաց արքայականը անդէն վեր ցատկելով:

— Այո՛, Շանթի աղջիկը, կմկմաց նախկին պերճադիճը:

Եւ տեսնելով որ իր թշնամին այս անունին վրայ մէկէն ի մէկ վրդովուած էր, իր նախկին կորովե ու յանդգնութիւնը վերստացաւ և վճռական ձայնով մը շարունակեց.

— Մաքսիմ Արտուէն իր աղջկանմ համար խենդ կ'ըլլայ. չափէն աւելի կը սիրէ զայն, և զայն մեռնելէ ազատելու համար՝ գլխատման գատապարտուած ձեր մարդիկը ազատ արձակելու բնաւ չի պիտի վարանի: Ժան Շուան լռեց...:

Առանց բնաւ աչքը Մարիդի վրայէն հեռացնելու, ատրճանակը միշտ անոր ձակափն ուղղած, թեւերը խաչածե փութքին վրայ, կը մտածէր:

Արիւն խմող կինը ան ու զողի մատնուած ինքնիրենը կ'ըսէր.

— Ի՞նչ պիտի որոչէ արգեօք:

Վերջապէս ծերունի հրոսպետը իր ըսած խրաքանչիւր բառին վրայ ծանր շեշտ մը դնելով՝ հարցուց.

— Ո՞ւր, ե՞րբ և ի՞նչպէս զայն իմ ձեռքս պիտի յանձնես:

— Ատիկա այն տանն միայն կ'ըսեմ երբ երդում ընես որ զիս չի պիտի մեռցնես:

Ժան Շուան վարանիլ սկսաւ...: Մեղապարտ կինը իր ձեռքին մէջն էր, զայն չի պատժելը, հարիւրաւոր գլուխներու իյնալուն պատճառ եղող այդ արիւնարքու կնոջ խնայելը իրեն պէս մոլեռանդ մէկու մը հա-

մար վտանգաւոր և աններելի տկարութիւն մը եղած պիտի ըլլար:

Բայց միւս կողմէն ալ Գլէրի պէս արժէքաւոր պատանգ մը ձեռք անցընելը շատ օգտակար պիտի ըլլար: Այդ կնոջ ըսածին պէս, միթէ Գլէրը ձեռք անցնելով չէ՞ր որ իր մարդիկը գլխատուելէ ազատելուն միջոցը գտած կ'ըլլար:

Իրաւ, թէպէտ ինքք զրէժ առնելու համար եկած էր հոգ, բայց միթէ աւելի լաւ չէ՞ր ըլլար փոխանակ զրէժ առնելու՝ գլխատուելիք գոհերը մահուան ճիրաններէն ազատելը:

Արդարութեան ախոյեանը այսպէս մտածելով, համոզուեցաւ որ իր պարտականութիւնը կը կայանար ո՛չ թէ զրէժ առնելու՝ այլ՝ անմեղները ազատելու մէջ:

Երբ այս համոզումը ունեցաւ, մէկէն ի մէկ ձեռքը երկարելով գոչեց.

— Կ'երգնում որ քեզ ազատ պիտի արձակեմ:

Մարիզ այս խօսքին վրայ ոտքի ելաւ...: Թէպէտ տակաւին յազթանակը տարած չէր, բայց վերջապէս սիրտը հանդստացած էր...:

Սորամանկ կինը այսպէս ժամանակ չահած էր, և այժմ իր դժոխային ծրագրին վրայ կ'որոճար:

— Գլէր Արտուէն բանակին պարէնի հայթայթիչներն Բօնիթարմէյի հետ վազը առաւ. Բարիզ պիտի երթայ, յայտարարեց մատնիչ կինը: Անանկ կը կարծեմ որ բաւական թիւով զինուոր պիտի յատկացուի իրեն, բայց եթէ նանթէն քիչ մը անդին դարանակալ սպասէք, առանց գժուարութեան պիտի կրնաք յանկարծակիի բերել գանոնք:

Ժան Շուան բերանը չի բացաւ:

Մատնիչ կինը երբ անոր երեսը նայեցաւ, տեսաւ որ զիմացինը կասկածոտ նայուածքով մը իրեն կը նայէր:

— Տակաւին կը կասկածի՞ք ըսածներուս ճշտութեանը վրայ, հարցուց քաղքուհի Ֆլէրիւս: Ժան Շուան չի պատասխանեց:



Արիւն խմով կինը արգարութեան ճանկերուն մէջ

Ասոր վրայ, նենգամիտ կինը իր ունեցած կորովը ի մի հաւաքելով գոչեց.

— Եթէ կը համարձակիք, սպաննեցէ՛ք զիս:

Ժան Շուան առանց բնաւ անուելու այս խօսքէն, ասրճանակը գօտիին մէջ խոթեց, յետոյ ծանր շեշտով մը ըսաւ .

— Ո՛չ, քեզի չի պիտի սպաննեմ, բայց զիացած ըլլաս որ պարզապէս պայմանաժամ մըն է սուսածս... օրդ երբ որ գայ, այն ատեն կը տեսնուինք:

Եւ մօտենալով այն վարագոյրին որմէ ներս մտած էր ինքը, վեր վերցուց զայն և քովի սենեակին մէջ իրեն սպասող երկու Շուաններու նշան մը ըրաւ:

Աստուցմէ մին Բիէր Ֆլօրանն էր, միւսը՝ Կաղնեճիւզը: Ատաջինը ձեռքը կապ մը բռնած էր, երկրորդը սոկուն պարան մը:

Իրենց պետին ըրած նշանին վրայ, երկուքն ալ Մարիզ Ֆլէրիւսի մօտեցան, մինչդեռ մատնիչ կինը իրով ի կը հարցնէր .

— Արդեօք ի՞նչ պիտի ընեն զիս:

— Քեզ իմ հսկողութեանս տակ պիտի պահեմ, յայտարարեց ժան Շուան վայրագ շեշտով մը: Եթէ ըսածներդ իրաւ ելլան, ազատ պիտի ձգեմ քեզ . իմ բերնիս մէջ երկու խօսք չիկայ: Իսկ եթէ սոստ ըսած ըլլաս և վաղը ցերեկէն առաջ Շանթի աղջիկը մեր ձեռքը չանցնի, զիացած ըլլաս որ ոչ ոք պիտի կրնայ ազատել քեզ իմ ձեռքէս և արդարութիւնը իր տեղը պիտի գտնէ:

— Այդ կողմէն հանդիստ եմ, պատասխանեց Մարիզ կտրուկ կերպով:

Իրենց հրամանատարին մէկ նշանին վրայ, Բիէր Ֆլօրան և Կաղնեճիւզ՝ բաղախնդիր կնոջ վրայ խոյաջան, կապը բերնին անցուցին, ձեռքերը կապեցին և անկողնի վերմակի մը մէջ փաթթելով՝ փողոցը սպասող սայլին քովը տարին: Թօրինեէ մարքիզուհին, որ սայլին մէջ մտահոգութեամբ իրենց կը սպասէր, երբ զանոնք նշմարեց, տեսնելով որ զիակ մը կը բերէին, երկիւղալի ճիչ մը արձակեց:

Բայց ժան Շուան անոր մօտենալով ականջն ի վար փախաց .

— Մի՛ վախնաք, ողջ է: Մեռնելէն վախնալով գաղանիք մը յայտնեց ինծի, և այդ գաղնիքին՝ չնորհիւ Թօրինեէ մարքիզն ու Նանթի բանտին մէջ գլտնուող բոլոր բանտարկեալները պիտի կրնանք մահուանէ ազատել: Այս գիշեր աղէկ գործ տեսանք: Բայց ձամբան կը պատմեմ, հիմակուհիմա կորսնցնելիք բընաւ ժամանակ չունինք...:

Եւ Բիէր Ֆլօրանի ու Կաղնեճիւզի դատնալով հըրասայեց .

— Սայլին տակի զէնքի դարակին մէջ նետեցէք: Երկու մարդիկը անմիջապէս արուած հրամանը գործադրեցին:

Ասոր վրայ, ժան Շուան խօսքը իր միւս ընկերներուն ուղղելով հրամայեց .

— Գուք ալ ցրուեցէք... և առտուն դեռ չի լուսցած՝ Բարիզի ձամբուն վրայ մայր Լորիօնի պանդոկը եկէք: Տունին սպասուհին հետերնիդ առնելու չի մտնար, մերիններէն է:

Բացի Բիէր Ֆլօրանէ, միւս բոլոր Շուանները մէջ մէկ կողմ երթալով ցրուեցան, իսկ Բիէր սայլին ձիուն քով կեցաւ:

Ժան Շուան մարքիզուհիին կառքէն վեր ելլալուն օգնեց:

Մէկէն ի մէկ Բիէր Ֆլօրան նշան մը ըրաւ անոնց: Գիշերապահ զինուորներու խումբի մը ոտքի ձայներ լսուեցան:

Ժան Շուան՝ պաղարիւնութիւններն բնաւ չի կորսընցնելու նշան մը ըրաւ իր մարդոցը և դանդաղօրէն սայլէն վեր ելլալով մարքիզուհիին քով նստաւ, իսկ Բիէր Ֆլօրան մոմլաթէ ծածկոցին տակը մտնելով բանջարեղէններուն վրայ պտտկեցաւ:

Պահակախումբը կը մտանար...: Ուրի ձայները հնազնեակ աւելի կը բարձրանային, գէնքերուն իրարու գարնուելու ձայնը աւելի լսելի կը զառնար...: բայց սայլը ճամբայ ելաւ...:

Պահակախումբը զիմացէն կուգար սայլը քիչ մը յառաջանալէ յետոյ՝ հանրապետական զինուորներուն դէմն ելաւ... և այն միջոցին երբ անոնց քովէն պիտի անցնէր, խումբին տասնապետը կանգ առաւ. միւս զինուորներն ալ կանգ առին...:

Ժան Շուան գլուխը չարժել սկսելով քուն ըլլալ ձեւացուց: Տիկին Թօրինէ թէպէտ վախէն զեփ զեղին կարած, բայց բնաւ բանմը յայտնի չըրաւ և ձիուն սանձը երբեցնելով մտրակի մը պէս կենդանիին կըռնակին դարկաւ. ձին սկսաւ վազել:

Տասնապետը բնաւ չի կասկածեցաւ անոնց վրայ, բայց ներքին չեա գիտեր ինչ մը գինքը անհանգիստ ըրած ըլլալով՝ երբ «կեցէք» պիտի պոռար, տեսաւ որ սայլը արգէն փողոցը դարձած էր:

Տասնապետը սայլին ետեւէն վազելու համար չարժում մը ըրաւ, բայց յետոյ, ուսերը թոթվելով՝ ակտաներուն տակէն մոլտաց:

— Պարսպ տեղը տա խեղճ մարդիկը գործերնուն պիտի ընեմ, բնաւ տեղը չիկայ...: Բացէ ի բաց յայտնի է որ ո՛չ մարքիզ են, ո՛չ ալ կոմս... ինեղճ գիւցիներ:

Գիշերապահները իրենց ճամբան շարունակեցին, իսկ սայլը մտ թին մէջ աներևոյթ եղաւ:



Մ Ե Կ Ն Ո Ւ Մ Ը

Գլէր, իր ընդարձակ սենեակին մէջ սեղանի մը քովը թիկնաթոռի մը մէջ ընկողմանած, առանձնակի, ախուր կերպով կը մտածէր:

Խեղճ աղջկան սիրաբ վիշտի ու անձկութեան անսպաս մը դարձած էր: Այն սիրաբ որ ժամանակին գեղածիծաղ ծաղիկներով լեցուն զբախտ մըն էր, հիմա աւերակ դարձած էր: Փոթորիկ մը անցած էր անոր վրայէն և ամէն բան տակն ու վրայ ըրած էր: Չիւնասպիտակ շուշանները, կարմիր վարդերը և կատրյա ժանուշակները տեղատարափէն արմատախիլ ըլլալով գետին փռուած էին... և անոնց հոտը հնազնեակ ցնդիլ սկսած էր:

Իր հօրը առաքելութեան պատճառած վիշտը կարծես թէ բաւական չըլլար, խեղճ աղճիկը կը մտածէր նաեւ թէ ի՞նչ եղած էր արդեօք ժագ Բօթըրօջի ճակատազիրը: Մանաւանդ չափէն աւելի կը վախնար որ ժագ օր մը նորէն հանրապետականներուն ձեռքը իյնալով այլեւս այս անգամ կը գլխատուէր:

Ինքն իր գլխուն կը մաղթէր որ ժագ ծանր կերպով վիրաւորուելով կտ քաշուէր այս եղբայրասպան կոիւներէն: Աստուծմէ ուրիշ բան չէր խնդրեր այլ ժագի ողջ մնալը...: Ժագ գիտցած էր մահը արհամարհել, Գլէր աչքովը տեսած էր անոր քաջութիւնը և հիմա գոյն առաջուրնէ աւելի կը սիրէր, որովհետեւ ան իր ասպետականութեամբը, վեհանձնութեամբը և հողի մեծութեամբը շատ աւելի մեծցած էր հիմա իր աչքերուն առջեւ: Ահա այս խեղճ աղջկան միակ մխիթարանքը եղած էր:

Շատ չանցած ոտքի ելլալով մօտեցաւ այն պատահանին ուրկէ քարափը կը տեսնուէր: Մարդ մարդասանք չիկար:

Գլէր, աչքերը կուտ գետին վրայ սեւեռած, պահ մը մտածեց...: Ձայն ձուն չիկար: Գլէր այն տպաւորութիւնն ունեցաւ որ բոլորովին առանձին մտացած էր այն տունին մէջ ուր հայրը գլխատուելիք գերիններուն և կամ ազնուականներուն գլխատման հրամանագիրները կը ստորագրէր ամէն օր:

Մէկէն ի մէկ դեփ դեղին կտրեցաւ և դողդալ սկըսաւ: Իրեն անանկ եկաւ որ կառափնատին գտնուած հրապարակէն պաղատանքի ու հառաչանքի հեծկտուքներ դէպի վեր բարձրանալով վրիժառական մունչիւններ կը կազմէին ու կուգային իր ականջներուն կը զարնըւէին:

— Խնդճ ու դժբաղդ մարդիկ... մոռցած էի զագոնք... փսփսաց Գլէր իւրովի:

Գուռը գոցեց, դարակի մը մօտեցաւ, գզրոցը բացաւ և թաշկինակներու ծրարի մը մէջ պահուած խաչ մը հանեց մէջէն և ջեռմեռանդութեամբ պատէն կախեց:

Ծունկի եկաւ խաչին առջեւ և ձեռքերը իրար միացնելով սկսաւ աղօթել...: Աղօթեց անոնց համար որոնք իր հօրը հրամանովը մեռցուած էին, և անոնց համար որոնք մեռնելու պատրաստ իրենց դահիճին կը սպասէին:

— Աստուած իմ, գթա՛ անոնց վրայ, փսփսաց: Վերջ տուր այս եղբայրասպան կոխին: Թո՛ղ տուր որ ատելութիւնները մարին: Եւ եթէ քու արդարութեանդ համար անպայման զո՞ մը պէտք է, ա՛ն հոգիս, բայց խնայէ՛ բոլոր անոնց որոնց համար ապրիլը քաղցր է և որոնց համար կեանքը տակաւին վիշտի և արցունքի հովիտ մը չէ դարձած:

Յանկարծ դուռը բացուեցաւ... և Արտուէն ներս մտաւ սենեակէն:

Արտուէն երբ իր աղջիկը և պատին վրայ կախուած խաչը տեսաւ, բարկութենէն կաս կարմիր կտրեցաւ և ուղղակի դարակին մօտենալով, խաչը պատին վրայէն խլեց և գոչեց.

— Այս աւելորդապաշտական առարկան մէյ մըն ալ հոս չի տեսնամ:

Բայց Գլէր խաչը անոր ձեռքէն խլելով գոչեց.

— Մի՛ կտորեր, հայր, մայրիկս իր վերջին շունչը այս խաչին առջեւ տուաւ:

Արտուէն կանգ առաւ և խիստ նայուածքով մը իր աղջկանը երեսն ի վեր նայեցաւ...: Գլէր խաչը կուրծքին սեղմած էր:

Շանթի գիմազիծները ցաւագին արտայայտութիւն մը ստացան, յետոյ երեսը կախեց, խոփո գէմք մը ստացաւ, ձակարին վրայ գիծեր յօրինուեցան, այտին վրայ փոսեր երեւցան, և խուլ ձայնով մը ըսաւ.

— Վաղը պիտի մեկնիս հոսկէ:

— Ինչո՞ւ, հարցուց խեղճ աղջիկը սարսալով:

— Ես հոս աղգային պարտականութիւն մը կատարելու եկած եմ և չեմ ուզեր որ քու երեսէդ իմ վերաս կասկածին:

— Ըսել է գաղտնի աղօթե՞լն ալ արգիլուած է, գոչեց Գլէր այլևս ընդվզելով:

— Աս Շունանը քու խելքդ գլուխէդ առեր է, աղջիկս:

— Աւելի ճիշդ պիտի ըլլար, հայր, եթէ ըսէիք որ ձեր զոհերուն վրայ մեղքնալուս համար է որ կը դայրանաք:

— Թշուառական աղջիկ, քու միտքդ երկուքս ալ գլխատե՞լ ալ է, մոնչեց Արտուէն ինքզինքը կորսընցնելով:

— Ի՞նչ տեսակ խօսք է ատիկա, հայր, գոչեց Գլէր:
 — Քու պատճառովդ զիս ամբաստանել սկսած են...: ակար մարդու մը անզը կը գնեն զիս... քաղաքացիական սկզբունքներու մէջ ակարացած կը գանեն... և ո՞վ գիտէ թէ վաղը իմ վրաս կասկածիլ չսկսին:

— Այո՛: Մահէն չեմ վախնար ևս... ընդհակառակը ուղղակի մահուան երեսին կը նայիմ... եթէ ևս մեռնիմ, իմ անզս ուրիշ մը պիտի անցնի և յեղափոխութիւնը իր գործը պիտի շարունակէ: Բայց չեմ ուզեր որ պատմութիւնը զիս իբրև վատ մը յիշատակէ: Դուն զիս անելի մէջ կը գնես... չեմ գիտեր թէ ի՞նչ պէտք է ընել... եթէ քեզի հետ համերաշխիմ, յեղափոխութեան գէտ դաւաճանած պիտի ըլլամ...: Ո՛չ, ո՛չ, չեմ կրնար այդ բանը ընել...:

— Ուրեմն ինչո՞ւ ինձի ձեր հետը բերիք, հայր:

— Աղջիկ, իմ ցաւերս մի՛ աւելցնենք. գիտես թէ ինչու քեզ իմ հետս բերի. գիտես թէ ևս քեռէ չէի կրնար բաժնուիլ... ինչո՞ւ ուրեմն քեզ չափէն աւելի սիրած ըլլալուս համար զիս կը յանդիմանես...:

Ապա իր սրտին ցաւը ամբողջութեամբ արտայայտող ցաւագին եզանակով մը աւելցուց.

— Եւ անա քեզ շատ սիրելուս համար է որ իրարմէ պիտի բաժնուինք:

— Հայր, կը հնազանդիմ քու հրամանիդ...:

— Ո՛հ, աղջիկս, իմ սիրելի աղջիկս, մրմնջեց պատգամաւոր Շանթ խեղդուկ ձայնով մը:

— Ո՛հ, հայր, որքան երջանիկ պիտի ըլլայինք սակայն բնաւ իրարմէ չի բաժնուելով, գոչեց Գլէր հեծկրտալ սկսելով: Միթէ ևս կրնամ ձեռնէ բաժնուիլ, իմ թեւերս ձեզ գրկելու և իմ շրթունքներս ձեզ համբուրելու համար չե՞ն չիմուած: Եթէ ևս երջանիկ ըլլամ, դուք ալ իմ երջանակութիւնս տեսնելով ինձի չափ

երջանիկ չի՞ պիտի ըլլաք: Բայց չե՛մ հասկնար, հայր, դուք որ ինձի հանդէպ այնքան բարի եղած էք, ինչպէս կ'ըլլայ որ ուրիշներուն հանդէպ այնքան անողորպ կ'ըլլաք:

— Աղջիկս, այդ ուրիշները ըսածդ այս տառապող ժողովուրդին թշնամիներն են...:

— Այո՛, հայր, կը հասկնամ, բայց կատարնատը ի՞նչ է... կատարնատէն ուրիշ միջոց մը կարելի չէ՞ գանել այս ազգը իր թշնամիներուն ձեռքէն փրկելու համար, մանաւանդ հիմա երբ յաղթանակը ձե՛ր կողմն է, դո՛ւք էք զօրաւորները:

— Այո՛, այսօր մե՛նք ենք զօրաւորները, բայց վա՛ղը... վաղը եթէ այս ապստամբութիւնը երկրին մէջ տարածուի, մեր արտաքին թշնամիները մեր սահմաններէն ներս պիտի խուժեն ու պարտութեան պիտի մտանեն մեզ...: Ասոր համար, աղջիկս, մի՛ կարծեր որ ես դահիճ մըն եմ, ևս մեր ամենասիրելի ազատութիւնն է որ կը պաշտպանեմ...: Աչքիդ առջեւը բեր անգամ մը, մեր արտաքին թշնամին ի՞նչ պիտի ընէ էրբ մեր հողէն ներս գնէ իր սօքը: Ինձի պէս հայրեւնասէրները ամբողջ պիտի ջարդէ... պիտի ջախջախէ բոլոր այն գլուխները որոնք այս թշուառ ժողովուրդը իր բռնակալներուն, իր կեղեքողներուն ձեռքէն ազատել ուզեցին: Շուանները գաշակեցած են մեր զբացի պետութիւններուն հետ, և եթէ մեզի գէտ յաղթանակը տանին, երկրին գուճները պիտի բանան անոնց առջև...: Դուն, աղջիկս, սիրահարուած ես, Շուան մը կը սիրես և խելքդ գլուխէդ գացած է եթէ այդ սէրը քու արամբարնութիւնդ քեռէ խլած չըլլար և լրջօրէն մտածելու կարողութիւնդ կորսնցուցած չըլլայիր, դո՛ւն ալ ինձի պէս պիտի հասկնայիր թէ ինչու անոնց հանդէպ անողորպ վերաբերմունք մը ցոյց կուտամ և ինչու իմ անունս Շանթ է:

— Հա՛յր, հա՛յր, մի՛ պահանջէք ինէ որ ես ալ Մարիզ Ֆլէրիւս մը ըլլամ, գոչեց Գլէր:

Արտուէն երբ այս անունը լսեց, սարսապ: Արդևօք Գլէր հասկցած էր որ իր հայրը Մարիզը կը սիրէր. . . և արդևօք խեղճ աղջկան սրտէն բղխած այդ աղաղակը բողբջի և յանգիմանութեան ճիշ մըն էր. . . :

Պատգամաւորը ամօթէն կաս կարմիր կտրեցաւ, բարկութեան և դայրոյթի խօսքեր պիտի փախցնէր բերնէն. . . կատարի նայուածքով մը աղջկանը կը նայր. . . :

Բայց մէկէն ի մէկ փոփոխութիւն մը կրեց, կարծես թէ խիզճը զինքը տանջել կը սկսէր:

Գլէր, աչքերը գոցած, լուս մունջ, այս վիճարանութեան տեղի տուող խաչը միշտ կուրծքին սեղմած, անշարժ կը կենար:

Խեղճ աղջկան այտերէն երկու կաթիլ արցունք թփփեցաւ. . . : Միթէ այդ արցունքին կաթիլները ուէ բառէ աւելի մեծ նշանակութիւն չունէի՞ն:

Արտուէն զղջալ սկսած էր և հետզհետէ քաղցրացող ձայնով մը ըսաւ .

— Աղջիկս, ի՞նչ կը կարծես, կը կարծես որ քննէ բաժնուիլը ինձի համար քի՞չ տառապանք է: Բայց ի՞նչ ընեմ, ատանկ պէտք է. . . և պէտք է որ զիս հասկընաս: Քու բռնած ընթացքդ որքան ալ որ քու բարեսրտութեանդ արդիւնքը եղած ըլլայ, իմ առաքելութեանս ու պարտականութեանս զէմ արձակուած պարսաւանքի քուէ մըն է: Ես ի՞մ գաղափարներս ու հաւատալիքներս ունիմ, իսկ դուն ալ քո՛ւկդ: Ինչպէս որ դուն չես կրնար քու հաւատալիքներէդ բաժնուիլ, ե՛ս ալ այնպէս չեմ կրնար բաժնուիլ իմիններէս: Լուսաւորել ուզեցի քու միտքդ, անկարելի եղաւ, ուրիմն բաժնուիւնք իրարմէ որպէս զի իմ բազուկս զինաթափ ընելու փորձեր չի կարենաս ընել յես այսու: Քենէ

բաժնուիլը ամենէն մեծ գոհողութիւնն է ինձի համար, բայց պէտք է, պարտականութիւնս այդ կը հրամայէ ինձի. . . : Գիտե՞ս թէ ինչու, անոր համար որ, աղջիկս, քեզ չա՛տ կը սիրեմ և զիտեմ որ չի կարենալով զէմ գնել քու աղերսներուդ ու պաղատանքներուդ, որ մը տեղի պիտի տամ անոնց առջեւ և պարտազանց մը, դաւաճան մը պիտի ըլլամ: Գլէ՛ր, Գլէ՛ր, հակառակ անոր որ մեր միտքերը բնաւ իրարու հետ չի պիտի հաշտուին, հակառակ անոր որ երկուքս ալ հայր ու աղջիկ տարբեր գաղափարներու կը ծառայենք, ես իբրեւ քու հայրդ, գիտցած ըլլաս որ ամէն ատենէ աւելի կը սիրեմ քեզ, իմ միա՛կ յոյսս, իմ կեանքիս ճառագա՛յթը. . . :

Եւ դանդաղ կերպով աղջիկը զէպի իրեն քաշելով կուրծքին սեղմեց: Բայց մէկէն ի մէկ ինքզինքին գալով և իշխելով իր հայրական տկարութիւններուն վրայ, ըսաւ .

— Վաղը քաղաքացի Բօնթարմէի հետ Բարիզ զարմիկիդ քովը պիտի երթաս և հոն իմ վեռադառնալուս պիտի սպասես:

Եւ իր բառերուն վրայ սպասնական խոժոռ շեշտ մը գնելով՝ աւելցուց,

— Եւ եթէ մէյ մըն ալ այս խաչը քու ձեռքդ տեսնե՛մ. . . :

Այս խօսքին վրայ Գլէր գլուխը վեր բարձրացուց: Հօրը զէմքը դառնութեան անանկ արտայայտութիւն մը ստացած էր որ, խեղճ աղջիկը իր վիշտը մոռնալով գոչեց .

— Հա՛յր, աղէկ գիտէք, աղէ՛կ գիտէք որ ես ալ շատ կը սիրեմ. . . :

Արտուէն չի կարենալով այս բառերուն զիմանալ, չրթունքները աղջկանը ձակաթին մօտեցուց և փղձկած մոլտաց .

— Աղջիկս... :

Ասկէ ուրիշ ոչինչ կրցաւ ըսել. : Բառերը կոկորզին մէջ խեղդուած էին... : Անողոք պատգամաւորը կեանքին մէջ բնաւ այսքան չէր յուզուած : Իր սառնապանքը այնքան մեծ էր և այնքան վրդովուած էր որ, չի ահարանալու համար իր բոլոր ուժերը ի մի հաւաքեց և կոչում ըրաւ իր կամքին զօրութեան :

Տրտում ու տխուր հեռացաւ անոր քովէն... : Գրան սեմին վրայ կանգ առնելով ասցին զարծաւ... : Գլէր, խաչը միշտ կուրծքին սեղմած և պահարանին կոթնած կուլար... : Արտուէն աղջկանը գիրկը նստուելու համար քայլ մը առաւ, բայց չի կրցաւ. իրեն անանկ եկաւ որ երկաթէ ձեռք մը իր թևէն կը բռնէր ու զուրս կը քաշէր : Գուրս ելաւ և զուռը գոցեց : Մէկ կիկ մէկիկ սանդուխին ոտքերէն իջաւ, և կարծես թէ ոտքերուն տակ մութ անպունդ մը բացուած ըլլար, խաւարէն կրնուեցաւ... :

.

Յաջորդ առտուն, Արտուէն, իր գրասենեակին մէջ գրասեղանին առջեւ նստած՝ ուշադրութեամբ կը կարդար այն թուղը զոր պահ մը առաջ իր քարտուղարը յանձնած էր իրեն... :

Քաղաքացի Բօնթարմէ գիւղացիի սեւ վերարկու մը հագած՝ անոր զէմը կեցած էր :

Մարսօ և Քլէպէր սովորականին պէս այն օրն ալ եկած էին տեղեկութիւններ հազորդելու պատգամաւորին և պատուհանի մը առջեւ ձած ձայնով իրարու հետ կը խօսակցէին :

Պատգամաւոր Շանթ ձեռքի թուղթը կարդալէ յետոյ, խօսքը բանակին ներկայացուցիչին ուղղելով ըսաւ .

— Առաջ միտքս դրած էի որ խումբ մը զինուոր տամ քեզի, բայց վերջը մտածեցի որ նանթի շուրջը զեզերող աւազակներուն ուշադրութիւնը պիտի գրաւենք ատանկով և այդ միտքէն հրաժարեցայ :

Եւ ձեռքի թուղթը անոր երկնցնելով շարունակեց .

— Աւելի լաւ պիտի ըլլայ որ այս անցադրով ճամբորդէք. Պրիթիւս Ակրիգօլայիս պատրաստածն է. ասանկով աւելի ապահով կ'ըլլաք :

Բանակին պարէնի հայթայթիչը անցադիր առաւ և կարգալ սկսաւ .

«Արքայականներու բանակառեւիչին :

«Աղատօրէն ճամբորդելու հրաման կուտանք Շանթ թընէյի նօտարներէն տխար Պլէյ Բաժօյի և իր աղջկան Իվօնի :

«Արքայական բանակին
ընդհանուր հրամանատարութեան
պատգամաւորը
ՄԱՐԻՔ ԱՅԻՍԻՅԱՆԻՆ»

Այս կեղծ անցադրին մէջ Բօնթարմէյի և Գլէրի հասակը ամենայն ճշգրտութեամբ նշանակուած էին և կեղծ ըլլալը բնաւ յայտնի չէր :

Բօնթարմէ զայն կարգալէ յետոյ թղթապանակին մէջ գրաւ :

— Ձեր մեկնումը բացարձակապէս գազանի պահուած է և պէտք է գազանի մնայ : Հիմա անմիջապէս նանթէն Անժէր գացող ճամբորդութեան կառքը պիտի առնէք. երկու հոգիի համար տեղ վարձած եմ արդէն :

Գլէր ճամբորդութեան զգեստներ հագած ներս մըտաւ, պատգամաւորը խօսքը կարեց և սաքի ելլալով ու անոր ձեռքէն բռնելով Բօնթարմէի քով տարաւ :

— Քաղաքացի, ինձի համար աշխարհի մէջ ա-

մենէն թանկագին եղող արարածը՝ աղջիկս՝ քեզի կը յանձնեմ, ըսաւ Արաուէն:

— Բաղաքացի պատգամաւոր, պիտի գիտնամ ինձի հանդէպ քու ցոյց տուած վստահութեանդ արժանի ըլլալ, պատասխանեց բարի մարդը կատարեալ անկեղծութեամբ: Արդէն անգամ մը ըսի քեզի, իմ հարազատ աղջկանս պէս պիտի հսկեմ անոր վրայ:

Արաուէն աղջկանը փաթթուեցաւ: Հայր ու աղջիկ իրար փաթթուած պահ մը լուռ մնացին: Այն միջոցին երբ Գլէր դուրս պիտի ելլար, Մարսօն նշմարեց: Մարսօ Գլէրի ներս մտնելէն ի վեր արտուր ու մեկամարդնոտ անոր կը նայէր:

Երբ երկուքին ալ նայուածքը իրարու հանդիպեցաւ, իրարու մօտենալու համար երկուքն ալ քանի մը քայլ առին:

— Երթաք բարձր, մըմնջեց մեծ զինուորականը յուզումնալից շեշտով մը:

— Մնաք բարով, զօրավար, փսփսաց զեռասի աղջիկը:

Յետոյ, անլսելի ձայնով մը աւելցուց.

— Մնաք բարով և շնորհակալ եմ:

Գլէր ձեռքը անոր երկարեց. Մարսօ համբուրեց իր սիրած աղջկան ձեռքը: Եւ յետոյ, Գլէպէրը բարեւելէ վերջ, Բօնթարմէի թեւը մտնելով և հօրը վրայ վերջին նայուածք մը նետելով դուրս ելաւ սրահէն:

Արաուէն, չի փղձկելու համար չըթուներներն ու բուռնցքները սեղմած՝ իր յուզումը յայտնի չընել կը ջանար:

Երբ Գլէր սրահէն դուրս ելաւ, պատգամաւորը Քըյէպէրի և Մարսօյի դռնալով գոչեց.

— Հիմա այլևս գործերնուս նայինք:

Գլէր և բանակին պարէնի հայթայթիչը Արաուէնի ապարանքէն դուրս ելլալով ուղղակի Կօրժ փողոցը

դանուող կառքերու կայանը գացին:

Ճամբորդութեան կառքը մեկնումի ժամուն կը սպասէր:

— Այսօր գործ չիկայ, վարպետ, միայն երկու ճամբորդ ունինք, կ'ըսէր կառապանը ճամբորդութեան կառքերուն տիրոջը ուղղելով խօսքը:

— Սա ատանկ է, ճամբաները սպանով չեն որ ճամբորդող ըլլայ. կը պատասխանէր կառքերուն տէրը: Ո՞վ դիտէ, թերեւս այդ երկու ճամբորդներն ալ միտքերնին փոխած ըլլան: Դեռ մէջտեղը չելան:

Հաղիւ թէ ճամբորդութեան կառքերուն տէրը այս խօսքերը արտասանած՝ Բօնթարմէ և Գլէր, ձեռքերնին մէյ մէկ ճամբու պայուսակ բռնած, կայանին բակէն ներս մտան:

Կառքերուն տէրը անոնց մօտենալով ըսաւ.

— Դուք քաղաքացի Բաժօն էք:

— Այո՛, պատասխանեց բանակին պարէնեղէնի հայթայթիչը:

— Անցէ՛ք, անցէ՛ք, ձեզի կը սպասէինք արդէն, ձենէ ուրիշ ճամբորդ չիկայ:

Գլէր և Բօնթարմէ կառքէն ներս մտան: Կառապանը իր տեղը ցատկեց, ձիերը մտրակեց և կառքը մեծ աղմուկով ճամբայ ելաւ:

Այն միջոցին երբ ճամբորդութեան կառքը կայանին բանկէն անցնելով փողոց պիտի ելլար, փողոցէն անցնող սայլ մը ճամբայ բանալու համար ստիպուեցաւ կանց առնել:

Այս սայլը նպարավաճառ վիքթուարի կառքն էր:

Գետնին տակը անցնելիք մարդ, քիչ մնաց էչս ձիերուդ ոտքին տակը պիտի մնար, գոչեց վիքթուար սկսելով առակել կառապանը: Կո՛յր ես, չե՛ս տեսնար

կոր: Սօսքի բանուելուզ, աչքերդ չո՛րս բաց քիչ մը: Ինծի՛ նայէ, հիմա ալ հանրապետութիւն կայ. մեծերը պղտիկները ձգմելուն դարը անցա՛ւ...:

Բայց պղտիկ Նիքօլան որ մօրը քով նստած էր, անոր թեւը քաշելով ըսաւ.

— Մայրի՛կ, նե՛րս նայէ մէյ մը:

— Գլէ՛րն է, Գլէ՛րն է, բացագանչեց բարի կիներ նայուածքը մեկնող կառքին ուղղելէ յետոյ ապշած:

Բայց կառքը հեռացած էր արդէն:

Ասոր վրայ, նպարավաճառ կիներ իշուկին սանձը ձեռքէն ձգելով և երկու ձեռքերը կուշտերուն զնելով, գոչեց.

— Վա՛յ չար սատանայ, արդեօք ի՞նչ պատահեցաւ. ո՞ւր կ'երթան կոր սասնիկ...:



ՄԱՅՐ ԼՕՔԻՕՆԻ ՊԱՆԴՈԿԸ

Առաւուան ժամը հինգին ատենները, ժան Շուանի սայլը Նանթէն վեց մզոն հեռու պանդոկի մը առջև կանգ առաւ:

Այս պանդոկը մայր Լօքիօնի պանդոկն էր:

Դուռներն ու պատուհանները գոց էին:

Բիէր Ֆլօրան իր պահուրտած տեղէն դուրս ելլալով վար իջաւ և պանդոկին դրան մօտենալով քանի մը անդամ դուռը զարկաւ: Դուռը անմիջապէս բացուեցաւ և ձեղքէն պատաւ կնոջ զլուխը դուրս ելաւ:

Բիէր Ֆլօրան անոր ա կանջէն բաներ մը փսփսաց: Մայր Լօքիօն առանց բնաւ զարմանալու, դուրս ելաւ

դուռնէն և դնաց բակին մեծ դուռը բացաւ: Ժան Շուանի սայլը բակէն ներս մտաւ: Այս բակը բարձր պատով մը շրջապատուած էր:

Ժան Շուան իր տեղէն վար իջնալով պանդոկապետուհիին մօտեցաւ և ըսաւ.

— Մեր աղաքը եկա՞ն:

— Սըտեղն են, պատասխանեց պանդոկապետուհին ձեզնայարկը ցոյց տալով:

— Պահուրտելիք տեղը պատրաստեցի՞ր:

— Այո՛, հրամանատար, հայր Սարուանի պահուրտած տեղը, պատասխանեց մայր Լօքիօն:

— Գնա՛ ամէն բան պատրաստէ, հրամայեց ժան Շուան:

Մայր Լօքիօն անմիջապէս ներս մտաւ պանդոկէն և իւրողավառ կանթեղ մը վառեց: Յետոյ, փոքրիկ սենեակէ մը ներս մտնելով կաղնեփայտէ մեծ պահարանի մը երկու դուռները բացաւ: Պահարանը ձերմակեղէններով լեցուն էր: Պանդոկապետուհին ձերմակեղէնները մէկ կողմ քաշեց և ձեռքերը դպանակի մը տարաւ...:

Այս գործողութեան վրայ պահարանին ճակատի մասը ինքն իր վրայ դառնալով ձեզք մը երեւան հանեց, խոչոր գրան պէս բացուածք մը ուրկէ մէկ հագի հանգիստ հանգիստ կրնար ներս մտնել: Պահարանին մէջ բացուող այս գաղտնի դրան ետեւի կողմը համեստօրէն կահաւորուած սենեակ մը կար որուն պատերուն վրայ կախուած էին Լուի տասներ վեցերորդի, թագուհի Մատի-Անթուանէթի և արքայորդի Տօֆէնի պատկերները:

Պանդոկապետուհին ձեռքի կանթեղը սեղանին վրայ դնելով սպասեց:

Պահ մը յետոյ, ժան Շուան և Բիէր Ֆլօրան՝ Մարիզ Ֆլէրիւսը գրկած ներս մտան պահարանէն և զայն մահճակալին վրայ դնելէ յետոյ, սկսան կապերը քաշել:

Նախկին Քարքֆու կոմսուհին խզճալի վիճակի մը մասնուսած էր:

Արիւն խմող կինը գրեթէ կիսովին խեղզուած էր: Կապերուն տեղերը կապուած կարած էին: Սայլին տակին մասի մէջ երկար առեն մնացած ըլլալով, չէր կրցած պէտք եղածին չափ օդ առնել և ապականամ օդը շնչելով մարած էր:

Թօրինեէ մարքիզուհին իր բարեկամներուն հետ ւէն ներս մտած ըլլալով, գրպանէն սրուակ մը հանեց և անոր քիթին մօտեցուց: Երբ Մարիզ ինքզինքը գտնելով մարքիզուհին դէմը գտաւ, մէկէն ի մէկ իր ամբողջ ատելութիւնը վերստին արթնցաւ իր մէջը: Բայց այլևս իր թշնամիներուն ձեռքը ինկած էր. անոնց դէմ յոխորտալու աօրթը ձեռքէ փախած էր այլևս:

— Ուտելիք և խմելիք բեր սըւոր, հրամայեց ժան Շուան:

Մայր Լօրիօն դուրս ելաւ և պահ մը հաքը սափոր մը ջուր և քիչ մըն ալ հաց բերելով սեղանին վրայ դրաւ:

Յետոյ, ամէնքը դուրս ելան:

Ժան Շուան որ միւսներուն հետը մնացած էր, երբ պահարանին շրանը առջեւ հասաւ, ետին գառնաւ լով ըսաւ.

— Ըսածս մի՛ մոռնար, և գիտցած եղի՛ր որ իմ բերնէս մէկ խօսք կ'ելլայ:

Քաղքուհի Ֆլէրիւս տեղէն չի շարժեցաւ: Պահարանին դուռը ձերունի արքայականին հասեցն գոցուեցաւ:

Արիւն խմող կինը երբ առանձին մնաց, համոզուելէ վերջ որ փախուստի ուէ հնար չէր մնացած, յոյսը պատգամաւորին աղջկան Շուաններուն ձեռքը իյնա-

լուն վրայ գնելով, աչքերը ժամացոյցին սլաքին տընկած սկսաւ սպասել:

Կարծես թէ սլաքները շատ դանդաղ կը դառնային և ժամերը կ'երկննային: Թշուառական կինը սարսափով կը մտածէր թէ՛ եթէ Շուանները Գլէրը ձեռքերնուն փախցնէին, իր մտած օրն էր:

Պահ մը հաքը ծարաւցած ըլլալով՝ սափորէն քիչ մը ջուր խմեց, բայց հացին չի դպաւ: Ատանկ սեւ և չոր հաց մը ինքը իր շունին անգամ կերցնել չի պիտի զիջանէր:

Գարձաւ մահճակալին վրայ նստաւ: Ժամը առտըւան եօթը կը դարնէր:

— Գլէր ժամը ութին կամ իննին պիտի մեկնի Նանթէն, մոլտաց իւրովի: Ժամը տասնըմէկէն առաջ հոս չի կրնար հասնիլ: Սպասենք, նայինք տակէն ինչ պիտի ելլայ:

Այս միջոցին ժան Շուան, Բիէր Ֆլօրան և Թօրինեէ մարքիզուհին մեծ սրահը գացած էին...: Չեղնաւարկին մէջ պահուցող միւս Շուաններն ալ հոն հաւաքուած էին և երբ իրենց պեսը տեսան՝ ոտքի ելան:

— Բարեկամներս՝ Շանթի աղջիկը Նանթէն Անտէր գացող ճամբորդութեան կտոքը առած է և մինչև ցերեկ այս ճամբայէն պիտի անցնի, խօսք առաւ ժան Շուան: Ծամբան սպասելով զայն գերի պիտի բռնենք և իրբեւ պատանդ վար պիտի գնենք: Անկէ վերջ մենք ալ մեր ուղած հրամանները կրնանք արձակել մեր թշնամիին դէմ:

Այս խօսքերուն վրայ հոն գտնուող բոլոր սպասամբները ուրախացան:

— Կրնայ ըլլալ որ կտոքը զինուորներէ պաշտպանուած ըլլայ, բայց մենք առանկ բաներէ վախցողներ չենք...: Դուք ճամբուն միւս կողմը պիտի պահուրիք և երբ կտոքը երեւան ելլայ, վրան պիտի

յարձակիք: Առանց խնայելու գետին պիտի փռէք դէ-
մերնիդ ելլողը, իսկ մնացածը մեզի ձգեցէք. ես և Յիէր
Ֆլորան ընելիքնիս գիտենք:

Անմիջապէս ժան Շուանի մարդիկը զուրս ելան
պանդոկէն և ճամբուն միւս կողմի մացառներուն ու
փոսերուն մէջ մտելով պահու ըտեցան...:

Իիէր Ֆլորան մացառներուն ետին քարակոյտի մը
վրայ երկննալով ծխափողը վառեց և աչքերը նանթի
կողմը ուղղելով սկսաւ ծխափողը քաշել:

Ժան Շուան Թօրինէ մարքիզուհիին քով դար-
ձաւ: Մայր Լօրիօն սուրճ բերած էր, երկուքը մէկ
սկսան սուրճերնին խմել:

Ժամը տասնըմէկ ու կէս եղած էր և տակաւին
Գլէրը Բարիդ տանող կառքը երեւան չէր ելած:

Ժան Շուան անհամբերութեամբ քանի մը անգամ
պանդոկէն զուրս ելած և ճամբան աչքէ անցուցած էր:

Միայն գիւղական քանի մը սայլակներ անցած և
հողին վրայ իրենց անիւներուն հեաքերը ձգած էին:

Ծերունի արքայականը անգամ մը եւս ճամբան
աչքէ անցընելէ յետոյ երբ երեսները կախած պանդո-
կէն ներս կը մտնէր, Թօրինէ մարքիզուհին մտահո-
գութեամբ գոչեց.

— Արդեօք այս կնիկը մեզ խաբեց:

Այո՛, եթէ այդ կինը զիրենք խաբած ըլլար, Թօ-
րինէ մարքիզը բանտէն ազատել անկարելի պիտի ըլ-
լար և մարքիզուհին հիմա իր ամուսնոյն վրայ կը մը-
տածէր:

Միւս կողմէ քանի ժամանակը կ'անցնէր, Մարիդ
Ֆլէրիւս եւս յուսահատութեան կը մատնուէր: Աչքերը
բնաւ ժամացոյցին սլաքներէն չէր հեռացներ...: Կէս
օր պիտի ըլլար... հազիւ քանի մը վայրկեան մնա-
ցած էր և արիւն խմող կինը, ահուզողի մատուած,
ինքնիրենը կ'ըսէր.

— Արդեօք Արտուէն միտքը փոխեց:

Պահ մը մտածելէ յետոյ՝ աւելցուց.

— Եթէ կառքը Գլէրը Բարիդ տանելու համար ու-
քիչ ուղղութիւն մը բռնած ըլլայ, ի՞նչ պիտի ըլլայ
վիճակս...:

Ժամացոյցին սլաքները անդադար կը գտնային
սակայն... հիմա տասներկուքին հինգ վայրկեան մնա-
ցած էր...:

Տակաւին երեւան չէր ելած...:

Թշուտոտական կինը հայհոյանք մը արձակեց: Այ-
ռեւէ յոյս չ'ը մնացած...: Կորսուած էր...:

Պահարանին զուրը կամաց մը բացուեցաւ...: Ժան
Շուան, սարսափելի դէմք մը առած, ներս մտաւ...:
Մարիդ արդարութեան ախոյեանին գօտիէն կախուած
երկու ստորճանակներուն նայեցաւ...:

Արքայականներու Պողպատէ հրամանատարը առանց
բերանը բանալու բազմախնդիր կնոջ մօտեցաւ:

— Կ'երգնո՛ւմ, կ'երգնո՛ւմ որ ճշմարտութիւնը
խոստովանեցայ, կմկմաց մտանիչ կինը ահուզողի մատ-
նուած:

Ժան Շուան, առանց բերանը բանալու, ստորճա-
նակներէն մին ձեռքը առաւ...:

— Գլութի՛ւն, գլութի՛ւն, մրմնջեց Մարիդ և
վախէն ինքզինքը կորսնցնելով գետին փոռեցաւ:

Ժան Շուան ստորճանակին խօսնակը (խորոզ) բա-
ցաւ և մատը ըլլժակին տանելով՝ փողը զոհին ձակտին
մօտեցուց:

Մարիդ ժամացոյցը ցոյց տալով մահաչուք ձայնով
մը մոլորաց.

— Երկու վայրկեան կայ տակաւին:

Յետոյ, շունի մը պէս սկսաւ ժան Շուանի ոտքե-
րը համբուրել:

Ժան Շուան պահ մը զայն զիտեց:

Վաս կնոջ մարմինը մահուան գերագոյն սարսուռով մը կը ցնցուէր...: Մէկ հարուածով ամէն բան լմնցած պիտի ըլլար...:

Կէս օր եղած էր...: ժամացոյցին սլաքը գրկի՞ն տաններկուքը ցոյց կուտար...: Քանի մը երկվայրկեան եւս և ահա թշուառական մատնիչը իր պատիժը պիտի գտնէր...: Արդարութեան ակոյտեանին ատրճանակին փողը դաւաճան կնոջ գանկին դպած էր...: ահա բըլթակը ժան Շուանի մատներուն սակ կը սեղմոնէր...: Խօսնակը նորէն վար իջնելու համար զէպի ետ կ'երթար: Մեղապարտ կինը ինքզինքը կորսնցուցած էր...: Երբ դուրսէն զէնքի պայթիւն մը լսուեցաւ և թօրինեէ մարքիզուհին պահարանէն ներս խոյանալով գոչեց.

— Կեցէ՛ք, կառքը հասաւ:

Իրաւ ալ, ճամբան կառքին սոնակներէն (տինկիլ) մին կտարած էր, որուն երեսէն քիչ մնացած էր որ մատնիչ կինը իր կեանքը վրայ տար:

Ժան Շուան և մարքիզուհին անմիջապէս Մարիզը հան ձգելով փողոց ցատկեցին:

Կառքը պանդոկին դէմը կանդ առած էր...: Շուանները ձիերուն սանձելը բռնած էին, իսկ Բիէր Ֆլօրան կառքէն ներս մտած ըլլալով Գլէրը և Բօնթարմէն վար կ'իջնեցներ:

Բանակին պարէնի հայթայթիչը ինքզինքը պաշտպանելու համար իր հակառակորդներուն վրայ կրակ բացած էր, բայց Շուանները անմիջապէս կառքին վրայ յարձակած ըլլալով, թէ՛ ղինքը, թէ՛ կառապանը անշարժութեան մատնած էին: Կառապանին ձեռքը ոտքը կապած, փոսի մը մէջ նետած և Գլէրը առնելուն պէս պանդոկէն ներս տարած էին:

Ժան Շուան խօսքը սպասնականօրէն զերի բոնըւած աղջկան ուղղելով բտաւ.

— Դուն Շանթի աղջիկն ես:

Գլէր չի պատասխանեյ...: Բայց քաղաքացի Բօնթարմէ, որ իր պաղարիւնութիւնը գտած էր, թըղթապանակէն հանելով կեղծ անցադիրները ժան Շուանի երկարեց:

Ժան Շուան երկու անցադիրներն ալ բարձրաձայն կարդաց:

— Քանի որ հանրապետական չէիք, ինչո՞ւ մեր վրայ կրակ բացիք, դիակ առաւ Բիէր Ֆլօրան:

— Անոր համար որ ձեզի աւազակ կարծեցի, պատասխանեց համարձակօրէն Բօնթարմէ:

Ժան Շուան անցադիրները լաւ մը քննելէ յետոյ ըսաւ.

— Այս ստագրութիւնը իրաւ մարքիզ Ռօջժազլէնինն է:

— Այո՛, սուտ խօսելու ի՛նչ պէտք ունիմ, մէջ բերաւ Բօնթարմէ:

— Շատ լաւ, քննութիւն պիտի կատարենք, և ազատ պիտի ձգենք ձեզ, հոգ մի՛ ընէք, ըսաւ ժան Շուան պահարանին կողմը նայուածք մը նետելով:

— Սո՛ւտ են, սո՛ւտ են, գոչեց ատելութեամբ լեցուն ձայն մը սրահին ներքին կողմէն:

Բազդախնդիր/կիսն էր պոռացողը որ պահարանին բաց գուռնէն գուրս ելլալով եկաւ սրահին մէջ կանդ առաւ:

— Մարիզ Ֆլէրի՛ւան է, գոչեցին Գլէր և Բօնթարմէ իրարու ետեւէ:

— Կորսուած ենք, մըմնջեց բանակին հայթայթիչը: Նախկին կոմսուհի Քարքֆուն մանկամարդ աղջկան մօտենալով և մտածը զայն ցուցնելով բտաւ.

— Ա՛ն է: Այս անցադիրներն ալ կա՛մ կեղծ են և կամ գողցուած...:

Եւ Գլէրի դէմը ցցուելով աւելցուց.

— Ուրացի՛ր տեսնեմ, ուրացի՛ր պատուամարտ Շանթի աղջիկը ըլլալդ:

— Այն, վսթկա՛ծ... , ըսել է մեզ մասնողը զուն
ևս եզեր, մոնչկեց Բօնթարմէ :

Եւ կատաղութենէն ինքզինքը կորսնցուցած՝ անոր
վրայ յարձակեցաւ, բայց Բիէր Ֆլօրան և միւս չուան-
ները անոր վրայ խոյանալով՝ անշարժութեան դատա-
պարտեցին զայն :

— Պատին հաին սարէք և հրացանի հէ՛ք սը-
ւիկա, հրամայեց ժան Շուան :

Ենզճ մարդը քաշկոտելով զուրս հանեցին : Քլէր,
վախէն զեփ զեղին կարած, վար շիջնալու համար սև
զանին կսթնեցաւ : Տիկին թօրինեէ խղճալով անոր
վրայ, արդահատական նայուածքով մը անոր մօտե-
ցաւ... բայց Մարիչ անոր ճամբան կտրելով մանկա-
մարդ աղջկան զէ՛ր անցաւ և գոչեց .

— Մարսօն իմ ձեռքէս խլեցիր, այնպէ՛ս
զէ՛կ, ես ալ քեզի ժան Շուանին ձեռքը մատ... :
Առնելիք տալիք չի մնաց... :

— Ի՞նչ, ժան Շուան, գոչեց Քլէր և մարելիք ե-
կաւ վրան :

Եւ անյսելի ձայնով մը աւելցուց .

— ժազի հա՛յրը... :

Պարտէզէն զէնքի ձայներ լսուեցան... : Քլէր չի
կարենալով զիմանալ ասոր, մարքիզուհիին թեկերուն
մէջ իյնալով մարեցաւ : Բօնթարմէն հրացանի բռնած
էին :

Ժան Շուան, արհամարհական նայուածք մը ուղ-
ղելով Մարիզ Ֆլէրիւսի, գոչեց .

— Իմ բերնիս մէջ երկու խօսք չիկայ : Ազատ ես :

Յետոյ, այնպիսի կծու եղանակով մը որուն մէջ
վայրագ չեշտ մը գրուած էր, աւելցուց .

— Գնա՛ ըտէ պատգամաւոր Շանթի որ, եթէ մեր
մարդոց մէկ մազին գպչի, իր աղջիկը մեռած է :

Մարիզ ժպտելով զուսնէն զուրս ելաւ և Շուան-

ներուն մէջէն անցնելով Նանթի ճամբան բռնեց : Բա-
ւական մը ճամբայ կտրելէ յետոյ ուժասպառ, երբ ծա-
ւի մը տակ յոգնութիւն պիտի անէր, Նանթ գացող



Գալսնի ոսիկան Պրիւրիւս Ակրիօլա եւ արիւն
լսնոյ կիւր Մարիզ Ֆլէրիւս դեմ դիմաց
սայրակ մը նշմարեց և սայրապանին հետ սակարկու-
թեան մատնելով՝ վերջապէս յաջողեցաւ զայն համոզել

613
բկ

ալիւրի պարկերուն վրայ նստելով դէպի քաղաք
ուղղուեցաւ:

Ճիշդ այս միջոցին, այն կառապանը որ քիչ մը
առաջ Շուաններուն կողմէ փոսի մը մէջ նետուած էր,
ինքզինքին գալով ոտքի ելաւ, բայց փոխանակ ճամ-
բան մաներու, երբ ծառախիտ ծառաստանէ մը ներս
կը մտնէր, ծառերուն ետեւէն ահաւ որ Ժան Շուան,
Թօրինեէ մարքիզուհին և Գլէր պանդոկէն դուրս կ'ել-
լային: Գլէր մարքիզուհին թեւին կոթնած էր: Զին-
ւած Շուաններ չըջապատած էին իրենց պետը:

Շուանները նեղ զառիվայքէ մը իջնելով գեանցերք
հասան: Գետին եզերքը նաւակ մը կապուած էր ծառի
մը կոճղին... ամէնքը մէկ լուս ու մունջ ներս մտան
նստակէն:

Տիկին Թօրինեէ Արաուէնի աղջիկը իր քովը նստե-
ցուց: Շուան մը նստակին պարանը քակեց... ուրիշ
մը թի մը ձեռքը առաւ և նստակը հեռացուց գետե-
զերքէն:

Ասոր վրայ, Գլէր, զգաց թէ ձեռք մը կը մօտե-
նար իր ձեռքին և կը սեղմէր զայն: Թօրինեէ մարքի-
զուհին ձեռքն էր այդ նախախնամական ձեռքը:

Ազնուական կինը չափէն աւելի կը խղճար ման-
կամարդ աղջկան վրայ: Անոր ցոյց տուած համակեր-
պական ուրին և հրեշտակային բարութիւնը տեսնելով
չափէն աւելի զգամուած էր:

Տարօրինակ բան սակայն...: Գլէր անոր տակա-
ւին բան մը չէր խօսած, տակաւին իր չրթունքներէն
բառ մը դուրս չէր ելած...: Բայց ան կարծես թէ
կարգացած էր խեղճ աղջկան ներքին փոթորիկն ու
արհաւիրքը:

Այն միջոցին երբ քաղաքացիութեան Շուան-
ներու կողմէ քաշկոտուելով դուրս կը հանուէր: Գլէր
պահ մը մտածած էր Ժան Շուանի ոտքին իջնալ ու
ըսել:

... Գլէր այս... շօխնու ալ պիտի ըն...
Բայց ձերունի արքայականին երեսը նայելով անմիջ
պէս հասկցած էր որ սեէ օգուտ չի պիտի ունենար իր
խնդրանքը:

Պողպատը Շանթին դէմ ելած էր:
Խեղճ աղջիկը, այսպէս, երբ ի վերջոյ լսած էր
Ժան Շուանի Մարիզի ըրած վերջին յայտարարութիւնը՝
«Գնա՛ ըսէ Շանթի որ, եթէ մեր մարդոց մէկ մաղին
դպի, իր աղջիկը մեռած է», այլևս յոյսը կտրելով
զլուխ ձոսած և գործերու վախճանին սպասած էր և
ձեռքերը իրար միացնելով, նահապետուելիք կոյսի մը
պէս ըսած էր:

— Ատուած իմ, այլևս քուկդ եմ:

ՎԵՐՋ Ա. ՀԱՏՈՐԻ



№ 6137